- 4) բարվոքել, բարուր, բարորակ, բարոյալքվել

**25. Ո՞ր շարքի բոլոր բառերն են դասավորված այբբենական կարգով.**

- 1) շենշող, շինական, շիկահող, շեղակի, շեղաչք
- 2) չարխ, չարչարանք, չարչի, չարչրկել, չարիք
- 3) պերճագարդ, պերճախոս, պերճանք, պերճ, պերճություն
- 4) ոսկեգույն, ոսկեգոծել, ոսկեծամ, ոսկեշող, ոսկեվառ

**26. Ո՞ր շարքի բոլոր բառերն են դասավորված այբբենական կարգով.**

- 1) պարատուն, պարեղանակ, պարուսույց, պարերգ
- 2) դափնենճյուղ, դափնեվարդ, դափնեփունջ, դափնետերև
- 3) ջրահեղձ, ջրարբի, ջրհորդան, ջրօրհներք
- 4) սևազգեստ, սևորակ, սևամութ, սևծովյան

**27. Ո՞ր շարքի բոլոր բառերն են դասավորված այբբենական կարգով.**

- 1) մանուշակ, մսագործ, մկրտություն, միայնակ
- 2) սարյակ, սրբազան, սրբիչ, սեղանատուն
- 3) ակնհայտ, աշակերտ, ապականել, արնամաման
- 4) ընտանի, ընթերցել, ընկճվել, ընչաքաղց

**28. Ո՞ր բառն ունի ութ հնչյուն.**

- 1) բարևել
- 2) հարևան
- 3) կարևոր
- 4) երթևեկ

29. Ո՞ր բառում է հնչյունների և տառերի քանակը հավասար.

- 1) աներևույթ
- 2) եղերերգ
- 3) ամենատեղաբ
- 4) միջօրե

30. Ո՞ր շարքի բոլոր բառերն են սկսվում բաղաձայն հնչյունով.

- 1) երանելի, որովայն, մահկանացու, նյարդ
- 2) հանդգնել, սուրբ, նուրբ, ըղձանք
- 3) վարձ, գնչու, թթու, ուս
- 4) բիրտ, կիրթ, իրոք, զտարյուն

31. Տրված բառերից քանի՞սն են սկսվում բաղաձայն հնչյունով.

Էություն, երագ, ովքեր, են, ընպանակ, սառը, օրինաչափ, որոր, օրասահիկ, էքստենն, ընդունարան:

- 1) երկուսը
- 2) երեքը
- 3) չորսը
- 4) մեկը

32. Պնդումներից ո՞րն է սխալ.

- 1) Բառամիջում *և*- ը նշում է երկու կամ երեք հնչյուն՝ *էվ, յէվ*։
- 2) Հայոց լեզուն ունի երեսունինը հնչյուն, երեսունվեց տառ։
- 3) *Է* հնչյունի համար ունենք երկու տառ՝ *է* և *ե*։
- 4) *Օ* հնչյունը գրվում է երկու տառով՝ *օ* և *ո*։

## ԲԱԺԻՆ 3 Վանկ, շեշտ, հնչյունափոխություն

### 1. Ո՞ր շարքի բոլոր բառերն են երկվանկ.

- 1) մկան, աստղիկ, հարսնյակ
- 2) սայի, էինք, երբևէ
- 3) վայրէջք, կռունկ, անարև
- 4) ծանր, հուսաբեկ, բժիշկ

### 2. Տրված բառերից քանիսն են քառավանկ.

տառաճանաչ, մկրատել, աստղաբույլ, ձյունափրփուր, մրցանակակիր, արևահամ, արևածաղիկ, ողբանվագ, կենսաթոշակ, հարսանիք:

- 1) երեքը
- 2) չորսը
- 3) հինգը
- 4) վեցը

### 3. Ո՞ր բառում կամ բառաձևում գաղտնավանկ կա.

- 1) չընկնել
- 2) համրանալ
- 3) արկղեր
- 4) վեհանձն

### 4. Ո՞ր շարքում գաղտնավանկ ունեցող բառ կա.

- 1) մաքրամաքուր, մանրակ, գանգրահեր, կաթնակեր
- 2) փափկասուն, անընչասեր, խառնիխուռն, ուղղաձիգ
- 3) գեղեցկություն, ակնաբույժ, վերջնագիր, կապտերանգ
- 4) քաղցրասեր, ծաղկածիծաղ, կուսակցական, մատնաչափ

### 5. Ո՞ր շարքի բոլոր բառերում գաղտնավանկ կա.

- 1) փոխատվություն, անընդհատ, գրգիռ, հետաքննություն
- 2) թռչնորս, խնձորուտ, նստակյաց, առունիմ
- 3) սղոցածուկ, տնտեսվար, ինքնաբերաբար, պտտահողմ
- 4) մշտամնա, ատենադպիր, միակտուր, դյուրընթեռնելի

### 6. Ո՞ր շարքի բոլոր բառերում գաղտնավանկ կա.

- 1) խճանկար, ճգնակյաց, նրբիրան, կնքահայր
- 2) երկընտրանք, պատարագ, խնկաման, դշխուհի
- 3) սկիզբ, անձրևոտ, փղոսկր, չնաշխարհիկ
- 4) ընդառաջ, շնորհ, զմնել, սրբապատկեր

### 7. Ո՞ր բառում փակ վանկ չկա.

- 1) առհավատչյա
- 2) թերակղզի
- 3) անհասանելի
- 4) կրափոշի



**8. Ո՞ր շարքի բառերից ոչ մեկում բաց վանկ չկա.**

- 1) խմորագունդ, պերճաշուք, հանցապարտ, ձեռնամարտ
- 2) կուժկոտրուկ, աջհամբույր, համհարզ, քարթիչ
- 3) ամրոցամերձ, կիրակնօրյա, վերընձյուղվել, ինքնահավան
- 4) սաղավարտ, անձկություն, ահագնադդրդ, բերդակալ

**9. Ո՞ր բառում բաց վանկ չկա.**

- 1) պարսկական
- 2) հեծելագոր
- 3) վիմարձան
- 4) անդադրում

**10. Քանի՞ բաց և քանի՞ փակ վանկ կա զարմանալիորեն բառում.**

- 1) չորս բաց, երկու փակ
- 2) մեկ բաց, երեք փակ
- 3) երկու բաց, չորս փակ
- 4) երեք բաց, երեք փակ

**11. Ո՞ր բառում է վերջին վանկը շեշտվում.**

- 1) գլուխ տալ
- 2) բարև
- 3) միգուցե
- 4) գրեթե

**12. Ո՞ր շարքի բոլոր բառերի (բառաձևերի) վերջին վանկն է շեշտվում.**

- 1) հարազատի, քույրդ, քաղաքներից, դուստրեր
- 2) թրխկոց, կարծես թե, հայեցի, անդրաշխարհ
- 3) մեծ-մեծ, ի դեպ, արագընթաց, դրամարկղեր
- 4) մանավանդ, ուստր, ռուսերեն, հայկական

**13. Ո՞ր շարքի բոլոր բառերի կամ բառաձևերի վերջին վանկն է շեշտվում.**

- 1) երբևէ, քաղցր, սեղան, ժամացույց
- 2) վագր, գրադարան, ոչինչ, համբույր
- 3) սրբիչ, Լոնդոնի, քաղաքական, ջարդուփշուր
- 4) որպեսզի, միմիայն, սոխակ, մկնդեղ

**14. Ո՞ր բառի վերջին վանկը չի շեշտվում.**

- 1) մարդասեր
- 2) գրամեքենա
- 3) որևէ
- 4) սովորաբար

**15. Ո՞ր բառի վերջին վանկը չի շեշտվում.**

- 1) միգուցե
- 2) աստղագիտություն
- 3) հանրահաշիվ
- 4) անգլերեն

**16. Ո՞ր շարքի բոլոր բառերի (բառաձևերի) վերջին վանկը չի շեշտվում.**

- 1) դատեր, մոսկովյան
- 2) շուրջբոլորը, հուշատետր
- 3) համակարգիչ, համակարգչային
- 4) հետհասցե, երրորդ

**17. Ո՞ր շարքի բոլոր բառերի կամ բառաձևերի վերջին վանկը չի շեշտվում.**

- 1) համերկրացի, մանավանդ, գիշանգո, հյուսկեն
- 2) դուստր, համակարգիչ, գոնե, մոտ գալ
- 3) ֆուտբոլ, ալսինքն, արքայադուստր, քաղաքը
- 4) ուրեմն, նվագավարը, փոքր, քանիներորդ

**18. Տրված բառերից քանիսի՞ վերջին վանկը չի շեշտվում.**

աստղալից, այսպես, դուստր, իհարկե, համր, ամենածանր, ի դեպ, կաթնալույս, գամփռեր, հարսնյակ:

- 1) յոթի
- 2) վեցի
- 3) հինգի
- 4) չորսի

**19. Տրված բառերից և բառաձևերից քանիսի՞ վերջին վանկը չի շեշտվում.**

մաքեմատիկական, հինգերորդ, հենց որ, նույնպես, Ռուսիայում, արքայադուստր, դասագրքեր, տնակ, միմիայն, ներս մտնել:

- 1) հինգի
- 2) վեցի
- 3) յոթի
- 4) ութի

**20. Ո՞ր բառում *ը-ի* հնչյունափոխություն չկա.**

- 1) ծանրածող
- 2) մանրակրկիտ
- 3) բարձրակարգ
- 4) ընդհանրություն

**21. Ո՞ր շարքի բոլոր բառերում *ը-ի* սղում կա.**

- 1) փխրուն, մանրավաճառ, եզրային, ծնրադիր
- 2) բարձրածայն, ակնհայտ, արկղիկ, երվներանգ
- 3) ցածրահասակ, ծանրածող, սանդղահարթակ, դատրիկ
- 4) մեղրածոր, կարծրանալ, սանրել, կակղամորթ

**22. Ո՞ր շարքի բոլոր բառերում *ու-ի* հնչյունափոխություն կա.**

- 1) լուսավոր, սնափառ, արևմտյան, ընչացք
- 2) տամկանալ, անրջանք, անգթություն, ըմպան
- 3) հնչակ, մտածել, կատվառյուծ, ձվածեղ
- 4) լրագիր, առևտրական, ընչաքաղց, ջրառատ

**23. Ո՞ր շարքի բոլոր բառում *ու* ձայնավորի հնչյունափոխություն կա.**

- 1) նշածն, արևմտյան, հեռահար, հրահանգ
- 2) տնակյաց, կանխագգալ, բազկաթոռ, շքահանդես
- 3) բնույթ, կռապաշտ, կառուցել, տվյալ
- 4) ջրարբի, մրցավար, ընչաքաղց, սրածել

**24. Ո՞ր շարքի բոլոր բառերում է *ի* ձայնավորը հնչյունափոխվել *ք-ի*.**

- 1) տարեմուտ, մտավախություն, ուսուցչական, նշածող
- 2) սնահավատ, հետնադուռ, ալեծուփ, մշտադալար
- 3) լսարան, հոգյակ, սրտակցություն, վերնատուն
- 4) ձգողական, կրավորական, թվական, հանգստարան

**25. Ո՞ր շարքի բոլոր բառերում ձայնավորի հնչյունափոխություն կա.**

- 1) կատվառյուծ, լուսապայծառ, գրքասեր, մշտարթուն
- 2) սրտագին, տարեվերջ, սանդղահարթակ, մեծամիտ
- 3) կցակառույց, հնաոճ, եգրակար, գիսավոր
- 4) տիրակալ, տիկին, պարտիզպան, կրավորական

**26. Ո՞ր շարքում երկհնչյունի սղումով կազմված բառ կա.**

- 1) մատենագիր, խարտիշահեր, հեքիաթասաց, ակնաբուժարան
- 2) ժանեկազարդ, սառցաբեկոր, հայեցակարգ, մարգարություն
- 3) ցուցասրահ, հուսահատ, սենեկապետ, ատենակալ
- 4) շահութաբեր, լռելյայն, քիմիկոս, հրապուրանք

**27. Ո՞ր շարքում կա բառ, որում է *(ե)* ձայնավորի հնչյունափոխություն չկա.**

- 1) գիրուկ, գիսավոր, դիմակ, դիպված
- 2) իջնել, մահճակալ, միջակ, շիջել
- 3) պիտանի, վիմագիր, տիրույթ, Ներսիսյան
- 4) զինվոր, հանդիսություն, իգական, գիտունիկ

**28. Ո՞ր շարքի բոլոր բառերում երկհնչյունի հնչյունափոխություն կա.**

- 1) մատուցարան, ատենակալ, աշխուժորեն, ակադեմիական
- 2) մեհենական, գունավոր, վայրկենական, առօրյա
- 3) շահութաբեր, մատենագիր, կուտակում, կենսական
- 4) բնավեր, առույգություն, կուրորեն, թունավոր

**29. Ո՞ր շարքի բոլոր բառերում երկհնչյունի հնչյունափոխություն կա.**

- 1) վարագուրել, գաղթավայր, ընկուզենի
- 2) գուգապար, ուխտադրուժ, վայրկենական
- 3) պատենավոր, մրցութային, խուսանավել
- 4) մահագուժ, հեծելագոր, պատանեկան

**30. Ո՞ր շարքի *ուչ* բոլոր բառերում երկհնչյունի հնչյունափոխություն կա.**

- 1) սուգանավ, ցուցարար, պտտահողմ, ձեռնունայն
- 2) գրուցասեր, արնակոլոլ, բուրումնալից, սառցարան
- 3) թուլական, ատենապետ, կուսակրոն, վայրկենացույց
- 4) թռչնաբուժարան, առօրեական, եղջերավոր, բնավեր

**31. Ո՞ր շարքի բոլոր բառերում հնչյունափոխություն կա.**

- 1) երգչախումբ, լճացում, ձնծաղիկ, լայնք
- 2) այգեպան, ձվածն, ընչաքաղց, դատրիկ
- 3) կթվոր, տնական, սնամեջ, ձիավոր
- 4) ձեղնահարկ, արնագույն, թույնական, գրեկ

**32. Ո՞ր շարքի բոլոր բառերում հնչյունափոխություն կա.**

- 1) տնամերձ, պատվարժան, դռնփակ, հուշասյուն
- 2) փոշեկուլ, հանդիսատես, սրամիտ, սնահավատ
- 3) շնչահեղձ, չարագույժ, խնկաբույր, կիզանուտ
- 4) ավեհույզ, միջակետ, տխրահռչակ, վճարունակ

**33. Ո՞ր շարքի բոլոր բառերում հնչյունափոխություն կա.**

- 1) ավշանյութ, սիգախոտ, ալյակ, ընդամենը
- 2) աղեկտուր, կարծրանալ, ճշմարտանման, աննկատ
- 3) քենակալ, քմահաճ, հյուսնություն, կպրագույն
- 4) լսարան, խորագնիճ, հայրենադարձ, թշնամանալ

**34. Ո՞ր շարքի բոլոր բառերում հնչյունափոխություն կա.**

- 1) ջրմուղ, կարմրել, հրկեզ, արնանման
- 2) անրջել, գուժկան, ամրակուռ, ուխտադրուժ
- 3) սիրատոչոր, սառցահատ, բաղձալի, քաղցրասեր
- 4) օրեցօր, գրագետ, հեռավոր, բուսաբան

**35. Ո՞ր շարքի բոլոր բառերում հնչյունափոխություն կա.**

- 1) չվացուցակ, ճարպկություն, ծանրամարտ, տարկետում
- 2) մարմնամարզուհի, պտուտակ, ընդեղեն, մանրադիտակ
- 3) անընդմեջ, իշայծյամ, փոթորկահույզ, բուժքույր
- 4) գեղջկական, օրհներգություն, ծննդատուն, պատմագիտություն

**36. Ո՞ր շարքի բոլոր բառերում հնչյունափոխություն կա.**

- 1) թթվասեր, դիպված, բարյացակամ, խրճիթ
- 2) ձվածն, չվացուցակ, առվեզր, ձևվածք
- 3) աղեխարշ, լեզվակոնիվ, չվերթ, կղզյակ
- 4) խորաքնին, սիրվել, կատվախոտ, որդյակ

**37. Ո՞ր շարքի բոլոր բառերում սղում կա.**

- 1) ծաղկաշղթա, կենդանական, ծանրակշիռ, հոգյակ
- 2) գլխավոր, անասնապահ, այգեպան, փախստական
- 3) գերություն, ոսկերիզ, մանրախնդիր, փոքրոզի
- 4) սառցահատ, գունավոր, մատենադարան, վայրկենական

**38. Տրված բառերից քանիստ՞ում *m* ձայնավորի հնչյունափոխության կա.**

մրցասպարեզ, լվակեր, գթասրտություն, թրմել, սննդակարգ, զսպաշապիկ, ճմռել, թուլամորթ, թմրամոլ:

- 1) հինգում
- 2) վեցում
- 3) յոթում
- 4) իննում

**39. Տրված բառերից քանիստ՞ում *m* ձայնավորի հնչյունափոխության կա.**

սնանկանալ, ամրոցամերձ, սնկապուր, բուժանյութ, ձեռնասուն, պաճուճանք, տրտմաշուք, ընդհանրացնել, բնափայտ, արնակոլոլ:

- 1) չորսում
- 2) հինգում
- 3) վեցում
- 4) յոթում

**40. Տրված բառերից քանիստ՞ում *mj* երկհնչյունի հնչյունափոխության կա.**

արաղաց, ընկուզախաղ, բնափայտ, ստուգատես, ցուցադրական, ուխտադրուժ, ձնհալ, պաճուճանք, սուզանավ, սառցակալում:

- 1) չորսում
- 2) վեցում
- 3) ութում
- 4) տասում

**41. Տրված բառերից քանիստ՞ում հնչյունափոխության կա.**

զիտակցություն, ծանրանալ, շրթհարմոն, անցուդարձ, թխաչ, տխրաղեն, վերջալույս, համբանալ, լրաբեր, կարկտաբեր:

- 1) յոթում
- 2) իննում
- 3) ութում
- 4) վեցում

**42. Տրված բառերից քանիստ՞ում ձայնավորի տում կա.**

լուսնկա, խմբանկար, վարչապետ, նոնենի, մանրադրամ, ամբոթյուն, լեզվագետ, լռակյաց, որդեսեր:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

**43. Տրված բառերից քանիստ՞ում ձայնավորի տում կա.**

ծանրաշարժ, պատմվածաշար, համատիրություն, գլխապտույտ, պտուտակ, ժպտերես, հաղորդակցություն, տխրահռչակ, վարագուրածածկ, պատվախնդիր:

- 1) երեքում
- 2) չորսում
- 3) յոթում
- 4) վեցում

**44. Տրված բառերից քանիստ՞ում մեկից ավելի հնչյունափոխություն կա.**

մրգատվություն, ծրագրել, միջնաբերդ, բնութագիր, մեղվաբուծություն, քաղցրահնչյուն, աստղադիտակ, դեղնակապտավուն, թերակշռել, խմբակցություն, քննաշրջան:

- 1) վեցում
- 2) բոլորում
- 3) ութում
- 4) իննում

**45. Տրված բառերից քանիստ՞ում մեկից ավելի հնչյունափոխություն կա.**

մրցակցություն, հրակայուն, կարծրանալ, շրթներկ, ծնրադրել, շրջադարձ, մտացրիվ, վշտաբեկ, սնամեջ, բռնակցում:

- 1) չորսում
- 2) երեքում
- 3) երկուսում
- 4) հինգում

**46. Տրված հատվածում ընդգծված բառերից քանիստ՞ում հնչյունափոխություն կա:**

*Ինչպես մի հեղեղ վեր կենար հանկարծ,  
**Երկնքի մթնած** ամպերից **իջներ**,  
 Ինչպես փոթորիկ՝ սաստիկ **սրընթաց**,  
 Գյուղից սլացան մի խումբ կտրիճներ:*

- 1) բոլորում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

**47. Տրված բառերից քանիստ՞ում հնչյունափոխություն կա.**

մանրամեծաձախ, ընչազրկություն, տվյալ, ծանրամարս, լցակայան, հնչուն, ուխտադրուժ, վերջնահնչյուն, իջվածք, սկնոց:

- 1) հինգում
- 2) ութում
- 3) իննում
- 4) տասում

**48. Տրված բառերից քանի՞սն են հնչյունափոխված.**

սրահայաց, ընձուղտ, առվակ, ասպեցուցիչ, կարծրանալ, մտացածին, վերջնագիր, վայրէջք, վարդագգի, նորաթուխ:

- 1) յոթը
- 2) վեցը
- 3) ութը
- 4) հինգը

**49. Ընդգծված բառերից քանիստ՞ում ձայնավորի հնչյունափոխություն կա.**

**Ոսկեհանդերձ** եկար ու **միգասքող**,  
**Տխորայա՛** աշուն, սիրած աշուն.  
 Տերևներիդ դանդաղ **թափվող ոսկով**,  
 Մետաքսներով **քնքշաշրշուն:**

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

**50. Ո՞ր բառում արմատի հնչյունափոխություն կա.**

- 1) սերնդափոխություն
- 2) բնութագիր
- 3) թաքնվել
- 4) սառցապատ

**51. Ո՞ր բառում արմատի հնչյունափոխություն չկա.**

- 1) շրջապտույտ
- 2) սննդակարգ
- 3) կրթություն
- 4) գրավչություն

**52. Ո՞ր շարքի բոլոր բառերում կա միայն արմատի հնչյունափոխություն.**

- 1) բքախեղդ, արնածոր, վարչապետ, կրծոսկր
- 2) միջնադար, կենսախինդ, բնատուր, որկրամոլ
- 3) հուսախաբվել, տիրադեմ, դրժել, գիտակից
- 4) բնութագիր, ոսկեծույլ, մարզչային, հուզառատ

**53. Ո՞ր բառում ածանցի հնչյունափոխություն չկա.**

- 1) հանրագիտարան
- 2) միջնադարյան
- 3) թռչնաբուժական
- 4) կառուցապատում

**54. Ո՞ր շարքի բոլոր բառերում ածանցի հնչյունափոխություն կա.**

- 1) զարթուցիչ, վարքագրություն, ցուցակ, վերնախավ
- 2) զրուցարան, մատնաչափ, գրչակ, մշակութային
- 3) ուսուցչանոց, գիշատչային, գործնական, կառուցվածք
- 4) փափկասուն, սննդարար, վարչատարածքային, վերնագիր

**55. Ո՞ր շարքի բոլոր բառերում կա միայն արմատի հնչյունափոխություն.**

- 1) երևութական, կորստյան, բնամթերք, շնածուկ
- 2) դիտանցք, կտրուկ, երգչախումբ, հնչաբառ
- 3) միջանցք, տնօրինել, դպրոց, գլխագիր
- 4) մնջախաղ, արնախում, վարչակազմ, ծանրամարտիկ

**56. Տրված բառերից քանիստ՞ն ածանցի հնչյունափոխություն կա.**

մշակութաբան, ականորսիչ, քչախոսություն, վշտակցություն, մատնահետք, վերնաշեն, պատմական, հանգուցալուծում, մկնդեղ, տեսչական:

- 1) հինգում
- 2) վեցում
- 3) չորսում
- 4) երեքում

**57. Տրված բառերից քանիստ՞ն ածանցի հնչյունափոխություն կա.**

թռչնաբուժարան, փորագրություն, աներևութանալ, կցակառույց, նկարչություն, նախադրություն, միջնաբերդ, բուժօգնություն, փախստական, պատվարժան:

- 1) երեքում
- 2) չորսում
- 3) հինգում
- 4) վեցում

**ԳԼՈՒԽ 2****ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ****ԲԱԺԻՆ 1****Իմաստաբանություն**

1. Ո՞րը *լուսարաց* բառի հոմանիշը չէ:

- 1) արշալույս
- 2) արևածագ
- 3) այգ
- 4) ճրագալույց

2. Ո՞րն է *անթրոց* բառի հոմանիշը:

- 1) թևատակ
- 2) հենակ
- 3) կրակխառնիչ
- 4) սպառազինություն

3. Ո՞ր բառը հոմանիշ չէ *շահեն, տրցակ, սակառ* բառերից ոչ մեկին:

- 1) կողով
- 2) առևտուր
- 3) բազե
- 4) խուրձ

4. Ո՞ր բառը հոմանիշ չէ *վաչկատուն, պնակալեզ, ակաղճուն* բառերից ոչ մեկին:

- 1) թափառական
- 2) լիքը
- 3) ստորաքարշ
- 4) խեղկատակ

5. Ո՞ր բառը հոմանիշ չէ *անձկալի, անմեկին, անաչառ* բառերից ոչ մեկին:

- 1) տենչալի
- 2) տրտմագին
- 3) անբացատրելի
- 4) արդարամիտ

6. Ո՞ր շարքի բոլոր բառերն են իրար հոմանիշ:

- 1) ունևոր, մեծատուն, հարուստ, գծուծ
- 2) աստանդական, ասպնջական, հյուրընկալ, վանատուր
- 3) դրացի, հարևան, կողակից, դրկից
- 4) մարմնեղ, թիկնեղ, հաղթանդամ, պարթևահասակ



**7. Ո՞ր շարքի բոլոր բառերն են իրար հոմանիշ:**

- 1) դրվատել, կշտամբել, պախարակել, դատափետել
- 2) խանդադատանք, փաղաքշանք, գորովանք, սեփեթանք
- 3) բիրտ, դժնյա, անողորք, անագորույն
- 4) անշեջ, մշտաբորբ, անմար, անխտոր

**8. Ո՞ր շարքի բոլոր բառերն են իրար հոմանիշ:**

- 1) հմուտ, ճարտար, վարժ, զգլխիչ
- 2) վայրագ, փառասեր, մեծամիտ, անհարգալից
- 3) դյութիչ, հմայիչ, հրապուրիչ, գրավիչ
- 4) թաքցնել, պարուրել, քողարկել, սքողել

**9. Ո՞ր շարքի բոլոր բառերն են իրար հոմանիշ:**

- 1) խթան, ազդակ, մղում, գործոն
- 2) քնքշանք, փաղաքշանք, գորով, սեփեթանք
- 3) լալագին, աղիողորմ, ողբագին, տանջալից
- 4) թշվառ, հեգ, անգոր, թույլ

**10. Ո՞ր շարքի բոլոր բառերն են իրար հոմանիշ:**

- 1) կուտակել, շրջապատել, հավաքել, ժողովել
- 2) հրապուրիչ, դյութիչ, հմայիչ, հուզիչ
- 3) խտոր, զարտուղի, շեղ, ծուռ
- 4) ծավի, լաջվարդ, բիլ, դեղձան

**11. Ո՞ր շարքի բոլոր բառերն են իրար հոմանիշ:**

- 1) խառնվել, միանալ, ձուլվել, անեանալ
- 2) մագ, գիսակ, հեր, ագի
- 3) դանդաղ, ծանր, անշտապ, անփույթ
- 4) կատաղի, վայրագ, դժնի, անագորույն

**12. Ո՞ր շարքի բոլոր բառերն են իրար հոմանիշ:**

- 1) հուսադրել, գոտեպնդել, խարսխել, քաջալերել
- 2) ծաղկող, պատկերահան, նկարիչ, քանդակագործ
- 3) արշալույս, այգ, արևագալ, լուսաբաց
- 4) աղջամուղջ, մթնշաղ, արևամուտ, ճրագալույց

**13. Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են կազմված հոմանիշներից:**

- 1) լսատեր-կանթեղ, մեղադրանք-հանդիմանություն, պաղպաջուն-բազմաթույր
- 2) կավածք-ազարակ, խայտաբղետ-գույնզգույն, անվեհեր-դժխեմ
- 3) մարտիրոս-նահատակ, հտպիտ-խեղկատակ, պարագլուխ-խմբապետ
- 4) գրավական-առհավատչյա, պատրանք-ցնորք, տխրահռչակ-բռնազբոսիկ

**14. Ո՞ր շարքի բոլոր բառերն են իրար հոմանիշ:**

- 1) կասկածել, տարակուսել, երկբայել, երկմտել
- 2) թափառական, աստանդական, դյուրաշարժ, նժդեհ
- 3) մեծամուն, հանրահայտ, հռչակավոր, սնապարծ
- 4) հյուրընկալ, ասպնջական, վանատուր, վաղնջական

**15. Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են կազմված հոմանիշներից:**

- 1) սեղմել-մամլել, տարտամ-անորոշ, գտարյուն-կորովի
- 2) միալար-անընդհատ, ընկղմել-խորասուզել, արտառոց-անփորձ
- 3) բաղձանք-իղձ, անսայթաք-անգայթ, աղճատել-աղավաղել
- 4) ծանուցել-իրազեկել, մտացածին-սնապարծ, ապավեն-պաշտպան

**16. Ո՞ր շարքի բոլոր բառերն են իրար հոմանիշ:**

- 1) գիրթ, շեշտակի, կտրուկ, պիրկ
- 2) ալ, բորբ, բիլ, բոտր
- 3) մարտիրոս, զոհ, հուպիտ, նահատակ
- 4) թիկնեղ, հաղթանդամ, մարմնեղ, պարթև

**17. Ո՞ր շարքի ոչ բոլոր բառերն են իրար հոմանիշ:**

- 1) գավազան, մական, անթացույ, գայիսոն
- 2) անվրդով, անդորր, հանդարտ, խաղաղ
- 3) հուռթի, արգասավոր, բարեբեր, բարունակ
- 4) փուչ, դաստարկ, ունայն, սին

**18. Ո՞ր շարքի ոչ բոլոր բառերն են իրար հոմանիշ:**

- 1) պարծենկոտ, մեծախոս, սնապարծ, գոռզամիտ
- 2) ծվատել, հռչոտել, գիշատել, բզկտել
- 3) սեղմ, կիպ, ակաղձուն, ատոք
- 4) սահմնել, զարհուրել, սարսափել, երկնչել

**19. Ո՞ր շարքի ոչ բոլոր բառերն են իրար հոմանիշ:**

- 1) կապա, սքեմ, պարեգոտ, պատմունճան
- 2) շողոքորթ, քսու, երկերեսանի, կեղծավոր
- 3) տնանկ, ընչագուրկ, անօթևան, ընչաքաղց
- 4) փորձանք, աղետ, արհավիրք, պատուհաս

**20. Ո՞ր շարքի ոչ բոլոր բառերն են իրար հոմանիշ:**

- 1) ցոլալ, փայլփլել, շողարձակել, կայծկլտալ
- 2) երկմտել, երկբայել, տարակուսել, կասկածել
- 3) վերստին, կրկին, դարձյալ, էլի
- 4) սոսկ, գեթ, միայն, ընդամին

**21. Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են իրար հոմանիշ:**

- 1) այլազան - տարբեր, կառչել - թռչնել, համհարզ - թիկնապահ
- 2) ուրույն - բնորոշ, դավանանք - խարդավանք, ամոքել - սփռվել
- 3) թռվռալ - խայտալ, կարկառել - ծանուցել, թերուս - իմաստակ
- 4) հրապուրել - զմայլել, խոհեմ - ողջամիտ, դեռափթիթ - նորածիլ

**22. Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են իրար հոմանիշ:**

- 1) ունայն-դաստարկ, զվարթ-խինդ, այլակերպ-տարաբնույթ
- 2) սիզանեմ-վեհանձնյա, երեց-ավագ, սովորույթ-ավանդույթ
- 3) հուսահատվել-վիատվել, շտապել-աճապարել, սպրդել-սողոսկել
- 4) հրահանգ-ցուցում, մայրամուտ-արշալույս, շեղում-խոտորում

**23. Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են իրար հոմանիշ:**

- 1) սվագ - երեց, գիրգ - կտրուկ, բանուկ - մարդաշատ
- 2) խոշտանգել - լլկել, այսպանել - ծանակել, ազահ - ընչաքաղց
- 3) հանապազորդ - մշտապես, ազոր - սրունք, նկուն - հուսահատ
- 4) անմեկին - անբացատրելի, թիրախ - նշավակ, մանյակ - ապարանջան

**24. Ո՞ր տարբերակում ընդգծված բառը մյուսներում ընդգծված բառերին հոմանիշ չէ:**

- 1) Սենյակի **ձեղունը** գմբեթարդ էր, զարդարված սև ու կարմիր քարերի ծաղկաձև շարվածքներով:
- 2) **Առաստաղից** կախված արծաթե կանթեղի լույսը տկար ու դժգույն թվաց թագուհուն:
- 3) Թավշյա վարագույրները, անկյունների **աշտանակները** թախծալի հուշեր էին արթնացնում:
- 4) Անցորդը ուշիուշով նայում էր դեպի հարավ-արևմուտք, որտեղից երևում էին գյուղի տների կղմինդրե **տանիքները**:

**25. Ո՞ր բառազույգն է հականիշ:**

- 1) ծանծաղ - ամբողջական
- 2) գառամյալ - դեռատի
- 3) բեկբեկուն - աղեղնաձև
- 4) ակնդետ-ակնկոր

**26. Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են հականիշներ:**

- 1) բարդ-դյուրին, միշտ-բնավ, ստեպ-հապճեպ
- 2) երախտագետ-տգետ, ամբարտավան-համեստ, կորով-թուլություն
- 3) բիրտ-քնքուշ, օժանդակ-խոչընդոտող, հանուն-ընդդեմ
- 4) հանդուգն-խրոխտ, քաղբենի-գեղջուկ, տարտարոս-եղեմ

**27. Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են հականիշներ:**

- 1) տամուկ-չոր, միաբան-տարանջատ, ցայտուն-աներևույթ
- 2) խտանալ-նոսրանալ, թոթովել-հմայել, խուսափել-ձգտել
- 3) անբարեհամբույր-սիրալիր, զառամյալ-աժդահա, կամակոր-հնազանդ
- 4) գողտրիկ-բացահայտ, գլխավոր-անեական, ստեպ-ստեպ-հազվադեպ

**28. Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են հականիշներ:**

- 1) ուսյալ-իմաստակ, երանգավառ-տամուկ, օրինական-ապօրինի
- 2) ստույգ-անբացատրելի, ապառիկ-կանխիկ, հակիրճ-երկարաշունչ
- 3) գժտվել-հաշտվել, չափավոր-ծայրահեղ, երաշտային-անձրևային
- 4) բեկբեկուն-ուղղաձիգ, կայուն-անգոր, անամոք-առողջ

**29. Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են հականիշներ:**

- 1) հոռետես-լավատես, ճապաղ-սեղմ
- 2) աչառու-արդարև, կանուխ-ուշ
- 3) բռնազբոսիկ-մտացածին, անշահավետ-նպաստավոր
- 4) ժխտում-հերքում, նշավակել-դրվատել

**30. Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են հականիշներ:**

- 1) անհողորդ-երերուն, քնքուշ-վեհ, վեհանձն-ստոր
- 2) զարդարուն-անպաճույճ, օրինական-ապօրինի, ջրարբի-անջրդի
- 3) խոժոռվել-ժպտալ, բանուկ-սակավագնաց, առաթուր-անջրպետ
- 4) դալար-ստվար, լայնարձակ-անձուկ, տկար-վատառողջ

**31. Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են հականիշներ:**

- 1) տաղտուկ - ձանձրույթ, անկասելի - հավանական
- 2) դժնի - անագորույն, կորովի - տկար
- 3) թավ - նոսր, անպատկառ - լկտի
- 4) ծանծաղամիտ - խելացի, հղկված - անտաշ

**32. Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են հականիշներ:**

- 1) երբեք-միշտ, լայն-անձուկ, հավերժ-անընդհատ
- 2) խաղաղ-փոթորկուն, տեղական-մշտական, ծածուկ-բացահայտ
- 3) ձերբակալել-ազատել, հանգցնել-կիզել, վիատեցնել-քաջալերել
- 4) հետամտել-խուսափել, հիվանդանալ-ապաքինվել, սիրել-փայփայել

**33. Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են հականիշներ:**

- 1) շղակրատ - քչախոս, գժտված - համերաշխ, կայտառ - շենշող
- 2) աղտեղություն - մաքրություն, սեղմ - ճապաղ, հեղհեղուկ - անհողորդ
- 3) կշտամբել - գանահարել, իրագել - անտեղյակ, բացասում - հաստատում
- 4) խոչընդոտել - նպաստել, ստերջ - անջրդի, հուսահատվել - գոտեպնդվել

**34. Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են հականիշներ:**

- 1) օրհնանք-անեծք, երեց - կրտսեր, կամային - թուլամորթ
- 2) զարդարուն - անպաճույճ, վաստակել - վատնել, երերուն - անկայուն
- 3) էական - առանցքային, փութկոտ - ծանրաշարժ, բաց - գոց
- 4) երկչոտ - վախկոտ, ըմբոստ - հնազանդ, պարտավոր - կամավոր

**35. Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են հականիշներ:**

- 1) անհամեստ - փառամոլ, ապառիկ - կանխիկ, ընդգրկուն - ծավալուն
- 2) քչախոս - շղակրատ, հուռթի - արգավանդ, հարմար-անպատեհ
- 3) զարդարուն - անպաճույճ, հոռետես-լավատես, պարպել - լիցքավորել
- 4) իրագել - անտեղյակ, առինքնել - վանել, փակել-գոցել

**36. Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են հականիշներ:**

- 1) սինքրո - վեհանձն, պարպել - լիցքավորել, տարտամ - կենսախինդ
- 2) տամուկ - չոր, խրթին - դյուրին, հարթ - ծանծաղ
- 3) վաղանցիկ - մշտամնա, ապերջանիկ - բախտավոր, հետամտել - խուսափել
- 4) գովել - դրվատել, սնապարծ - համեստ, անպտուղ - բարունակ

**37. Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են հականիշներ:**

- 1) ագուցել - տարանջատել, կամավոր - բռնի, ներմուծել - արտաշնչել
- 2) անհրապույր - գեղատեսիլ, շինծու - շիտակ, պատշաճ - անպատեհ
- 3) թավ - նոսր, կարծր - փխրուն, ներբողել - պարսավել
- 4) քաղցրարյուն - տհաճ, բերկրալից - մարմանդ, երկչոտ - քնքուշ

**38. Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են հականիշներ:**

- 1) բացահայտ-թաքուն, խորդուբորդ-ողորկ, խենթ-խելոք
- 2) ժիր-հեղզ, համր-անբարբառ, մեկնում-վերադարձ
- 3) ուստր-տղա, առատածեռն-ժուժկալ, բարի-չար
- 4) վեհ-ստոր, անաչառ- արդարադատ, գիտուն-անգետ

**39. Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են հականիշներ:**

- 1) մակընթացություն-տեղատվություն, գիշեր-ցայգ, աջլիկ-ձախլիկ
- 2) փուխր-պինդ, նախորդ-հաջորդ, խայտաճամուկ-խայտաբղետ
- 3) անաչառ-կողմնակալ, դեմ-թեր, հանուն-ընդդեմ
- 4) ազատ-գերի, բանուկ-սակավագնաց, իմաստակ-թերուս

**40. Ո՞ր շարքի ոչ բոլոր բառազույգերն են հականիշներ:**

- 1) լուսավոր-մռայլ, աներկբա-կասկածելի, աղջամուղջ-շամանդաղ
- 2) պարզ-խճողված, անբասիր-կեղտոտ, գոգավոր - ուռուցիկ
- 3) ծանծաղ-խորունկ, ակնհայտ-գաղտնի, աճապարել-հապաղել
- 4) զգալի-աննշան, բացառիկ-սովորական, անհողորդ-երերուն

**41. Ո՞ր տարբերակի ընդգծված բառերն են համանուններ:**

- 1) **անկար** ժողովուրդ - **անկար** հագուստ
- 2) **սուր** միտք- **սուր** խոսք
- 3) մշակութային **գանձ**- թաքցրած **գանձ**
- 4) բայի **եղանակ**- հրամայական **եղանակ**

**42. Ո՞ր տարբերակի ընդգծված բառերը համանուններ չեն:**

- 1) **ակնարկ** նետել - **ակնարկ** տպագրել
- 2) գետի **ափ** - ձեռքի **ափ**
- 3) **գորշ** օրեր - **գորշ** վերարկու
- 4) **շահ** ստանալ - պարսից **շահ**

**43. Ո՞ր տարբերակի ընդգծված բառերը համանուններ չեն:**

- 1) **անարգել** ընթանալ-**անարգել** սրբությունը
- 2) **բուն** իմաստ-ծառի **բուն**
- 3) **բարակ** թել- **բարակ** ձայն
- 4) **իր** գիրքը-**իր** գնել

**44. Ո՞ր տարբերակում համանունների բացատրության սխալ կա:**

- 1) **բուք** - բթամատ, **բուք** -կետադրական նշան
- 2) **ականակիր** - ական կրող, **ականակիր** - վճիտ
- 3) **այր** - քարանձավ, **այր** - տղամարդ
- 4) **բարակ** - նուրբ, **բարակ** - քերծե

**45. Ո՞ր տարբերակի ընդգծված բառերը համանուններ չեն:**

- 1) **թեր** -ծաղկաթերթ, **թեր** - կողմ
- 2) **գանձ** -հարստություն, **գանձ** -հոգևոր երգ
- 3) **սուր** - սրածայր, հատու, **սուր** - սրամիտ
- 4) **հազար** - թիվ, **հազար** - բույս

**46. Ընդգծվածներից ո՞րն է մյուս երեքին համանուն:**

- 1) Շատերը խուսափում են **վարկ** վերցնելուց:
- 2) Նա մասնագիտական շրջաններում բարձր **վարկ** ունի:
- 3) Բանկը **վարկ** է տրամադրում՝ ցածր տոկոսադրույքով:
- 4) Աշխատավարձի ցածր չափը թույլ չի տալիս նրան **վարկ** վերցնել՝ բնակարան գնելու համար:

**47. Ընդգծվածներից ո՞րն է մյուս երեքին համանուն:**

- 1) Եթե նա այս անգամ էլ **ստեր**, հայրն արդեն չէր ների:
- 2) Քեզինից **ստեր** շատ եմ լսել և եթե անկեղծ լինեմ, հոգնել եմ:
- 3) **Ստեր** տարածելով է մրցակիցներին իր ուղուց հեռացրել:
- 4) Դու շատ լավ գիտես՝ **ստեր** չեմ հանդուրժի:

**48. Ընդգծվածներից ո՞րն է մյուս երեքին համանուն:**

- 1) Չին **անարգել** թռավ վերջին ձողապատնեշի վրայով:
- 2) Իշխանին **անարգել** ու անցնել անպատիժ նա չէր կարող:
- 3) Անցել էինք ամրոցի բոլոր պահակակետերն **անարգել**:
- 4) **Անարգել** կարող էր բացել ցանկացած փակ դուռ:

**49. Տրված իմաստներից ո՞րը չունի երաշխիք բառը:**

- 1) գրավական
- 2) հավաստիք
- 3) հավատամք
- 4) առհավատչյա

**50. Փակագծերում տրված բառերից մեկը տվյալ նախադասությանը համապատասխանում է, մյուսը՝ ոչ. ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ:**

- ա. Ազգային ժողովի պատգամավորը ներկայացրեց (1.փաստեր, 2.փաստարկումներ) օրենսդրական նոր փոփոխություններ կատարելու անհրաժեշտության վերաբերյալ:
- բ. Ներկայացված ծրագրին, կարծում ենք, (1.վերաբերվելու եք, 2.վերաբերելու եք) լրջությամբ:
- գ. Զննարկվող հարցերի շուրջ այդպես էլ (1.միացյալ, 2.միասնական) կարծիքի չհանգեցին:
- դ. Գումարտակը հորդ անձրևից լսրծուն դարձած ճանապարհին (1.ոթում, 2.գայթում) և դժվարությամբ առաջ էր շարժվում:

- 1) ա - 2, բ - 1, գ - 2, դ - 1
- 2) ա - 1, բ - 1, գ - 2, դ - 2
- 3) ա - 1, բ - 1, գ - 1, դ - 1
- 4) ա - 2, բ - 1, գ - 2, դ - 2

**51. Փակագծերում տրված բառերից մեկը տվյալ նախադասությանը համապատասխանում է, մյուսը՝ ոչ. ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ:**

- ա) Այնքան վտանգավոր չէ չվարժեցված երիվար (1.հեծելը, 2. հեծնելը), որքան անփորձ բարեկամին գաղտնիքներ հայտնելը:
- բ) Ով իր խղճնտանքի դեմ է գործում, չի կարող նրա խայթոցից (1. գերծ, 2. գուրկ) լինել. խղճի խայթը մահվանից էլ խիստ է:
- գ) Բարեկամության օրենքը հաստատվում ու (1. պահպանվում է, 2. պաշտպանվում է) հավատարմության մեջ. ուր հավատարմություն չկա, այնտեղ չկա և բարեկամություն:
- դ) Մարդկանց վնասող բազում չարիքներ սովորաբար առաջ են գալիս (1. թույր, 2. թյուր) կասկածներից:

- 1) ա - 2, բ - 1, գ - 1, դ - 2
- 2) ա - 2, բ - 2, գ - 1, դ - 1
- 3) ա - 1, բ - 2, գ - 2, դ - 1
- 4) ա - 1, բ - 1, գ - 1, դ - 2

**52. Փակագծերում տրված բառերից մեկը տվյալ նախադասությանը համապատասխանում է, մյուսը՝ ոչ. ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ:**

- ա. (1. Հրատարակչությունը, 2. հրատարակչությունը) չէր պաշտպանել գրողի հեղինակային իրավունքները:
  - բ. Կազմակերպությունը պարտքերի պատճառով (1. լուծվել, 2. լուծարվել) էր:
  - գ. Հարթակի վրա երևաց անձանոթը՝ (1. հովարով, 2. հովհարով) գլխարկը գլխին:
  - դ. Լիճը իր (1. շրջակա, 2. շրջապատող) լեռներով թաղված էր թանձր մառախուղի ու ցածում սահող ամպերի մեջ:
- 1) ա-1, բ-2, գ-1, դ-1
  - 2) ա-1, բ-1, գ-2, դ-1
  - 3) ա-2, բ-1, գ-1, դ-2
  - 4) ա-2, բ-2, գ-2, դ-2

**53. Փակագծերում տրված բառերից կամ բառաձևերից մեկը տվյալ նախադասությանը համապատասխանում է, մյուսը՝ ոչ. ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ:**

- ա. Ալին է՝ գլխին մի կանաչ ապարոշ, հագին երկար (1. աբբա, 2.աբա), ձեռքին նույն երկար և անտաշ գավազանը:
  - բ. Այնտեղ լսվում էր ժայռից բխող աղբյուրի մեղմ (1.կարկաչը, 2. շառաչը) :
  - գ. Աղջկա երկար վարսերը դրոշի պես (1. ծածանվում, 2.տատանվում) էին մեղմ քամուց:
  - դ. Ուսուցչուհին (1. կրկին անգամ, 2. կրկին) նրան դիտողություն արեց:
- 1) ա - 1, բ - 2, գ - 2, դ - 1
  - 2) ա - 2, բ - 1, գ - 2, դ - 2
  - 3) ա - 2, բ - 1, գ - 1, դ - 2
  - 4) ա - 1, բ - 2, գ - 1, դ - 1

**54. Փակագծերում տրված բառերից կամ բառաձևերից մեկը տվյալ նախադասությանը համապատասխանում է, մյուսը՝ ոչ. ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ:**

- ա. Մինչև այժմ էլ չեմ կարողանում (1. ըմբռնել, 2. ընկրկել) մորս սիրո խորությունը:
  - բ. Նրա գերեվարության ու կուրացման մասին վկայությունները մեծ մասամբ վիպական-բանաստեղծական են և չեն կարող (1. հիրավի, 2. հավաստի) ու պատմական լինել:
  - գ. Սաստիկ այրող (1. խոյակ, 2. խորշակ) է փչում, կխփի, կխարկի արտ ու արոտ:
  - դ. Խավոտ վարագույրները զով էին պահում արձակ սենյակները, երկու (1. պնակ, 2. ընպանակ) սուրճը հանգչում էր փոքրիկ սեղանին:
- 1) ա-1, բ-1, գ-2, դ-1
  - 2) ա-1, բ-2, գ-2, դ-2
  - 3) ա-2, բ-1, գ-2, դ-2
  - 4) ա-2, բ-2, գ-1, դ-1

55. Տրված բառիմաստները համապատասխանում են ձախ շարքի բառերից չորսին. ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ:

- |               |                    |
|---------------|--------------------|
| ա. չիր        | 1. շորի փեշ        |
| բ. մանյակ     | 2. երիտասարդ աղջիկ |
| գ. պարմանուհի | 3. վզի զարդ        |
| դ. քղանցք     | 4. չորացած միրգ    |
| ե. ասպարանջան |                    |

- 1) ա-4, գ-2, դ-1, ե-3
- 2) ա-4, բ-3, գ-2, դ-1
- 3) ա-1, բ-3, գ-2, դ-4
- 4) ա-2, գ-4, դ-1, ե-3

56. Տրված իմաստներից ո՞րն է ավելորդ *սրդողել, խարկանք, սայրդել* բառերի համար:

- 1) դողացնել
- 2) խցկվել
- 3) ցնորք
- 4) գայրանալ

57. Ո՞ր բառի իմաստն է սխալ բացատրված:

- 1) *սայրդել* - ծածուկ ներս մտնել
- 2) *շառափ* - տեղատարափ անձրև
- 3) *խամաճիկ* - թափառական ծաղրածու
- 4) *կիզանուտ* - հեշտությամբ այրվող

58. Ո՞րն է բառի իմաստն է սխալ բացատրված:

- 1) *քենակալ* - ոխով լցված
- 2) *նշտար* - վիրաբուժական դանակ
- 3) *ամլիկ* - նորածին գառ
- 4) *երախայրիք* - առաջին պտուղ

59. Ո՞ր շարքում բառիմաստի սխալ բացատրություն *կա*:

- 1) *քենակալ*-կնոջ քրոջ ամուսինը, *քեռայր*-քրոջ ամուսինը
- 2) *պաքսիմատ*-չորացած հաց, *օշարակ*-մրգահյութի զովացուցիչ ըմպելիք
- 3) *երե*-որսի կենդանի, *ոստրե*-թանկարժեք քար
- 4) *ծիրանի*-թագավորական թիկնոց, *կոկարդ*-գլխարկի վրա փակցված նշան

60. Ո՞ր շարքում բառիմաստի սխալ բացատրություն *կա*:

- 1) *եռակցել* - եռքով միացնել, *թավազեղմ* - խիտ բուրդ ունեցող
- 2) *հանգրվան* - հանգստանալու տեղ, *ծխնի* - որոշ ժամանակ ծխի մեջ պահած
- 3) *դրանիկ* - արքունի պաշտոնյա, *աշխեստ* - դեղնակարմիր ձի
- 4) *ուղերձ* - գրավոր շնորհավորանք, *կոչնակ* - եկեղեցի հրավիրող զանգ



**61. Ո՞ր շարքում բառիմաստի սխալ բացատրություն կա:**

- 1) **ակրատ** - թեթև նախաճաշ, **խայտալ** - թռչկոտելով ուրախանալ
- 2) **գրաստ** - բեռնակիր անասուն, **վարուժան** - արու թռչուն
- 3) **մերի** - արու այծ, **շաղափ** - ծակող գործիք
- 4) **մզլել** - խոշոր կարել, **վերջնել** - վերջին գավակ

**62. Ո՞ր շարքում բառիմաստի սխալ բացատրություն կա:**

- 1) **քանքար**- բնատուր ձիրք, **սողնակ**- դուռը փակելու ձող
- 2) **վարգ**-ձիու համաչափ ընթացք, **բնօրրան** -թագավորանիստ քաղաք
- 3) **ակրատ** -թեթև նախաճաշ, **ավետիս**- լավ լուր
- 4) **հովնկ** -ամառանոց եկած մարդ, **շարական** -հոգևոր երգ

**63. Ո՞ր շարքում բառակապակցության իմաստի սխալ բացատրություն կա:**

- 1) հեթանոսական տաճար - **մեհյան**, այգու բերք հավաքելը - **այգեկութ**
- 2) տաք քամի - **սյուք**, թռչունների երգ-**դայլայլ**
- 3) դեղին մազերով - **խարտիշահեր**, բարձր ճյուղեր ունեցող-**բարձրուղեշ**
- 4) վառ կանաչ գույնի թանկարժեք քար- **զմբուխտ**, ամուսին ունեցող կին - **արամբի**

**64. Ո՞ր շարքում բառիմաստի սխալ բացատրություն կա:**

- 1) **սամում**-ավազախառն տաք հողմ, **մույկ**-կամարակապ որմնախորշ
- 2) **նկանակ**-կլոր հաց՝ բլիթ, **ջոկ**-փղերի խումբ
- 3) **շառափ**-հորդ անձրև, **խարամ**-արտադրական թափոն
- 4) **շեղք**-դանակի կտրող մաս, **քաղ**-արու այծ

**65. Ո՞ր շարքում բառիմաստի սխալ բացատրություն կա:**

- 1) **ռահվիրա** - որևէ բանի սկզբնավորող, **տոչորել** - սաստիկ ծարավով տանջել
- 2) **ձյունագես** - սպիտակ մազերով, **մածուցիկ** - կաշուն հատկություն ունեցող
- 3) **պատրանք** - հրապուրիչ, բայց խաբուսիկ հույս, **համախոհ** - միևնույն խմբակի անդամ
- 4) **ընձենի** - ինձ կենդանու մորթին, **տարափ** - հորդ անձրև

**66. Ո՞ր տարբերակում բառիմաստի սխալ բացատրություն չկա:**

- 1) **վարուժան**-արու թռչուն, **ցորնամրիկ**- դաշտային քամի
- 2) **ակնապիշ**- աչքի փոսիկ, **գույժ**-վատ լուր
- 3) **զամբիկ**-էգ ձի, **քիվ**-ժայռի խոռոչ
- 4) **աղանդ**-տվյալ եկեղեցու դավանանքից շեղվող ուսմունք, **արոտ**-հող հերկելու գործիք

**67. Ո՞ր տարբերակում բառիմաստի սխալ բացատրություն չկա:**

- 1) **մեղանչել**-մեղք գործել, **երկնուղեշ**-դեպի երկինք ձգվող ճյուղերով
- 2) **աղորիք**-հացահատիկ աղալու մեքենա, **նյութել**-որևէ դավանության հետևել
- 3) **ճրագալույց**- ճրագները հանգցնելը, **խայտաբղետ**-զանազան գույներից բաղկացած
- 4) **մորի**-մորենու պտուղը, **դիպակ**-որևէ ստեղծագործության հատված

**68. Բառերից քանիսի՞ իմաստի բացատրությունն է սխալ:**

1. վարկած - գիտական ենթադրություն
2. մեկենաս - արվեստի հովանավոր
3. հեզել – հնչյունը հնչյունին կապելով՝ կարդալ
4. այծենական - այծամագից պատրաստված հագուստ

- 1) երկուսի
- 2) երեքի
- 3) մեկի
- 4) ոչ մեկի

**69. Տրված բառիմաստները համապատասխանում են աջ շարքի բառերից չորսին. ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ:**

- |                   |              |
|-------------------|--------------|
| 1. տնակ այգում    | ա. կղմինդր   |
| 2. առաջին պտուղ   | բ. կնդրուկ   |
| 3. թրծած աղյուս   | գ. երախայրիք |
| 4. ասեղնատերև ծառ | դ. հնձան     |
|                   | ե. մայրի     |

- 1) 1 - ա, 2 - բ, 3 - դ, 4 - ե
- 2) 1 - բ, 2 - դ, 3 - ա, 4 - գ
- 3) 1 - դ, 2 - գ, 3 - ա, 4 -ե
- 4) 1 -գ, 2-ե, 3 - գ, 4 - ա

**70. Տրված բառիմաստները համապատասխանում են ձախ շարքի բառերից չորսին. ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ:**

- |            |                        |
|------------|------------------------|
| ա. մատուռ  | 1. աստիճանների հենաձող |
| բ. բուրվառ | 2. հեթանոսական տաճար   |
| գ. բազրիք  | 3. խնկարկելու անոթ     |
| դ. նշխար   | 4. փոքրիկ եկեղեցի      |
| ե. մեհյան  |                        |

- 1) ա - 2, բ - 1, դ - 3, ե - 4
- 2) ա - 4, բ - 3, գ - 1, ե - 2
- 3) ա - 2, բ - 3, դ - 1, ե - 4
- 4) ա - 4, բ - 3, գ - 1, դ - 2

**71. Տրված բառիմաստները համապատասխանում են ձախ շարքի բառերից չորսին. ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ:**

- |             |                            |
|-------------|----------------------------|
| ա. ծվարել   | 1. հանգչել, մարել          |
| բ. կաքավել  | 2. ուժասպառ լինել          |
| գ. շիջել    | 3. ուստոստել, պարել        |
| դ. թալկանալ | 4. թաքուն լսել             |
|             | 5. տեղավորվել հանգստանալու |

- 1) ա-4, բ-3, գ-2, դ-5
- 2) ա-5, բ-3, գ-1, դ-2
- 3) ա-5, բ-3, գ-4, դ-1
- 4) ա-4, բ-1, գ-3, դ-2

**72. Տրված բառիմաստները համապատասխանում են ձախ շարքի բառերից չորսին. ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ:**

- |              |   |
|--------------|---|
| ա. ոստան     | 1. երկտող բանաստեղծություն                        |
| բ. սնգույր   | 2. հոգևորականի գլխի ծածկոց                        |
| գ. բեյթ      | 3. քազավորանիստ քաղաք                             |
| դ. վեղար     | 4. շենքերը կայծակի հարվածից պաշտպանելու հարմարանք |
| ե. շանթարգել |   |

- 1) ա-1, բ-2, դ-3, ե-4
- 2) ա-2, բ-1, դ-3, ե-4
- 3) ա-3, բ-2, գ-1, դ-4
- 4) ա-3, գ-1, դ-2, ե-4

**73. Ո՞ր բառակապակցության մեջ քաղցր բառը փոխաբերական իմաստով չի գործածվել:**

- 1) քաղցր խոսք
- 2) քաղցր հուշ
- 3) քաղցր աղանդեր
- 4) քաղցր կյանք

**74. Ո՞ր շարքի բոլոր բառակապակցություններում փոխաբերական իմաստով գործածված բառ կա:**

- 1) ձյունագես լեռներ, անճարտար շինարար, նախասկզբնական արարչություն
- 2) թեթև վիրավորանք, զոհարագարոյ մատանի, խոտոր ճանապարհ
- 3) մեղքերի մորիկ, խարխուլ մակույկ, հույսի ճրագ
- 4) բոցե վարսեր, լույս աչքեր, փշրված անուրջներ

**75 Ո՞ր բառը նախադասության մեջ կունենա փոխաբերական իմաստ:**

Գ-աճաճ մասրենու շառագունած մացառները զարդարել էին ժայռերի ..... գագաթները:

- 1) ուռուցիկ
- 2) արևկող
- 3) մամռոտ
- 4) խոժոռ

**76. Ո՞ր նախադասության մեջ զարդարել բառը փոխաբերական իմաստով չի գործածվել:**

- 1) Երգչուհին իր ներկայությամբ զարդարեց ողջ հանդիսությունը:
- 2) Համեստությունը զարդարում է մարդուն:
- 3) Լեփ-լեցուն դահլիճը զարդարված էր շքեղ լույսերով:
- 4) Այդ փոքրիկ, թռվռան աղջնակը զարդարում էր պապիկի ծերությունը:

**77. Ո՞ր նախադասության մեջ ընդգծված բառն ունի փոխաբերական իմաստ:**

- 1) Նրա **անունը** առաջին անգամ լսեցի եթերից:
- 2) Ողջ կյանքում փորձեց իր **անունը** բարձր պահել:
- 3) Նրա **անունը**, առավել ևս մականունը ոչ մեկին ոչինչ չասաց:
- 4) Ապրանքի **անունն** անպայման պետք է գրվի պիտակի վրա:

78. Տրված բանաստեղծական հատվածում ընդգծված բառերից քանի՞սն են գործածված փոխաբերական իմաստով:

*Եվ գնում ես դու քո **նոտաբորիկ**  
Եվ **աղբաբաբախ առաջին** սիրո  
**Շիկնած**, շփոթված ցավին ընդառաջ:*

- 1) երկուսը
- 2) երեքը
- 3) չորսը
- 4) բոլորը

79. Տրված բանաստեղծական հատվածում ընդգծված բառերից քանի՞սն են գործածված փոխաբերական իմաստով:

*Ճամփան **դորուն** դեռ իջնում էր վար  
Դեպի դաշտերի **գիրկը**, ուր չկար  
**Մարդկային** աղմուկ ու երգ ու շառաչ,  
Երազ էր կարծես՝ անապատ դառած:  
Ու լուռ էր այնպես: Վայրկյանն էր **հոսում**:  
Ու հին լռության **լաբիրինթոսում**  
**Սպասում էին** դաշտ, հովիտ ու քար,  
Կարծես թե մեկը **այցի պիտի գար**:*

- 1) երեքը
- 2) չորսը
- 3) հինգը
- 4) բոլորը

80. Ո՞ր նախադասության մեջ փոխաբերական իմաստով գործածված բառ *չկա*:

- 1) Դժվամ նայում են ժայռերը խոժոռ,  
Տխուր խաղում են ալիքները ժիր:
- 2) Մայրամուտն էր ժլատ վառվում,  
Բլուրը պատել էր մուժ:
- 3) Այդպես արևն է դուրս նայում մութ ամպից  
Իմ նախրյան բա՛րձր, բա՛րձր աշխարհում:
- 4) Նայի՛ր, դրստրիկ, իշխանագուն  
Էս քաջերին լայնալանջ,  
Այժմ պիտի հանդես դուրս գան,  
Պայքար մղտնեն քո առաջ...

81. Ո՞ր նախադասության մեջ փոխաբերական իմաստով գործածված բառ *չկա*:

- 1) Յուլակը նրա ձին էր՝ կապտավուն մորթով, որի վրա, ինչպես աստղերը, ցրված էին սպիտակ նշաններ:
- 2) Մի ահարկու ձայն խռպոտ աղմուկով խլացրեց զանգերի քաղցր դողանջը:
- 3) Մի զարմանալի թախծոտ կյանք էր կանաչում դեմը:
- 4) Միմոնը մեխվել էր Սոնայի տան մոտ, և նեղվածք ու ցուրտ էր, և ձգող ոչ մի տաք անկյուն չկար:

**82. Ո՞ր նախադասության մեջ ընդգծված բառը փոխաբերական իմաստով գործածված չէ:**

- 1) Համատարած կարիքը թախիժ էր **մաղում** հյուղակների երդիկների վրա:
- 2) Նա **համաձուլեց** իրարից անջատված, ցաք ու ցրիվ եղած ջոկատները և մի կանոնավոր գորք կազմեց:
- 3) Իմ պատանության թեժ **մրրիկներից** ի՛նչ է մնացել:
- 4) Կիրճի **մռայլ** առանձնության մեջ նա մի տեսակ երկյուղ էր կրում:

**83. Ո՞ր նախադասության մեջ փոխաբերական իմաստով գործածված բառ չկա:**

- 1) Կարծես թե դարձել էմ ես տուն:
- 2) Դրախտ է նորից իմ հոգում:
- 3) Իլիկդ խոսում է անուշ:
- 4) Արևը հանգչում է հեռվում:

**84. Ո՞ր նախադասության ընդգծված բառը փոխաբերական իմաստով գործածված չէ:**

- 1) Հովե՛ր կանցնին. - Այնքան կը հորդի, **կը կատողի** դաշտը հուռթի, Որ պիտի հոն արածող ուլը խեղդի:
- 2) Մենք կժպտանք, գո՛հ **կժպտանք** մեռնելիս, Որ երագում երագեցինք ու անցանք:
- 3) Խճուղու երկու կողմում ձգվում են խիտ ու բարձր ծառերի գույգ **պատերը**:
- 4) **Նիրի էին մտել** ծաղկունքը բուրյան՝ աղամանդներով, շքեղ գինդերով:

**85. Ո՞ր նախադասության ընդգծված բառը փոխաբերական իմաստով գործածված չէ:**

- 1) Փաթիլները սառած  
Լուսամուտն **են քախում**:
- 2) Կարկաչահոս աղբյուրն այնտեղ  
Թավալում էր **մարգարիտ**:
- 3) Չուգել ես նորից դաշտ, անտառ, լեռ,  
Գարուն, ամեն տեղ նոր կյանք **ես վառել**:
- 4) Նայում եմ, մինչև որ անգոր  
Գլուխս ծնկիդ է **թեքվում**:

**86. Ո՞ր նախադասության մեջ փոխաբերական իմաստով գործածված բառ չկա:**

- 1) Աղմկում է իմ սրտում ամեն գիշեր մի կարոտ, աղմկում է որպես խուլ ու հեռավոր մի քամի...
- 2) Ապրելուց քաղցր է մեռնել քեզ համար, Ջգալ, որ դու կաս, և լինել հեռու...
- 3) Միրիավ կար անտառում, թռավ արնակոլոլ, երկու փետուր մնաց փափուկ մամուռների վրա:
- 4) Գյուղը կծկվել էր, վախից կուշ եկել:

**87. Ո՞ր նախադասության մեջ փոխաբերական իմաստով գործածված բառ չկա:**

- 1) Այդ ճանապարհը, թեև քաղաքի փեշով է անցնում, բայց չի տարբերվում գյուղի մյուս ճանապարհներից:
- 2) Իմ հիշողության մթագնած հորիզոնի վրա ցցվում է դաժան մի պատկեր. դժվարությամբ եմ ճանաչում դիրքը, կապակցում մարդուն ու շրջապատը:
- 3) Քարերը գլորվում էին դեպի խորխորատները, և նրանց աղմուկից ճերմակափետուր աղավնիները անհանգիստ ճախրում էին:
- 4) Կուսական անտառի օրորուն երգի տակ ազատ թռչկոտող եղնիկի վճիտ հայացքի արտապատկերն է դա:

**88. Ընդգծված բառերից քանի՞սը փոխաբերական իմաստով գործածված չեն:**

1. Իրիկունն արդեն **փռվել էր** շուրջը նրա,  
Երբ նա նստեց ձյունե ճանապարհի վրա:
  2. Երբ երկնքի մովում վերջին **աստղը** հանգավ,  
Նա իր տունը թողեց և ճանապարհ ընկավ:
  3. **Չարքնում է** մեջս հանկարծ հազարամյա մի քառս,  
Ծփում է հորդ, տարուբեր օվկիանոսի պես վարար:
  4. **Կապույտ** կարոտը մեռավ, խառնվեց հրին,  
Արևի **շողքը** ահա զարկել է սարին:
- 1) մեկը
  - 2) երկուսը
  - 3) երեքը
  - 4) չորսը

**89. Ոտքի ելնել դարձվածքի ո՞ր իմաստն է սխալ:**

- 1) ըմբոստանալ
- 2) թևակոխել
- 3) առողջանալ
- 4) նեղ վիճակից դուրս գալ

**90. Կոկորդը սեղմել դարձվածքի ո՞ր իմաստն է սխալ:**

- 1) ստիպել, հարկադրել
- 2) համբերել, գպել իրեն
- 3) գոռով կուլ տալ
- 4) ծարավ զգալ

**91. Ո՞ր տարբերակում է երկու կրակի միջև լինել դարձվածքի իմաստը ճիշտ բացատրված:**

- 1) խիստ շոգին դիմանալ
- 2) որևէ մեկին չկարողանալ օգնել
- 3) անելանելի դրության մեջ լինել
- 4) չափազանց վիրավորված լինել

**92. Ո՞ր տարբերակում է գլուխ կոտրել դարձվածքի իմաստը ճիշտ բացատրված:**

- 1) մեկին փորձանքի բերել
- 2) խնդիրը լուծել
- 3) մեկին տանջել
- 4) մի բանի վրա չարչարվել

**93. Ո՞ր դարձվածքի իմաստն է սխալ բացատրված:**

- 1) գլխարկը թեք դնել- ինքնավստահ լինել
- 2) կրակ ու պատիժ - փորձանք
- 3) ամերից դուրս գալ - գայրանալ
- 4) պոչ խաղացնել-հաճոյանալ

**94. Ո՞ր տարբերակում դարձվածքի սխալ բացատրություն կա:**

- 1) **օձիքը բաց չթողնել** - մեկից համառորեն պահանջել մի բան անել, **օր չանցած** - առանց ժամանակ կորցնելու
- 2) **հին դարմանը քամուն տալ** - անցած անախորժ դեպքերը հիշեցնել, **հետին միտք** - գաղտնի դիտավորություն
- 3) **սրտից արյուն կաթել** - չափազանց դաժան լինել, **արդար յուղի տեղ ընդունել**- առանց կասկածելու հավատալ
- 4) **արև ծագել**- բախտավոր վիճակ ստեղծվել, **ճանապարհին մնալ**- գործը անավարտ թողնել

**95. Ո՞ր դարձվածքի բացատրությունն է սխալ:**

- 1) բախտավոր աստղի տակ ծնվել- մեծ հաջողություն ունենալ
- 2) գրքի մի երեսը կարդալ - կյանքից դասեր չքաղել
- 3) ձայն բարբառո հանապատի- պատասխան չստացած խոսք
- 4) ձեռքը քարի տակ- հնարավորությունից զուրկ

**96. Ո՞ր դարձվածքի բացատրությունն է սխալ:**

- 1) կանաչ-կարմիրը կապել- զարդարել
- 2) վերջին մոհիկան- վերջին ներկայացուցիչ
- 3) խունկ ծխել - ոչ տեղին մեծարել
- 4) ձեռքը փակ – ժլատ

**97. Ո՞ր դարձվածքի բացատրությունն է սխալ:**

- 1) մի սանրի կտավ- միևնույն գործին նվիրված
- 2) հոգու աչքեր - ներզգացողություն
- 3) ձեռքը բռնել - արգելել
- 4) ջուրը գցել- անօգուտ վատնել

**98. Ո՞ր դարձվածքի բացատրությունն է սխալ:**

- 1) գլխին ջուր մաղվել - գվարճանալ
- 2) քրտինքը հողին խառնել - հողի վրա տքնաջան աշխատել
- 3) փորում սիրտ չմնալ - սաստիկ վախենալ
- 4) անձյուն ձմեռ - խեղճ, անճարակ մարդ

**99. Ո՞ր դարձվածքի բացատրությունն է սխալ:**

- 1) խոսքը երկու չանել - անմիջապես կատարել
- 2) ուղտը դռանը չոքել - հաջողություն ակնկալել
- 3) ընկույզին քար չնետել - ուրիշին վնաս չտալ
- 4) վահանով վերադառնալ - հաղթանակել

**100. Ո՞ր շարքի բոլոր դարձվածքների իմաստներն են ճիշտ բացատրված:**

- 1) դուրս բերել-վռնդել, տեղը դնել-փոխարինել, երես թեքել-արհամարհել, տեղի տալ-զիջել
- 2) ուղտի ականջում քնած-անտեղյակ, երես տալ-շփացնել, երկնքի տակ-բացօթյա, երեսը փափուկ-զիջող
- 3) ոտք դնել-համարձակվել, տեղը նեղ լինել-նյութական վատ վիճակում լինել, օրը ցերեկով-բացահայտ, գլուխ տանել-ձանձրացնել
- 4) քամուն տալ-քամահարել, քաջ Նազար-վախկոտ, լավ հոտ չգալ-կասկածելի երևալ, տաք գլուխ-հանդուգն

**101. Ո՞ր շարքում դարձվածքի իմաստի սխալ բացատրություն կա:**

- 1) ձեռքերը շփել-հաջողությունից ուրախանալ, փակուղի մտնել-անելանելի դրության մեջ ընկնել
- 2) հաշվի նստել-հաշվարկները ստուգել, լուսնից ընկած-գործից անտեղյակ
- 3) հոգին հանել-չարչարել, ճակատ առ ճակատ-բացահայտ
- 4) հացի մեջ աղ չլինել-երախտիքը չզնահատել, բերանը փակ- գաղտնապահ

**102. Ո՞ր շարքում դարձվածքի իմաստի սխալ բացատրություն կա:**

- 1) լեզուն կարճ - հնազանդ, իրեն հավաքել - զգաստանալ, դարձի գալ - ճիշտ ուղու վրա կանգնել
- 2) մարմին առնել - իրականանալ, կուրծք ծեծել - հավատացնել, ոտքի տակ ընկնել - խանգարել
- 3) կողի ընկնել - համառել, հաց կտրել - ապրուստից զրկել, ճանապարհ սովորեցնել - խորհուրդ տալ
- 4) թիկունք թիկունքի տակ - իրար օգնել, ոտքերն ընկնել - աղաչել, ձեռք չտալ - հարմար չլինել

**103. Ո՞ր շարքում դարձվածքի իմաստի սխալ բացատրություն կա:**

- 1) **զլխով քամի անցնել** - դատարկ բաներ մտածել, **ծնոտը թուլացնել** - շատախոսել, դեմ առնել - հանդիպել
- 2) **պատի ծեփ դառնալ** - սրտնեղել, **արևի երես հանել** - բացահայտել, **բամբակ կշռել** - նստած տեղը նիհել
- 3) **բաժակը լցվել** - համբերությունից դուրս գալ, **կրակ կտրել** - գայրանալ, **թևերը թուլանալ** - հուսահատվել
- 4) **թռչունի թևով** - շատ արագ, **իրար սրտից ջուր խմել** - իրար լավ հասկանալ, **զլխին ձյուն գալ** - դժբախտանալ

**104. Ո՞ր շարքում դարձվածքի իմաստի սխալ բացատրություն կա:**

- 1) **ատամը կտրել** - կարողանալ մի բան հաղթահարել, **բաց դուռ ծեծել** - պարզաբանել խրթին հարցը
- 2) **զլխին փոքորիկ պայթել** - հանկարծակի մեծ անախորժության հանդիպել, **մի թելով կարած լինել** - նույն բացասական հատկություններն ունենալ
- 3) **ոսկե միջին** - ծայրահեղությունների փոխզիջում, **սրտի ձայնը լսել** - առաջնորդվել զգացմունքներով
- 4) **տեղը զցել** - բնական ընթացքի մեջ դնել, **քիթը բարձր պահել** - արհամարհանքով վերաբերվել շրջապատին

**105. Ո՞ր շարքում դարձվածքի իմաստի սխալ բացատրություն կա:**

- 1) դեմն առնել- կասեցնել, գույները խտացնել-չափազանցված ներկայացնել, զլուխ բերել- հաջողեցնել
- 2) զլուխ կոտրել-ճիգ ու ջանք թափել, դուռը գալ-խնդրանքով մեկի մոտ գնալ, երեսը չտեսնել-մի բանից անտեղյակ լինել
- 3) երկու քայլի վրա-մոտիկ, հոնքերը կիտել-մռայլվել, աչք փակել- անուշադրության մատնել
- 4) ձեռքերը թուլանալ-վիատվել, սողոմ-գոմոր- խառնակություն, չինական պարիսպ-հնագույն շինություն

**106. Ո՞ր շարքի բոլոր բառակապակցություններն ունեն դարձվածային իմաստ:**

- 1) աչքերը փակ, կարապի երգ, արջի ծառայություն
- 2) աշխարհից կուշտ, յոթերորդ երկնքում լինել, հորդ անձրև
- 3) ծեր աղվես, բախտ վիճակվել, կանխիկ վճարել
- 4) սիրտը առնել, աչքաթող անել, գիրք թերթել



**107. Ո՞ր նախադասության մեջ է ընդգծված արտահայտությունը գործածված ոչ դարձվածային իմաստով:**

- 1) Ազատագրական պայքարում հաջողության հասնելու համար անհրաժեշտ է, որ բոլոր ազգային կուսակցությունները **մի դրոշի տակ հավաքվեն**:
- 2) Մեր **դրոշերը բաց են** բոլոր նրանց առաջ, ովքեր ցանկություն ունեն մեզ հետ համագործակցելու:
- 3) Այդ երգչուհին մեզ արդեն ձանձրացրել է բոլոր համերգներին **նույն երգը երգելով**:
- 4) Նա իր առաջին իսկ ստեղծագործությամբ **նոր էջ բացեց** մեր արձակուրմ:

**108. Բառակապակցություններից քանի՞սն են դարձվածք:**

*Ձեռքը բռնել, խելքի բերել, մարդ դարձնել, ձեռքը պինդ, տեղը դնել, սիրտը կախ, միտը պահել, ոտքերն ընկնել, գլուխը տանել:*

- 1) բոլորը
- 2) հինգը
- 3) ութը
- 4) յոթը

**109. Ո՞ր բառակապակցությունն է գործածվում միայն դարձվածային իմաստով:**

- 1) ականջին փսփսալ
- 2) ականջը կանչել
- 3) ականջի հետևը գցել
- 4) ականջը ծակել

**110. Բառակապակցություններից քանի՞սը դարձվածային իմաստ չունեն:**

Բերանը բաց, սիրտը կախ, աչքը սարերին, քթի տակ, ոտքի վրա, մազը ոլորած, աչքը հանել, աչքովն ընկնել, երեսին ասել:

- 1) մեկը
- 2) երկուսը
- 3) երեքը
- 4) չորսը

**111. Բառակապակցություններից քանի՞սը դարձվածային իմաստ չունեն:**

Այբը բենից ջոկել, գայլը գառին պահ տալ, փողերը, հաշվել, լեզուն մրմռալ, մատով դիպչել, դպրոց անցնել, կրակի տակ առնել, ձեռնոցը կորցնել, քար քաշել, շատ ջուր վերցնել:

- 1) երեքը
- 2) չորսը
- 3) հինգը
- 4) վեցը

**112. Ո՞ր շարքի դարձվածքները իրար հականիշ չեն:**

- 1) բերանը փակել- խոսք բացել
- 2) թռչունի թևով-կրիայի քայլերով
- 3) քթի տակ-յոթ սարի հետևում
- 4) աչքի փուշ-աչքի լույս

**113. Ո՞ր շարքի ոչ բոլոր բառակապակցություններն ունեն դարձվածային իմաստ:**

- 1) հետին պլան մղվել, կաշվից դուրս գալ, խոսքի թելը կտրել
- 2) աչք չբացել, սպիտակ դրոշ պարզել, մեջքը ծռել
- 3) աչքը թեքել, պատերը ներկել, արևը խավարել
- 4) ձեռնոց նետել, խաղից դուրս գալ, աչք փակել

**114. Ո՞ր նախադասության մեջ դարձվածք չկա:**

- 1) Ամպը լեզուն կուլ է տվել,  
Հնար չունի որոտալու:
- 2) Աշխարհն այնպես արևոտ, այնպես թեթև է,  
Եվ մահս յոթ անգամ յոթ լեռան ետև է...
- 3) Կրակի բոցը դանդաղ մարում է ,  
Մեռնող սրտի պես թույլ բաբախում,  
Եվ կրակի մոտ տխուր մայում է  
Մատաղի գառը վանքի բակում...
- 4) Հայաստան ասելիս աշխարհը իմ տունն է,  
Հայաստան ասելիս էլ մահը ո՞ւմ շունն է  
Կմնամ, կլինեմ այսպես:

**115. Տրված բանաստեղծական հատվածներից որո՞ւմ դարձվածք չկա:**

- 1) Պատահում է՝ սիրտդ լցվում  
Ու չի լալիս ժամանակին,  
Ամպը անձրև է խոստանում  
Ու չի տալիս ժամանակին:
- 2) Ծիածանները լռած երգեր են,  
Լռած խոսքեր են աղոթքների,  
Եվ կածանները ոտնահետքեր են  
Վաղուց հող դարձած ճամփորդների:
- 3) Բայց մտքիս մեջ ու երգիս մեջ,  
Ա՛խ, ես ուր էլ գնում,  
Այն աշխարհից մի բեռ կանաչ  
Մանկություն է մնում:
- 4) Հացը բուրում է հողից  
Մինչև եթերը...  
Խղճիս ստրուկն եմ նորից  
Ու գլխիս տերը:

**116. Ո՞ր նախադասության մեջ դարձվածք չկա:**

- 1) Երազեցի շարունակ  
Իմ կյանքի մեջ ես մանկուց  
Ու մնացի միշտ մենակ  
Պատրանքի մեջ ես մանկուց:
- 2) Խորքերում գանձ ունեն քարափները,  
Թիկունքներին ունեն անտառ ու հերկ...  
Միայն մի բան չունեն քարափները,  
Քարափները չունեն կարապի երգ:
- 3) Վերքիս ցավից լաց եմ լինում,  
Գու ինձանից նեղանում ես,  
Նեղանալը՝ քարը գլխին,  
Սկսում ես նեղացնել:
- 4) Եվ արժե՞ր արդյոք, որ աշխարհ գայիր  
Մի տուն, մի գլուխ պահելու համար:

**117. Ո՞ր բառակապակցությունը դարձվածային իմաստ *չունի*:**

- 1) իր ձին քշել
- 2) լեզու առնել
- 3) լուսնից իջնել
- 4) գիրք գրել

**118. Ո՞ր բառակապակցությունը դարձվածային իմաստ *չունի*:**

- 1) աչքը վրան պահել
- 2) ճանապարհը ոտքով անցնել
- 3) ականջին օղ անել
- 4) գլուխ գլխի տալ

**119. Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ *կա*:**

- 1) Իմ ականջներում դեռ հնչում է նրա թախծոտ երգը, և թվում է, թե տեսնում եմ օրիորդի՝ սիրո զգացմունքից այրվող դեմքը:
- 2) Հրատարակությունը չէր պաշտպանել գրողի հեղինակային իրավունքները:
- 3) Չկները վտառներով բարձրանում են վեր, ուրախ խայտում, և արևի տակ հարափոփոխ կայծկլտում են նրանց սաղափե թեփուկները:
- 4) Լուսնի մահիկը աղոտ լուսավորում էր անտառի նեղ կածանը:

**120. Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ *կա*:**

- 1) Տնօրենը հետադիմական աշակերտների հարցը քննեց և որոշեց թողնել նույն դասարանում՝ դասընթացը կրկնելու:
- 2) Նրա սուր հայացքից մարդ ստիպված էր լինում տեղի տալ:
- 3) Մահմանագլխին տեղի ունեցավ երկու պետությունների ղեկավարների պաշտոնական հանդիպումը:
- 4) Թեպետ շատ էր հոգնել, բայց հակամետ էր աշխատանքն ավարտելուն:

**121. Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ *կա*:**

- 1) Մարգարեանին զգում էր վերահասու վտանգը, սակայն չէր կարողանում իշխաններին միավորել:
- 2) Վաղորդյան աղջամուղջին անտառը լցվեց քնքուշ զեփյուռի շնկշնկոցով:
- 3) Մենք սրբորեն պիտի պահպանենք մեր նախնիներից ժառանգած մշակութային արժեքները:
- 4) Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության պաշտոնական հանդիպումները արդյունավետ եղան:

**122. Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ *կա*:**

- 1) Կրակոցի ձայնից դրնգաց անտառը, դեղին տերևներից ցողի խոշոր կաթիլները մետաղի ծանրությամբ ընկան խաշամի վրա:
- 2) Անտառապահի բարակը մեկ նայում էր տիրոջը, մեկ էլ անհանգիստ հոտոտում թփերը, որտեղ քիչ առաջ թաքտում էր արնոտ միրիսավը:
- 3) Ինչ վերաբերում է ոստիկանների վրա աղյուս շարտելու փաստին, ապա ինքը համոզված է, որ ուսանողներն աղյուսը նետել են՝ վախի զգացմունքից դրդված:
- 4) Իրիկվա հովից խշշում էին սիմինդրի կոշտացած ցողունները, չորացած տերևները անհանգիստ խնքվում էին այս ու այն անկյունում, հուսահատ թաքտում:

**123. Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ կա:**

- 1) Յուրաքանչյուր շաբաթ օր ընտանեկան հարկի տակ հավաքվելը մեզ համար թանկ ավանդույթ է դարձել:
- 2) Տղան սուզվեց ջրի տակ, և նույն վայրկյանին վրան հարձակվեց մի հսկա շնամուկ:
- 3) Այն, ինչ դու արեցիր, կարող է անել միայն սկզբունքայնորեն և բարձր արժանիքների տեր մարդը:
- 4) Ողջամիտ այդ մարդը ամեն կերպ փորձում էր հեռու մնալ վարկաբեկվելուց:

**124. Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ կա:**

- 1) Ջրոսաշրջիկները իրենց ապշած հայացքները հառել էին դեմ դիմաց հառնող երկնաքերներին:
- 2) Ազնիվ զգացումների տեր այդ մարդը չկարողացավ գուրկ մնալ վարկաբեկվելուց:
- 3) Վկայի ցուցմունքից պարզ դարձավ, որ մեղավորը բոլորովին այլ մարդ է:
- 4) Այդ առավոտ սուրհանդակներն ավետեցին վաղուց սպասված հաղթանակը:

**125. Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ կա:**

- 1) Տատիցս մենք միշտ առնում էինք մաքուր սպիտակեղենի զգլխիչ հոտը:
- 2) Հնագետները պեղելով կավից գատում են օրական մի ուլունք, ջնարակած մի կտոր ափսե, երբեմն մի կոպիտ արծաթադրամ:
- 3) Թռչունների երամակը դանդաղ ընթացքով չվում էր հարավ:
- 4) Եղավ կաճառներում, ուր գիտունները մարդկային անգոր մտքով ճշմարտության վճիտ ջրերն էին պղտորում միայն:

**126. Ո՞ր շարքում են ճիշտ նշված բոլոր այն նախադասությունների համարները, որոնցում բառագործածության սխալ կա:**

- ա. Այդ օրերին նա օգտագործում էր մեծ թվով ալկոհոլ:
- բ. Դեռ քսան անգամ կկուն նրան ավետելու էր առվակների վարարումը:
- գ. Մեխը փայտի մեջ չէր խրվում, և նա կրկին անգամ մուրճով հարվածեց:
- դ. Ես չեմ սիրում վատաբանել մարդկանց, բայց նրա նենգ արարքը ուղղակի անզնահատելի է:
- ե. Հրամանատարի խոսքերից գոտեպնդված՝ նա ոտքի կանգնեց:

- 1) ա, ե
- 2) բ, գ, ե
- 3) ա, գ, դ
- 4) բ, դ

**127. Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ չկա:**

- 1) Նրանց պարտեզում ծաղկել էին ալոջի ծառերը:
- 2) Կարգապահական կոմիտեն կվերանայի հարցը և զգուշացումը կգրանցի ութերորդ համարի խաղացողի օգտին:
- 3) Լուսնի մահիճը դժգույն լուսավորում էր ծուռումուռ արահետը:
- 4) Աղջամուղջի մեջ կամաց-կամաց սկսեցին տարորոշվել գյուղի տները:

**128. Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ չկա:**

- 1) Գիտնականների՝ տիեզերքի ուսումնասիրությանն ուղղված ջանքերը զերծ են շահադիտական ամեն տեսակի նպատակներից:
- 2) Ժողովուրդը փառաբանում էր ռազմական օդաչուի անօրինական սխրանքը:
- 3) Մեծ իմաստասերը գրեց, թե տկարամիտ են այն գլուխները, որոնց թույր կարծիքով Երկիրը լեռներից է շինված. լեռներից միայն Հայքն է շինված:
- 4) Թեև մրցակիցը ուժեղ էր, բայց իր համառության պատճառով մարզիկը կարողացավ հաղթել նրան:

**129. Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ չկա:**

- 1) Քահանան երիցս անգամ հորդորել էր կողմերին հաշտվել, սակայն վրեժը կուրացրել էր նրանց:
- 2) Մի ուկրաինուհի գեղջկուհի պատմում էր, թե գերմանացիներն ինչ վայրագություններ էին արել իրենց գյուղում:
- 3) Ոսկեհեր մագերով արքայադուստրը կծիկը պատահաբար գցել էր ջրհորը:
- 4) Ըստ օրենքի՝ խստագույնս պատժվելու են բոլոր կարգազանցները:

www.atc.am

## ԲԱԺԻՆ 2 Բառակազմություն

### 1. Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությանը պարզ:

- 1) շաքար, նշխար, կթան, ամբարտակ
- 2) գողոն, գուշակ, եղունգ, նաժիշտ
- 3) կաղամբ, ընկույզ, բագում, սնուտի
- 4) բոժոժ, հելլեն, հրաման, երաշտ

### 2. Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությանը պարզ:

- 1) թախիժ, վերարկու, արմատ, թիրախ
- 2) պնակ, կախարդ, խնդիր, տրտում
- 3) դատարկ, փոթորիկ, կարոտ, շքեղ
- 4) ժառանգ, ճանապարհ, փառք, վայրագ

### 3. Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությանը պարզ:

- 1) խաղող, բարի, նոճի, ամառ
- 2) քույր, գլխարկ, ցորեն, արդար
- 3) միրգ, հատված, ամրոց, մարագ
- 4) դեղձ, կարմիր, ծիրան, հրապարակ

### 4. Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությանը պարզ:

- 1) դեղձան, հնոց, աղոտ, դրվագ
- 2) խրճիթ, կրտսեր, միտք, հրավեր
- 3) արձակ, գծուծ, ցնցուղ, կայարան
- 4) վիթխարի, գետին, թախիժ, խիղճ

### 5. Ո՞ր շարքի բոլոր բառերում մեկից ավելի արմատ *չկա*:

- 1) համակրանք, այգեպան, թերխաշ, կատվագգի
- 2) քնքշագին, վեհագույն, նախադաս, թախանձանք
- 3) կորիզավոր, նրբերանգ, եռակի, կարճիկ
- 4) նախասիրտ, բազմահմուտ, տգեղ, մեղմորեն

### 6. Ո՞ր շարքի բոլոր բառերն ունեն ընդհանուր արմատ:

- 1) պատուհան, միջնապատ, պատշար, անպատեհ
- 2) դարակես, դարավանդ, նախնադար, ոսկեդար
- 3) թելադրել, բաղադրություն, բարձրադիր, կարգադրիչ
- 4) գետափնյա, գետնամած, գետաբերան, լեզվագետ

### 7. Ո՞ր բառը մյուսների հետ ընդհանուր արմատ *չունի*:

- 1) աղեկեզ
- 2) աղեկտուր
- 3) աղաման
- 4) աղեխարշ

### 8. Ո՞ր բառը մյուսների հետ ընդհանուր արմատ *չունի*:

- 1) միապետ
- 2) հրոսակապետ
- 3) վարչապետ
- 4) սակավապետ

**9. Տրված բոլոր բառերն ունեն ընդհանուր արմատ, բացի մեկից. ո՞ր շարքում է այդ բառը:**

- 1) օդանավակայան, մերձակա
- 2) կայագոր, երկարակյաց
- 3) ներկա, կայարան
- 4) կայուն, հեռակա

**10. Ո՞ր շարքի բոլոր բառերում մեկից ավելի արմատ կա:**

- 1) հուշարար, վրեժխնդիր, որմնասյուն, գերակշիռ
- 2) նյութապաշտ, հազարաբույր, ներաշխարհ, շրջակա
- 3) հողմահալած, տարալեզու, տիկին, ջերմաչափ
- 4) հարկատու, մարդախույս, դավանափոխ, եռաժանի

**11. Ո՞ր շարքի բոլոր բառերում անկախ գործածություն չունեցող արմատներ կան:**

- 1) հեռաստան, թաքուստ, խոսուն
- 2) տարրալուծել, խառնվածք, մեղմասահ
- 3) միաձին, հենարան, ուղեբեռ
- 4) ոսկեբեր, բարեհույս, գրանշան

**12. Ո՞ր շարքի բոլոր բառերում կա *հուր* արմատը:**

- 1) հրանոթ, հրամանատար, հրեղեն
- 2) քամահրել, հուրի-փերի, հրետանավոր
- 3) հրոտ, հրակայուն, հրաձին
- 4) հրաժարվել, հուրհեր, հրացան

**13. Ո՞ր նախադասության ընդգծված բառի արմատն է մյուսներից տարբեր:**

- 1) ...Կամ ինչպես քաջքերն **այրերի** մթնից,  
Երբ նայում է մարդ քարափի գլխից,  
Կամ թե ուշացած անցնում է ձորով,  
Խաբում են, կանչում ծանոթ ձայներով...
- 2) Այդպես էլ ծնվեց մեկը նրանցից,  
Ծնվեց նա՝ **Այր** մի՛ Մաշտոց անունով:
- 3) Ես գրում եմ բրուտների **այրի** մասին, որի կիսամթում բրուտը ոտքով պտտեցնում է փայտե չարխի կլոր տախտակը:
- 4) Եվ մութ **այրերից** մամռոտ ժայռերի,  
Թավուտ ծմակի լռին խորքերից,  
Մանուկ հասակիս հնչուն ծիծաղի  
Արձագանքն ահա լսում եմ նորից:

**14. Տրված բառերից քանի՞սն ունեն ընդհանուր արմատ:**

Արգելք, անարգանք, արգանակ, հարգել, մեծարգո:

- 1) հինգը
- 2) երկուսը
- 3) երեքը
- 4) չորսը

**15. Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությանբ բարդ:**

- 1) բերքահավաք, մրգատու, քչախոս, պարահանդես
- 2) շրջանավարտ, ստրկամիտ, փաստարկ, խաղընկեր
- 3) օրավուր, սպիտակաթույր, ելևէջ, վաստակաշատ
- 4) հատընտիր, սառցալեռ, տաղասաց, ծաղկաթերթ

**16. Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությանբ բարդ:**

- 1) ամրոցամերձ, շողարձակ, կրափոշի, կարգազանց
- 2) նրբաքիմք, ռամկավար, առատածեռն, կատվառյուծ
- 3) յուրօրինակ, գրադարակ, մանկամարդ, տիկին
- 4) ազատամիտ, բեռնատար, արձակագիր, ձեղնահարկ

**17. Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությանբ բարդ:**

- 1) խճանկար, ճահճափոս, մեծածախ, վատթարագույն
- 2) թախծաղեմ, այլախոհ, արմատակալ, գերած
- 3) փափկանկատ, ելումուտ, փրկագին, տրտմաշուք
- 4) ծածկախոս, փոթորկահույզ, կարոտախտ, սրտմաշուկ

**18. Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությանբ բարդ:**

- 1) դալկաղեմ, մտախոհ, գահակալ, կայսերապաշտ
- 2) փափկասուն, երթուղի, թանկարժեք, գեղաշուք
- 3) քթախոտ, դառնաղի, կարգախոս, թախծանուշ
- 4) ճեմուղի, ոգեշունչ, ուղղամիտ, սառցահատ

**19. Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությանբ բարդ:**

- 1) ծովափ, սրտակեր, վերադաս, վազանց
- 2) սակագին, գրքասեր, ծածկագիր, խելամիտ
- 3) թոքախտ, ասպագեն, որևէ, ջրաչափ
- 4) սնանկ, բաժնետոմս, բքախեղդ, հացառատ

**20. Ո՞ր շարքի բոլոր բառերն են հարադրական բարդություններ:**

- 1) դուրս գալ, ի հաշիվ, մեկմեկու, ծափ-ծիծաղ
- 2) երկու երրորդ, ի վերջո, վրատերթ, լեփ-լեցուն
- 3) ոչ մի, ոչ ոք, ասուլիս, չորս հինգերորդ
- 4) դեփ-դեղին, ի միջի այլոց, մեջ ընկնել, ցույց տալ

**21. Ո՞ր շարքի բոլոր բառերում հոդակապ կա:**

- 1) բարեսես, ակնածանք, կաշեգործ, դավադիր
- 2) արևայրուք, լուսահորդ, կորամեջք, լուսաբաց
- 3) ալեծուփ, գարեջուր, հոգատար, որդեսեր
- 4) գինետուն, հնադար, բնավեր, լուսապսակ



**22. Ո՞ր շարքի բոլոր բառերում հոդակապ կա:**

- 1) ամենատես, հեռանկար, գետեգր, լեռնաշղթա
- 2) բնաշխարհ, ծովածոց, մշտադալար, տարեվերջ
- 3) մեծամիտ, մարդամոտ, հանրաքվե, ծովառյուծ
- 4) բարյացակամ, գեղագետ, բարենպաստ, դափնետերև

**23. Ո՞ր շարքի բոլոր բառերում հոդակապ կա:**

- 1) այգեպատ, սևաչյա, լուսահորդ, կորամեջք
- 2) այգեգործ, բարեգութ, ալեծուփ, հմայագեղ
- 3) ցորնամորթ, հնադար, շողակն, հոգեորդի
- 4) հոգատար, հարածուն, գարեջուր, անբարեսես

**24. Ո՞ր շարքի բոլոր բառերն են անհոդակապ:**

- 1) հրձիգ, շեղաչք, բարեհունչ, ընձուղտ
- 2) կնատյաց, մեծագղեցիկ, չափերիգ, բարձրարժեք
- 3) անակնկալ, ջարդարար, քարաղ, ուղեկալ
- 4) օրհներգ, մեղրամիս, ստվարաթիվ, խաժակն

**25. Տրված բառերից քանիստ՞ում հոդակապ կա:**

Քարածուխ, տարեդարձ, լուսաստղ, թանապուր, շաքարավազ, փութեռանդ, զբոսայգի, կարմրախտ, զուգերգ, հուզառատ:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) ոչ մեկում

**26. Տրված բառերից ո՞րն է հապավում:**

- 1) երթուղի
- 2) գրչընկեր
- 3) բուժկենտրոն
- 4) գազօջախ

**27. Տրված բառերից ո՞րը հապավում չէ:**

- 1) զինգրքույկ
- 2) զինկոմ
- 3) զինդեկ
- 4) զինվոր

**28. Տրված բառերից ո՞րը հապավում չէ:**

- 1) քաղմաս
- 2) գործընկեր
- 3) տեխնոնում
- 4) մարզկենտրոն

**29. Տրված բառերից ո՞րը հապավում չէ:**

- 1) մանրէ
- 2) շինջոկատ
- 3) ֆիզմաթ
- 4) պետպլան

**30. Ո՞ր շարքի բոլոր բառերն են հապավումներ:**

- 1) փղոսկր, գազապաստարան, հրամկազմ, ծնողկոմիտե
- 2) կենցաղապասարկում, երիտքերականներ, վիճվարչություն, կրթօջախ
- 3) դարձերես, հրետգունդ, Գ-յումուշիէկ, միջբուհական
- 4) Շիրջրանցք, խոտհունձ, դողերոցք, գիտխորհուրդ

**31. Ո՞ր շարքի ոչ բոլոր բառերն են հապավումներ:**

- 1) ժողդատարան, պետբյուջե, ԱՄՆ, զինդեկ
- 2) աշխգրքույկ, Եվրասիա, բուժկենտրոն, ՌԻԳ-Ը
- 3) գիտխորհուրդ, ավտոտեսուչ, տեխզնում, կուսակից
- 4) ՋԼՄ, փոխօգնություն, պետնախարար, պետկրկես

**32. Ո՞ր շարքի բոլոր բառերն են խառը հապավումներ:**

- 1) Սևանհէկ, բուժմիավորում, քաղխորհուրդ, ուստարի
- 2) զագս, պետտուրք, դիզարժիչներ, ՀՀ
- 3) բանավան, բուհ, սանհանգույց, ԱՊՀ
- 4) հէկ, բուժանձնակազմ, գիտքարտուղար, ուսմասվար

**33. Ո՞ր շարքի բոլոր բառերն են խառը հապավումներ:**

- 1) մեխմաթ, շինհրապարակ, Չորահէկ, մուլտֆիլմ
- 2) մեթոդմիավորում, քիմմաքրում, տնտեսվար, քիմֆակ
- 3) պետհամալսարան, բնակվարձ, տեղկոմ, քաղդեկ
- 4) Բանաքեռհէկ, ֆիզքիմիկոս, տնտհաշվարկ, սանէպիդկայան

**34. Ո՞ր նախադասության մեջ հապավում կա:**

- 1) Գյուղապետարանի առաջիկա ծրագրերից մեկն էլ հիմնական ջրատարի նորոգումն է:
- 2) Քրեական գործը կարճվեց դատաբժշկի եզրակացության հիման վրա, և դատաքննությունը ընթացավ ճիշտ հունով:
- 3) Չորամասի նորակառույց զինապահեստը անհրաժեշտ զինապաշար է կուտակել:
- 4) Պետական վարկերով գյուղգործիքներ գնած գյուղացիները սկսեցին գարնանացանի աշխատանքները:

**35. Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությամբ ածանցավոր:**

- 1) առաջ, ոչինչ, կայք, չվերթ
- 2) առողջ, դիրք, էտոց, պահակ
- 3) տարակույս, դյուրին, կաղին, պահոց
- 4) շարան, վայրի, տուրք, պարան

**36. Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությամբ ածանցավոր:**

- 1) տարկետում, արժանի, կարծիք, փառատենչ
- 2) տեսուչ, անկյալ, երջանիկ, հայտնապես
- 3) առտնին, դպրոց, ուժանակ, հարակից
- 4) զգայուն, հպանցիկ, վերադարձ, բանական

**37. Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությամբ ածանցավոր:**

- 1) ելուստ, արժեք, էժանագին, ավետիք
- 2) չեղյալ, փութկոտ, լուսեղ, արտահոսք
- 3) վարույթ, միլիոն, պարբերաբար, կտրվածք
- 4) այգեպան, չարագործ, վերահասու, գերբնական

**38. Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությանը ածանցավոր:**

- 1) տրամադրություն, փոխնախարար, դրկից, գերակա
- 2) մակերես, դերբայ, դժխենմ, արտասանություն
- 3) տարաշխարհիկ, ներդիր, բաղադրիչ, անդրադարձ
- 4) վերաբերություն, անդամավճար, հակադիր, բացականչել

**39. Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությանը ածանցավոր:**

- 1) հեռաստան, խորաքնին, տենչանք, ընտրովի
- 2) ալիք, տառացի, հուզմունք, գործիչ
- 3) հնչյուն, լուսեղ, քսու, երկրապահ
- 4) միտք, դասալիք, հավաքածու, օրինյալ

**40. Ո՞ր շարքի բոլոր բառերում մեկից ավելի ածանց կա:**

- 1) վերավաճառք, ստորադասական, ճախորդություն, թոչնաբուծարան
- 2) սննդամթերք, նրբաքիմք, համերկրացի, առաջնակարգ
- 3) սառցակալում, անփառունակ, արտահանում, տախտակամած
- 4) վարչակազմ, ներլարում, հարաբերական, խորհրդատու

**41. Ո՞ր շարքի բոլոր բառերում մեկից ավելի ածանց կա:**

- 1) անարժան, տարանցիկ, հականեխիչ, հնչյունական
- 2) անտրամադիր, գերմարդկային, հարսնացու, անտունի
- 3) արտահագուստ, հակաօդային, գերեվարել, առաջին
- 4) ենթատեսակ, անվանական, վերստուգիչ, երկրորդական

**42. Ո՞ր բառում չկա -ք վերջածանցը:**

- 1) ալիք
- 2) տարիք
- 3) խնամք
- 4) ավետիք

**43. Ո՞ր բառում չկա հակ- նախածանցը:**

- 1) հակասություն
- 2) հակվածություն
- 3) հակաթույն
- 4) հակընդդեմ

**44. Ո՞ր բառում չկա դժ- նախածանցը:**

- 1) դժոխք
- 2) դժպատեհ
- 3) դժկամ
- 4) դժգույն

**45. Ո՞ր բառում է հակ - նախածանցով գոյական կազմվել:**

- 1) հակառակ
- 2) հակադիր
- 3) հակոտնյա
- 4) հակահարված

**46. Ո՞ր շարքի բոլոր բառերում կա -ակ վերջածանցը:**

- 1) վարդակ, գիտակ, վտակ, պտուտակ
- 2) կղզյակ, արգելակ, տարբերակ, միակ
- 3) մոլորակ, խաժակ, ալյակ, խոյակ
- 4) ունակ, կողակ, հարսնյակ, ազդակ

**47. Ո՞ր շարքի բոլոր բառերում կա *ապ*- նախածանցը:**

- 1) ապշահար, ապերախտ, ապիկար, ապակատար
- 2) ապաքինվել, ապացույց, ապերասան, ապառաժ
- 3) ապաբախտ, ապառիկ, ապստամբ, ապերջանիկ
- 4) ապարոշ, ապարանջան, ապակառուցում, ապաթարց

**48. Ո՞ր շարքի ոչ բոլոր բառերում կա *-ան* վերջածանցը:**

- 1) կչկչան, փական, ծորան, շարան
- 2) ոլորան, կայան, գերան, հնձան
- 3) զրնգան, փաթաթան, ճչան, խցան
- 4) իշխան, ձգան, կծան, խթան

**49. Տրված իմաստներից ո՞րը չունի *երաշխիք* բառը:**

- 1) գրավական
- 2) հավաստիք
- 3) հավատամք
- 4) առհավատչյա

**50. Ո՞ր շարքի բոլոր բառերում կա *-ե* վերջածանցը:**

- 1) թավշե, աշտե, քերծե, արծաթե
- 2) փայտե, լուսե, մարմարե, թաղիքե
- 3) մետաքսե, ափսե, նախօրե, բրդե
- 4) շղարշե, ծղոտե, ոստրե, ոսկե

**51. Տրված բառերից քանիստ՞ում կա *տար*- ածանցը:**

Տարկենտում, տարենմուտ, տարագրություն, տարորոշել, տարեգրություն, տարեվերջ, տարադրամ, տարելից, տարանցիկ, տարագատել:

- 1) մեկում
- 2) չորսում
- 3) վեցում
- 4) ութում

**52. Տրված բառերից քանիստ՞ում կա *-ագին* վերջածանցը:**

Յնձագին, սրտագին, գլխագին, ցավագին, փրկագին, կարոտագին, հիվանդագին, սակագին, ջերմագին, սպրանքագին:

- 1) բոլորում
- 2) վեցում
- 3) հինգում
- 4) յոթում

**53. Տրված բառերից քանիստ՞ն չկա *-ակ* վերջածանցը:**

Կղզյակ, լողակ, բանակ, թիակ, դանակ, կրակ, վարակ, սուգակ, խոյակ, հասակ:

- 1) մեկում
- 2) երեքում
- 3) չորսում
- 4) հինգում

**54. Տրված բառերից քանիստ՞ն չկա *-անի* վերջածանցը:**

Ավագանի, պատանի, ընտրանի, լեզվանի, նագանի, նամականի, գեղանի, ընտանի, պիտանի, եռածանի:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

**55. Տրված բառերի արմատներից որի՞ն կարող է միանալ *-ական* վերջածանցը և բառ կազմել (առանց երկրորդ ածանցի):**

- 1) քարայր
- 2) քաղցրանուն
- 3) վարչակարգ
- 4) վերջնարկ

**56. Տրված բառերի արմատներից որի՞ն կարող է միանալ *իչ-* վերջածանցը և բառ կազմել (առանց երկրորդ ածանցի):**

- 1) արտահայտություն
- 2) գնդացիք
- 3) բաղադրատոմս
- 4) մարզպետ

**57. Տրված բառերի արմատներից որի՞ն կարող է միանալ *-անի* վերջածանցը և բառ կազմել (առանց երկրորդ ածանցի):**

- 1) անուն
- 2) հովհար
- 3) հովվերգություն
- 4) խաժակն

**58. Տրված բառերի արմատներից որի՞ն կարող է միանալ *-ովի* վերջածանցը և բառ կազմել (առանց երկրորդ ածանցի):**

- 1) խորհրդածողով
- 2) տափակածուկ
- 3) կարեվեր
- 4) բանալի

**59. Տրված բառերի արմատներից որի՞ն կարող է միանալ *-յալ* վերջածանցը և բառ կազմել (առանց երկրորդ ածանցի):**

- 1) հանգուցալուծում
- 2) փոխառություն
- 3) բաղադրատոմս
- 4) տալիք

60. Տրված բառերի արմատներից որի՞ն կարող է միանալ *-յալ* վերջածանցը և բառ կազմել (առանց երկրորդ ածանցի):

- 1) սառցալեռ
- 2) ախտանիշ
- 3) ուսադիր
- 4) անցանկալի

61. Տրված բառերի արմատներից որի՞ն կարող է միանալ *-ու* վերջածանցը և բառ կազմել (առանց երկրորդ ածանցի):

- 1) թթենի
- 2) առապար
- 3) նազենազ
- 4) բնակվարձ

62. Տրված բառերի արմատներից որի՞ն կարող է միանալ *-անի* վերջածանցը և բառ կազմել (առանց երկրորդ ածանցի):

- 1) մեծարժեք
- 2) երերուն
- 3) բազմատեսակ
- 4) ընտանեկան

63. Տրված բառերի արմատներից որի՞ն կարող է միանալ *-յակ* վերջածանցը և բառ կազմել (առանց երկրորդ ածանցի):

- 1) հայրողի
- 2) աղավնատուն
- 3) հոգեթով
- 4) հարսնացու

64. Տրված բառերից քանիսի՞ն արմատին կարող է միանալ *-իք* վերջածանցը և բառ կազմել (առանց երկրորդ ածանցի):

Ալեբախություն, ավետաբեր, օձագալար, անկեղծանալ, ազգասիրաբար, բաղապետարան, անհիշաչար, տարակարծություն, թրատել, հավաստագիր:

- 1) հինգին
- 2) վեցին
- 3) յոթին
- 4) ութին

65. Տրված բառերից քանիսի՞ն արմատներից մեկին կարող է միանալ *-ակ* վերջածանցը և բառ կազմել՝ առանց երկրորդ ածանցի:

*Ղարազլուխ, վտիտ, թիմակից, գնդապետ, թերակղզի, տարբերություն, ակնոց, ալեհավաք, ձյունազես, ծովահեն:*

- 1) մեկի
- 2) չորսի
- 3) հինգի
- 4) յոթի

66. Տրված բառերից քանիսի՞<sup>օ</sup> արմատին կարող է միանալ *-անք* վերջածանցը և բառ կազմել (առանց երկրորդ ածանցի):

Ընչագուրկ, ծովածուփ, առատահոս, անհնագանդ, կահավորում, համակրել, սնապարծ, աղակալում, շանթարգել, նստակյաց:

- 1) բոլորի
- 2) յոթի
- 3) վեցի
- 4) հինգի

67. Տրված բառերից քանիսի՞<sup>օ</sup> արմատին կարող է միանալ *-ք* վերջածանցը և բառ կազմել (առանց երկրորդ ածանցի):

Հենասյուն, վերադասավորում, սարնիվեր, պետաիրավական, հավասարություն, կարգազանց, լուսազգայուն, սնափառություն, մարդահավաք, վրիժառու:

- 1) չորսի
- 2) հինգի
- 3) երեքի
- 4) ոչ մեկի

68. Տրված բառերից քանիսի՞<sup>օ</sup> արմատին կարող է միանալ *-ական* վերջածանցը և բառ կազմել (առանց երկրորդ ածանցի):

Պարբերույթ, լացուկոծ, լեզու, վարչություն, լուսավորիչ, մտավոր, հոգատար, չարագույժ, երկարօրյա, արջատրս:

- 1) երկուսի
- 2) երեքի
- 3) չորսի
- 4) հինգի

69. Տրված բառերից քանիսի՞<sup>օ</sup> արմատին կարող է միանալ *-անի* վերջածանցը և բառ կազմել (առանց երկրորդ ածանցի):

Հայրանուն, ընտանեկան, քաղաքապետ, տեսակավորել, միալեզու, երեց, ծիրան, նրբագեղ, ազատ, նամակատար:

- 1) չորսի
- 2) յոթի
- 3) հինգի
- 4) վեցի

70. Ո՞ր բառի արմատներից ոչ մեկին *չի* կարող միանալ *-ույթ* ածանցը և բառ կազմել:

- 1) արժետուն
- 2) քաղցրահամ
- 3) տարեվերջ
- 4) դասվարություն

71. Ո՞ր բառի արմատներից ոչ մեկին *-ենի* ածանցը *չի* կարող միանալ և բառ կազմել:

- 1) քաղաքաշինություն
- 2) հորեղբայր
- 3) նստավայր
- 4) երկուռուցիկ

72. Ո՞ր շարքի բոլոր բառերն են բարդածանցավոր:

- 1) կարգապահություն, խորաքնին, հոգեբուժական, լուսանկարիչ
- 2) խելահեղություն, խմբագրատուն, վերջնախաղ, բնագիտական
- 3) աներկբայորեն, մայրաքաղաքային, միօրինակ, անընդգրկելի
- 4) անկողմնակալ, վիրահատություն, վայրէջք, բերքատու

73. Ո՞ր շարքի բոլոր բառերն են բարդածանցավոր:

- 1) կայարանապետ, ստորադասական, միջնակարգ, դպրոցամերձ
- 2) պարբերաբար, վարկառու, ժողովրդավար, ակնահաճո
- 3) ելևէջում, բազմաբնույթ, հարկադրանք, տարակարծիք
- 4) սառցապատ, թռչնավանդակ, հիշարժան, տաղերգու

74. Ո՞ր շարքի բոլոր բառերն են բարդածանցավոր:

- 1) ածխահանք, արևայրուք, մարգարտաշար, յուրօրինակ
- 2) թղթակցություն, կառավարիչ, ակնաբուժարան, անջրանցիկ
- 3) ազգակցական, անդրծովյան, բազմաստիճան, գիշերերգություն
- 4) հեռուստացույց, տասնմեկերորդ, որմնախորշ, ժողովրդավար

75. Ո՞ր բառի բառակազմական վերլուծության մեջ սխալ չկա:

- 1) **տնօրինություն-տուն** և **օր**՝ արմատներ, **են** և **ություն**՝ ածանցներ
- 2) **փոխանվանաբար-անուն**՝ արմատ, **փոխ**, **ան**, **աբար**՝ ածանցներ
- 3) **տարատեսակ- տես**՝ արմատ, **տար**, **ակ**՝ ածանցներ
- 4) **թռչնաբուժարան-թռչուն** և **բույժ**՝ արմատներ, **ա**՝ հոդակապ, **արան**՝ ածանց



## ԳԼՈՒԽ 3 ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

### ԲԱԺԻՆ 1 Գոյական

**1. Ո՞ր շարքի բոլոր բառերն են գոյականներ:**

- 1) ճրագ, սավեր, քարափ, գունատ
- 2) փողոց, գնդացիք, քարեքար, հասկ
- 3) դրոշ, կտուր, հեծելագոր, հույժ
- 4) կյանք, կեսօր, խշշոց, դերձան

**2. Ո՞ր շարքի բոլոր բառերն են գոյականներ:**

- 1) գեղադիր, արհամարհանք, կրկնապատկեր, սիռոց
- 2) տխրանք, դերձակ, հանգանակություն, թթօղի
- 3) խմելիք, գավեշտ, ճյուղակոտոր, հմայք
- 4) զինագործ, մեսրոպատառ, ծանրասիրտ, կաթնաշոռ

**3. Ո՞ր շարքում գոյական չկա:**

- 1) ըմպելի, ոսկեգօծ, սերմնացան, գորշագույն
- 2) հեգ, ճայ, քարակոփ, մանրիկ
- 3) ծովեզր, կարճ, եռակի, տողան
- 4) սրանգր, նրբաթև, եռաձայն, հավերժաբուխ

**4. Ո՞ր նախադասության մեջ ընդգծվածը գոյական չէ:**

- 1) **Ջինվորական**, կատարիչ պարտքը հայրենիքիդ առաջ:
- 2) Անկյունում իրեն կանչելու հերթին էր սպասում անհանգիստ կանգնած մի **զինվորական**՝ սպայական ուսադիրներով:
- 3) **Ջինվորական** վաշտը մեկնում էր ճակատ:
- 4) Վերջապես կատարվեց նրա վաղեմի երազանքը. նա դարձավ **զինվորական**:

**5. Տրված բառերից քանի՞սը գոյական չեն:**

*Մատուցակ, պատրվակ, զանձանակ, ոստրե, հակիկթե, բայական, եռամսյակ, միջօրե, չխոսկան, հնձան:*

- 1) երկուսը
- 2) երեքը
- 3) չորսը
- 4) մեկը

**6. Ո՞ր շարքի բոլոր բառերն են անձնանիշ գոյականներ:**

- 1) ախոյան, դերձակ, խնամակալ, նվագավար
- 2) սպասյակ, մատուցակ, լրագիր, պարմանի
- 3) զինագործ, ծովահեն, սմբուկ, վանահայր
- 4) բժիշկ, գահաժառանգ, դերձան, ոստր

**7. Ո՞ր շարքի բոլոր գոյականներն են դրված հոգնակի թվով:**

- 1) բուսեր, սուսեր, նոթեր, կրոններ
- 2) օրեր, անցք, բանալիներ, սրտեր
- 3) նվերներ, հողեր, հրավերք, ազգեր
- 4) գիշերներ, պատճեններ, բեռներ, վաչկատուններ

**8. Տրված գոյականներից քանի՞սն են դրված եզակի թվով:**

*Պարոնայք, գորք, Վարդանանք, տնօրհներ, Արամենք, խոհեր, կարծիք, տարիք, պապեր, միտք:*

- 1) չորսը
- 2) հինգը
- 3) վեցը
- 4) յոթը

**9. Ո՞ր շարքի բոլոր բառերի հոգնակի թիվն է կազմվում *-եր* վերջավորությամբ:**

- 1) տեսաշար, ծաղկանախշ, շարասյուն, ձկնկուլ
- 2) օրինագիծ, ժանր, թագակիր, խաչքար
- 3) վագր, համերգաշար, թռչնաբույն, մեծատուն
- 4) մեծատառ, անասնակեր, լրագիր, որսաշուն

**10. Ո՞ր շարքի բոլոր բառերի հոգնակի թիվն է կազմվում *-եր* վերջավորությամբ:**

- 1) հավատարմագիր, մարգատոն, ուղեցույց, հիվանդայց
- 2) մենապար, մեկնակետ, գիսաստղ, ճամփեզր
- 3) հաղորդալար, գորացույց, նավթամուղ, ծխակարգ
- 4) հետնախորշ, կամարասյուն, մաքսանենգ, ջրէջք

**11. Ո՞ր շարքի բոլոր բառերի հոգնակի թիվն է կազմվում *-ներ* վերջավորությամբ:**

- 1) հայագետ, գործագուրկ, մարդասեր, ծաղկաթերթ
- 2) սերմնացան, գորամաս, անասնապահ, նետածիգ
- 3) չափահաս, վառելանյութ, ծխամորձ, ձրիակեր
- 4) երկնաքեր, սևամորթ, նետածիգ, քարտաշ

**12. Ո՞ր շարքի բոլոր բառերի հոգնակի թիվն է կազմվում *-ներ* վերջավորությամբ:**

- 1) արձակագիր, լուսարձակ, վրաերթ, ժամացույց
- 2) կարմրախայտ, թնդանոթ, բաղաձայն, տնամերձ
- 3) ձկնաբույծ, հանքափոր, նստացույց, մանկաբույժ
- 4) մահարձան, սվին, ոտնաձայն, ուսաղիք

**13. Ո՞ր շարքի բոլոր բառերի հոգնակի թիվն է կազմվում *-ներ* վերջավորությամբ:**

- 1) տեսակետ, օրացույց, շարասյուն, ռուս
- 2) խաչակիր, վաչկատուն, վագր, վիպագիր
- 3) շիկամուկ, այգեգործ, կաթնասուն, հերթապահ
- 4) օրինագիծ, ժանր, նախագահ, անտառահատ

**14. Տրված բառերից քանիսի՞ հոգնակի թիվն է կազմվում *-ներ* վերջավորությամբ:**

*Մեծատուն, լրագիր, նախամարդ, կրունկ, նստացույց, գրավատուն, սպա, գրոշ, հացատուն, պատճեն:*

- 1) չորսի
- 2) հինգի
- 3) վեցի
- 4) յոթի

**15. Ո՞ր շարքում հոգնակի թվի կազմության սխալ կա:**

- 1) ծաղկեփնջեր, վերնագրեր, դասալիքներ, մեկնաբաններ
- 2) ոտնաձայներ, հորաքույրեր, կավագործներ, խնամակալներ
- 3) կանգառներ, անվադողեր, նռներ, հարթաչափեր
- 4) ուսասպարկեր, օրհներգեր, հրահանգներ, սուսերակիրներ

**16. Ո՞ր շարքում հոգնակի թվի կազմության սխալ կա:**

- 1) հեռագրեր, խմորագնդեր, դասագրքեր, անձրևաջրեր
- 2) հանքափորներ, մանկաբույժներ, բեռնակիրներ, մեկնաբաններ
- 3) միջնապատեր, մանկատներ, մեծատներ, դրամատներ
- 4) կայսրեր, դուստրեր, սանրեր, աստղեր

**17. Ո՞ր շարքում հոգնակի թվի կազմության սխալ կա:**

- 1) մորաքույրեր, սպիներ, քարհատներ, արքայադուստրեր
- 2) վիպասքեր, հանքահորներ, սանրվածքներ, քարայծեր
- 3) վիպերգեր, վիպագիրներ, սայրեր, գրչատուփեր
- 4) ջերմաչափեր, գործավարներ, գործատուներ, նրբանցքներ

**18. Ո՞ր շարքում հոգնակի թվի կազմության սխալ կա:**

- 1) գործատերեր, նշագեղձեր, կողմնացույցներ, լեզվաբաններ
- 2) աստղագետներ, ոտնաձայններ, որմնասյուներ, արծվաբներ
- 3) նյութամուկներ, մարգարաշտեր, սպունգներ, լուսամուտներ
- 4) կոնյակագործներ, գազամուղներ, դաշույններ, խտանյութեր

**19. Ո՞ր շարքում հոգնակի թվի կազմության սխալ կա:**

- 1) հավատարմագրեր, ծաղկատուներ, կիզակետեր, գետեգրեր
- 2) տոհմաժառեր, հենասյուներ, թռռատերեր, քղանցքներ
- 3) հակիմթաշարեր, լսատերավառեր, կողմնացույցներ, մավթամուղներ
- 4) գորատերեր, շտաբներ, բելառուսներ, ցուցամուկներ

**20. Ո՞ր շարքում հոգնակի թվի կազմության սխալ կա:**

- 1) տեսակետներ, բանասերներ, գործատեղեր, դեղահաբեր
- 2) օրինագծեր, ստորակետեր, ծովեզրեր, ընչացքներ
- 3) սպաներ, չարագործներ, տոնաժառեր, չվերթեր
- 4) բեռնատարներ, պատճեններ, փառատուներ, ուղեցույցներ

**21. Ո՞ր շարքում հոգնակի թվի կազմության սխալ կա:**

- 1) թիմեր, քեռայրեր, քարայծեր, ծոռներ
- 2) ստորակետեր, մարտավկաներ, հացատներ, բուժկետեր
- 3) ինքնաեռներ, հարսնաքույրեր, տոհմաժառեր, տեսակետներ
- 4) մակբայեր, դասալիքներ, մեղրահացեր, ռուսներ

**22. Ո՞ր շարքում հոգնակի թվի կազմության սխալ չկա:**

- 1) ճամփեզրեր, հացթուխներ, ենթասպաներ, գինեգործեր
- 2) մարտադաշտեր, անասնապահներ, խաչակիրներ, լուսնեջրեր
- 3) դաշտամկներ, որթատունկներ, գործավարներ, խաղատներ
- 4) օրհներգեր, բազմակետեր, ձեռագիրներ, տետրեր

**23. Ո՞ր շարքում ուղղական հոլովով դրված բառ չկա:**

- 1) թղթի, քրոջ, այծենի, նախահոր
- 2) ընկերոջ, ամսվա, բակի, թիֆլիսեցի
- 3) տիրոջ, ծխնի, մորեղբոր, ամառվա,
- 4) իրար, օրվա, տիկնոջ, թառմայի

**24. Ո՞ր շարքի բոլոր բառերն են բացառական հոլովով:**

- 1) մերոնց, Գվինից, Ավանից, Վանից
- 2) վաղուց, անկողնուց, ծերունուց, լուցկուց
- 3) օղուց, պատանուց, ոսկուց, նեղուց
- 4) մարդուց, գինուց, ամուսնուց, այգուց

**25. Ո՞ր բառի սեռական հոլովն է սխալ կազմված:**

- 1) կաղինի
- 2) ոչ ոքի
- 3) վաչկատան
- 4) այրուձիի

**26. Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում միայն *ի* հոլովման:**

- 1) լույս, կաղնի, մանուկ, տարի
- 2) ձի, մրրիկ, եգ, քաղաք
- 3) գնչու, ավերում, շաբաթ, ծագում
- 4) փոթորիկ, առու, վայրկյան, սարդ

**27. Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում *ու* հոլովման:**

- 1) այգի, բարդի, մատանի, ամուսին
- 2) ծիրանենի, հայելի, կիրակի, լուցկի
- 3) Գյումրի, Լոռի, Սոչի, Ալավերդի
- 4) վազել, պատանի, ոչ ոք, աղախին

**28. Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում *ու* հոլովման:**

- 1) հայելի, թզենի, մարդ, գինի
- 2) մտածել, հոգնակի, հայուհի, բալենի
- 3) ձի, խոսել, բանալի, հայ
- 4) Գորկի, Բաֆֆի, Ոսկի, արփի

**29. Բառերից քանի՞սն են ենթարկվում *ու* հոլովման:**

*Անկողին, պսայ, վարգաձի, օղ, մարդ, խնկեղեգ, ամուսին, արարել, անկարգել, եթովպացի:*

- 1) հինգը
- 2) վեցը
- 3) յոթը
- 4) ութը

**30. Ո՞ր նախադասության մեջ *ու* հոլովման ենթարկվող բառ չկա:**

- 1) Ամուսինն անցյալ տարի էր մեռել` ոչ մի ժառանգություն չթողնելով:
- 2) Ձին ճանաչում էր այդ հովտի բոլոր բույրերն ու հոտերը:
- 3) Չորակներում հիմա էլ կա Մանասի տնկած այգին` սպիտակ ու կարմիր վարդերի թփերով:
- 4) Անին չէր մոռացել ո՛չ նրա սև վերարկուն, ո՛չ գունատ դեմքը:

**31. Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում *ան* հոլովման:**

- 1) ձմեռ, ձգտում, որմնասյուն, սդոցածուկ
- 2) բեռ, թռռ, հանգիստ, նուռ
- 3) ծունկ, ամառ, մանուկ, շարժում
- 4) լեռ, անկյուն, գարուն, փրկություն

**32. Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում *վա* հոլովման:**

- 1) ամառ, կեսօր, անձնանուն, գիշեր
- 2) երեկ, գարուն, ցերեկ, ժամ
- 3) շաբաթ, ժամանակ, վաղը, այսօր
- 4) կեսգիշեր, իրիկնաժամ, երբ, առաջ

**33. Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում *վա* հոլովման:**

- 1) ամիս, վայրկյան, վաղուց, կեսգիշեր
- 2) շաբաթ, կեսօր, միջնադար, առաջ
- 3) հունիս, տարի, առավոտ, ճաշ
- 4) երբ, ամառ, այսօր, ժամանակ

**34. Ո՞ր շարքի ոչ բոլոր բառերն են ենթարկվում *ոջ* հոլովման:**

- 1) հարսնաքույր, տեր, սկեսրայր, կին
- 2) հողատեր, սկեսուր, իրիցկին, գործատեր
- 3) տիկին, ընկեր, բուժքույր, քեռակին
- 4) աներ, հանքատեր, տալ, հորաքույր

**35. Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում *ներքին* հոլովման:**

- 1) եղբայր, վաչկատուն, դեղատուն, բազմանկյուն
- 2) ցասում, հուշասյուն, ծանրություն, մականուն
- 3) վանահայր, մայր, սուրանկյուն, ազգանուն
- 4) նախահայր, ուրախություն, հավասարում, գայլաշուն

**36. Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում *ա* ներքին հոլովման:**

- 1) հենասյուն, հայրանուն, անվանակոչություն, մահ
- 2) արյուն, դեղատուն, ջրշուն, թույլտվություն
- 3) բնություն, հանդիպում, ձյուն, եռանկյուն
- 4) հանգիստ, լիություն, աղջիկ, դպրատուն

**37. Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում *ա* ներքին հոլովման:**

- 1) արարում, խոխոջյուն, բազմանկյուն, հացատուն
- 2) հմտություն, անկյուն, ծովաշուն, դերանուն
- 3) դրամատուն, լիություն, գարուն, սյուն
- 4) շարասյուն, որոնում, խոխոջյուն, անձկություն

**38. Ո՞ր շարքի ոչ բոլոր բառերն են ենթարկվում *ա* ներքին հոլովման:**

- 1) հենասյուն, խաղատուն, եռանկյուն, մտերմություն
- 2) շուն, դերանուն, անկյուն, ձյուն
- 3) թողություն, սրություն, հիմնասյուն, մեծատուն
- 4) մականուն, կեցություն, թոնրատուն, արյուն

**39. Ո՞ր շարքի բոլոր գոյականներն են անորոշ առումով:**

- 1) խցանահան, երգ, մական, հասցեն
- 2) որովայն, բակլան, աղջիկ, թան
- 3) գարուն, արծվաբույն, հրացան, ասեկոսեն
- 4) հուն, մականուն, պատճեն, փական

**40. Ո՞ր տարբերակում ստացական հոդի գործածություն չկա:**

- 1) Եվ ո՞ւմ համար, էլ ո՞ւմ համար կարոտակեզ երգե հիմի Սիրոս՝ լցված տարիների սեղմ արճիճով ու կապարով:
- 2) Հոն կա մոխի՞ր... հիշատակ... Այլակքդ հուզի՞ն թող, Լըճակ:
- 3) Խորշ մը կար, որ զիս չըծաղրեր, Այն լուռ փո՛սն էր գերեզմանիս...
- 4) Սի՛ գորիի ինձ, երբ ընկած եմ ես, Եվ մի՛ կործանիի անօգ գայթաժիս:

**41. Ո՞ր նախադասության մեջ ստացական հոդի գործածություն կա:**

- 1) Ժամանակը լավագույն ուսուցիչդ է:
- 2) Աշխարհիս աղմուկը իրերի հավիտենական ծփանքն է:
- 3) Մահկանացու սովոր է իրեն արդարացնել իր սեփական դատավորի, այսինքն՝ իր խղճի առաջ:
- 4) Ամենքս ազնվությունն ու երախտագետ բարեկամությունը մարդկային հոգու բնածին հատկություններն ենք համարում:

**42. Ո՞ր տարբերակում դիմորոշ հոդի գործածություն կա:**

- 1) Վերջերս նրան քիչ էի հանդիպում. խուսափում էր ինձնից:
- 2) -Քնքուշ լուսնի շուշան-փոշին Մաղեց հեզ գետի վրա, Մեղմիկ խշշաց ցորեն, ցողուն, -Սիրոս անդորր կծփա:
- 3) Բայց ո՞ւր էր մայրս դալուկ, Ա՛խ, նա էլ էր որբացել, Արցունք դարձել ու մանուկ Աչքիս մեջ էր մնացել:
- 4) Նվաստս դարձա մատնության գործիք, Եվ ներում չունեմ էլ ես հավիտյան:

**43. Ո՞ր նախադասության մեջ դիմորոշ հոդի գործածություն կա:**

- 1) Միամիտդ դարձար բանասարկուների ձեռքին խաղալիք:
- 2) Աշխարհս մե փանջարա է,- թաղերումեն բեզարիլ իմ....
- 3) Սիրում եմ աչքերիդ տխրությունը խորին....
- 4) Այցս ապարդյուն էր. այդպես էլ չհաշտվեցիմք:

**44. Ո՞ր նախադասության մեջ դիմորոշ հոդի գործածություն կա:**

- 1) Օրս այդպես էլ անիմաստ անցավ:
- 2) Անցավ կյանքս մի գիշերվա երազի պես:
- 3) Օրերս Երևան է ժամանելու նշանավոր երաժիշտը:
- 4) Ինքս էլ չիմացա՝ ինչպես հայտնվեցի մի մութ այրում:

**45. Ո՞ր տարբերակում դիմորոշ հոդի գործածություն կա:**

- 1) Իմ ամայի բակում բախտիս բեկված կողին  
Լույսի աղոտ նշույլ և աղոտ շող չունեն:
- 2) Լռած զանգ է կյանքս...  
Ես՝ ավերակ վանքս,  
Էլ աղոթող չունեն...
- 3) Թրջված ամպի մեջ թևերս թրջեն  
Ու թևերի տակ ննջեն Գ-յազբեղիս:
- 4) Իմ տարեկից աշխարհից  
Լոկ սարերս են մնացել  
Ու քարափներս:

**46. Տրված նախադասություններում հոդի ո՞ր տեսակը գործածված չէ:**

- Երգերդ աղբյուր են գուլալ՝  
Մեր երկրի արևից բխած:  
- Ա՛խ, մենք բոլորս ենք սիրել հեքիաթներն այդ լույս,  
Պատմություններն այդ՝ գրված մարդկանց մասին մեծ...  
- Չե՞ս զարմանում, Տե՛ր իմ, որ ես դիմում եմ քեզ,  
Ես՝ բանաստեղծս անահ և մարտնչողս արի,..  
- Եվ գուցե միայն սենյակում մի խուլ,  
Գլուխը թեքած պատկերիս վրա՝  
Կնայի մի կին աչքերիս տխուր,  
Եվ կարցունքոտվեն աչքերը նրա:

- 1) ստացական
- 2) դիմորոշ
- 3) որոշիչ
- 4) ցուցական

**47. Ո՞ր նախադասության մեջ հոդի գործածության սխալ չկա:**

- 1) Կանչենք այն մարդկանց, որոնք սպասում են իրենց մրցանակներին, պարգևներին կամ որևէ այլ նվերին:
- 2) Այդպիսի խորհրդանիշներ օգտագործում է ամեն երկիրը:
- 3) Ճիշտ է, մենք նրանց չենք տեսնում, բայց դրա փոխարենը նրանք մեզ միշտ պահում են իրենց տեսարաշտում:
- 4) Երբ շնչելը անակնկալ դժվարացավ, Ալիսն հասկացավ, որ զառիվերն սկսվել է:

## ԲԱԺԻՆ 2 Ածական, թվական, դերանուն

### 1. Ո՞ր շարքի ոչ բոլոր բառերն են ածականներ:

- 1) արևելյան, թունավոր, մարդկային, քնքուշ
- 2) կողմնորոշիչ, բանախոս, պերճաշուք, մեղմ
- 3) ուշիմ, գծավոր, պատեհապաշտ, դաժան
- 4) գիտական, ապաշնորհ, առատաձեռն, բարի

### 2. Ո՞ր շարքի բոլոր բառերն են ածականներ:

- 1) բաղձալի, ամենևին, վայելուչ, մկանուտ
- 2) առաջնային, այսպիսի, բարձրորակ, մշտապես
- 3) ավելորդ, վճռորոշ, խավարամած, հմայիչ
- 4) մարդախույս, զարմացած, միակ, պարզունակ

### 3. Ո՞ր նախադասության մեջ ածական չկա:

- 1) Սպանությունը կատարվել էր գյուղից հեռու, և այդ նույն օրից էլ Սիմոնը հանդիպած յուրաքանչյուր մարդու պատմում էր իր գլխով անցածը բոլոր մանրամասնություններով:
- 2) Նա նստել էր անկյունում ու մտածում էր իր կրտսեր եղբոր մասին, որ երկու տարի առաջ վերադարձել էր զինվորական ծառայությունից:
- 3) Թեև Անտոնը գրագրին պատվիրեց, որ ոչ ոքի չհայտնի գրության մասին մինչև իր վերադարձը, սակայն լուրը տարածվեց կայծակնային արագությամբ:
- 4) Առաջինը գյուղ մտնողները սկսեցին բաց անել տների փակ դռները, և կես ժամ չանցած՝ սկսվեց թալանը:

### 4. Տրվածներից ո՞ր ածականը համեմատության աստիճաններ չունի:

- 1) տխուր
- 2) կարևոր
- 3) խրթին
- 4) բոբիկ

### 5. Տրված ածականներից քանի՞սը չունեն համեմատության աստիճան:

*Անտանելի, թանկ, ճաղատ, առատաձեռն, սովորական, մետաքսե, հղի, նրբազգաց, համր, բոկոտն:*

- 1) երեքը
- 2) չորսը
- 3) հինգը
- 4) վեցը



**6. Ո՞ր տարբերակում գերադրական աստիճանով դրված ածական կա:**

- 1) Բյուրավոր բանակներ ելան՝ վիթխարի, համարձակ, անահ:
- 2) Կարծես մանկական կապույտ երագում  
Ամեն ինչ այնպես ժպտում էր աննենգ:
- 3) Ամեն տեսակ երգ երգեցի. ամենից լավ տաղն է էլի,  
Մայաթ-Նովի անմահական, դրախտային խաղն է էլի...
- 4) Եկար հուշիկ, անչար ավաղներով,  
Օրորներով ամենօրոր...

**7. Ո՞ր նախադասության մեջ գերադրական աստիճանով դրված ածական կա:**

- 1) Իսահակյանից ավելի լուսավոր տաղանդ այժմ ողջ Եվրոպայում չկա:
- 2) Հետագայում պարզվեց, որ ատոմը նյութի մանրագույն մասնիկը չէ:
- 3) Ճարտասանը իր խոսքը ավարտեց՝ աջակիցներին խորին շնորհակալություն հայտնելով:
- 4) Միրտս ողողվում է մի անհուն ջերմությամբ, երբ հիշում են քույրերիս:

**8. Տրվածներից ո՞րը չի արտահայտում ածականի գերադրական աստիճանի իմաստ:**

- 1) ամենավատ
- 2) ամենաազնիվ
- 3) ամենամյա
- 4) ամենադյուբիչ

**9. Տրվածներից քանի՞սն են արտահայտում ածականի գերադրական աստիճանի իմաստ:**

*Ամենակուլ, ամենագորեղ, ամենահաղթ, ամենագութ, ամենաբարի, ամենազնաց, ամենադավ, ամենազետ, ամենակեր, ամենատես:*

- 1) երեքը
- 2) երկուսը
- 3) չորսը
- 4) բոլորը

**10. Ո՞ր նախադասության մեջ թվական կա:**

- 1) Նրան պատասխանեց կոչնակի ձայնը, որ քանի՜ անգամ լսելի եղավ եկեղեցու բարձրությունից ու հիշեցրեց ճաշի ժամը:
- 2) Տասնյակ ձիավորներից առանձնացավ դրոշակակիրը, որը հանեց գոտուց քարշ ընկած շեփորը և հնչեցրեց:
- 3) Քսանամյա արքայազնը նստեց բազմոցին, և կրկին ջերմ արտասուքը սկսեց հեղելի նման թափվել նրա աչքերից:
- 4) Ոչ հեռավոր անցյալում՝ քառորդ դար առաջ, այստեղ հարթ ու հողածածկ տանիք չունեի միայն հինավուրց գմբեթարդ եկեղեցին:

**11. Տրվածներից քանի՞սը թվական չեն:**

*Հինգհարյուրամյա, երեսունական, առաջնային, մեկ վեցերորդ, բյուրավոր, բազմահազարանոց, վաթսունմեկերորդ, երկու երրորդական, քառակի, երկրորդական:*

- 1) չորսը
- 2) վեցը
- 3) հինգը
- 4) յոթը

**12. Ո՞ր նախադասության մեջ թվականի կազմության սխալ ձև չկա:**

- 1) Նոր բնակարան վարձելու առաջի օրն ինձ անսովոր էի զգում, հետո վարժվեցի:
- 2) Եվ Նոյը սպասեց դարձյալ յոթը օր, և խոր գիշերվա մեջ երկիրը հանդարտ ներքաշում էր ջուրը:
- 3) Բոք շունը գելխեղդ էր, բրդոտ գամփո, ես՝ կարմիր թշերով, ոտից գլուխ տասչորս տարեկան:
- 4) Երևաց երկրորդ շունը, երրորդը, շների հետևից էլ՝ Պանինը:

**13. Ո՞րն է բաշխական թվական:**

- 1) հարյուր հինգ
- 2) հինգերորդ
- 3) մեկ քառորդ
- 4) յոթական

**14. Ո՞ր նախադասության մեջ քանակական թվական կա:**

- 1) Այդ ժողովից մի քանի օր հետո Նիկողոս աղան զարհուրելի ծաղրուծանակի ենթարկվեց:
- 2) Ով տանը ժամացույց ուներ, անմիջապես նայում էր և սլաքներն ուղղում յոթից քառորդ անց:
- 3) Երեկոյան, երբ մենք բաց էինք թողնում մեր թուփերը, թվում էր, թե քաղաքի վրա լողում են տասնյակ լուսիններ:
- 4) Անձրևի տասներորդ օրը գետի ջուրն այնքան առատ էր, որ կարող էր սայլերը քշելով տանել:

**15. Տրվածներից քանի՞սն են կոտորակային թվականներ:**

*Քառորդ, երկու երրորդ, մեկուկես, երկուական, չորս հինգերորդական, մեկ չորրորդ, կես, երկու ամբողջ հինգ վեցերորդական, երկու երրորդ, ութ հարյուրերորդական:*

- 1) յոթը
- 2) ութը
- 3) բոլորը
- 4) ինը

**16. Ո՞ր շարքի բոլոր բառերն են դերանուններ:**

- 1) այսինչ, այստեղ, այսպես, այսօրինակ
- 2) նույնպիսի, նույնչափ, նույնքան, միևնույն
- 3) ոչ ոք, ոչ մի, ոչինչ, ոչ միայն
- 4) քանի, քանիսը, քանիերորդ, քան

**17. Ո՞ր նախադասության մեջ է ընդգծված բառը դերանուն (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Դու ոչ թե սիրում **այլ** լոկ տանջում ես քո կասկածներով:
- 2) **Այլ** է կարոտը հիմա հրավառ ու բորբ:
- 3) Ընկերությունը բաժակաճառով չէ **այլ** գործով:
- 4) Վաղուց ոչնչից չեն դժգոհում **այլ** համակերպվում են:

**18. Ո՞ր նախադասության մեջ դերանուն չկա:**

- 1) Տեսնելով ախոռապետի լկտիությունը՝ Վասակը՝ իբրև արժանապատիվ հայրողի, ապշում է և մտածում, որ հայերը երբեք նման բան չէին անի:
- 2) Փայտահատը հետ քաշվեց ու սոսկումով նայում էր, թե ինչպես են վերքից ընկնում կաթիլները՝ մերթ կարմիր արյան նման, մերթ վճիտ արցունքի պես:
- 3) Օրերից մի օր Արշակը սպարապետի հետ գնում է՝ շրջելու Շապուհի ախոռներում, որտեղ պահվում էին ցեղական հազվագյուտ մժույզներ:
- 4) Թագավորը տագնապած ու հուզախառով հայտնում է բոլորին, որ խուճապի մեջ չընկնեն և սպասեն նոր լուրերի:

**19. Ո՞ր նախադասության մեջ դերանուն չկա:**

- 1) Չյունը դեռ չէր հավելել, բայց արևի ջերմությունից արդեն զգացվում էր, որ գարունը բոլորովին էլ հեռու չէ:
- 2) Մի քանի տեղ աղվեսը ուժասպառ ընկել էր, արյունն ավելի շատ էր հոսել, և ձյունի վրա թափվել էին մորթու մազերը:
- 3) Կրակոցից ծառի ճյուղերից ձյուն թափվեց, բայց վառողը չխանձեց ոչ մի աղվեսի մորթի:
- 4) Անտունը կրակեց. միսի մեջ տեսա, թե ինչպես աղվեսը գլորվեց:

**20. Քանի՞ տեսակ դերանուն կա տրված հատվածում:**

Ա՛խ, իմ բախտը կանչում է ինձ,  
 Չեմ հասկանում՝ դեպի ուր.  
 Դողում է պաղ դրա ձեռնից  
 Իմ սիրտը՝ սև ու տխուր...

- 1) մեկ
- 2) երկու
- 3) երեք
- 4) չորս

**21. Ո՞ր շարքի բոլոր դերանուններն են առարկայի հատկանիշ ցույց տալիս:**

- 1) ամեն մի, այսչափ, որքա՞ն, ինչպիսի՞
- 2) ուրիշ, այդպես, ինչ-որ, այսպիսի
- 3) ո՞րերորդ, ոչ ոք, իրար, յուրաքանչյուր
- 4) ինչո՞ւ, այնքան, որոշ, այլ

**22. Ո՞ր տարբերակում է ընդգծված դերանունը առարկայի հատկանիշ ցույց տալիս:**

- 1) **Ուր** էլ լինեմ, չեմ մոռանա, ես ողբաձայն երգերը մեր:
- 2) **Ինչքա՞ն** ցավ եմ տեսել ես, Նենգ ու դավ եմ տեսել ես:
- 3) Ախր ես **ինչպե՞ս** վեր կենամ գնամ, Ախր ես ինչպե՞ս ուրիշ տեղ մնամ:
- 4) **Ի՞նչ** են տարել նրանք կյանքից, թե ի՞նչ տանես դու քեզ հետ...

**23. Ընդգծված դերանուններից քանի՞սն են ցույց տալիս առարկայի հատկանիշ:**

Ծովն էլ օրորեց նրա մանկությունը, **ողջ** կյանքը՝ օժտելով բանաստեղծական երևակայությամբ: Նարեկացուն «սպաստամբ հանճար» կոչեցին ֆրանսիացիները և **նրան** կանգնեցրին Դոստոևսկու կողքին. «Մատյանի» մեջ պեղեցին **այն** դարաշրջանի մտահոգությունները: Նա նման է հորիզոնի. որքան հեռանում ես **նրանից**, նույնքան մոտենում է ինքը, և որքան մոտենում ես նրան, **այնքան** հեռանում է ինքը:  
 Աղոթատեղիի առաջ բացվում է ծովը իր **ամբողջ** գեղեցկությամբ, քիչ հեռու երևում են Աղթամար և Առտեր կղզիները, իսկ **մյուս** կողմերում բարձրանում են Մոկաց և Ռշտունյաց բարձրագագաթ լեռնաշարքերը:

- 1) երեքը
- 2) չորսը
- 3) հինգը
- 4) վեցը

**24. Ո՞ր տարբերակում ընդգծված դերանունը գործողության հատկանիշ կամ հանգամանք չի մատնանշում:**

- 1) Ո՞ր են վագում ծեր ու ջահել, Մարդկանց այս ի՞նչ է պատահել...
- 2) Ո՞նց է ժպտում իմ հոգին Չարին, բարուն՝ ամենքին...
- 3) Ի՞նչ է ասում այդ գիրքը և ի՞նչ է բարբառում:
- 4) Լսո՞ւմ ես՝ այդտեղ իմ սիրտն է թաղած...

**25. Ո՞ր նախադասության մեջ հարաբերական դերանուն կա:**

- 1) Բյուրավոր ծաղիկների բույրը տարածվել էր անդնդախոր կիրճերում, ուր բարձրաբերձ լեռնաշղթաներից թավալվող գահավիժում էին ականակիտ աղբյուրները:
- 2) Տղան ամենքից գաղտնի զննում էր մարդկանց քար սրտերը և ամեն անգամ համոզվում, որ դրանք անկարելից են ու բիրտ:
- 3) Նստելով թավշյա բարձիկներով թախտին՝ մի քիչ շունչ առավ և սկսեց սպասել, թե երբ կկանչի թագավորը:
- 4) Ահա և գարունը. ո՞ւմ սիրտը չի թրթռում գարնան առաջին ծաղիկների բացվելուն պես:

**26. Ո՞ր շարքի բոլոր դերանունները հոգնակի թիվ չունեն:**

- 1) ոմն, ինչ-որ, այս, երբ
- 2) մի երկու, ինչ-ինչ, բոլոր, միմյանց
- 3) որևիցե, որը, ովևե, ոչ ոք
- 4) ոչ մի, այս, ուր, այդպես

**27. Ո՞ր շարքի բոլոր դերանուններն են հոլովվում:**

- 1) նա, ես, ոչ ոք, ոմն
- 2) նրանք, իրենք, սրանք, այս
- 3) ինքը, մենք, դուք, ովքեր
- 4) մեկմեկու, միմյանց, ով, ոմանք

**28. Ո՞ր դերանունը ուղղական հոլով չունի:**

- 1) ոմանց
- 2) իր
- 3) միմյանց
- 4) ոչ մեկի

**29. Ո՞ր շարքի բոլոր դերանունները չեն հոլովվում:**

- 1) ովքեր, ինչ-որ, ոչինչ, որտեղ
- 2) ուր, ինչու, ոչ մի, այս
- 3) երբ, որոշ, ամեն մի, սա
- 4) ինքը, որևե, այսպես, մեկմեկու

**30. Ո՞ր շարքի բոլոր դերանուններն են գոյականից տարբեր կերպ հոլովվում:**

- 1) նա, ոչ ոք, երբ, իրենք
- 2) նրանք, բոլորը, դու, ոչինչ
- 3) ինքը, դուք, ով, ես
- 4) ամենքը, սա, ի՞նչ, ոմանք

**31. Ո՞ր շարքի բոլոր դերանուններն են ցուցական:**

- 1) այս, դա, այսպես, բոլոր
- 2) մյուս, սույն, նույնքան, միևնույն
- 3) ոմն, այսպիսի, նույնպես, այնտեղ
- 4) այդպես, այդչափ, մի, նույն

**32. Ո՞ր տարբերակում հարաբերական դերանուն չկա (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Ես գիտեմ մի թովիչ առասպել  
Ուր ողջ կյանքը հրաշք է դառնում:
- 2) Ես չգիտեմ ուր են տանում հեռավոր  
Ուղիների ժապավեններն անհամար...
- 3) Ինձ թաղեք երբ կարմիր վերջալույսն է մարում...
- 4) Ուր էլ լինեմ չեմ մոռանա ես ողբաձայն երգերը մեր:

**33. Ո՞ր շարքի բոլոր բառերն են անորոշ դերանուններ:**

- 1) որևէ, ինչ-որ, մի քանի, երբևիցե
- 2) այսինչ, ուր, որոշ, որևիցե
- 3) ոմն, երբևէ, ոչ մեկը, ողջ
- 4) բոլորը, այլ, ուրիշ, ամեն մի

**34. Ո՞ր շարքում տրված տեսակին չպատկանող դերանուն կա:**

- 1) այսքան, այսպես, միևնույն, մյուս - ցուցական
- 2) ուրիշ, այլ, որոշ, երբևէ - անորոշ
- 3) ողջը, այնինչ, բոլորը, ամեն ոք - որոշյալ
- 4) ինչքան, որտեղ, որ, ինչպես - հարաբերական

**35. Տրված հատվածում դերանվան քանի՞ տեսակ կա:**

Մենք իրար ճանաչում էինք,  
Իրարից ամաչում էինք  
Մեր սարի եղմիկը ու ես:

- 1) մեկ
- 2) երկու
- 3) երեք
- 4) չորս

**36. Տրված նախադասություններում քանի՞ կապակցություն կա, որոնցում դերանունը կարելի է հոդով փոխարինել:**

- Մի դատարկված ամպի նման  
Եկել եմ ես,

Որ ջուր տանեմ քո ձորերից...

- Ա՛խ, մեր սիրտը լիքը դարո՞, ցավ,

Օր ու արև չտեսանք...

- Դու թե՞ս դարձրիր իմ կյանքի բեռը,

Բայց ինքդ երբեք թե՞ս չդարձար:

- Խո՞ր են քո հուր աչքերը,

Հուրդ իմ հուրն է այրում...

- 1) չորս
- 2) վեց
- 3) յոթ
- 4) հինգ

### ԲԱԺԻՆ 3 Բայ

**1. Ո՞ր շարքի բոլոր բայերն են ա խոնարհման:**

- 1) դարձե՛ք, ելա, կջանամ, մի՛ տուր
- 2) մոռացել եմ, պիտի կարդայինք, ցնծաց, կտոկան
- 3) կերանք, հոգացող, բարձրացավ, տալիս է
- 4) պիտի խաղա, ցնցեց, ջանում է, ցուցլաց

**2. Ո՞ր շարքի բոլոր բայերն են ա խոնարհման:**

- 1) մի՛ եկ, հասկացել եմ, գայրացել է, սվեց
- 2) ասաց, տո՛ւր, դարձի՛ր, դողաց
- 3) պիտի հուսանք, թողել եմ, գալիս է, վշշում է
- 4) եղա, հավատալ, խոսող, զղջում է

**3. Բայերից քանի՞սն են ա խոնարհման:**

*Թվացել, ասաց, մոտեցել, եկել, բարձրացել, հասան, հեռանում, մտան, իմացել, եղավ:*

- 1) չորսը
- 2) հինգը
- 3) վեցը
- 4) յոթը

**4. Ո՞ր շարքի բոլոր բայերն են կազմությամբ պարզ (առանց բայական ածանցի):**

- 1) կտրտել, գաղթել, զգալ, խաղալ
- 2) տեսնել, դողանջել, գրուցել, թույլատրել
- 3) ծաղկել, ներբողել, մարտնչել, ժանգոտել
- 4) գրոտել, կարդալ, մեղանչել, տնկել

**5. Ո՞ր շարքի բոլոր բայերն են կազմությամբ պարզ (առանց բայական ածանցի):**

- 1) կառչել, ասել, թռչել, զբոսնել
- 2) կանչել, ննջել, հոտոտել, արտագրել
- 3) կոտրատել, տանել, վերափոխել, տալ
- 4) ուտել, հագնել, սովորել, խմել

**6. Ո՞ր նախադասության մեջ հարադիր բայ չկա:**

- 1) Կա՛նգ առ, հողագու՛նդ,  
Քո պտույտի մեջ,  
Թող մայրամուտը մի քիչ երկարի:
- 2) Ամպերը դարձել գթության քույրեր,  
Ջրվեժի վրա ջուր են շաղ տալիս,  
Որ ուշքի բերեն:
- 3) Ջանք է անում ամեն մի՛նը՝  
Շուտով տանի, տիրանա:
- 4) Գործն է անմահ, լա՛վ իմացեք,  
Որ խոսվում է դարեդար:

**7. Ո՞ր շարքում սուկաձանցավոր բայ չկա:**

- 1) մռնչալ, մեկնում, փախել, մնացել
- 2) կմեռնի, կանգնելու, երկմտել, զարմանա
- 3) վերձանել, պիտի հնչի, խառնած, բռնել
- 4) առնող, ունկնդրում, ծառանալ, կանչեմ

**8. Ո՞ր նախադասության մեջ սուկաձանցավոր բայ չկա:**

- 1) Պղտոր հեղեղի բերանն ընկած տաշեղի պես Լառ-Մարգարը շատ ափերի էր զարկվել, վերջը ալիքը Լառ-Մարգարին իր թռան հետ գցել էր այդ գյուղը:
- 2) Երբ առաջին անգամ առվով ջուր էր կապել, ոտքերը մինչև ծնկները վեր քշտած, բահն ուսին՝ անցել առվով, գյուղում նրան արագիլի էին նմանեցրել:
- 3) Լուսաբացին արտատերը արտը ջրած պիտի տեսնի, պիտի ժպտա և կռանա, մատներով տրորի թաց հողը:
- 4) Կտավատը ժպտում էր կապույտ ծաղիկներով, ծիրանն արդեն դեղնել էր, մասրենու մոտ պառավը կանգնել իրեն էր սպասում:

**9. Տարբերակներից քանիստ՞ն սուկաձանցավոր բայ կա:**

1. Էլ սիրտս ինչպե՞ս բախտավոր մնար,  
Թե ինքը իրեն բացել չիմանար...
2. Կացինս թողած կաղնու փշակում,  
Պարանս ժայռի փեշերին թողած...
3. Եվ ձորերում դառն ու անհուն  
Կորցնեի տոհմ ու անուն  
Ու կորչեի ես...
4. Քառասուն տարի բռնած ճանապարհ՝  
Շիտակ, անվեհեր  
Գընում եմ ես վեր:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

**10. Ո՞ր շարքի բոլոր բայերն են բազմապատկական:**

- 1) խազմզել, պատռտել, վազվզել, քաշքշել
- 2) ժանգոտել, կծոտել, կտրտել, փորփորել
- 3) ծակծկել, գծմծել, թեփոտվել, ցատկոտել
- 4) խշխշալ, թշշալ, կոտրատել, ոստոստել

**11. Ո՞ր շարքի բոլոր բայերն են պատճառական:**

- 1) լիացնել, շողացնել, հարցնել, բերել տալ
- 2) խաղաղեցնել, բարև տալ, խռռացնել, ուտեցնել
- 3) թրթռացնել, փախցնել, հիացնել, շուռ տալ
- 4) կորցնել, հիշեցնել, մոտեցնել, լսեցնել

**12. Տրված նախադասություններում քանի՞ անանցավոր բայ կա:**

Եվ ներկարար աշնան հետքով  
 Ինքը ձմեռն է մոտենում:  
 Ու աղբյուրները լեզվիս՝ սարից իջա ես քաղաք:  
 Մոռացել էր արքան, վերացել էր կարծես,  
 Էլ բանտ ու վիշտ նրան չէին մտահոգում:  
 Որսի էին ելել նրանք միասին,  
 Մի քարայծ էր դյութել նրանց երկուսին,  
 Բայց փախել էր, փնտրում էին, ու չկար:

- 1) վեց
- 2) չորս
- 3) հինգ
- 4) ութ

**13. Ո՞ր շարքի բոլոր դերբայական ձևերն են ճիշտ:**

- 1) փախչել, դիպչել, խոսալ, գվարճանալ
- 2) փախչող, դիպչող, խոսացող, գվարճացող
- 3) փախած, դիպած, խոսեցրած, գվարճացած
- 4) փախնելիս, դիպչելիս, խոսելիս, գվարճանալիս

**14. Ընդգծված դերբայական ձևերից ո՞րի կազմությունն է սխալ:**

- 1) Անձրևի **կաթած** տեղը մի մեծ խոռոչ էր բացվել:
- 2) Բժիշկը պատվիրել էր օրը երկու անգամ դեղ **կաթացնել** հիվանդի աչքերի մեջ:
- 3) Երբ փորձում էի նրան **հիշեցնել** տված խոստումները, չլսելու էր տալիս:
- 4) Երկրաշարժից **տուժած** մարդկանց օգնության ձեռք մեկնեց ողջ աշխարհը:

**15. Ո՞ր նախադասության մեջ դերբայական սխալ ձև կա:**

- 1) Սարի լանջին բուսած մանուշակները բացել էին աչիկները և ժպտում էին արևին:
- 2) Դաշտի խաղաղության մեջ քնքշորեն բուրացող ծաղիկները մի պահ մեղմեցին նրա հոգու ցավը:
- 3) Կապտավուն մտույզ հեծած ձիավորը ընթանում էր լարված և ուշադիր:
- 4) Երեխայի համար գնեցինք հեքիաթներ պատմող մի տիկնիկ և խոսող շնիկ:

**16. Ընդգծված դերբայական ձևերից ո՞րն է սխալ:**

- 1) Գարնանային արևը **հալեցրել** էր ձյունը, ու վարարած գետերը դուրս էին եկել իրենց ավերից:
- 2) Խանութի բացման օրը բոլոր հյուրերին նվիրեցին **խոնավեցնող** քսուքներ:
- 3) Անծայրածիր հեռուներում աստիճանաբար **մզացող** լեռների սուր կատարները սահարկու տպավորություն էին թողնում:
- 4) Ես ամեն կերպ փորձում էի զգույշ **դիպչել** նրա վերքին, որպեսզի ցավ չպատճառեի:

**17. Ո՞ր նախադասության մեջ բայի սխալ գործածություն կա:**

- 1) Անտառի միակ արահետը կորավ, և տղաները չէին կարողանում հետքը գտնել:
- 2) Ծովի մեղմօրոր ալիքները դիպչեցին նկարչի մերկ ոտքերին, և նա հաճելի զովություն զգաց:
- 3) Նա ոչ մի կերպ չէր կարողանում լավ վերաբերվել իր հարևաններին:
- 4) Թափառական որբերը աննկատ թոցրին միայնակ կույ չեկած ծերունու պայուսակը:

**18. Ո՞ր նախադասության մեջ դերբայական ձևի սխալ գործածություն չկա:**

- 1) Եթե ես ցանկանայի փախնել, ոչ ոք ինձ չէր խանգարի:
- 2) Այդ միջադեպը քարոզարշավի վրա ոչ մի ազդեցություն էլ չի կարող թողել:
- 3) Շատ կարդալուց վնաս չկա:
- 4) Այդ մարդը ուտելուց միշտ խոսում էր և ծիծաղում:



**19. Ո՞ր նախադասության մեջ դերբայական ձևի սխալ գործածություն կա:**

- 1) Ապրելուց քաղցր է մեռնել քեզ համար:
- 2) Որևէ բան մտածելիս նա սովորաբար ձեռքը դնում է ճակատին:
- 3) Քայլելուց դիմացդ էլ չես նայում, դրա համար էլ հաճախ ես սայթաքում:
- 4) Այսքան մտածելուց գլուխս պայթում է:

**20. Քերականական ո՞ր հատկանիշն է բնորոշ միայն բայերին:**

- 1) դեմքի
- 2) եղանակի
- 3) թվի
- 4) հոլովի

**21. Ո՞ր շարքում են միայն ձևաբայեր (կախյալ դերբայներ):**

- 1) երգի, մեծացել, հիշի, փախել
- 2) ուտելու, խոսում, թռչել, պարել
- 3) մոտեցնի, հուզվելու, մտնել, հուշել
- 4) եկել, բերել, տանել, պատմել

**22. Տրված նախադասություններից որո՞ւմ անկախ դերբայ կա:**

- 1) Գրիգորը սաստիկ ջղայնանում էր, երբ սպիտակ պատերի վրա մատիտի խզբզոցներ էր գտնում:
- 2) Հանկարծ ամեն ինչ մշուշվեց նրա աչքերի առաջ, և ձեռքերը շարժվեցին անասելի կատաղությամբ, ինչպես ոճրագործի ձեռքեր:
- 3) Քեզ հանդիպելիս է այդ մասին խոսք բացել:
- 4) Երբ քամին փչում է ծովից և բերում նոր, թարմազույն օրերի բուրումներ, կյանքը դառնում է զգլխիչ մի երազ:

**23. Ո՞ր տարբերակում ձևաբայ (կախյալ դերբայ) չկա:**

- 1) Թող ոչ մի զոհ չպահանջվի ինձնից բացի,  
Ուրիշ ոտքեր կախադանին թող մոտ չգան...
- 2) Անց են կենում սեր ու խնդում,  
Գեղեցկություն, գանձ ու գահ...
- 3) Փռռվեց... Ու միշտ, քանի որ կա  
Շահ ու գերի, ըստրուկ ու տեր,  
Չի լինելու երկրի վըրա  
Ո՛չ շիտակ խոսք, ո՛չ կյանք, ո՛չ սեր:
- 4) Օ՛, չի եղել մեր գայլը պղնձյա  
Եվ ոչ մարմարիոնյա, և ոչ անգամ քարե...

**24. Ո՞ր շարքի բոլոր բառերն են անորոշ դերբայներ:**

- 1) կարդալ, գթալ, գտել, դղրդալ
- 2) ծխալ, ցոլալ, դրել, աղալ
- 3) խայտալ, վխտալ, նվնվալ, կերել
- 4) զգալ, թվալ, ցնձալ, տոկալ

25. Ո՞ր տարրերակում անորոշ դերբայ կա:

- 1) Մի դատարկված ամալի նման  
Եկել էմ ես,  
Որ ջուր տանեմ քո ձորից...
- 2) Պատմեի, թե այս աշխարհում  
Ինչե՛ր էմ քաշել  
Եվ գլխիս տակ քանի՛, քանի՛  
Քարեր էմ մաշել:
- 3) Խոսելն իզուր էր իմ ու քո միջև,  
Ցավն էլ անգոր էր մեծ դավի առջև:
- 4) Ամալը կախվել է ամալից,  
Ամպամած օր է...

26. Ո՞ր տարրերակում անորոշ դերբայ կա:

- 1) Ամեն ձորակը հոգսի մի ծալ է,  
Աղբյուրն արցունք է անգասպելի,  
Հովը հեքիաթի բարի հեծյալ է,  
Հողմը ասպետ է առասպելի:
- 2) Բայց քո տան հիմքի  
Քարին տարեկից  
Տարիքդ խլել չկարողացան:
- 3) Ելավ քամին քարայրից,  
Թավալ տվեց խոտերում  
Ու մտավ պուրակ:
- 4) Եվ ի՞նչ է տվել ինձ բնությունը.  
Հավիտյան նորոգ իր հնությունը  
Եվ հոգնահողով իր կրկնությունը:

27. Ընդօժվածներից ո՞րը անորոշ դերբայ չէ:

- 1) Խոնջացած պատկեց գմբուխտե խոտի գորգին՝ մի փոքր **հանգստանալու**:
- 2) Նրանք գնում էին անհայտ մի ուղով՝ **փրկվելու** հույսը սրտերում պահած:
- 3) Այդ մենք ենք **գալու**, որ հինը փոխենք, որ աշխարհին տանք սեր ու խնդություն:
- 4) Երկար **վազելուց** ուժասպառ եղած՝ մարզիկը մատեց վազքուղու վրա՝ չկարողանալով վերջնագծին հասնել:

28. Ո՞ր շարքում անորոշ դերբայ չկա:

- 1) փախել, եղել, շուրջկալել, շանթարգել
- 2) հոգացել, դարձել, տվել, դրել
- 3) բարձրացրել, գրելով, մտել, հավատացել
- 4) վազելիս, նկատելուց, մոտեցել, մեծացել

29. Ո՞ր նախադասության մեջ անորոշ դերբայ չկա:

- 1) Մագութի մեջ թաթախված թռչունի նման քո խիղճը կնվա, կնվա ու չի կարողանա ճախրել:
- 2) Մեր դժվարն էլ ինքնիրեն է լինելու, ու քո հեշտն էլ մի պատճառ է հնարելու, որ չլինի:
- 3) Եվ ահա հունական քառակուսի փաղանգը եկավ ու տորթելով անցավ հայերի աշխարհը:
- 4) Այդ հովտի առվից ջուր խմելու էին գալիս եղնիկներ, ուլեր ու գառներ:

**30. Ո՞ր տարբերակում անորոշ դերբայ չկա:**

- 1) Բայց կարող եմ ես, պոե՛տ,  
Երգերիս մատներով երկաթե  
Ձեր կակուղ սրտերը շոյել:
- 2) Այն, որ չի եղել, որ պետք է լինի  
Մանկական սրտում,  
Հոսում է որպես լուսավոր գինի  
Հոգու կապույտում:
- 3) Էն սև ծովում տառապելով  
Լող է տալիս իմ հոգին...
- 4) Նորից անմար կարոտով գգվանքների ու հրի  
Դու եկել ես տեսնելու քաղաքները Նաիրի:

**31. Ո՞ր տարբերակում հարակատար դերբայ չկա:**

- 1) Չարմացած կզգան ինձ այնքա՛ն մոտիկ  
Եվ հանկարծ այնքա՛ն թանկ ու հարազատ:
- 2) Բազմած լուսնի նուրբ շողերին,  
Հովի թևին թռչելով՝  
Փերիները սարի գլխին հավաքվեցին գիշերով:
- 3) Սակայն գիշերն այն հեզ երկրում հանգստության փոխանակ  
Ահ ու սարսափ է միշտ բերում, գաղտնի հարված ու տանջանք:
- 4) Որպես Ուլիս մի՛ թողած ն՛ հող, ն՛ տուն,  
Անցա ծովեր ու ցամաքներ ես:

**32. Ո՞ր նախադասության մեջ հարակատար դերբայ չկա:**

- 1) Առագաստանավը հանդարտ լողում էր ծովի համատարած կապույտի վրա:
- 2) Լառ-Մարգարին թվում էր, թե երկինքը հսկա մի տաշտ է՝ մեջը լեղակած ջուր:
- 3) Ճանապարհին նոր խմբեր էին միանում քարավանին. նորեկներից հարցնում էին հետ  
մնացածների մասին:
- 4) Եղանակը մռայլ էր, և ամպած երկինքը անձրև էր խոստանում:

**33. Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթակայական դերբայ:**

- 1) խաղացող, անսքող, մթնող, ուտող
- 2) հսկող, հմայող, լայնափող, երգող
- 3) մտածող, արձանագրող, ճգնող, բռնող
- 4) զգացող, լուսաշող, առինքնող, բուրող

**34. Ո՞ր նախադասության մեջ ենթակայական դերբայ կա:**

- 1) Ալխոն ճանապարհից դուրս ընկավ, հնձած արտերում դեսուդեն նետվեց. ազատում չկար. կարմիր  
բիծը ցատկոտում էր նրա դնչի տակ:
- 2) Հակառակ ճանապարհով զնացող մի պառավ՝ կապոցը մեջքին, ասաց, որ մի կապույտ ձի է տեսել  
գյուղ մտնելիս:
- 3) Ճախարակի պես երգ մանելով, հետո աղմուկ թափելով՝ հռնդաց, անցավ շողերի մեջ սպիտակ  
ինքնաթիռը:
- 4) Բարձրախոսների մոտով մի աղջիկ էր անցնում քաղաքային սահուն քայլերով, երեխաների ու  
ձիու լռիկ ստվերներն օրորվում էին կաթնալույսի մեջ:

**35. Ո՞ր նախադասության մեջ ենթակայական դերբայ չկա:**

- 1) Գրիգոր Նարեկացու մասին պատմող ամենահավաստի աղբյուրները նրա երկերի հիշատակարաններն են:
- 2) Միջնադարյան հայ արվեստն ուսումնասիրողներից շատերը խաչքարագործության վերջնական ձևավորման ժամանակը համարում են 12-13-րդ դարերը:
- 3) Մեծ գրողի ամբողջ ժառանգությունն ունի հային ազատագրելու և հայ պահելու նպատակը:
- 4) Մեր գրի ստեղծողն սկսեց Սուրբ գրքի թարգմանությունները:

**36. Տրված քայաշարքերից որո՞ւմ չկա անկատար ձևաբայ (կախյալ դերբայ):**

- 1) ցուցում, ռադիոընդունում, շարժում, ռադիում
- 2) փոշիացում, անցում, հիացում, կալցիում
- 3) հիանում, համբարձում, բազմախոստում, դարձում
- 4) սամում, բոցավառում, առում, գերշիկացում

**37. Ո՞ր շարքում են միայն վաղակատար ձևաբայեր:**

- 1) խաղացել, փախչել, մոտեցնել, ընկել
- 2) տատանվել, բարվոքել, տվել, հիացել
- 3) եկել, տեղացել, թոցնել, հասել
- 4) խաղաղվել, կերել, առնել, անցել

**38. Ո՞ր տարբերակում վաղակատար ձևաբայ (կախյալ դերբայ) չկա:**

- 1) Ես եղել եմ, կամ, կլինեմ հար ու հավետ, ինչ կա որ:
- 2) Չորք ու բարբան խորտակվել են, Նրա բերդը՝ միշտ կանգուն:
- 3) Ասել միայն բարի խոսքեր. Ահա մի բան, որ տրված չէ շատերին:
- 4) Ահա եկել հավաքվել են Կտրիճները Կովկասի:

**39. Ո՞ր նախադասության մեջ ապակատար ձևաբայ (կախյալ դերբայ) կա:**

- 1) Աստղը արդեն դուրս էր եկել. մեր ճամփա ընկնելու ժամանակն էր:
- 2) Ամառվա շոգ օրերին նա սիրում էր իջնել գետափ՝ իր ընկերների հետ լողալու և զվարճանալու:
- 3) Իմ՝ սրճարան մտնելու պահին քանդակագործը նարդի էր խաղում. ինձ չնկատեց:
- 4) Տունդարձի ճանապարհին նա մտովի պատկերացրեց, թե ինչպիսի կարոտով էր գրկելու և համբուրելու իր գավակներին:

**40. Ո՞ր նախադասության մեջ ապակատար ձևաբայ (կախյալ դերբայ) կա:**

- 1) Մեռնում էր միլիոնների տերը և ընդհանուր նախանձի առարկան, որն իր հետ էր տանելու մի ծանր վիշտ:
- 2) Անիծվի այն օրը, երբ ինքը թույլ տվեց իր Սմբատին գնալ ուրիշ երկիր՝ ուսումը շարունակելու, անիծվի նա, որ կորզեց իրենից իր որդուն:
- 3) Աղբյուրից փոքր-ինչ հեռու հազիվ նշմարվում էին մի խումբ ձիեր, որոնց իրենց տերերը արածելու էին թողել:
- 4) Սուրը նրանց ժամանակ չտվեց իրագործելու իրենց փայփայած մեծ երազանքը:

**41. Ո՞ր նախադասության մեջ ապակատար ձևաբայ (կախյալ դերբայ) կա:**

- 1) Չվարթը թախիծով նայեց իրենց գյուղի կողմը և տխրեց, որ այլևս չի տեսնելու ծնողներին, խաղընկերներին:
- 2) Յանկացած մթերք փչանալուց պահպանելու համար տասնհինգ-երեսուն րոպե ջերմային մշակման են ենթարկում:
- 3) Առավոտյան արթնանալով՝ դուրս եկա պարտեզ՝ սրանչանալու աշնան գույներով:
- 4) Մի անգամ այդ հրաշագեղ տաճարը տեսնելու է գնում թագավորի դուստրը:

**42. Ո՞ր տարբերակում ապակատար ձևաբայ (կախյալ դերբայ) կա:**

- 1) Ես կարող եմ մի խոսքով  
Լաց լինելու չափ հուզել:
- 2) Փակ դուռ բացելու սուր ճռինչ ունեն,  
Հին դուռ փակելու ցավալի թակոց...
- 3) Էլ չեն վառվելու մոմերը հույսի,  
Չեն մրմնջալու խոսքեր աղոթքի:
- 4) Ես պատրաստ եմ խորտակվելու  
Միայն փրկողը դու լինես....

**43. Ո՞ր տարբերակում ժխտական ձևաբայ (կախյալ դերբայ) կա (առողանության նշանները դրված չեն):**

- 1) Է՛հ, ի՞նչ արած, բախտը խռով  
Թող աշխարհում մեզ չհիշի....
- 2) Գնա՛, միշտ գնա՛, իմ քարավանս, և քայլի՛ր մինչև օրերիս վերջը...
- 3) Մի տեսակ տագնապ կա, որ  
Չես ասի ոչ մի բառով....
- 4) Իմ գերեզմանին դուք չմոտենաք,  
Հարկավոր չէ ինձ ո՛չ ծաղիկ, ո՛չ սուգ...

**44. Ընդգծված դերբայական ձևերից ո՞րն է սխալ գործածված:**

- 1) Հենց մի վատ բան **անելուց** է լինում, մենք անպայման այդ մասին իմանում ենք:
- 2) Մեկին վատություն **անելիս** մտածի՛ր՝ դու ինչպես կընդունեիր, եթե նույն կերպ վարվեին քեզ հետ:
- 3) Փառքը չի մեռնում հայրենիքի համար կյանքի գնով սուրբ գործ **անելիս**:
- 4) Արդեն հոգնել եմ սրա-նրա համար աննպատակ գործեր **անելուց**:

**45. Ո՞ր շարքի բոլոր ժամանակաձևերն են պարզ դիմավոր ձևեր:**

- 1) աղո՛թք արա, մի՛ հիշիր, պիտի դուրս գա, պետք է ժպտաս
- 2) կխոսեմ, չի գրի, երգի, սիրեմ
- 3) պիտի խնդրես, հիշեցի, չեմ ների, գրեց
- 4) փախավ, թույլ է տալիս, հավատացինք, խոսեցիր

**46. Ո՞ր շարքի բոլոր ժամանակաձևերն են պարզ դիմավոր ձևեր:**

- 1) պետք է գնայի, կկարոտեմ, մի՛ բեր, հարց մի՛ տուր
- 2) կգամ, չի մոռանա, պիտի մոռանաս, երգենք
- 3) չասեմ, մի՛ խոսիր, եկել եմ, կխնդրեմ
- 4) չլսեի, պիտի նայես, հավատացել էի, ժպտանք

**47. Ընդգծվածներից ո՞րն է պարզ դիմավոր ժամանակաձև:**

- 1) Առուն մասուր է տանում,  
Կարմիր սարսուռ է տանում...
- 2) Ջուրը եկել է ջաղացն է տարել,  
Իսկ դու չախչախն ես համառ դրոնում:
- 3) **Պետք է ասեմ** մի բան, որ կթվա արտառոցից արտառոց:
- 4) Ես **չեմ կամենում**, որ իմ պատրանքը փոխվի պատանքի  
Եվ հետո, ծվատ, կախվի աշխարհի կեռերից փշոտ:

**48. Ո՞ր նախադասության մեջ բայի բաղադրյալ ժամանակաձև կա:**

- 1) Մեզ կպատմես ամեն ինչ միայն վերադարձիդ, եթե վերադառնաս, և ոտքդ չդիպչի քարի:
- 2) Անվիատ թող լինի ոգիդ, և կարոտդ թող լինի աննինջ:
- 3) Որքան ժամանակ էլ անցնի, չեմ մոռանա ես այն երջանիկ օրերը:
- 4) Պիտի անդարձ ես հեռանամ, պիտի գնամ, աչքս է հեռուն:

**49. Ո՞ր տարբերակում բաղադրյալ դիմավոր բայաձև կա:**

- 1) Եթե հիվանդ ես դու, և տկար է ոգիդ,  
Եթե հոգնություն է... քո երակներում,  
Այս երգս քեզ չի՛ ամոքի...
- 2) Լավությունն արա ու ջո՛րրը նետիր...  
Թաքուն մի՛ հուսա հատուցում ու վարձ:
- 3) Ի՛նչ քաղցր է նստել այստեղ,  
Ժպտալ քո խոսքին սեթևեթ...
- 4) Ախր ես ինչպե՞ս վեր կենամ գնամ,  
Ախր ես ինչպե՞ս ուրիշ տեղ մնամ...

**50. Նշվածներից քանի՞սն են պարզ դիմավոր ձևեր:**

*Մի՛ հիշեցրու, պիտի խոնարհվես, մեջ մի՛ ընկիր, սի՛րտ տուր, աղոթք չանես, պետք է վեր կենար, թույլ մի՛ տուր, գլուխ չի բերի, ներս եկա, պետք է հավատ ընծայես:*

- 1) ինը
- 2) յոթը
- 3) հինգը
- 4) ութը

**51. Կորչել բայի խոնարհված ձևերից ո՞րն է սխալ:**

- 1) կորանք
- 2) կորչել է
- 3) կորչելու է
- 4) կորի՛ր

**52. Անցյալ կատարյալի ընդգծված ձևերից քանիսի՞ն կազմությունն է սխալ:**

Երիտասարդը վերջին բառերն **ասեց** հավաքվածներին ու ջղային շարժումով **հեռացավ**:  
Թիկնապահները բերդապետերին **տեղեկացրեցին**, որ նախարարներն են գալիս:  
Կաթողիկոսը թիկնօթոցից **վեր կացավ** ու գորովասիրտ դիմավորեց իշխանին:  
**Բացվեց** գարնանային առավոտը Արարատյան դաշտավայրում. շիկնեցին Մեծ ու Փոքր Մասիսները:

- 1) մեկի
- 2) երկուսի
- 3) երեքի
- 4) չորսի

**53. Ո՞ր նախադասության մեջ չեզոք սեռի բայ չկա:**

- 1) Ամպիովանու տակ նստած՝ իշխանը անհամբեր նայում էր ճանապարհին:
- 2) Սերոբը աղբյուրի մոտ մի փոքրիկ հողակտոր վերցրեց՝ հավաքելով այդ տարածքի աղբը:
- 3) Սպասուհիները հապշտապ սենյակ էին մտնում, փռում էին սփռոցները ու շարում արծաթե սպասքը:
- 4) Առավոտյան վաղ արթնացած սպասավորները շտկում էին ոսկեծուլ վարագույրները:

**54. Ո՞ր նախադասության մեջ ներգործական սեռի բայ կա:**

- 1) Գարնանը Արաքսը ելնում է իր ափերից՝ վարար ջրերով տիղմ կուտակելով լայն տափարակի վրա:
- 2) Վաղ մանկությունից զրկվելով ծնողներից՝ Արսենը մնաց միայնակ, մնաց որբ՝ երբեմն-երբեմն արժանանալով հարևանների կարեկցանքին:
- 3) Երբ բակ մտա, ինձ այնպես թվաց, թե սալտակ տան ներսում ինչ-որ մարդիկ են հավաքվել, ու մեկը, իր ափերից դուրս եկած, գոռգոռում է:
- 4) Բայց, ինչպես ամեն ինչից երևում էր, Պետրոսը չէր դառնալու այն առաքյալը, որն անհրաժեշտ էր գյուղին:

**55. Ո՞ր նախադասության մեջ ներգործական սեռի բայ կա:**

- 1) Խարխուլ սանդուղքով վար իջավ, մի քանի բույս անհիմաստ քայլեց բակում ու մոտեցավ մառանի դռանը:
- 2) Ինչպե՞ս եղավ, որ աշխարհը այսպես փոխվեց, ո՞ր գնացին այն օրերը, երբ սնդուկում զրնգում էր ոսկին:
- 3) Խառնվել է գլխում հին ու նորը, միտքը սառել է, և էլ երբեք չի իմանա, թե ինչ է բերում վաղվա օրը:
- 4) Պատահե՞լ է ձեզ ձմռան բքին լինել դրսում՝ խավարի մեջ, երբ սառչում է ձեր դեմքը, և թվում է, թե փրկության ուղի չկա, և հանկարծ ցոլում է վիթխարի մի կրակ:

**56. Ո՞ր նախադասության մեջ ներգործական սեռի բայ չկա:**

- 1) Հագրոն առավ իր կնոջն ու աղջկան, անցավ լեռից լեռ, քարանձավից քարանձավ:
- 2) Նա հանեց ծիրանի փողը, որով նվագել էր կապույտ լեռների երգը:
- 3) Եղան բռնություններ, թշնամին ձորերով բարձրացավ մինչև նրանց խեղճ խրճիթները:
- 4) Բոցը հասավ դեղնած արտերին, կրակը լափեց և՛ սերմ, և՛ սերմնացան:

**57. Ո՞ր նախադասության մեջ է ընդգծված բայը կրավորական սեռի:**

- 1) Վիշտը նրա մեջ **խառնվել էր** ուրախությանը:
- 2) Արշալույսի բոսոր ճառագայթները **արտացոլվել էին** ծովի բեկբեկուն ալիքների մեջ:
- 3) Մեր աչքերի առջև **բացվեց** ապշեցուցիչ մի տեսարան:
- 4) Քաղցից ու թշնամուց **հալածված** գաղթականները վերջապես անցան Արաքսը:

**58. Ո՞ր նախադասության մեջ կրավորական սեռի բայ կա:**

- 1) Գյուղական գրագիրը բղավեց նրա վրա, նա սքափվեց և բեռը շալակին՝ վերադարձավ յուրայինների մոտ:
- 2) Աննան քաղաքի փողոցներում վախից, անհանգստությունից մոլորվել էր:
- 3) Հաճի աղան տեսել էր ռուս-տաճկական պատերազմը, երբ թուրքը կարծես բնականորեն հետ էր մղվում:
- 4) Նուշիկը երբեմն նախաճաշ չի բերում, իսկ երբ բերում է, հաց է ու խորոված կարտոֆիլ:

**59. Ո՞ր նախադասության մեջ կրավորական սեռի բայ չկա:**

- 1) Զինվորը, կարեվեր խոցված, վայր ընկավ::
- 2) Այդ հարցը քննարկվել է շատերի կողմից:
- 3) Նա վաղուց հիասթափվել է բոլորից:
- 4) Ծառերն օրորվում էին քամուց:

**60. Ընդգծված բայերից քանի՞սն են չեզոք սեռի:**

1. Շատրվանները **քրքջում էին** պայծառ ծիծաղով աղամանդեղեն:
2. Յոթն անգամ ահա ատում եմ, ատում իշխանությունը՝ սերունդներ **լավող:**
3. Եվ քարավանը, փոշու մեջ **կորած**, քայլում էր դանդաղ, հոգնած, քրտնաթոր:
4. Եվ **նգովում եմ** իշխանությունը՝ հազարաճիրան մոլի բորենին:
5. Դե եկ, վարդապե՛տ, **մի՛ խելագարվիր:**

- 1) երկուսը
- 2) երեքը
- 3) չորսը
- 4) մեկը

**61. Ո՞ր շարքի բոլոր բայերն են երկրորդ դեմքի:**

- 1) ասա՛, խոսի, վառի՛ր, բուժեցի
- 2) չլսեին, կլռեիր, մի՛ բեր, հիշեցիր
- 3) մտածեց, որոշեիր, պիտի բացեիր, գգա՛
- 4) թռչեիր, աղա՛, չգնայիր, մի՛ առ

**62. Ո՞ր տարբերակում ներկա ժամանակի բայաձև կա:**

- 1) Գնամ. ուր որ է ճերմակ մշուշով  
Չյունն իջնելու է, կիրճերը փակի ...
- 2) Ամայի դաշտում նստեմ միայնակ,-  
Մեռնող հուշերս փայփայեմ ու լամ:
- 3) Մի՛ կանչեք ինձ, հույսի նոր  
Խոսքերով ինձ մի՛ դյութեք...
- 4) Չգիտեմ՝ այս տխուր աշխարհում  
Ո՞րն է լավ, որը՝ վատ ...

**63. Ո՞ր տարբերակում սահմանական եղանակի ներկա ժամանակի բայ չկա:**

- 1) Ու երկինքը եկավ փարվեց հողին...  
Փա՛ռք տանք այս իրիկունն արարողին:
- 2) Լռած զանգ է կյանքս...  
Ես՝ ավերակ վանքս,  
Էլ արարող չունեմ:
- 3) Ես սիրում եմ քո մեղավոր աչքերը խոր  
Գիշերի պես խորհրդավոր....
- 4) Ամայի տակից ջուր է գալիս,  
Դոշ է տալիս, փրփրում:

**64. Ո՞ր շարքի բոլոր բայաձևերն են անցյալ ժամանակով:**

- 1) գայի, կգամ, չեմ եկել, գալիս էիր
- 2) տալիս էի, պիտի տամ, տվեցի, տալու էր
- 3) մի՛ տուր, պետք է տար, տայինք, կտայի
- 4) գրելու էի, գրել է, կգրեր, չի գրել

**65. Ո՞ր շարքի բոլոր բայաձևերն են ապառնի ժամանակով:**

- 1) չեմ նկարի, մոռացի՛ր, դառնանք, չգիտեմ
- 2) կերագենք, չենք վանելու, չես խնայում, ցանկանք
- 3) հավաքեմ, մի՛ հեռացիր, չնայեց, չի գնահատելու
- 4) բարձրացնեմ, չի մոռանա, չանցնես, լվանամ



**66. Ո՞ր շարքի բոլոր բայաձևերն են ապառնի ժամանակով:**

- 1) գնալու է, լինի, կհասցնես, չերգեմ
- 2) կարդայինք, մոտեցնեմ, պահանջեք, որոշել է
- 3) փախչեմ, չտանի, դառնան, խաղալու էի
- 4) տեսանք, գմայլվելու եմ, չեմ կանգնեցնի, արգելեմ

**67. Ո՞ր շարքի բոլոր բայաձևերն են անցյալ ժամանակով:**

- 1) դուրս եմ եկել, բերեցի, գնում էր, տեսնեմ
- 2) չեմ եկել, չվերցրինք, խոսում էի, մի՛ գա
- 3) գնում եմ, չգնայինք, չէր իմացել, չենք ներել
- 4) ասացի, ասում էինք, չգրեցի, չեմ արել

**68. Ո՞ր նախադասության մեջ ապառնի ժամանակաձև կա:**

- 1) Անձրևաջուրը ծառերի չորացած ճյուղերը տարել էր, հասցրել մինչև գետի բերանը:
- 2) Ինքն իրեն ասաց, որ նստելու լավ տեղ է գտել. կորած ձիու երևալուն ապաստելով՝ կարող է մտածել փուչ կյանքի մասին:
- 3) Նա ուզեց գնալ՝ տեսնելու՝ հեռվում օրորվողը ձի՞ է, թե՞ քարակույտ:
- 4) Սա կմնա այսպես, քանի դեռ բետոնը տասը կանգուն շերտով մինչև վերջին թիվը չի ծանրացել այս ցնորական երկրի կավին:

**69. Տրված բայաձևերից քանի՞սն են ապառնի ժամանակով:**

*Չուտենք, կայարի, արժեմ, երգի՛ր, զգա՛, պիտի ժպտաս, գրեմ, գրելու էի, սպասի՛ր, զգալու է:*

- 1) ութը
- 2) յոթը
- 3) ինը
- 4) բոլորը

**70. Ո՞ր շարքի բոլոր բայերն են սահմանական եղանակի:**

- 1) չեմ հավատա, չհուզվեցինք, պարեհինք, մեծացրի
- 2) կամեցավ, գրվել է, ունեմ, չի կարծելու
- 3) հուսանք, ասացի, գալիս է, չերգեց
- 4) պատմելու է, դավում եմ, չի գղջում, խնդրեմ

**71. Ո՞ր տարբերակում սահմանական եղանակի բայաձև չկա:**

- 1) Լեռնային ճամփա, քար է ու կապան,  
Վանք է ավերակ, ավերակ մի խուց...  
Չեմ եղել այստեղ, ամեն ինչ սակայն  
Միրտ ցավելու չափ ծանոթ է վաղուց:
- 2) Եվ մի՞թե այդ վշտիդ համար  
Չեմ սիրում քեզ այդպես քնքուշ,  
Եվ խոնարհվում քեզ պես համառ,  
Օ՛, հայրենիք դառն ու անուշ:
- 3) Ոչ ոք չի տեսնի իմ երթը տխուր  
Գիշերվա միջով ցուրտ ու ամալի....
- 4) Կախարդական մի շղթա կա երկնքում՝  
Աներևույթ՝ որպես ցավը խոր հոգու....

**72. Ո՞ր նախադասության մեջ սահմանական եղանակի քայածն կա:**

- 1) Լինե՛ր, այնպես լինե՛ր, որ ինքը հնձվոր լինե՛ր, նրանց արտը հնձե՛ր, Սոնան հաց բերե՛ր իրեն...
- 2) Եթե արևը չխոնարհվե՛ր դեպի մայրամուտ, նա առանց հոգնության երկար կմնար այդ դիրքով և չէր հագնե՛ա արդեն դեղնոդ ծառերի սոսափից:
- 3) Մի՛ կարծիր, թե ահա այս գառիվերը կանցնես, քո վազըը կհեշտանա, էլ հետ չես նայի ու չես տեսնի նրան քո հետևից նայելիս:
- 4) Ու պիտի վեր կենայինք, քնաթաթախ աչքերով չջոկեինք, թե ով է եզները տանելու հանդ:

**73. Ո՞ր նախադասության մեջ անցյալ կատարյալ ժամանակաձև կա:**

- 1) Ինչքան թանձրանում էր մութը, այնքան վառ էին փայլփլում էլեկտրական լույսերի շղթաները:
- 2) Ամեն քայլափոխի պիտի ընկներ, եթե մահակը քարին դեմ չտար:
- 3) Մենք նստեցինք, մինչև իրիկվա նրբին լազուրը կհավեր մութի մեջ:
- 4) Տարիների հետ պառավել է գյուղը, ուժասպառ եղել տարիքն առած ծերունու պես:

**74. Ո՞ր շարքում անցյալ կատարյալ ժամանակաձևի կազմության սխալ չկա:**

- 1) խորացանք, թռա, եկանք, մոտեցրեցի
- 2) կորչեցի, գտա, հասցրի, դիպանք
- 3) հագա, բարձրացրիք, թռչեցինք, կորանք
- 4) կպա, արբեցին, վագեցրի, հագեցա

**75. Ո՞ր շարքում անցյալ կատարյալ ժամանակաձևի կազմության սխալ չկա:**

- 1) հագեցա, մտա, դիպչեցինք, վերակենդանացրի
- 2) հարցրեցի, արժեցավ, հասա, կերա
- 3) վերցրեցինք, փախանք, հիշեցի, զգացինք
- 4) սառա, հագցրի, դարձա, մտցրի

**76. Ո՞ր շարքում արգելական հրամայականի կազմության սխալ ձև կա:**

- 1) մի՛ բեր, մի՛ մտիր, մի՛ երգեցեք, մի՛ խոսիր
- 2) մի՛ հասիր, մի՛ գտիր, մի՛ թող, մի՛ եկ
- 3) մի՛ գղջա, մեջ մի՛ ընկիր, մի՛ կորցրու, մի՛ թռիր
- 4) մի՛ տուր, մի՛ եղիր, մի՛ կեր, մի՛ հավատա

**77. Ո՞ր նախադասության մեջ հրամայական եղանակի կազմության սխալ ձև կա:**

- 1) - Ե՛լ և տե՛ս, այն մեր աստղն է. երբ հեռու կլինենք միմյանցից, ամեն օր կնայես նրան ու կխոսես:
- 2) - Մե՛ղա, շարունակի՛ր պատմությունդ, - ասաց թագուհին մեղմ ու հանգիստ ձայնով:
- 3) - Արքայի բանբերն է. բա՛ց արեք դուռը, - ասաց իշխանը:
- 4) - Աբեղա՛, - առանց հետ նայելու ասաց վարպետը, - մի՛ վարանի, խոսի՛ր, ինչո՞ւ լռեցիր:

**78. Ո՞ր նախադասության մեջ հրամայականի եղանակի կազմության սխալ ձև չկա:**

- 1) Մի անձանոթ մարդ եթե անցներ փողոցով, պապս մեզանից մեկն ու մեկին շտապ կասեր. «Շուտ հասի՛, կանչի՛, թող մեր տուն գա»:
- 2) Մի՛ հարցնի, թե ինչ եղավ մայր ձին, որովհետև մայր ձին մեռավ:
- 3) Մի՛ թողիր, որ փշրվի առասպելը, և ոչ ոք նրան չհավատա:
- 4) -Եթե ուզում ես ձի նստել, լուսամուտից դո՛ւրս թռիր,-ասաց իմ զարմիկ Մուրադը:

**79. Ո՞ր տարբերակում հրամայական եղանակի կազմության սխալ ձև կա:**

- 1) Մի՛ վրդովեք դուք, մի՛ տանջեք նորից,  
Մի՛ տանջեք նորից. հանգչել եմ ուզում:
- 2) Այսօր եղի՛ր քրոջ պես,  
Անչար, մաքուր ու գթոտ:
- 3) Քնքուշ երագով պաճուճի՛ր հոգիս,  
Նստի՛ր մահճիս մոտ ու տխուր երգի՛:
- 4) Ասացե՛ք՝ արդյոք նա էլ թախժո՞ւմ էր,  
Արդյոք տրտո՞ւմ էր նա էլ ինձ նման:

**80. Ո՞ր շարքի բոլոր բայերն են ըղձական եղանակի:**

- 1) չխնդրեի, հուսահատվեմք, խոսի, մոտեցրի
- 2) լինեմ, տեսնեի, կայինք, չխոնարհվեմ
- 3) հուսանք, չեմ ասի, չգան, չերգեիմ
- 4) կատարի, դառնանք, չկարդային, խնդրեմ

**81. Ո՞ր շարքում ըղձական եղանակի բայաձև չկա:**

- 1) չունեմ, կատարեինք, կարդամ, չի հիշի
- 2) չենք խմի, չի գնացել, մեկնի՛ր, տանենք
- 3) կցանկանայի, արթնացա, չէր հանդիպի, երգեց
- 4) մոտենայիր, ծաղկեր, մի՛ քանդիր, պիտի հմայի

**82. Ո՞ր նախադասության մեջ ըղձական եղանակի բայաձև կա:**

- 1) Կայծակը չոր ճայթյունով բախվեց ժայռին, մի կողմ շարտվեց և թաղվեց կանաչ գետնի մեջ:
- 2) Եվ դեռ երկար պիտի տանջվեի նրա խոցող ու թունոտ խոսքերից:
- 3) Ես թուքս կուլ տվի ու մտածեցի, որ լավ կլիներ, եթե իմ անգրագետ մոր փոխարեն նա լիներ իմ մայրը:
- 4) Բարձր ճակատի տակից բարոթյամբ ժպտում էին այդ աչքերը, իսկ ձայնը սրտագին էր և բարեկամական:

**83. Ո՞ր տարբերակում ըղձական եղանակի բայ չկա:**

- 1) Մի հավք գարկի ես մի օր,  
Թռավ, գնաց վիրավոր:
- 2) Տամ պարանոցս կարոտին այն երկնուղեշ  
Ու օրորվեմ եղերական ու անբասիր:
- 3) Թող դուրս ընկած իմ աչքերի մեջ կախվածի  
Նոքա տեսնեն պայծառ օրերդ ապագա:
- 4) Ոչ մի ստվեր կախադանին թող մոտ չգա:

**84. Ո՞ր նախադասության մեջ ենթադրական եղանակի ժամանակաձև կա:**

- 1) Նա չգիտի՝ գինի՞ պիտի խմեն այդ կժից, թե՞ աղջիկը հարսանիքի ջուրը պիտի տանի, իսկ պապերից լսած իմաստուն խոսքերը նա չի ասի ամեն պատահական մարդու:
- 2) Այնքան գուլալ է մեր գետը, որ կարող ես ջրի տակ խիճերը մեկ-մեկ համրել. խառն է ջուրը, բարձր սարից է գալիս, ուր միշտ մռայլ ամպ կա, ամպի տակ՝ սառույցի հաստ շերտեր:
- 3) Մեզ հաճելի է դիտել ջրի երեսին պտույտ անող մժեղների երամը, ջրածտերի՝ փրփուրի վրայով թռչելն ու ջրվեժի փոշու մեջ կորչելը և նրանց անվախ ծվլոցը լսելը:
- 4) Ամենից գվարթ ու աղմկալի երկու թուպեներն են, մինչև ուսուցիչը մեկին կարգադրի՝ վազի՛ր, զանգը տո՛ւր, մինչև զանգը հնչի, ու վազենք բակ:

**85. Ո՞ր շարքի բոլոր բայերն են ենթադրական ապառնի ժամանակաձևով:**

- 1) չի գնա, կհաղորդի, չեմ երգի, կամենան
- 2) կհյուսի, չէր նորոգի, կժպտանք, չես խախտի
- 3) չեն մոտենա, կօգնենք, կառնի, չես իջնի
- 4) կկախեն, չի խոսելու, չեփես, կծածկեն

**86. Ո՞ր շարքում տրված եղանակին չպատկանող բայ կա:**

- 1) սիրելու եմ, չսիրեցիմք, սիրել եմ, սիրեցի-սահմանական եղանակ
- 2) պարեն, չպարեն, չպարեցի, պարեիր-ըղձական եղանակ
- 3) կհավատաս, չեմ հավատա, կհավատայի, չենք հավատա-ենթադրական եղանակ
- 4) պիտի լռեմ, պետք է լռենք, չպիտի լռի, պիտի լռեր- հարկադրական եղանակ

**87. Ո՞ր նախադասության մեջ անկանոն բայ կա:**

- 1) Հացավաճառը անձամբ չէր ճանաչում Ռաֆֆուն, այդ պատճառով էլ մերժեց վիպասանին և հաց չտվեց:
- 2) Մենք, դժբախտաբար, շատ բան ենք կորցնում, երբ յուրացնում ենք ուրիշի շարժուձևը:
- 3) Մաշտոցը ստեղծեց հայոց գրերը, և հայն սկսեց կարդալ հայերեն:
- 4) Կարիճը կարողանում է ջրի մեջ սուզված ապրել քառասունուր ժամ:

**88. Ո՞ր նախադասության մեջ անկանոն բայ կա:**

- 1) Առանց ընկճելու երկրի թշնամուն Նրա սուրը երբեք չի մտել պատյան:
- 2) Ինձ թաղե՞ք, երբ կարմիր վերջալույսն է մարում ...
- 3) Մահախուճապ սերունդների  
Աչքն է դիպել լույս գագաթին  
Ու անցել...
- 4) Ու պիտի գա հանուր կյանքի արշալույսը՝ վառ հագած:

**89. Ընդգծվածներից ո՞րն անկանոն բայ չէ:**

- 1) Երագ **տեսա**. Սայաթ-Նովեն մոտս էկավ սազը ձեռին:
- 2) Միրտս վառեց, մոխիր դարձավ՝ ինքը կրակ ու հուր մնաց.-  
Դու էլ նրա գովքը **արքա**, որ գա՝ օսկե մասը ձեռին:
- 3) Ես էլ մենակ, **մանեցի** իմ թելը կյանքում -  
Ինչքան որ ուժ ունեի - անխոնջ ու անքուն:
- 4) Բոլորը **տամ** ու նվիրեմ, ինձ ոչ մի հուր թող չմնա՝  
Դու՛ր չնրսես ձմռան ցրտում, - բոլո՛րը քեզ...

**90. Ո՞ր տարբերակում անկանոն բայ չկա:**

- 1) Դեպի արևը դարեր ու դարեր թռի՛ր, սլացի՛ր, ազնի՛վ քարավան:
- 2) Բայց աչքերը մեր արևներ չտեսան,  
Եվ մեր սրտերը՝ լուսավոր հեռուներ:
- 3) Էլի գարուն կգա, կբացվի վարդը:
- 4) Ամեն վայրկյան սիրով տրտում ասում եմ ես՝ մնաս բարով:

**91. Ո՞ր տարբերակում անկանոն բայ չկա:**

- 1) Հեռու հեռուներից գալիս են ջինջ ձայներ,  
Աղբյուրների ձայներ, անտառների...  
Եվ մանկության հեռու քարայրերում հնչող  
Արձագանքներ կորած...
- 2) Գլուխը սարի գլխին է դրել,  
Քրքրված պոչը թողել է ձորում:  
Իմ շուկներից նա վեր է թռել,  
Ինձ մանկությանս հրաշքն է ձոնում:
- 3) Լուսինը՝ Աստծո լուռ մի ուրվական,  
Մունջ քաքնվում էր մութ ամպի ետև,-  
Դեռ անցնում էինք ինչպես լուսնական,  
Ճեղքում ամպերի վարագույրը սև:
- 4) Մտքով մանուկ են դառնում  
Ուրախ կանչերս խառնում  
Բարդու տասափին,  
Կամ նստում են մի քարի,  
Ունկնդրում ծիծառի  
Թևերի ծափին:

**92. Ո՞ր նախադասության մեջ անկանոն կամ պակասավոր բայ չկա:**

- 1) Մթամած երկնքում ամպերը գնալով խտանում էին, մինչև որ երկինքը բոլորովին մթնեց:
- 2) Այդ կինը երգում էր իր կորցրած սիրո մասին, և ոչ ոք չէր համարձակվում որևէ բառ ասել:
- 3) Նա հագել էր կապույտ բաճկոն, դրել էր գլխարկ, որի տակ հավաքել էր շեկիկ մազերը:
- 4) Ես ամուր առողջություն ունեի և կարող էի առանց հոգնելու մինչև լույս աշխատել:

**93. Տրված հատվածում քանի՞ անկանոն բայ կա:**

Ինչ ասեի, կատարեր,  
Առներ սերս գեղջկական  
Մի անգամ ևս տաներ  
Ջաղացպանի աղջկան:  
Հրաշք լինեք, կրկնվեք  
Այն հրաշքը իրական:

- 1) երեք
- 2) չորս
- 3) հինգ
- 4) մեկ

**94. Տրված հատվածներից որի՞ մեջ պակասավոր բայ կա:**

- 1) Եվ այդ հիմքի վրա ինքը քանի՞ անգամ  
Մտքով որմ է հանել, խոյակ ու սյուն  
Եվ ձևերն է դրել նոր տաճարի...
- 2) Եվ երբ չի մնա ոչ մի հույս գաղտնի,  
Միրտդ կճչա, արդյոք ո՞ւր ես, կա՞ս,  
Հողը կգրկես և կհեկեկաս...
- 3) Ես չեմ երգելու այժմ շառաչուն  
Գալիքի մասին, որ գալու է դեռ...
- 4) Այսպես ասաց հայոց ահեղ արքան,  
Ապա իջավ գահից ոսկեղրվազ  
Եվ ծանրաթաթ քայլեց սրահներով:

**95. Ո՞ր նախադասության մեջ է անկանոն բայը անկանոնություն դրսևորել:**

- 1) Ամեն տեղ, ուր էլ որ լինեմ, երբ որոտում է ամպը, թնդում է սիրտս բերկրանքից:
- 2) Մեկ էլ տեսար՝ մի բզեզ թռավ, և նրա բզզոցը լավեց օդում միլիոնավոր բզեզների թևերի բզզոցի ուժգնությամբ:
- 3) Ես ցույց տվի, թե ոչինչ չեմ լսում, այլ միայն կարդում եմ քաջագործությունների մասին գիրքը:
- 4) Առանց հաց ուտելու ես մտա անկողին և շուռ գալով դեպի պատը՝ աչքերս փակեցի:

**96. Ո՞ր նախադասության մեջ է ընդգծված անկանոն բայը տվյալ ժամանակաձևում անկանոնություն դրսևորել:**

- 1) Նրանք **եկել** էին հեռու Իրանից և հայերեն չգիտեին:
- 2) Այդ հուշերն ինձ մի օր **կտանեն** իմ բնօրրանը:
- 3) Մայրը հավատում էր, որ իր որդին **դառնալու է** Թումանյանի մման անվանի գրող:
- 4) Մտածում էինք, թե ինչ **պիտի ուտեր** ճանապարհին, ինչպես պիտի հասներ քաղաք:

**97. Եղել է բայաձևի քերականական հատկանիշներից ո՞րն է սխալ նշված:**

- 1) անկանոն բայ
- 2) 3-րդ դեմք
- 3) սահմանական եղանակ
- 4) ներկա ժամանակ

**98. Պնդումներից քանիստ՞ում սխալ կա:**

1. Հայերենում բայերը հանդես են գալիս երկու ձևով՝ դիմավոր և անդեմ:  
Դիմավոր բայերը ունեն դեմք, թիվ, ժամանակ, եղանակ և սեռ, իսկ անդեմ բայերը զուրկ են նշված բոլոր հատկանիշներից:
2. Անկախ դերբայները կարող են դառնալ բաղադրյալ ստորոգյալի մաս՝ ստորոգելի, իսկ ձևաբայերը (կախյալ դերբայները) **եմ** օժանդակ բայի հետ կազմում են դիմավոր ձևեր:
3. Սահմանական եղանակն ունի մեկ ներկա, հինգ անցյալ և մեկ ապառնի ժամանակ:
4. Հրամայական եղանակն ունի միայն մեկ դեմք՝ 2-րդ, և մեկ ժամանակ՝ ապառնի:
5. Բայի դիմավոր ձևերը ըստ կազմության լինում են երկու տեսակ՝ բաղադրյալ, որոնք կազմվում են ձևաբայերից ու օժանդակ բայից, և պարզ, որոնք կազմվում են բայահիմքով և վերջավորությունների փոփոխությամբ:
6. Ենթադրական (պայմանական) ու հարկադրական եղանակները ունեն միայն երկու ժամանակ՝ անցյալ և ապառնի:

- 1) երկուսում
- 2) երեքում
- 3) մեկում
- 4) ոչ մեկում

## ԲԱԺԻՆ 4 Մակբայ, կապ, շաղկապ, վերաբերական, ձայնարկություն

### 1. Ո՞ր շարքի բոլոր բառերն են մակբայներ:

- 1) մասամբ, նույնիսկ, քանիցս, ընդառաջ
- 2) դարձյալ, թեթևակի, հագիվ, որոշ
- 3) հիմնականում, հաճախակի, այնպես, առավել
- 4) հիմնովին, շուտով, դռնեդուռ, վերստին

### 2. Ո՞ր նախադասության մեջ մակբայ կա:

- 1) Եվ հիշում ես քո որդուն, որ հեռացել է վաղուց,- Ո՞ր է արդյոք հեռացել, մա՛յր իմ անուշ ու անգին:
- 2) Դիմեցե՛ք դեպ անհայտ հեռուները, և հեռուները ձեզ անմահությո՛ւն կտան....
- 3) Եվ իմացե՛ք ուրեմն, որ ոչ մի աշխատանք Տքնաջան չէ այնքան, որքան ոգու հերկը:
- 4) Լուսինը որդուս օրոցքն է ոսկի, Ու ես եմ կախել աստղերը վրան:

### 3. Ո՞ր նախադասության մեջ *հետո-ն* մակբայ չէ:

- 1) Քեզնից հետո կանգնած մարդը տարօրինակ տեսք ուներ:
- 2) Հետո նա սկսեց պատմել իր տպավորությունների մասին:
- 3) Արածի ու չարածի համար հետո պետք չէ արդարանալ:
- 4) -Դու հետո՞ արի. զբաղված եմ հիմա,- խնդրեցի նրան:

### 4. Ո՞ր նախադասության մեջ մակբայ չկա:

- 1) Դու դեռ չես մեռել իմ հիվանդ սրտում, Դու դեռ ապրում ես երազի նման:
- 2) Հետո խոսեց իր ծրագրերի մասին, որոնք առնչվում էին այդ խնդրին:
- 3) Նա այնպես նայեց ինձ, որ հուզմունքից շփոթվեցի:
- 4) Ինչքա՛ն գարուններ ձմեռներ դարձան, Աշխարհը կոկոն, ջահել է նորից:

### 5. Ո՞ր տարբերակում մակբայ չկա:

- 1) Իմ աչքերի մեջ այնքա՛ն կրակներ եմ մարել ես...
- 2) Կանչում է կրրկին, կանչում անդադար  
Էն չըքնաղ երկրի կարոտը անքուն:
- 3) Ու սիրում ենք առավոտից իրիկուն  
Ճամփա երթալ ու հավիտյան երազել...
- 4) Կբանան ոմանք իմ գիրքը գուցե,  
Կթերթեն դանդաղ, կկարդան տողեր:

### 6. Տրված բառերից քանի՞սն են մակբայ:

*Այստեղ, որտեղ, բազմիցս, միառժամանակ, այսքան, ինչքան, վաղուց ի վեր, տեղնուտեղը, ամենուրեք, ինչպես:*

- 1) ութը
- 2) վեցը
- 3) հինգը
- 4) բոլորը

**7. Ընդգծված բառերից քանի՞սն են մակբայներ:**

Նա գնում էր **կրկին** դեպի հեռուն այն լուրթ,  
 Գեպի լյառը **անհաս** ու վեհանիստ,  
**Գեպի** գագաթը բարձր, որ ժողովուրդը  
 Համարել է **հավերժ** իր գոյության խորհուրդը,  
 Որ ճաշակե **այնտեղ** հավերժական հանգիստ...

- 1) մեկը
- 2) երկուսը
- 3) երեքը
- 4) չորսը

**8. Նախադասություններից քանիստ՞ն մակբայ կա:**

- 1. Սկսեց քայլել մինչև փողոցի շրջադարձն ու հետ՝ ուշադիր նայելով անցորդներին:
- 2. Նամակի հետ նա աղջկան ուղարկեց նաև մի քանի անհրաժեշտ իրեր:
- 3. Կնոջ թափառիկ հայացքը հանդիպեց Կոմիտասի աչքերին, հետո նորից կուչ եկավ ոտքերի մոտ, և նա շարունակեց ակնկոթ փնտրել կորցրածը:
- 4. Վարագույրների բարձրանալուց հետո տեսա՝ բոլորը ոտքի են ելել և փայլող աչքերով նայում են ինձ:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) ոչ մեկում

**9. Ո՞ր շարքի բոլոր բառերն են ժամանակի մակբայներ:**

- 1) ընդմիջտ, վաղուց, ներկայումս, համարյա
- 2) կանխավ, դանդաղորեն, երբեմն, ուշ
- 3) հավետ, հիմա, վաղը, այսուհետև
- 4) այլևս, երիցս, միանգամայն, դեռ

**10. Ո՞ր շարքում ժամանակի մակբայ կա:**

- 1) երբևէ, դանդաղ, վերուստ, հետզհետե
- 2) շտապ, երբեք, երիցս, վար
- 3) դարձյալ, գրեթե, հապճեպ, ներքուստ
- 4) նորից, հագիվ, երբ, կամաց-կամաց

**11. Ո՞ր շարքի բոլոր բառերն են կապեր կամ կապական բառեր:**

- 1) առանց, դեպի, միայն, չափ
- 2) շուրջ, ներքև, շնորհիվ, ի փառս
- 3) ըստ, ապա, բացի, համար
- 4) մասին, նման, այսինքն, վրա



**12. Ո՞ր տարբերակում կապ կամ կապական բառ չկա:**

- 1) Չուր եմ փախչում, ինձ խաբում,  
Հազար կապ է ինձ կապում...
- 2) Մանկությանն օրեր, երագի նման  
Անցաք գնացիք, այլ չեք դառնալու:
- 3) Գետակի վրա թեքվել է ուռին  
Ու նայում է նա վազող ջրերին:
- 4) Հայրենի ծփուն արտերի եզրին  
Կանգնած խորհում եմ սրտիս մեջ լռին....

**13. Առաջ բառը ո՞ր նախադասության մեջ է գործածվել որպես կապ:**

- 1) Տարիներ առաջ է հայրս տնկել այս այգին, որի բերքը հիմա վայելում ենք:
- 2) Տիրոջ սուրբ կամքով մենք կգնանք առաջ:
- 3) Միամիտները կարծում են, թե առաջ ամեն ինչ լավ էր:
- 4) Իմ ետևից, առա՛ջ, - որոտաց հրամանատարի խորխոս ձայնը:

**14. Ո՞ր տարբերակում է մտռ-ը հանդես եկել որպես կապ:**

- 1) - Երանի մոտղ վերադառնամ, մայրի՛կ ջան, -միշտ ասում էր նա:
- 2) Մնաք բարով՝ ասում եմ ես ընկերներիս՝ մոտ ու հեռու:
- 3) Ո՛չ մի ստվեր կախաղանին թող մոտ չգա:
- 4) Եկար էլ, ի՞նչ իմանամ՝  
Ում մոտ ես մեղքդ լալու:

**15. Ո՞ր շարքի բոլոր կապերն ու կապական բառերն են պահանջում սեռական (տրական) հոլովով խնդիր:**

- 1) ի դեմս, առանց, ի փառս, հանձինս
- 2) ըստ, միջոցով, դեպի, գատ
- 3) բացի, ներքո, հանդեպ, վերաբերմամբ
- 4) համաձայն, ի վնաս, նման, հանդերձ

**16. Ո՞ր նախադասության մեջ կա վրա կապի գործածության սխալ:**

- 1) Բոլորը զարմանում էին նրա վարպետության վրա:
- 2) Նա առավոտից երեկո մեջքի վրա պառկած էր անգործ:
- 3) Նա ազդում է բոլորի նյարդերի վրա:
- 4) Այս անգամ նա փորձեց նվազել դաշնամուրի վրա:

**17. Ո՞ր նախադասության մեջ կապի սխալ գործածություն չկա:**

- 1) Գա վկայում է օպերատորի մոտ փորձառության պակասի մասին:
- 2) Այս թիմի մոտ խաղը չի ստացվում:
- 3) Հանցագործի մոտ այդպես էլ ոչ մի կասկածելի իր չհայտնաբերվեց:
- 4) Ծառի վրա կոճեր էին, ինչպես կեչու մոտ:

**18. Նախադասություններից քանիստ՞ում կապի սխալ գործածություն կա:**

1. Երևանի կենտրոնական փողոցների վրա ամեն օր բացվում են նորանոր խանութներ ու վարսավիրանոցներ:
2. Նա հոգաց որդու բոլոր կարիքների համար:
3. Եթե դուք նկատի ունեք մեր մասին, մենք հրաժարվում ենք այդ գործին մասնակցելուց:
4. Նա վաղուց է ծանոթացել հայ երգի ու երաժշտության հետ:

- 1) երկուսում
- 2) երեքում
- 3) ոչ մեկում
- 4) բոլորում

**19. Ո՞ր շարքի բոլոր բառերն են շաղկապներ:**

- 1) քանի դեռ, որ, բայց, մանավանդ
- 2) թե, եթե, իսկ, ոչ մի
- 3) թեկուզ, հենց, որովհետև, որը
- 4) թե չէ, կամ, քան, թեպետ

**20. Ո՞ր նախադասության մեջ շաղկապ կա:**

- 1) Չգիտեմ՝ այս տխուր աշխարհում ո՞րն է լավ, ո՞րը՝ վատ:
- 2) Գինով եմ, գինով եմ ես էլ:
- 3) Ընդմիջտ օրհնեցի անհաստատ ուղին, ուր քեզ եմ փնտրել:
- 4) Կանչեցի թշվառ էն հոգիներին՝ ցրրված հավիտյան Մինչև Միջագետք, մինչև Ատրիք, մինչև Ծովն հայոց:

**21. Ո՞ր շարքի բոլոր բառերն են ստորադասական շաղկապներ:**

- 1) քանի դեռ, որտեղ, թեպետ, որպեսզի
- 2) մինչ, եթե, քանի որ, թեև
- 3) որովհետև, թեև, ուր, ուստի
- 4) թեկուզ, հենց որ, ինչ, քան

**22. Ընդգծվածներից քանի՞սն են ստորադասական շաղկապներ:**

1. **Չնայած** վանք լինելուն՝ Խոր վիրապը եղել է նաև դպրության կենտրոն:
2. Հռոմեացիներին արտաքսելուց հետո պաշտոնական մայրաքաղաք շարունակեց մնալ Արտաշատը, **մինչև** Արշակունյաց հարստության անկումը Վաղարշապատը կատարել է մայրաքաղաքին փոխարինող աթոռանիստի դեր:
3. **Մինչ** տեղի կունենար 1319 թ. երկրաշարժը, Ամին արդեն բազմիցս ավերվել էր թուրքմենական ցեղերի կողմից:
4. Ըստ Նոյ նահապետի և համաշխարհային ջրհեղեղի հետ կապված ավանդության՝ **հենց որ** Նոյը տապանից դուրս է գալիս, ցամաք է տեսնում և բացականչում՝ «Երև անր», այստեղից՝ Երևան:

- 1) մեկը
- 2) երկուսը
- 3) երեքը
- 4) չորսը

**23. Ստորադաս նախադասություններից քանի՞սն են ստորադասական շաղկապով կապակցվել գերադասին:**

1. Եթե հավատում ես ճշմարտության գործությանը, հոգուդ վրա մեղք մի՛ վերցրու:
2. Ծերունին, որ տարիքի մեծության հետ ունի մտքի կատարելություն, գովեստի է արժանի:
3. Մեփական անձի մասին զգույշ ու չափավոր պետք է խոսել, որ խոսքերն ինքնագովեստի չվերածվեն:
4. Գիտուն մեկը, որ պատրաստվել է մի երևելի խնդրի մասին խոսել, յուրաքանչյուր բառ պիտի կշռի:
  - 1) մեկը
  - 2) երկուսը
  - 3) երեքը
  - 4) չորսը

**24. Ո՞ր նախադասության մեջ ստորադասական շաղկապ կա:**

- 1) Նրանք ունեին եղեգնյա խսիր, որ փռում էին օջախի առաջ և պառկում խսիրի վրա, ինչպես քարայրի գագանը՝ չոր տերևների վրա:
- 2) Փոքր հանցանքը ծնում է մեծ հանցանք, այսինքն՝ չկա փոքր հանցանք:
- 3) Մեր հայրենի գյուղերից մեկում, ըստ ավանդության, մի զարմանալի մարդ է եղել. եղել է նա արդյոք, չի՞ եղել՝ ես դա չգիտեմ:
- 4) Նրա շրթունքները շարժվում էին. ինչ-որ բան էր խոսում, իսկ թե ինչ էր ասում, չհասկացա:

**25. Ո՞ր նախադասության մեջ ստորադասական շաղկապ չկա:**

- 1) Մենք վազքը դադարեցրինք ու սպասեցինք այնքան, մինչև նա օրորվելով մեզ կհասներ:
- 2) Թե ինչու Սոնան եկավ այգին, Դիլան դային մինչև վերջ էլ չիմացավ:
- 3) Ծիրանի տափը հիշատակելու արժանի ոչինչ չէր ունենա, եթե երկու գյուղերի անվերջ կռիվների առարկա չդառնար:
- 4) Մի հին միտք, որ շարժվում էր կանաչ թրթուրի պես, պտտվում էր գլխի մեջ:

**26. Ո՞ր նախադասության մեջ ստորադասական շաղկապ չկա:**

- 1) Քանի դեռ ճրագը վառվում էր, երրորդ մարդը, աչքերը լաթով կապած, նստած էր սենյակում:
- 2) Դա միակ գործն էր, որի համար հետագայում այնքա՛ն զղջացել էր նա:
- 3) Սինչ սողունը փախչում էր երիտասարդից, վերջինս գնաց նրա հետևից:
- 4) Թե կյանքը սա է, ես անիծում եմ մահը:

**27. Ո՞ր նախադասության մեջ որպեսզի շաղկապի սխալ կիրառություն կա:**

- 1) Ես խնդրում եմ, որպեսզի ոչ ոք դահլիճը չլքի:
- 2) Նա դուրս եկավ, որպեսզի իր ներկայությամբ մթնոլորտը ավելի չշիկացնի:
- 3) Քանի դեռ մութը չէր ընկել, նա շտապում էր, որպեսզի տեղ հասներ:
- 4) Ես դուրս եկա, որպեսզի ընդունեմ հյուրերին:

**28. Ո՞ր նախադասության մեջ շաղկապի սխալ կիրառություն կա:**

- 1) Ես ուզում եմ, որ պարսպը լցվի լացով, բայց ոչ թե մոր, այլ մանուկի...
- 2) Անհրաժեշտ է, որպեսզի բոլոր տարիների կորցրածը նորից հետ բերես:
- 3) Նա ապրում էր, որպեսզի մի կերպ քարշ տար իր խղճուկ գոյությունը:
- 4) Հանեցե՛ք ձեր դիմակները, որ գեթ մի քիչ դյուրին շնչել կարողանաք...

**29. Նախադասություններից քանիստ՞ն շաղկապի սխալ կիրառություն կա:**

1. Ասում են, որ ձյունառատ ձմեռը բերքառատ տարի է խոստանում:
2. Նա ուզում էր, որպեսզի աշխարհում տիրեր խաղաղություն:
3. Ընդդիմությունը պահանջում էր, որպեսզի վերանայվեն ընտրությունների արդյունքները:
4. Թշնամին գալիս էր, որ կործաներ հազարամյա վանքեր, այրեր ու կողոպտեր, գերեվարեր կին ու երեխա:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) բոլորում

**30. Ո՞ր շարքի բոլոր բառերն են վերաբերականներ:**

- 1) մի՞թե, անկախ, ահա, ախր
- 2) գոնե, հապա, ահավասիկ, լոկ
- 3) իրոք որ, այնքան, անգամ, սոսկ
- 4) միմիայն, ցավոք, թեև, իսկ և իսկ

**31. Ո՞ր նախադասության մեջ վերաբերական կա:**

- 1) Մենակ մի կյանք էլ թող ինձի պահեմ, Էն էլ քո փառքի գովքը երգելու:
- 2) - Ա՛յ տղա, մի գնա հորդ կանչի՛ր,- ծղրտաց զայրացած հարևանը:
- 3) - Մի՛ պարծենա, գոռո՛գ Նադիր,- Պատասխանեց էն հսկան:
- 4) Մի օր առհավետ կյանքս կանի՞ծեմ:

**32. Ո՞ր նախադասության մեջ վերաբերական չկա:**

- 1) Սպասավորներից մեկը քնած էր՝ զլուխը սեղանին դրած, մի ուրիշը մեջքը հենել էր պատին և բուք հայացքով նայում էր դռանը՝ ըստ երևույթին քունը հաղթահարելով:
- 2) Ես լավ չեմ հիշում նրան, որովհետև նա սոսկ մեր տան անդամ էր՝ գերծ ջղայնության ախտից:
- 3) Նրա այս վերջին բարեհաճ ընդունելությունն ինձ բերեց այն համոզման, որ ամեն առավոտ ես նրան կհանդիպեմ հենց նույն տեղում:
- 4) Ժպիտը մարող գույներով գծագրվում էր նրանց դեմքերի վրա և իսկույն ևեթ անհետանում:

**33. Ընդգծվածներից ո՞րը վերաբերական չէ:**

- 1) **Այո՛**, Լուսինե Չաքարյանից լավ դժվար է հոգևոր երգ կատարել:
- 2) «**Գուցե** մի նոր հյուր են բերում», - չարախնդաց բանտապետը:
- 3) Նա **միայն** սպառնում էր ձեր արքային, բայց հարձակվել չի համարձակվի:
- 4) Նա **հազիվ** էր գսպում իրեն, որ ձայնը չբարձրացնի:

**34. Ո՞ր շարքի բոլոր վերաբերականներն են հաստատական:**

- 1) հարկավ, բարեբախտաբար, իսկապես, գուցե
- 2) իրավամբ, ցավոք, այո՛, անշուշտ
- 3) անպատճառ, անպայման, մանավանդ, իրոք
- 4) անկասկած, անտարակույս, արդարև, հիրավի

**35. Ո՞ր շարքի բոլոր բառերն են ձայնարկություններ:**

- 1) տո՛, հարա՛յ, ավա՛ղ, չը՛խկ - չը՛խկ
- 2) վա՛շ, գրը՛նգ, է-հե-հե՛յ, երանի տալ
- 3) քշա՛, էհե՛յ, ճոճոոց, վայնասուն
- 4) գոռգոռալ, թու՛հ, հե՛յ, օ՛ֆ

www.atc.am

## ԲԱԺԻՆ 5 Ընդհանուր հարցեր ձևաբանության վերաբերյալ

### 1. Ընդգծվածն ի՞նչ խոսքի մասի նշանակությամբ է գործածված:

Ճոճվել է **անգամ** ճնճողուկի շնչից,  
Բայց հողմի շնչին դիմացել է նա:

- 1) կապ
- 2) գոյական
- 3) վերաբերական
- 4) շաղկապ

### 2. Տրված բառերի ձևաբանական վերլուծության տարբերակներից ո՞րն է սխալ:

Հավատացնում էին, թե նա այնտեղ՝ մի պահարանի մեջ, փայփայելով պահում է այն տրեխները, որոնցով գաղթել էր իր ծննդավայրից տասնհինգ տարեկան հասակում:

- 1) այնտեղ - տեղի մակբայ
- 2) հասակում - ներգոյական հոլով
- 3) փայփայելով - անորոշ դերբայ
- 4) որոնցով - հարաբերական դերանուն

### 3. Ո՞ր շարքում բառի ձևաբանական վերլուծության սխալ կա:

Աշնանային թխպոտ օրերից մեկն էր. ամպամած երկնքից անընդհատ մաղում էր անձրևը, օդը հագեցած էր մինչև ոսկորները թափանցող անախորժ խոնավությամբ:

- 1) **աշնանային**- ածական, **օրերից** - գոյական, բացառական հոլով
- 2) **անընդհատ** - ձևի մակբայ, **օդը**- հասարակ գոյական, որոշյալ առում
- 3) **մինչև** - նախադիր կապ, **ամպամած**- հարակատար դերբայ
- 4) **մաղում էր**- դիմավոր բայ, անցյալ ժամանակ, **խոնավությամբ**-գոյական, գործիական հոլով

### 4. Ո՞ր շարքում բառի ձևաբանական վերլուծության սխալ չկա:

Իմ ընկերներից շատերը **ընկան կովի** սուրբ դաշտում:

Բանտում **ամենքը** երազում են գիշեր ու ցերեկ՝ սպասելով **ազատվելու** հրամանին:

Զմրուխտյա գետակի վրա մի **քանդված** ջրաղաց **կար**...

Ծերունիները, պատի **տակ** նստած, ադոք **էին մրմնջում**...

- 1) **ընկան** - բայ, սոսկածանցավոր բայ, սահմանական եղանակ, անցյալ կատարյալ ժամանակաձև, **կովի** - հասարակ գոյական, /ի հոլովում
- 2) **ամենքը** - որոշյալ դերանուն, ուղղական հոլով, **ազատվելու** - անորոշ դերբայ
- 3) **քանդված**- բայ, հարակատար դերբայ, **կար** - դիմավոր բայ, ներգործական սեռ
- 4) **տակ** - հետադիր կապ, **մրմնջում էին**- դիմավոր բայ, անցյալ ժամանակ

**5. Ընդգծված բառերի ձևաբանական վերլուծության մեջ ո՞ր շարքում կա սխալ:**

-**Ղե՛**, սիրուն աստղիկներ, երկնքի՛ ճրագներ, **հիմա** գնացե՛ք, գիշե՛րը եկեք:

Ծնվում ենք **ակամա**, ապրում ենք **զարմացած**, մեռնում ենք կարտոպի:

Լսո՞ւմ ես՝ **այնտեղ** իմ սի՛րտն է թաղած,-

**Կոխտտի՛ր** նրան քայլերով քո լույս...

Բոլո՛րը տամ ու նվիրեմ, **ինձ** ո՛չ մի հուր **թող** չմնա:

- 1) **ղե՛** - ձայնարկություն, **հիմա** - ժամանակի մակբայ
- 2) **զարմացած** - հարակատար դերբայ, չեզոք սեռ, **ակամա** - ձևի մակբայ
- 3) **այնտեղ**- տեղի մակբայ, **կոխտտի՛ր** - հրամայական եղանակ, ապառնի ժամանակ, երկրորդ դեմք
- 4) **ինձ** - անձնական դերանուն, առաջին դեմք, **թող** - վերաբերական



## ԳԼՈՒԽ 4 ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

### ԲԱԺԻՆ 1 Նախադասության տեսակները

#### 1. Ընդգծվածներից ո՞րը նախադասություն չէ:

- 1) **Եվս մի վայրկյան**, ու կանեանաս սին երազի պես:
- 2) **Լուսյուն է, մութ է այնտեղ**, սակայն իմ չոզում արդեն արշալույս է, հարություն....
- 3) Քայլում ենք մենք փողոցներում.  
**Ես՝ քո սիրով, դու՝ ուրիշի...**
- 4) Նա **չգիտես** ինչ է փնտրում այս կյանքում,

#### 2. Ո՞ր բաղադրիչ նախադասությունն է համառոտ:

Ընկերները գլուխ էին խոնարհում(1), նրանց ողջունում էին(2), բայց մեկն շտապում էր տուն(3), մյուսը՝ աշխատավայր(4):

- 1) առաջին
- 2) երկրորդ
- 3) երրորդ
- 4) չորրորդ

#### 3. Բաղադրիչ նախադասություններից քանի՞սն են համառոտ:

Հիրավի, ամեն ինչ անօգուտ էր, և նա ամենի գազանի էր մման, որից սարսափում էին, բայց, այնուամենայնիվ, կռիվը պետք է շարունակվեր:

- 1) մեկը
- 2) երկուսը
- 3) երեքը
- 4) չորսը

#### 4. Ո՞ր նախադասությունն է պարզ ընդարձակ:

- 1) Երեկոյան ցուրտ էր լինելու:
- 2) Ոչ ոք հաղթող չպիտի համարվի:
- 3) Նա կարծես շփոթված էր:
- 4) Երեխաները հետ էին մնացել:



**5. Ո՞ր նախադասությունն է բարդ (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Դարձյալ մնում է մի բուռ հողի խորհուրդը իսկ հինգ միլիարդից միայն մեկ մարդու ներաշխարհը:
- 2) Բոլորի հետ գնում էր եկեղեցի փորձելով հանապազօրյա աղոթքներով փոքր-ինչ քավել մեղքերը:
- 3) Ամեն մեկը յուրովի պատկերացնելով կատարելությունը ափսոսանքով մեռնում է ձգտելով դրախտի:
- 4) Տեսնես հիմա որ երկրում է իմ սիրելին:

**6. Ո՞ր նախադասությունն է բարդ (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Երկօրյա դադարից հետո նորից աղմուկ և մարդիկ խուճապահար փախչում են:
- 2) Ես այդ դեպքերից սարսափած նայում եմ չգիտես որտեղից եկած փախստականներին:
- 3) Մեկը մեկից ամաչելով և գուսպ և հավաք նստում էին մերոնք կարգով կրտսեր ու ավագ:
- 4) Խարխուլ նրբանցքով ուր որ է ներս կմտնեին որք մանչուկին փնտրող ոստիկանները ահաբեկելով բակում ապրող բոլոր մարդկանց:

**7. Ո՞ր նախադասությունն է բարդ (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Երգչուհին ուր որ է կհայտնվեր բեմում:
- 2) Մարդիկ հափշտակված նայում էին կարծես առաջին անգամ ըմբռնելով Օեքսալիի ողբերգության ողջ խորությունը:
- 3) Ասում են ուռին աղջիկ էր ինձ պես:
- 4) Ժամանակն ու տարիները թվում է ավելի արագ են անցնում:

**8. Նախադասություններից քանի՞սն են բարդ:**

1. Միրում եմ աչքերիդ տխրությունը խորին, Անաղմուկ խոսքերիդ դաշնակները հիվանդ:
2. Պաղ ջրի վրա եղեգը, հանդարտ, Անդողոջ կանգնած, էլ չի շշմջում...
3. Դարձյալ սահում են օրերը դժկամ. Անձրև՝ ու քամի՝, տրտու՛նջ ու թախի՛ծ...
4. Հարագատ են իմ հոգուն Վհատությանն իմ խոնարհ Ե՛վ թփերը դողողջուն, Ե՛վ խոտերը գետահար:

- 1) մեկը
- 2) չորսը
- 3) երեքը
- 4) երկուսը

**9. Նախադասություններից քանի՞սն են բարդ (նախադասությունները կետադրված չեն):**

1. Ծերունին նստած էր բակում թթենու տակ մտասույզ հայացքը հառած հեռավոր լեռնապարին:
2. Նրանից անվերջ դժգոհում էին թե նրան ճակատագրի բերումով միանգամայն պատահաբար հանդիպած մարդիկ թե տարիներ շարունակ նրա դեկավարությամբ աշխատողները:
3. Մենակյաց տանտիրուհին թեև անտարբեր էր ժողովրդական երգերի նկատմամբ բավական նրբաճաշակ կին էր:
4. Զգիտես ինչու երագում էի մի անկյուն աշխարհից ու աղմուկից հեռու:

- 1) ոչ մեկը
- 2) մեկը
- 3) երկուսը
- 4) երեքը

**10. Ո՞ր նախադասությունն է բարդ համադասական:**

- 1) Ընթրեցինք շատ տխուր, ոչ որ չէր խոսում, բոլորս ջանացինք շուտ վերջացնել և վեր կենալ:
- 2) Ընթրիքը վերջացնելուց հետո Գրիգորը մայրիկի համար բերեց չինական մեծ գավաթով սուրճ, այն գավաթով, որով միայն հայրս էր խմում:
- 3) Երբ մայրս բռնեց գավաթը, արցունքի մեծ-մեծ կաթիլները կախվեցին նրա շագանակագույն խոշոր աչքերից:
- 4) Հանկարծ տեսնելով, որ Գրիգորն էլ է լաց լինում՝ մենք էլ միացանք այդ արցունքներին, լուռ, մորմոքիչ արցունքներին:

**11. Ո՞րը բարդ ստորադասական նախադասություն չէ (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Պատահում էր օրերով չէր երևում:
- 2) Կաբավաբերդի գլխից ամպը հսկա խխունջի պես սողաց դեպի վրանները խոնավություն կաթեց քարերի վրա:
- 3) Ինչ որ ես չեմ ասել նա կասի վաղը:
- 4) Մենք էլ նստում էինք այնքան մինչև քունը հաղթեր գլուխներս հենեինք քուրսու թախտին:

**12. Քանի՞ բաղադրիչ նախադասություններից է կազմված տրված բազմաբարդ նախադասությունը:**

Անգլերենի մասին գաղափար կազմելով միայն տգետ ամերիկացի միսիոներներից և ամերիկահայերից, որոնք ոչ միայն անգլերեն, այլև մինչև անգամ հայերեն խոսելիս ծամածռում էին իրենց բերանները, ես ատում էի այդ լեզուն, սակայն հետագայում, երբ ինձ վիճակվեց տիրապետել անգլերենին և ամերիկյան կրթություն ստանալ, համոզվեցի, որ Շեքսպիրի և Բայրոնի լեզվով խոսելու համար ծամածռություններ հարկավոր չեն:

- 1) չորս
- 2) հինգ
- 3) վեց
- 4) յոթ

**13. Ընդգծվածներից ո՞րն է գերադաս նախադասություն:**

- 1) Յուլակը տնքում էր, **պոչն ուժգին խփում այս ու այն կողմ**, գավակն աջ ու ձախ դարձնում, բայց ոչինչ չէր օգնում:
- 2) Վազեցինք և **փոսի մեջ տեսանք ծեր աղվեսին**, որ կծկվել, կուչ էր եկել ու դունչը մոտեցրել էր վերքին:
- 3) Նա որդուն մատնացույց արեց հետնադուռը, որ խանութից տուն էր տանում, և որդին հնազանդ, շատ մռայլ տեսքով դուրս գալով խանութից, **տուն մտավ:**
- 4) **Յոթանասուն տարեկանի մոտ մարդ է նա**, հնարել է տարբեր գործիքներ, որոնք բոլորն էլ օգտակար են:

**14. Ընդգծվածներից ո՞րն է միակազմ նախադասություն:**

- 1) Ո՞հ, կը դողդոջեմ, **տժգույն եմ**, տժգու՞յն:
- 2) Ա՛խ, իմ բախտը կանչում է ինձ, Չեմ հասկանում՝ **դեպի ուր...**
- 3) **Լռությու՞ն, լռությու՞ն, լռությու՞ն անսահման...**
- 4) Կյանքն անցնում է տիեզերքում զրնգալեն, Մեկն ապրում է, **մյուսը՝ սպասում**. թատղ բե՛ր:

**15. Ո՞ր նախադասությունը միակազմ չէ:**

- 1) Ասում են՝ իբրև խարույկի վրա  
Ջահել ըմբոստի մի սիրտ են այրել:
- 2) Հեռացի՛ր, մոռացի՛ր ինձ հավետ:
- 3) Տասը չափի՛ր, մեկ կտրի՛ր:
- 4) Մթնեց. դրսում մանրիկ խշշոցով անձրևում է:

**16. Տրված բարդ նախադասություններից քանի՞սն ունեն միակազմ բաղադրիչ նախադասություններ:**

1. Նորից չեն սիրում, սիրում են կրկին:
  2. Ասում են, թե դու այնպես,  
Մոռացել ես ինձ այնպես:
  3. Եթե կամենում ես, որ ես քեզ բարեկամ ու հավատարիմ լինեմ, նախ դու ինձ անկեղծ բարեկամ եղիր:
  4. Իմաստունն ասել է, որ մեծագույն դժբախտություն է աշխարհն ու մարդկանց գահակալի հոգեբանությամբ ու օրենքով դատելը:
- 1) մեկը
  - 2) երկուսը
  - 3) երեքը
  - 4) չորսը

**17. Ո՞րն է անենթակա նախադասություն:**

- 1) Մամուռներում կորան արահետ ու կաժան:
- 2) Ինձ հառաչել չթողին,  
Էլ ո՞ւր մնաց շառաչել:
- 3) Եկան օրեր ու անցան,  
Ու ինձ ոչինչ չմնաց:
- 4) Մանուկ հասակիս հնչուն ծիծաղի  
Արձագանքն ահա լսում եմ նորից:

**18. Ո՞ր նախադասությունն է ներգործական կառուցվածքի:**

- 1) Ծաղկած սարի փեշերին  
Դու սպասի՛ր իմ դարձին....
- 2) Քո կասկածներից հոգիս խռովվել,  
Միտքս պղտորվել ու տրտնջում է....
- 3) Նազում ես ու շորորում գմբուխտե քո շորերում:
- 4) Միրեցի հեզ, անքեն հոգիդ  
Եվ երգերդ մեղմ ու բեկբեկ:

**19. Ո՞ր նախադասությունն է ներգործական կառուցվածքի:**

- 1) Կարծես թե դարձել եմ ես տուն,  
Բոլորն առաջվանն է կրկին....
- 2) Տեսա երազ մի վառ  
Ոսկի մի դուռ տեսա...
- 3) Ախր ես ինչպե՞ս վեր կենամ, գնամ,  
Ախր ես ինչպե՞ս ուրիշ տեղ մնամ:
- 4) Քո խոսքերից անդունդներ են բացվում սրտիս,  
Քո հայացքից սարսռում է ժայռը սրտիս:

**20. Ո՞ր նախադասությունը կրավորական կառուցվածքի չէ:**

- 1) Նա նգովել է անճարակությունից և ոչ թե հոգու շարությունից:
- 2) Շատերն են փորձել նրան հունից հանել, բայց նա զարմանալիորեն երբեք չի վրդովվել նրանց պահվածքից:
- 3) Ջուրն ալեկոծվեց հարավից փչող ուժգին քամուց:
- 4) Նրա հոգին խռովվել էր վերջին օրերի շարագույժ լուրերից:

**21. Ո՞ր ստորադաս նախադասությունն է հարաբերական դերանունով կապակցվել գերադասին (գլխավորին):**

- 1) Ո՛վ իմանա՝ ո՞ր սիրունի բիբն ես կոխում դու հիմի...
- 2) Ով եկել էր՝ թողած հեռուն անձայրածիր մութը գյուղի, Բերել էր իր մկաններում բեղմնավորված ուժը հողի:
- 3) Եվ ո՞վ կասի՝ ինչու ես դու, և ո՞վ կասի, թե ուր հասար:
- 4) Ով իմանա՝ ու՞ր ընկանք, Քանի՛ օրվա հյուր ընկանք:

**22. Ո՞ր ստորադաս նախադասությունն է շաղկապով կապակցվել գերադասին (գլխավորին):**

- 1) Միջնադարյան գրիչները գրքի մասին մտածել ու գրել են այնպես, ինչպես կգրեին մարդու մասին:
- 2) Ես պատմում եմ այն, ինչ տեսել ու զգացել եմ սեփական փորձով:
- 3) Արամին եթե բան պատահած չլիներ, արդեն եկած կլիներ:
- 4) Այնտեղ, ուր օճն էր սիրում պառկել ու տաքանալ, ցածրիկ թփերում աղավնին բույն էր հյուսում:

## ԲԱԺԻՆ 2 Նախադասության անդամներ

### 1. Ընդգծվածներից ո՞րն է նախադասության անդամ:

- 1) Արքաների հետ խոսում են **«դու»-ով**,  
Եթե, իհարկե, լսում են նրանց:
- 2) Հաշվեցե՛ք, **խնդրե՛մ**, հաշվեցե՛ք նաև,  
Թե մեզնից գոնե՛ մեկը իր կյանքում  
Քանի՛ կնոջ է տենչանքով նայել...
- 3) Աշխարհին, **այո՛**, մաքրություն է պետք:
- 4) Հեշտ է, **գուցե**, գրքեր գրե՛լ, ո՛չ թե կարդալ...

### 2. Ընդգծվածներից ո՞րը նախադասության անդամ է:

- 1) Մենք դարդի մեջ, չգիտեինք դարդն **ինչ է**:
- 2) Հայերը, **ինչ խոսք**, այդ մարտում փառահեղ հաղթանակ տարան:
- 3) **Ի՛նչ** եմ շինում էս ցեխերում, աղմուկի մեջ վայրենի...
- 4) **Ի՛նչը** կհաղթի կյանքում հերոսին,  
Թե չըլինին կինն ու գինին:

### 3. Ո՞ր նախադասության մեջ ենթակա կա:

- 1) Թողնե՛լ աշխարհն այս աղմկոտ, լինե՛լ հեռվում ու ազատ....
- 2) Անձրևում է. թաց մշուշներ, թախճաթաթախ ուռիներ:
- 3) Ո՞վ քեզ ծեծեց, Մարո՛ ջան ...
- 4) Դտերն աշնանն են հաշվում:

### 4. Ո՞ր նախադասության մեջ բաղադրյալ ստորոգյալ կա:

- 1) Նա արդեն հույսը կտրել էր ամենքից:
- 2) Տիգրանը միշտ նրան տեսել էր աղոթելիս:
- 3) Քամին քիչ-քիչ սաստկացավ ու երեկոյան դեմ փոթորիկ դարձավ:
- 4) Լառ-Մարգարը ոչ ոքի չասաց, թե ինչու աչքերին արցունքներ երևացին:

### 5. Ո՞ր նախադասության մեջ բաղադրյալ ստորոգյալ կա:

- 1) Ես պիտի դուրս գամ դեպի հրապարակ
- 2) Առանց քնարի, անգարդ խոսքերով...
- 3) Ո՞ր աշխարհքում ունեն շատ բան, միտք եմ անում՝ է՞ս, թե է՞ն:  
Մի՛ հավատա կեղծ խոսքերին:
- 4) Առավոտից երեկո նրա միակ զբաղմունքը ուտելն է:

### 6. Ո՞ր նախադասության մեջ բաղադրյալ ստորոգյալ կա:

- 1) Ա՛նց եմ կենում հիմա օտար քաղաքների ճանապարհով:
- 2) Եվ լույսը բացվեց, քարը պար եկավ:
- 3) Դեպի երկի՛նք պիտի գնամ, դեպի եզերքը ամենտի:
- 4) Մի՞րո հակառակն ամենևին էլ չսիրելը չէ:

**7. Տրված հատվածում քանի՞ բաղադրյալ ստորոգյալ կա:**

Մանուկ էի՝ ամեն ինչին անգիտակ,  
 Մի հասկն ի՞նչ էր, տրորեցի ու անցա:  
 Հայրս տեսավ, մտերմորեն նախատեց.  
 «Հացն ավստս է, չեն տրորի ու անցնի...»:  
 Ես մանկական անհոգությամբ զարմացա.  
 «Ինչո՞ւ է ինձ հայրս այդպես նախատում»:

- 1) յոթ
- 2) երկու
- 3) երեք
- 4) չորս

**8. Ո՞ր նախադասության մեջ բաղադրյալ ստորոգյալ չկա:**

- 1) Եվ մենք ավելի սիրով ենք իրար «Բարի լույս» ասում:
- 2) Ամայրույից հետո աշխարհը և դու Հասկանալի եք լինում ավելի:
- 3) Ջուրը տվեց հողին ծարավ, Տիղմ ու փրփուր ծովին ծարավ, Այս էր ամբողջը:
- 4) Բանաստեղծություն գրելու պահին Ամբողջ աշխարհը իմ տեղ ու տունն է:

**9. Ո՞ր նախադասության ստորոգյալն է արտահայտված կրավորական սեռի բայով:**

- 1) Ճրագների ձեռք սպառվեց, և սենյակում տիրեց խավարը:
- 2) Չորացած տերևներն անհանգիստ խռնվում էին այս ու այն անկյունում:
- 3) Հեռու ձորերում գվվում էին էլեկտրալարերը:
- 4) Այդ վանքը գնահատվել է նաև օտար ճարտարապետների կողմից:

**10. Ո՞ր նախադասության մեջ բայի հրամայական եղանակով արտահայտված ստորոգյալ կա:**

- 1) Երբ Գրիգորը դժգոհում էր մեր ազարակի ծառերից պտուղ քաղողներից, մայրս գորովանքով ասում էր.  
 -Թող մի քիչ էլ քաղեն տանեն, ձայն չհանես, դրանով մեր պտուղը չի պակասի:
- 2) -Հայրիկիդ կասեմ, որ թույլ տա՝ թուցիկ թռցնես,-ասաց մայրս, -բայց այլևս թելը կտուրի ձողին չկապես:
- 3) -Բարեկամներս,-ասաց նիստը վարողը,-խնդրում եմ հարցերը տալ պարզ, որոշակի և տղամարդու պես տեր կանգնել տրված հարցին:
- 4) Նա մեքենան կանգնեցրեց ու ասաց.  
 -Մեքենայիս մեջ շատ տեղ չկա. եթե ուզում ես, ճամպրուկներդ դի՛ր, կտանեն, կողովներիդ հետ դու ոտքով կգաս:

**11. Ո՞ր նախադասության մեջ բայի հարկադրական եղանակով արտահայտված ստորոգյալ չկա:**

- 1) Ուր էլ որ լինեմ, անձրևն սկսվելուն պես պիտի մի առանձին հաճույքով կանգնեմ նրա տակ ու թույլ տամ, որ թրջի ինձ հիմնովին:
- 2) Նա ինձ ասաց, որ ես նոր եմ ոտք դնում կյանք և պետք է իմանամ, թե դեռ ինչեր են սպասում ինձ:
- 3) Գյուղի մեծ փողոցը մեր տան առաջով էր անցնում. ուրիշ գյուղից եկողը մեր տան կողքով պիտի գնար:
- 4) Պետք է պատրույգը բարձրացնել և մինչև ձեռքը հատնի, ավարտել անկրկնելի օրերի պատմությունը:

**12. Ո՞ր նախադասության մեջ դերանունով արտահայտված որոշիչ չկա:**

- 1) Իմ աչքերի մեջ այնքա՛ն կրակներ եմ մարել ես:
- 2) Ես երգել եմ քո հոգին, քո ժպիտը լուսավոր:
- 3) Միայն գիտեն, որ կյանքում ինչ-որ երգեր եմ գրել:
- 4) Բայց շուրջս թող որքան կուզե աշխարհը այս խնդա, ցնդի:

**13. Նախադասություններից քանիսո՞ւմ գործիական հոլովով որոշիչ կա:**

1. Շքեղ ապարանքների, այգեստանների ու ծաղկանոցների քաղաք Վանում մ.թ.ա. 8-րդ դարի առաջին քառորդում անցկացվում է 80 կմ երկարությամբ վիթխարի ջրանցք:
2. Խորենացու վկայությամբ՝ Երվանդունի արքայական վերջին թագավոր Երվանդը Արաքս և Ախուրյան գետերի միախառնման տեղում է կառուցում Երվանդաշատ քաղաքը:
3. Տիգրանակերտի պատմությունը լի է եղել դրամատիկ դրվագներով. բազմիցս ենթարկվել է կողոպուտի ու թալանի, ավերվել է ու վերաշինվել:
4. Դվինի կենտրոնում՝ 30-35 մետր բարձրությամբ բլրի վրա, մինչև 15 մետր հաստություն ունեցող աշտարակաշատ պարիսպներով միջնաբերդն էր:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

**14. Ընդգծվածներից ո՞րը որոշիչ չէ:**

- 1) Ես երկար նայում եմ **դաշտային** թիթեռնիկի թևին:
- 2) Բոց էր բարձրանում **խոր** թոնրից:
- 3) Երբ արևը զարթնում է, լուսն էն լեռան սառույցներից **իջնող** այդ առուները:
- 4) Նա ունի լայն ճակատ, որ լուսնի տակ **պղնձագույն** է երևում:

**15. Ո՞ր նախադասության մեջ հատկացուցիչ կա:**

- 1) Ընկերոջ համար նա պատրաստ էր ամեն ինչի:
- 2) Արքայի անակնկալ հրովարտակը դժգոհություն առաջացրեց:
- 3) Եղբորը նվիրած գիրքը կարդաց մեծ հետաքրքրությամբ:
- 4) Աղջիկը գնաց աղբյուրը՝ ջրի:

**16. Ո՞ր նախադասության մեջ հատկացուցիչ կա (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Վերջին նիստում կարդացված գեկուցումը աչքի ընկավ փաստարկների շատերին զարմանք պատճառող հիմնավորվածությամբ և ճշգրտությամբ:
- 2) Մարգարը տախտակամածից նայեց լեռնաշղթայի ուղղությամբ:
- 3) Յեխից կեղտոտված շորերով երեխաները մոտեցան մի փտած ծառաբնի մոռանալով հետդարձի մասին:
- 4) Ողջ ընտանիքը հպարտ էր այն բարձր վստահությամբ որ դրված էր կրտսեր դստեր վրա:

**17. Ո՞ր տարբերակում դերանունով արտահայտված հատկացուցիչ կա:**

- 1) Եվ ո՞ւմ համար, էլ ո՞ւմ համար կարոտակեզ երգե հիմի Սիրոս՝ լցված տարիների սեղմ արճիճով ու կապարով...
- 2) Զուր եմ փախչում, ինձ խաբում, Հագար կապ է ինձ կապում...
- 3) Հերթը հիմա քոնն է մի պահ. Դ-ո՛ւ էլ նայիր սեզ ճակատին Ու անցիր...
- 4) Էն ո՞ւմ յարն է նըստած լալի Հոնգուր-հոնգուր էն սարում...

**18. Ո՞ր նախադասության մեջ բացահայտիչ կա:**

- 1) Մեծ բանաստեղծի՝ սրտի թրթիռով գրված հուզաթաթավ երգերը շատերին էին դյուրել:
- 2) Միրտոյ որպես վառ ասորուշան պահի՛ր վառ...
- 3) Որպես անտառոտ երկրի գավակ՝ Սմբատ Բագրատունին գիտեր, որ արջը հանկարծակի հարվածից շշմում է:
- 4) Նա էլ ձեզ նման մի ծաղիկ էր՝ նախշունիկ դեմքով, ոսկեզանգուր մազերով:

**19. Ո՞ր նախադասության մեջ բացահայտիչ կա:**

- 1) Այնպես ես գալիս, այնպես գնում,  
Ո՛վ դու արարող և ավերիչ:
- 2) Գալիս ես որպես իրարանցում  
Եվ անց ես կենում որպես երագ:
- 3) Ես նրանից հուր եմ ուզում,  
Անշեջ հուրը սրբազան:
- 4) Որոտում է ձորն ի վար,  
Հոսում է ինքը, ինքը՝  
Նորին մեծություն փլված երկինքը:

**20. Ո՞ր նախադասության մեջ բուն բացահայտիչ կա (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Միձավանջը հետապնդում էր իշխանին որպես մի սովեր:
- 2) Դա մի քարայր էր փորված դեռևս վաղնջական ժամանակներում:
- 3) Նրան ժողովրդի կողմից սիրված ու գնահատված անձնվեր գորավարին չգնահատեց նենգ արքան:
- 4) Քարայրում պատի տակ երկու կմախք կար:

**21. Ո՞ր տարբերակում մասնական բացահայտիչ կա (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Որպես Լաերտի որդին որպես Ուլիս մի թողած և հող և տուն Անցա ծովեր ու ցամաքներ ես...
- 2) Որպես տանտիկին նա միշտ եղել է շռայլ հյուրասեր:
- 3) Երթամ մարող ու մարմրող իրիկվա մեջ Որպես ուրու հալածական որպես տեսիլ-Տամ պարանոցս կարոտին այն երկնուղեշ Ու օրորվեմ եղերական ու անբասիր...
- 5) Որպես լեռն է մեր պայծառ տեսել հազար ձյուն Այնպես նոր չեն մեզ համար դավ ու դառնություն:

**22. Ո՞ր նախադասության մեջ բայական անդամի լրացում չկա:**

- 1) Ժամանակները խառն են ու խրթին. ուժգին հողմը ննջում է, մեղմ հովը՝ ըմբոստանում:
- 2) Գետի վշտոցը ներքևում դառնում է շառաչ:
- 3) Հավքերն աղոթք են անում քնելուց առաջ:
- 4) Որտե՞ղ են ննջում իմ վաղնջական առավոտները:



**23. Տարբերակներից քանիստ՞ում դերանունով արտահայտված բայական անդամի լրացում կա:**

1. Նայում եմ նրան  
Ես արյունակցի երկյուղածությամբ,  
Եվ քիչ է մնում իմ այտերն ի վար  
Արցունքներ ծորեն:
2. Կախվել է ժայռը անդունդի վրա  
Եվ դարեր այդպես կախված է մնում:
3. Ինչ էլ լինի, քո՛յր իմ, քո՛յր,  
Հեռանալիս չանիծես  
Խեղճ կարոտը թևերիս,  
Որ երբեք քեզ չհասան...
4. Թռան անցան օրերս,  
Ո՞ր գնացին, չգիտեմ:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

**24. Ո՞ր նախադասության մեջ ուղիղ խնդիր չկա:**

- 1) Բայց Պետրոսին հարկավոր էր մի ծածկ՝ անձրևից պատսպարվելու համար, ուստի այդտեղ գտնվող թախտին շտապ-շտապ փռելով իր անկողինը՝ պառկեց քնելու:
- 2) Ծերունի կառասպանը երկինաստ ծիծաղում էր այդ մանրախնդիր մարդկանց վրա:
- 3) Պատշգամքի սյունաշարերին կախված գույնզգույն լապտերները լուսավորում էին ծաղկանախշ գորգերով զարդարված սրահը:
- 4) Ժայռը նիրհելով ունկնդրում է ամպերի շրշյունը, մարենին իր ծաղկաբաժակը պահել է ոսկեգօծ արևի տակ, և կանաչ դաշտում արածում է մի աստղազարդ ձի:

**25. Տրված հատվածում քանի՞ ուղիղ խնդիր կա:**

Հեռու երկիր լուսե հովտում  
Օրերն ուրիշ երգ են հյուսում,  
Կյանքից հոգնած սիրտըս տրտում  
Այն երկիրն է միշտ երագում...

- 1) ոչ մի
- 2) մեկ
- 3) երկու
- 4) երեք

**26. Ո՞ր նախադասության մեջ անուղղակի խնդիր չկա:**

- 1) Անկեղծության պահերին միշտ ներողություն էինք խնդրում մեզնից նեղացողներից:
- 2) Միրհավը, հանգիստ քուջուջ անելով, փոխում էր արնագույն տոտիկները և կտուցով քրքրում լորենու փափուկ տերևները:
- 3) Հագրոյի հայրենիքը եղել էր քարոտ Սասունը՝ այդ խուլ երկրի ամենախուլ անկյունը, որտեղ ձորերը դառնում են կիրճեր, լեռների գագաթները՝ ապառաժներ:
- 4) Հանկարծ մրրկաշունչ կայծակը չոր ճայթյունով բախվեց ժայռին, շարտվեց մի կողմ և թաղվեց գետնի մեջ:

**27. Ո՞ր նախադասության մեջ ներգործող խնդիր կա:**

- 1) Լեռներ, ներշնչված դարձյալ ձեզանով,  
Թնդում է հոգիս՝ աշխույժով լցված:
- 2) Դուք էլ խոսեցե՛ք, դուք էլ պատմեցե՛ք,  
Ձեր անդունդներով եկե՛ք չափվեցե՛ք...
- 3) Ու ձորի գլխին մոլորված կանգնած՝  
Նայում է ներքև՝ սիրտը սևակնած...
- 4) Դե իմ անունով երգվի՛ր, անգգա՛մ,  
Որ էլ Սարոյին դու չես սիրելու...

**28. Ո՞ր նախադասության մեջ հանգման անուղղակի խնդիր կա:**

- 1) Մի սարսուռ էր անցնում նրա մարմնով, երբ մտածում էր հարազատների կողմից ստեղծված խոչընդոտների մասին:
- 2) Այդ առեղծվածային դեպքերից մի քանի օր շարունակ լարված իրավիճակ էր ստեղծվել ողջ քաղաքում:
- 3) Նրան մեծ պատիվներով ու շուքով ընդունեցին Աշոտ արքայազնի հոր՝ Գագիկի նստավայրում:
- 4) Այդ մարդը, որ հակված էր բյուզանդական կայսեր հետ բարեկամական դաշինք կնքելուն, հիմա խորը տարակուսանքի մեջ էր:

**29. Ո՞ր նախադասության մեջ է ընդգծվածը միջոցի անուղղակի խնդիր:**

- 1) Բոլոր երկրներում մարդիկ **սիրով** են դիմավորում Նոր տարվա գալուստը:
- 2) Ճապոնացիները հնուց ի վեր Նոր տարին դիմավորում են մեծ **շուքով**:
- 3) Չինացիները Նոր տարվա սեղանը զարդարում են կարճ կտրած **նարգիզներով**:
- 4) Մշո դաշտը պատված էր թանձր **մառախուղով**:

**30. Ո՞ր նախադասության մեջ զիջման պարագա կա:**

- 1) Տարիներ անցան, տարիների հետ ջահելությունն էլ անցավ, և աշնան չորացած խոտի պես չորացավ տուն սարքելու թաքուն միտքը:
- 2) Հայրիկը համաձայնեց ձին հորեղբորս տալ շատ չբարձելու և երեկոյան հետ վերադարձնելու պայմանով:
- 3) Թող գան, այգին քանդեն, դարձնեն թանգարան, այգեպանն էլ դառնա հյուրերի առաջ թանգարանի դուռը բացող:
- 4) Այնուհետև ես իմ առաջարկությունն այլևս չկրկնեցի՝ հակառակ տատիս, որ շարունակ հիշեցնում էր երեխա ժամանակ ասածս:

**31. Ընդգծված դերանուններից ո՞րը չի գործածվել որպես պարագա:**

- 1) Իսկ **որտեղի՞ց** պիտի տա Արտաշեսը քաջ Հազար հազարներ...
- 2) **Ո՛նց է** ժպտում իմ հոգին Չարին, բարուն՝ ամենքին:
- 3) **Քանի՜** մահ կա իմ սրտում, Թափուր գահ կա իմ սրտում...
- 4) Անթիվ մեղքերի կրողս **ինչպե՞ս** Արդարից առած խոսքով բարբառեն:

**32. Ո՞ր նախադասության մեջ դանդաղ-ը գործածված չէ որպես պարագա:**

- 1) **Դանդաղ** թերթում են գրքի էջերը ու էջերի արանքում գտնում սուսամբարի չորացած մի ծաղիկ:
- 2) Նա քայլում էր **դանդաղ**, կորացած, հուսահատ մարդու քայլվածքով:
- 3) Ծիլերը **դանդաղ** բարձրանում են ջերմացած հողից:
- 4) **Դանդաղ** քայլերով անցավ միջանցքով ու վերջապես բախեց դուռը:

**33. Ո՞ր տարրերակում պատճառի պարագա չկա:**

- 1) Ինչո՞ւ չես խոսում, ինչո՞ւ չես նայում,  
Գու իմ գերեզմանն ինչո՞ւ ես խըլում...
- 2) Ազնի՛վ եղիր ամեն ինչում-  
Ով է կյանքում սովից մեռել:  
Ես ծերացա, դուք միշտ մանուկ մնացիր:
- 3) Ի՞նչը կհաղթի կյանքում հերոսին,  
Թե չլինին կինն ու զինին:
- 4) Ասում են, թե էն Փարվանա ջահիլներն են սիրավառ,  
Շտապելուց թև են առել, դարձել թեթև թիթեռներ,  
Ու տակավին հուր տեսնելիս մեջն են ընկնում անհամբեր:

**34. Ո՞ր նախադասության մեջ հիմունքի պարագա կա:**

- 1) Խունկը բուրելով կայրվի:
- 2) Անգորությունից նա լաց էր լինում:
- 3) Ես նրան աչքերի գույնից ճանաչեցի:
- 4) Ծառուղին պատված էր չորացած տերևների գորգով:

**35. Քանի՞ նախադասության մեջ նպատակի պարագա կա:**

1. Երբ հոգնությունը իր խորշումն էր դնում մարդկանց ճակատներին, նրանք գնում էին Անմահության աղբյուրը, լողանում և վերադառնում թիթեռների և թռչունների պես շողողուն՝ նորից երգելու և սիրելու:
2. Ճանապարհին մի քանի արկածասեր ասպետներ իրենց թաքստոցից տեսան դա և վրդովվեցին՝ համարելով այդ արարքը հակառակ ասպետական ավանդներին:
3. Հնչեց արքայական կամքի հրովարտակը՝ ծանր, սև գլխարկները թեթև սպիտակ գլխարկներով փոխարինելու մասին:
4. Նա կարիք ուներ սիրելու և սիրվելու, և նրան թվաց, թե սիրահարված է:

- 1) մեկ
- 2) երկու
- 3) երեք
- 4) ոչ մի

**36. Նշվածներից ո՞րը չի կարող դրվել գործիական հոլովով:**

- 1) որոշիչը
- 2) ժամանակի պարագան
- 3) հատկացուցիչը
- 4) տեղի պարագան

**37. Նշվածներից ո՞րը չի կարող դրվել ուղղական հոլովով:**

- 1) կոչականը
- 2) որոշիչը
- 3) ստորոգելին
- 4) հանգման խնդիրը

**38. Ո՞ր նախադասության մեջ դերբայական դարձված կա (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Մարզիկները ջանք թափելով հասան աննախադեպ արդյունքների:
- 2) Պահարանից հանելով ջութակը նա աղեղը սահեցրեց լարերի վրայով:
- 3) Մայրը ցնցվելով ընթանում էր խորդուբորդ ճանապարհով:
- 4) Ծառերի ճյուղերը գալարվելով փակում էին մարդկանց ճանապարհը:

**39. Ո՞ր նախադասության մեջ դերբայական դարձված չկա (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Մեկը իմ սիրտը փշրելով անցավ:
- 2) Փակ են քո սրտի հեռուներն իմ դեմ Հավետ քեզ կապված քեզ օտար եմ ես...
- 3) Իմ լքված սրտի կարոտը անձայր Ամեն ինչի մեջ որոնում է քեզ...
- 4) Միայնակ ես սիրում եմ նստել Երեբուն լույսերում:

**40. Ընդգծվածներից քանի՞սն են դերբայական դարձված:**

Առատ, անհատ՝ Աստծու նման **միշտ տեղալուց** հոգնել եմ ես.  
 Հոգիս ծարավ՝ **սրան-նրան մտիկ տալուց** հոգնել եմ ես.  
 Մինը **պիտի գար իմ դեմը**՝ ճոխ ու շռայլ անհաշիվ,  
**Ամեն ճամփում սպասելուց** ու փնտրելուց հոգնել եմ ես:

- 1) մեկը
- 2) բոլորը
- 3) երեքը
- 4) չորսը

**41. Նշվածներից ո՞րը չի կարող դրվել ուղղական հոլովով:**

- 1) ստորոգելին
- 2) կոչականը
- 3) որոշիչը
- 4) հատկացուցիչը

**42. Նախադասության շարահյուսական վերլուծության տարբերակներից որո՞ւմ սխալ չկա:**

Իմ կարոտած սրտի համար ոչ մի ուրիշ հեքիաթ չկա:

- 1) կարոտած-ձևի պարագա, ուրիշ-որոշիչ, հեքիաթ-ենթակա, չկա-ստորոգելի
- 2) կարոտած-որոշիչ, ոչ մի-չափի պարագա, հեքիաթ-ուղիղ խնդիր, չկա-պարզ ստորոգյալ
- 3) իմ-հատկացուցիչ, ոչ մի-որոշիչ, հեքիաթ-ենթակա, չկա-պարզ ստորոգյալ
- 4) իմ-հատկացուցիչ, կարոտած-որոշիչ, սրտի համար-հանգման խնդիր, հեքիաթ-ուղիղ խնդիր

**43. Նախադասության շարահյուսական վերլուծության տարբերակներից որո՞ւմ սխալ չկա:**

Դ-անդադ իջնում է երեկոն, ու հոգնած քաղաքի վրա մաղող ձյան փաթիլները խաղաղություն են սփռում ամենուր:

- 1) դանդաղ-ձևի պարագա, երեկոն-ենթակա, հոգնած-որոշիչ, ամենուր-տեղի պարագա
- 2) իջնում է-պարզ ստորոգյալ, քաղաքի-հատկացուցիչ, մաղող-որոշիչ, փաթիլները-ենթակա
- 3) հոգնած-ձևի պարագա, վրա-տեղի պարագա, խաղաղություն-ուղիղ խնդիր, ամենուր-տեղի պարագա
- 4) ձյան-հատկացուցիչ, սփռում են-պարզ ստորոգյալ, խաղաղություն-ենթակա, քաղաքի վրա-տեղի պարագա

**44. Տրված նախադասություններում ընդգծված անդամներից քանիսի՞ն շարահյուսական պաշտոնն է սխալ նշված:**

Աստղերից **պոկվող** (որոշիչ) կայծերն ընկնում էին աղբյուրի **ջրերի վրա**(տեղի պարագա):  
 Այդ արտասովոր **մարդու** (հատկացուցիչ) մասին քո պատմածը **ինձ**(ուղիղ խնդիր) անչափ հուզեց:  
 Նրա համար ամենից **մեծ** (որոշիչ) հաճույքը այգին ու արտերը **ջրելն էր** (բաղադրյալ ստորոգյալ):  
 Բլրի լանջին արևկող արած գյուղում **մարդկանց** (հանգման անուղղակի խնդիր) տարօրինակ թվաց գուռնայի գիլ **ձայնը** (ուղիղ խնդիր):

- 1) ոչ մեկի
- 2) մեկի
- 3) երկուսի
- 4) երեքի

## ԲԱԺԻՆ 3 Ստորադաս /երկրորդական/ նախադասություններ

### 1. Ո՞ր տարբերակում է ստորադաս նախադասությունը ենթակա:

- 1) Ով կրերի անշեջ հուրը,  
Նա է ընտրած իմ փեսան...
- 2) Հոգ չէ, որ մեր օրերն անցան տենդի պես...
- 3) Չգիտեմ՝ որտեղից է գալիս  
Ջութակի հեկեկանքը տխուր:
- 4) Ով տվեց մարդուն այն իրավունքը, որ իշխի իր մմաններին:

### 2. Ո՞ր տարբերակում է ստորադաս նախադասությունը ենթակա:

- 1) Տեսնում եմ, որ դուք աստվածացնում եք նրան, որովհետև վախենում եք:
- 2) Գուք, որ ծեր եք, հարգված, արդ պետք է նաև խելացի լինեք:
- 3) Իմաստունը նա է, ով մեծ խելքի առջև գլուխ է խոնարհում, մեծ սրտի առջև՝ ծնկները:
- 4) Ով հարստություն ունի, ժխտում է արդարությունը:

### 3. Ո՞ր տարբերակում է ստորադաս նախադասությունը ենթակա:

- 1) Ինքս էլ չիմացա, թե ինչու պատճառ բռնեցի գիրքը և հրաժարվեցի ճաշի գնալուց:
- 2) Աշակերտներին պատվիրել էի, որ շատ մարդ կանչեն հանդեսին:
- 3) Եվ ոչ ոք չգիտեր, որ Լառ-Մարգարը առվի հունը սարքելիս մտքով ուրիշ տեղ էր:
- 4) Ինչից է, որ չի սպառվում երգի քո պաշարը:

### 4. Ո՞ր տարբերակում ստորադաս նախադասությունը ենթակա չէ:

- 1) Պատահում էր, որ գայրույթից փայլատակում էին Լևոնի աչքերը:
- 2) Ով ստիպեց եղնիկին, որ պապակ սրտով մագլցի սեգ ժայռերը:
- 3) Պարզ է, որ վարսավիրը անհույս սիրահարված է մի երգչուհու:
- 4) Ստույգ է միայն այն, որ Մրոցը հնուց ի վեր իր տեղում է:

### 5. Ո՞ր տարբերակում ստորոգելի ստորադաս (երկրորդական) նախադասություն կա:

- 1) Նա ամեն ինչ կատարեց այնպես, ինչպես խոստացել էր:
- 2) Հաճախ չենք պահպանում այն, ինչ ունենք:
- 3) Փաստն այն է, որ գունավոր հեռուստատեսության գյուտարարը հայ է:
- 4) Մարդ երբեք չգիտի գնահատել այն, ինչին հասել է արդեն:

### 6. Ո՞ր տարբերակում ստորոգելի ստորադաս (երկրորդական) նախադասություն կա:

- 1) Երնե՛կ նրան, որ իր գործով Կապրի անվերջ, անդադար:
- 2) Ով քաղաքից էր հեռացել, նա թողել էր մշուշը ծեր...
- 3) Ով կրերի անշեջ հուրը, Նա է ընտրած իմ փեսան...
- 4) Սրիկա է նա, ով հայր է լինում:

**7. Ո՞ր տարբերակում ստորագելի ստորադաս (երկրորդական) նախադասություն կա:**

- 1) Ե՞րբ էր, որ նա խոստացավ գալ, շուտ գալ...
- 2) Չարմանալին այն է, որ նրա հայացքները բնավ չէին փոխվում:
- 3) Երանի նրան, ով կարող է գեղեցիկ ստով խաբվել:
- 4) Պատահում էր՝ անձրևը շաբաթներ էր տևում:

**8. Ո՞ր բարդ նախադասության մեջ որոշիչ ստորադաս (երկրորդական) նախադասություն կա:**

- 1) Նրա հիշողության խավար անդնդում բոցկլտաց այն օրը այնպես, ինչպես միայնակ աստղը՝ մթին երկնքում:
- 2) Դիլան դային հիշեց այն օրը, երբ Սոնան սրունքները կախել էր և ծիծաղում էր:
- 3) Որքա՞ն մեծ եղավ տղայի ուրախությունը, երբ նա տեսավ երկրորդ տուփը:
- 4) Հալածանքներն ու ներքին վիշտը ներգործում են նրա վրա այնչափ, որ սրտի դառնությունն օղու մեջ անգամ չի կարողանում խեղդել:

**9. Ո՞ր տարբերակում հատկացուցիչ ստորադաս (երկրորդական) նախադասություն կա:**

- 1) Նրանք, ովքեր շատ շուտ են մտերմանում, շուտ էլ դավաճանում են:
- 2) Թող հավերժ հիշվեն նրանց անունները, ովքեր գոհվեցին հանուն հայրենիքի:
- 3) Ներել նրան, ով ոտնահարել է մարդկային բոլոր իմ իրավունքները, ես չեմ էլ փորձում:
- 4) Ես միշտ փորձել եմ հասկանալ նրան, ով ինձ վատություն է արել:

**10. Բարդ ստորադասական նախադասություններից քանի՞սն ունեն բացահայտիչ ստորադաս (երկրորդական) նախադասություն:**

1. Ես գիտեմ մի թովիչ առասպել,  
Որ ողջ կյանքդ հրաշք է դարձնում:
2. Չի ներվում այն, ինչը կոչվում է առավելություն:
3. Դուք, որ աննկուն կորով ունեք, ինչպե՞ս եք տանում այդ տանջանքը:
4. Երեկոյան, երբ աղջամուղջը ծածկեց երկիրը, Վարդանը մեկնեց:

- 1) մեկը
- 2) երկուսը
- 3) երեքը
- 4) չորսը

**11. Ո՞ր բարդ նախադասության մեջ ուղիղ խնդիր ստորադաս նախադասություն չկա:**

- 1) Նրանց ջրակալած աչքերը տեսան, թե ինչպես կամարակապ ախոռում ձմռան գիշերին վրնջում է ձին:
- 2) Երևում է, որ ամբողջ ամսվա ընթացքում աղջիկն աշխատել է եղբոր պարտքի դիմաց:
- 3) Մտածում էի՝ իջնեմ քաղաք, գնամ գտնեմ եղբորս:
- 4) Չէր սիրում, երբ խոսելիս իրեն ընդհատում էին:

**12. Ընդգծվածներից քանի՞սն են ուղիղ խնդիր երկրորդական նախադասություններ.**

1. Երանի՜ մեռնող ձյուներին, որ միշտ **Հետևից կանաչ գարուն են թողնում:**
2. Զգիտեմ՝ այս տխուր աշխարհում **Որն է լավ, որը՝ վատ...**
3. Ու զգում եմ ես մի պահ՝ **սեր ու բարիք են տվել,** Մինչդեռ պետք էր սեր հայցել, իսկ բարիքը վաճառել...
4. Գիտեմ՝ **կյանքում լուկ մի օր է լինելու,** Որ ինձ համար բախտավոր է լինելու:

- 1) չորսը
- 2) երեքը
- 3) երկուսը
- 4) հինգը

**13. Ո՞ր տարբերակում ձևի պարագա ստորադաս (երկրորդական) նախադասություն կա:**

- 1) Նրանց սերը ծնվել էր նույնքան աննկատ, ինչպես մի գիշերում բացվում է մուգ մանուշակը:
- 2) Տղան պատմեց, թե ինչպես արծաթ տվող մարդը մոր պատկերը հանեց թերթի վրա և դրեց ծոցը:
- 3) Քամին խշշացրեց թփերը, ինչպես Սոնան՝ սիմֆոնիայի երկար ցողունները:
- 4) Այդպես մի անգամ էլ, երբ շատ տարիներ առաջ ճռնչաց այգու դուռը, լի, արև օր էր:

**14. Ո՞ր բարդ նախադասության մեջ պատճառի պարագա ստորադաս նախադասություն կա:**

- 1) Եթե բարձրանար ամպի վրա, Լառ-Մարգարը հեռու սարերի հետևում իրենց գյուղը կտեսներ:
- 2) Քանի դեռ Հովնաթանի շինած անոթները հարզ էին ստանում շուկայում, եղբայրներն անընդհատ բարձրացնում էին բողոքը:
- 3) Անա զիզին կուզեկուզ բարձրանում է քարի վրա և կանաչ պոմիդորները շարում պատուհանի փայտերին, որ շուտ կարմրեն:
- 4) Ծամածռվում էր նա ու լաց էր լինում նրա համար, որ այդ շունը՝ ոչնչությունը, իրեն արժանի էր համարում լինելու մարդու հավասար հակառակորդը:

**15. Ո՞ր բարդ նախադասության մեջ չափի պարագա ստորադաս նախադասություն կա:**

- 1) Տխուր երգերս որքան էլ հնչեն, որքան էլ հնչեն, քեզ չեն հասնելու:
- 2) Մենավոր կինը լաց է լինում այնքան դառնագին, որ նրա հզոր հառաչանքը հասնում է մինչև երկինք:
- 3) Երբ մանուկը մի քիչ մեծացավ, սկսեց ավելի ու ավելի հեռու գնալ բնից:
- 4) Զեն դավաճանի իմ Նվարդին, Որքան էլ դյուրես, օ՛, Շամիրամ...

**16. Բարդ նախադասություններից որի՞ ստորադաս (երկրորդական) նախադասության պաշտոնն է սխալ նշված:**

- 1) Զգացվում էր՝ Վահանն ասածիս վրա ինչ-որ բան էր մտմտում (ենթակա):
- 2) Ասում են՝ ուռին աղջիկ էր ինձ պես (ուղիղ խնդիր):
- 3) Հետաքրքիր է, երբ մարդ տեսնում է այլ մարդու (ժամանակի պարագա):
- 4) Ինչ տալիս եմ, այն է մնում գանձարանում իմ սրտի (ենթակա):

**17. Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված բարդ նախադասությունների ստորադաս (երկրորդական) նախադասությունների պաշտոնները:**

1. Իշխանը խնդրում է նրան խորհուրդ տալ՝ ինչպես հագցնել դստերը, որ նա ամենագեղեցիկը լինի աշխարհում:
2. Հոմեր Մաքոլին նայեց առաքման սեղանին՝ տեսնելու համար՝ բաժանելու հեռագիր կա՞, կամ կանչե՞լ էին հեռագրի համար:
3. Ինձ շարունակ զարմացնում է, թե որտեղից է նա ժամանակ գտնում պարապ-սարապ թրև գալու:
4. Դու, որ կյանքում հետապնդել Ու հալածել ես ինձ անվերջ, Ինչպե՞ս դարձար այսքան մտերիմ:

- ա. ենթակա
- բ. նպատակի պարագա
- գ. ուղիղ խնդիր
- դ. բացահայտիչ
- ե. ստորոգելի

- 1) 1-ե, 2-դ, 3-գ, 4-ա
- 2) 1-բ, 2-գ, 3-ե, 4-ա
- 3) 1-դ, 2-ա, 3-բ, 4-ե
- 4) 1-բ, 2-գ, 3-ա, 4-դ

**18. Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված բարդ նախադասությունների ստորադաս (երկրորդական) նախադասությունների պաշտոնները:**

1. Թեև հագին ռազմական հանդերձանք էր, սակայն դա բնավ չէր նսեմացրել նրա կանացի թովչանքը:
2. Թե հնար լիներ գտնել ձեռագիր մատյանների և մեղեդու գունային համապատասխանությունը, կստանայինք նրբահյուս մանրանկարների և զարդերի ձայնաշարեր:
3. Նա պարզ տեսնում էր, որ իր հրապույրը մարդկանց աչքում պայմանավորված է մեծ մասամբ իր հարստությամբ:
4. Հենց ծնողների ցանկությունն էլ այն էր, որ նա մոռանար արտասահմանում կրթությունը շարունակելու մասին:

- ա. պայմանի պարագա
- բ. ժամանակի պարագա
- գ. ուղիղ խնդիր
- դ. ստորոգելի
- ե. զիջման պարագա

- 1) 1-ա, 2-ե, 3-դ, 4-գ
- 2) 1-ե, 2-ա, 3-գ, 4-դ
- 3) 1-դ, 2-ա, 3-գ, 4-բ
- 4) 1-ե, 2-գ, 3-ա, 4-դ



**ԲԱԺԻՆ 4** Բաց թողած միավորի տեղադրում

**1. Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

Անցորդները հապշտապ մտնում էին ծածկերի տակ, ..... անձրևը տարափի չէր վերածվել:

- 1) թե չէ
- 2) թե որ
- 3) ուստի
- 4) քանի դեռ

**2. Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

Աշխատելիս նա չէր ընթռնել, թե ինչ է կառուցում, ..... տան և աղբյուրի ձևը հնարել էր ոչ թե ինքը, այլ տանտերը:

- 1) մինչդեռ
- 2) թեև
- 3) ուստի
- 4) որովհետև

**3. Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

Նրանք, ..... աշխատեն, ամբողջ ժամանակ խոսում են:

- 1) փոխարեն
- 2) մինչև որ
- 3) փոխանակ
- 4) մինչդեռ

**4. Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

Հնագետների կարծիքով հնագիտական բացահայտումները դեռ առջևում են, ..... հնագույն քաղաքի միայն տասներորդ մասն է հետազոտված:

- 1) այնուամենայնիվ
- 2) իսկ
- 3) չէ՞ որ
- 4) ինչպես որ

**5. Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

Ամեն տարի ջանասիրաբար կտրում էր մոշի թփերը, ..... գիտեր՝ մյուս տարի ճյուղերն էլի կախվելու են ճամփեզրին:

- 1) ինչպես
- 2) քանի
- 3) թեպետ
- 4) մինչ

**6. Ճիշտ նախադասություն ստանալու համար ո՞ր բառը պետք է տեղադրել:**

Չնայած Վահանն ամբողջ ճանապարհին փորձում էր ուրախ երևալ, ..... ես զգում էի նրա հոգու խռովքը:

- 1) ապա
- 2) հետևաբար
- 3) ուստի
- 4) այնուամենայնիվ

**7. Ճիշտ նախադասություն ստանալու համար ո՞ր բառը պետք է տեղադրել:**

Թվում է՝ ժամանակն ու տարիներն ավելի արագ են անցնում, և .....գոյությանդ կառքի անիվը ավելի թափով է պտտվում:

- 1) կարծես
- 2) մինչ
- 3) սակայն
- 4) քանզի

**8. Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

Սպարապետը՝ ..... զորական և քաղաքական անձ, պարզ էր պատկերացնում մոտալուտ փոթորիկը:

- 1) չնայած
- 2) թերևս
- 3) իբրև
- 4) թեպետ

**9. Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

Գյուղի սառը խավարում վրնջաց անմայր մի քուռակ, ..... բազմաթիվ մանր զանգակներ երգեցին անեզրական տխրություն:

- 1) թեև
- 2) ինչպես
- 3) կարծես
- 4) սակայն

**10. Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

Իսկական բանաստեղծի արծարծած տրամադրությունները, .....անձնական, պայմանավորված են ժամանակաշրջանով:

- 1) նույնպես
- 2) քանզի
- 3) որքան էլ
- 4) մինչդեռ

**11. Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

*Ձառամյալ կաթողիկոսն իր տան անձնական..... խստիվ հետևող մի մարդ էր:*

- 1) տնտեսությունը
- 2) տնտեսությանը
- 3) տնտեսությամբ
- 4) տնտեսությունից

**12. Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

*Ղու, ..... երկնքի որդին ես, պիտի գիտենաս այն, ինչ որ մենք չենք կարող գիտենալ:*

- 1) ով
- 2) ուստի
- 3) որ
- 4) մինչդեռ

**13. Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

*Անտառում հանկարծ կերևար Պանինը, փայտահատի ..... կկանգնեք, կնայեք:*

- 1) կողքին
- 2) կողք
- 3) կողքում
- 4) կողքից

**14. Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

*Մեր պապերի պապերը անցել են ....., ու նրանցից էլ շատ առաջ շատերն են անցել, իսկ այս անսպասոր աշխարհի սկզբից կար ու կմնա:*

- 1) այստեղ
- 2) այստեղով
- 3) այս տեղերում
- 4) այս տեղը

**15. Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

*Նա խորին ակնածանք էր տաժում ..... :*

- 1) արվեստի նվիրյալների առթիվ
- 2) արվեստի նվիրյալների առնչությամբ
- 3) արվեստի նվիրյալների նկատմամբ
- 4) արվեստի նվիրյալներով

**16. Փակագծերում տրված բառերի ո՞ր հերթականությունն է համապատասխանում նախադասության մեջ դրանց տեղադրման ճիշտ կարգին (բառերը տրված են ուղիղ ձևով):**

*Ելավ միջահասակ և ամրակազմ մի մարդ, մեկը ..... որոնք լրացնում են քառասունը, ..... են թողնում հիսունը և նույնիսկ վաթսունին հասնելով՝ ..... իրենց քայլվածքը, դեմքի արտահայտությունը և առհասարակ .....*

(1. ինքը, 2. փոխել, 3. նա, 4. հետև)

- 1) 3, 4, 2, 1
- 2) 2, 3, 1, 4
- 3) 3, 4, 1, 2
- 4) 2, 1, 3, 4

**17. Փակագծերում տրված բառերի ո՞ր հերթականությունն է համապատասխանում նախադասության մեջ դրանց տեղադրման ճիշտ կարգին (բառերը տրված են ուղիղ ձևով):**

*..... պիտի հասկանանք և ..... երբեք, որ մեր ..... թողած ..... մեծագույն գանձը հայոց լեզուն է: (1.նախնի, 2.ժառանգություն, 3.ես, 4.մոռանալ)*

- 1) 3, 1, 2, 4
- 2) 3, 4, 1, 2
- 3) 4, 2, 1, 3
- 4) 1, 4, 2, 3

**18. Փակագծերում տրված բառերի ո՞ր հերթականությունն է համապատասխանում նախադասության մեջ դրանց տեղադրման ճիշտ կարգին (բառերը տրված են ուղիղ ձևով):**

*.....՝ երկնքի այդ վառ-վառ ....., բուրբուր էին եթերային ..... և իրենց հիասքանչ բույրը ..... երկրի վրա:*

(1.ծաղիկ, 2. ծավալել, 3. ոլորտ, 4. աստղ)

- 1) 2, 1, 3, 4
- 2) 2, 1, 4, 3
- 3) 4, 1, 3, 2
- 4) 4, 2, 3, 1

**19. Փակագծերում տրված բառերի ձևափոխության և նախադասության մեջ տեղադրման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

*Երբ շունը դռանը ..... ու ..... կլանչեց, տղան, անկողնուց ....., պատուհանից տեսավ բլրի վրա հավաքված գայլերի .....*

(1.տազնապել, 2. ոհմակ, 3. դիպչել, 4. դուրս թռչել)

- 1) դիպչեց, տազնապելով, դուրս թռչելով, ոհմակը
- 2) դիպավ, տազնապած, դուրս թռչելով, ոհմակը
- 3) տազնապեց, դուրս թռավ, դիպավ, ոհմակին
- 4) տազնապած, դիպչելով, դուրս թռավ, ոհմակին

**20. Փակագծերում տրված բառերի ձևափոխության և նախադասության մեջ տեղադրման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

..... ահռելի ..... հետևում ..... մի մարդ՝ սպիտակ, կարճ կտրած ....., կապույտ աչքերով:  
(1. երևալ, 2. մագ, 3. թղթապանակ, 4. դեզ)

- 1) թղթապանակներով, դեզի, երևաց, մագերով
- 2) թղթապանակներից, դեզերի, երևալով, մագով
- 3) թղթապանակների, դեզերի, երևաց, մագերով
- 4) թղթապանակներից, դեզի, երևար, մագերով

**21. Փակագծերում տրված բառերի ձևափոխության և նախադասության մեջ տեղադրման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

Մի օր՝ բլրակը..., ...սայթաքեց, ընկա սառույցի վրա, ... մեջ ժամացույցը փշրվեց՝ մինչև տարվա վերջը ... ինձ առանց ժամացույցի:

(1. բարձրանալ, 2. ոտք, 3. գրպան, 4. թողնել)

- 1) բարձրանալիս, ոտքս, գրպաններիս, թողեց
- 2) բարձրանալով, ոտքերս, գրպանիս, թողեց
- 3) բարձրանալիս, ոտքս, գրպանիս, թողնելով
- 4) բարձրանալուց, ոտքս, գրպանիս, թողած

**22. Փակագծերում տրված բառերի ձևափոխության և նախադասության մեջ տեղադրման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

Արևը ... փողոցների ... հավաքված տերևածածկ ջուրը, և գարնան արևային օրերը ... ինձ, որ շուտով մայիս է լինելու, և պիտի վերադառնամ քաղաք ու էլ երբեք ... Ձորագյուղը:

(1. գոլորշիանալ, 2. լճակ, 3. հիշել, 4. տեսնել)

- 1) գոլորշիացնելով, լճակում, հիշեցնում էին, չտեսա
- 2) գոլորշիանում էր, լճակներում, հիշեցնում էին, պիտի չտեսնեմ
- 3) գոլորշիացնում էր, լճակներում, հիշեցնում էին, չպիտի տեսնեմ
- 4) գոլորշիացնում էին, լճակներում, հիշեցնելիս էին լինում, չպիտի տեսնեմ

**23. Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

....., ավելի շատ են զգում յուրայիններիս, ընտանիքիս ու ընկերներիս կողքին լինելու կարիքը:

- 1) Մանկությանս լաստը հեռանալով
- 2) Մանկությանս լաստը հեռանալուց հետո
- 3) Ինչքան հեռանում է մանկությանս լաստը
- 4) Մինչ մանկությանս լաստի հեռանալը

**24. Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

..... , որ մեր պատմության մեջ առաջին անգամ հաղթական ավարտ էին ունենալու :

- 1) Պատերազմական գործողություններ էին ծավալվում Արցախի ռազմաճակատներում այդ ժամանակ
- 2) Պատերազմական գործողություններն այդ ժամանակ ծավալվում էին Արցախի ռազմաճակատներում
- 3) Արցախի ռազմաճակատներում ծավալվում էին պատերազմական գործողություններ այդ ժամանակ
- 4) Այդ ժամանակ Արցախի ռազմաճակատներում ծավալվում էին պատերազմական գործողություններ

**25. Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

Ձայնը ալիքվելով հասավ անձավին, ..... , և նորից տիրեց լարված լռություն:

- 1) ինչքան էլ լեռնալանջը բուսականությունից զուրկ էր
- 2) իսկ վերին այրերի մոտ, ցից-ցից քարերին թառած, հեռուներին են նայում հպարտ արծիվները
- 3) որ ահարկու երախի պես կլանեց նրան
- 4) որ զրնգուն երգի պես տարածվեց շրջակայքում

**26. Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

Պատահեց այնպես, ....., որն օժտված էր թովչանքով, բայց զուրկ էր կանացի պարկեշտությունից:

- 1) որ Դ-ալիլա անունով մի կնոջ սիրահարվեց Սամսոնը
- 2) ինչպես Սամսոնը սիրահարվեց Դ-ալիլա անունով մի կնոջ
- 3) որ Սամսոնը սիրահարվեց Դ-ալիլա անունով մի առաքինի կնոջ
- 4) որ Սամսոնը սիրահարվեց Դ-ալիլա անունով մի կնոջ

**27. Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

....., որն ակնթարթորեն կկուրացնի և ակնթարթորեն էլ կանհետանա:

- 1) Հրավառության նման է մարդու տաղանդը՝ առանց աշխատանքի
- 2) Առանց աշխատանքի հրավառության է նման մարդու տաղանդը
- 3) Առանց աշխատանքի մարդու տաղանդը նման է հրավառության
- 4) Առանց աշխատանքի հրավառության է նման տաղանդը մարդու

**28. Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

Լիլիթը, աղբյուրի մոտ նստած, ....., նայում էր դրախտի աստղազարդ երկնքին:

- 1) և աստղերի հրաբորբ ողկույզները արբեցնում էին նրա սիրտը մի խորհրդավոր տենչանքով
- 2) ականջը դրած նրա բյուրեղյա նվազին
- 3) զարթնեց սոխակների սիրահույզ դալալներից
- 4) անհամբեր մի քանի անգամ անցնել-դառնալով աղբյուրի շուրջը

**29. Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

*Վառել էին բոլոր ճրագները, և կամարների տակ դեռ մութ էր, նույնիսկ թվում էր, թե .....*

- 1) լուսավոր էր եկեղեցու բեմը:
- 2) մեկը լուցկի վառեց՝ քարե աստիճանները լուսավորելու:
- 3) արդեն այգաբաց է:
- 4) ճրագների լույսից ավելի էր թանձրանում խավարը:

**30. Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

*Սանդուղքներով իջնելիս նա ուզում էր հավաքուն մտնել՝ կոտրած տախտակը տեսնելու, .....*

- 1) թեև ինքն էլ զարմացավ, թե ինչու է առանց ճրագի մառանը մտել:
- 2) բայց մառանի դռանը մոտեցավ, դուռը թեթև հրեց ու ներս մտավ:
- 3) ինչպես դատարկ մառանը, ուր գերանների վրա սարդերը ոստայն են հյուսել:
- 4) ուստի մի քիչ էլ կանգնեց ու մառանից դուրս եկավ:

**31. Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

*Նա լսում էր անտուն, հալածական քամուն, .....*

- 1) որ հավաքել էր իր անկայան, անհատնում ճանապարհները անցնելիս:
- 2) որը հնչում էր գորուզիչեր հազար-հազար մեղուչ ձայներով:
- 3) որովհետև նրա հոգին լսում էր նրանց երգերը:
- 4) որ բուրմունքի մորմոքով գեղգեղում էին սերն ու բյուրեղային արցունքները:

**32. Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

*Կրունկս սկսեց ծակծկել, և ես հասկացա, որ երբ գնացքից ցատկել էի, կրունկս կոտրել էր ջրափոսի սառույցը, թրջվել, .....*

- 1) ցավը մանր ցուլերով խփվեց ոսկորի պատերին:
- 2) հետո ճանապարհին ցրտահարվել էր:
- 3) ջրափոսի մեջ մտնելիս:
- 4) ծակծկոցների պատճառ դառնալով:

**33. Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

*Տերտերը քթի մեջ էր խոսում, ձայնը գրնգում էր, ասես պարասպ կարասի մեջ էր հնչում, և որովհետև միալար էր խոսում ու մի քիչ ծոր տալով, .....*

- 1) դրա համար էլ բառերն իրար էին խառնվում:
- 2) ինչպես գետի խուլ վշշոցը մութ գիշերին:
- 3) քանի որ քահանան կարծես ինքն իրեն էր խոսում:
- 4) թեև ոչ ոքի չբավարարեց նրա պատասխանը:

## ԲԱԺԻՆ 5 Խնդրառություն, համաձայնություն, շարադասություն

### 1. Ո՞ր նախադասության մեջ խնդրառության սխալ կա:

- 1) Իր խոսքում հանգամանորեն անդրադարձավ օրվա հրատապ խնդիրներին:
- 2) Նա Հայաստանի մասին լսել է իր պապից:
- 3) Տիգրան Մեծը շատ ժողովուրդներ է տիրել:
- 4) Պետությունը խրախուսում է գիտահանրամատչելի գրականության ստեղծումը:

### 2. Ո՞ր նախադասության մեջ խնդրառության սխալ կա:

- 1) Հայերը թշնամու դեմ կռվում լիակատար հաղթանակ տարան:
- 2) Պաղ աղբյուր բերող կածանով գնում էր Արամը, որը դեռ վաղուց կասկածում էր ընկերոջ վրա:
- 3) Արաբներից կրած պարտությունից հետո արքան վախենում էր նախարարներին հանդիպելուց:
- 4) Ակնթարթ իսկ չանցած՝ դահլիճը թնդաց որոտընդոտ ծափերից. ես իսկույն մտածեցի, որ իմ հաջողությունների համար երախտապարտ եմ իմ բարեկամներին:

### 3. Ո՞ր նախադասության մեջ խնդրառության սխալ կա:

- 1) Իր կրոնն ու հայրենիքին ուրացողից ոչ մի լավ բան չսպասես:
- 2) Խնդրի լուծումը կախված է երկու անձնավորություններից:
- 3) Նրանք քաջաբար մարտնչում էին թշնամու գերակշիռ ուժերի դեմ:
- 4) Ուզում եմ ազնվորեն խոստովանել արածս սխալը:

### 4. Ո՞ր նախադասության մեջ խնդրառության սխալ կա:

- 1) - Ես միանշանակ առարկում եմ այդ պաշտոնին նրա նշանակվելը,- կտրուկ վրա բերեց տնօրենը և ելավ աթոռից:
- 2) Ծանոթանալով գործի փաստաթղթերին՝ քննիչը խճճվել էր. թվում էր՝ ձեռքակալել են լրիվ անմեղ մեկին:
- 3) Առաջիկա մրցաշարին մասնակցելու ցանկություն ունեցողների թիվը անչափ մեծ է:
- 4) Նա գլխով հասկացրեց, որ համաձայն է ասածներիս:

### 5. Ո՞ր նախադասության մեջ խնդրառության սխալ չկա:

- 1) Իզուր փորձեցի ներողամտության մի նշույլ գտնել այդ սև զգեստների և խոժոռ հայացքների արանքում:
- 2) Իմ մեջ տիեզերական գեղեցիկն է ապրում, և գեղեցկության արևներն են բոցավառում իմ հոգում:
- 3) Հետևե՛ք այն ամենը, ինչ տեղի է ունենում աշխարհում:
- 4) Մայրը տարիներ շարունակ սպասում էր օտարության մեջ գտնվող որդու վերադարձը:

### 6. Ո՞ր նախադասության մեջ խնդրառության սխալ չկա:

- 1) Մի՞թե ես հանցագործ եմ, որ հսկում ես բոլոր քայլերիս:
- 2) Հայրը միշտ սատարել էր որդու բոլոր ձեռնարկումներին:
- 3) Պետք չէ հակադրվել ակնհայտ ճշմարտություններին:
- 4) Ինձ ներողություն մի՛ խնդրիր չարած սխալներիդ համար:



**7. Ո՞ր նախադասության մեջ խնդրառության սխալ չկա:**

- 1) Ես դրանում տեղյակ չեմ եղել, և ասածդ նորություն է ինձ համար:
- 2) Ես երախտապարտ եմ Չեզնից անշահախնդիր օժանդակության համար:
- 3) Մեր ժողովներում բազմիցս նշել ենք այդ մասին, քննադատել անզիջում:
- 4) Նրանց անգործությունը լրջորեն խանգարում է արդյունաբերության զարգացումը:

**8. Նախադասություններից քանիստ՞ում խնդրառության սխալ կա:**

1. Բոլորն էլ իրենց հայացքներն ուղղում են դեպի լեռան գագաթին, ուր գուցե թե շատերին բախտ չվիճակվեր լինելու:
2. Հասնելով կյանքի մայրամուտ՝ նա իր ամբողջ ուշքն ու միտքը կենտրոնացրել էր միակ հարազատի՝ եղբորորդու դաստիարակության վրա:
3. Բայց այդ ամենը Կարապետ վարդապետին մազաչափ անգամ չի շեղում իր հոգևոր պարտականությունների կատարմանը:
4. Մինչև գագաթ Արարատը պատված էր սառցե հաստ զրահով, որի վրայով առաջ շարժվելն ուղեկցվում էր այլևայլ դժվարություններով:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

**9. Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ կա:**

- 1) Կարենը ընկերոջ հետ գնացին աշխատելու:
- 2) Բազմությունը շրջապատել էր հսկայական խարույկը և կազմել զարհուրած դեմքերի, սպառնալից կենդանի օղակ:
- 3) Նրան՝ որպես հմուտ մանկավարժի, կոլեկտիվում բարձր էին գնահատում:
- 4) Դրսում ցուրտ էր, և գյուղի փողոցներում ոչ մի մարդ, ոչ մի կենդանի արարած չէր երևում:

**10. Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ կա:**

- 1) Շատ հարցեր կան, որոնցից դու տեղյակ չես:
- 2) Արամի՝ որպես լավագույն մարզիկի, պարզևատրեցին բնակարանով:
- 3) Ե՛վ մայրը, և՛ հայրը փորձում էին իրենց որդուն հետ պահել սխալ ճանապարհից:
- 4) Ի՛նչ կյանքում շատ է եղել իմ բնավորության կայունությունը ստուգող փորձություններ:

**11. Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ կա:**

- 1) Նա այն մարդկանցից է, որ, հասնելով մեծ փառքի, բնավ չեն մեծամտանում:
- 2) Առևտուրը զարգանում է. հարկավոր է նոր շուկաներ:
- 3) Կան բաներ, որոնց մասին պետք է լռել:
- 4) Համայն մարդկությունը միշտ էլ ձգտել է խաղաղության:

**12. Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ կա:**

- 1) Ֆիլիպիններն ունի հետաքրքիր բուսական աշխարհ:
- 2) Աշոտ Բռնավորին՝ իբրև հայրենիքի դավաճանի, ներում չկար:
- 3) Ե՛վ՝ հովը, որ շնկշնկում էր Մասիսի փեշերին, և՛՝ գիշերը, որ խարխափելով փռում էր իր մթամած շղարշները, և՛՝ կրակը, որ մարմրում էր նրա շուրջը, թախիծով էր լցնում Արտակի հոգին:
- 4) Ոչ մի առարկություն չկա այդ հարցի վերաբերյալ:

**13. Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ կա:**

- 1) Յուրաքանչյուրն անելու է իրեն հանձնարարված գործը:
- 2) Ամեն տղա ու աղջիկ պիտի իմանան վարվեցողության տարրական կանոնները:
- 3) Նա քրոջ հետ մտավ զբոսայգի:
- 4) Բոլոր հաճախորդները մնացին ապշած վաճառողի անկիրթ արարքից:

**14. Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ կա:**

- 1) Հիմա միայն Պարրոտը հասկացավ, որ Արարատը հայության հավատքի անխախտ սյունն է և սրբություններից ամենամվիրականը, որին երբեք չի կարելի դավաճանել:
- 2) Անձրևը, խոնավությունը կաթում է մամուռների վրա, ծառերի վրա և քարափների լանջին:
- 3) Այդ գիտարշավն ու վերելքը մեր գիտության և մշակույթի համար բախտոտոջ նշանակություն ունեցան, և դրանցով սկիզբ դրվեց Արևելյան Հայաստանի բնական հարստությունների հետազոտությանը:
- 4) Այդ վերելքներից ստացած անջնջելի տպավորություններից ու խանդավառ ոգևորություններից ծնունդ առան Աբովյանի բանաստեղծական տաղանդի փայլատակումներից մի քանիսը:

**15. Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ չկա:**

- 1) Մի քանի ժամից Գառնու ամրոց հասավ և՛ Հովհաննես կաթողիկոսը, և՛ Մուշեղ բերդակալը:
- 2) Ամբոխը բաժանեցին երեք հավասար մասի. նրանցից ամեն մեկը պետք է բռնեին հովտի մի գառիվայրը:
- 3) Ամենքն էլ քաղցր քուն էին մտել, բայց մի քանիսը, եկողների քայլատրոփը լսելով, վեր թռան տեղներից:
- 4) Հետևյալ առավոտ իշխանի հրամանով Տրդատի հովանոցի առաջ հավաքվեց Գառնիում գտնվող բոլոր զորքերը:

**16. Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ չկա:**

- 1) Իմ կյանքում շատ չի եղել նման փորձեր:
- 2) Քո դիրքերը կթուլանա այն ժամանակ, երբ դու այլևս գումար չաշխատես:
- 3) Առաջիկայում սպասվում է նախագահական ընտրություններ:
- 4) Չեմ կարծում, որ լավն ու գեղեցիկը անտարբերության կմատնվեն:

**17. Ո՞ր պարբերության մեջ համաձայնության սխալ չկա:**

- 1) Շուրջը թագավորում էր ոսկին, ամենուրեք աչքի էր զարնում անգին ճենապակյա սկահակ ու անոթներ: Իսկ դրվագագարդ սեղանը ծանրաբեռնված էր աշխարհի տարբեր ծայրերից բերված բարիքներով:
- 2) Առավոտյան շուտ արթնացա: Արդեն դիմացի տան պատուհանին էին հասել արևի շողերը: Իսկ ինձ՝ որպես այդ սպանության ամբաստանյալ, բազմաթիվ անակնկալներ էին սպասում:
- 3) Նոր արտադրանքի օգտակարության մասին շատ է խոսվել: Մայրիկների մեծամասնությունը համարում են սա ամենալավ սնունդը երեխաների համար:
- 4) «Կայծեր»-ը հայրենասիրական կրակով ջերմացրեց Բաֆֆու ժամանակակիցների սառած սրտերը:

**18. Նախադասություններից քանիստ՞ն համաձայնության սխալ կա:**

Տանջվող ու տառապող ամեն ոք կա՛ն մեղապարտ են, կա՛ն անմեղ:  
 Չարերի հաջողությունը և փառքը, հրճվանքն ու երջանկությունը կարճատև է, որովհետև ասուպների մնացած փոքր-ինչ փայլում է և իսկույն անհետանում:  
 Յուրաքանչյուրը պիտի փնտրի և ձեռք բերի իմաստություն և առաքինություն, որոնցով կկարողանա այս աշխարհում գտնել բնական երջանկություն:  
 Միտո և հույսի նպատակը բաղձանքների իրականացումն է:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

**19. Նախադասություններից քանիստ՞ն համաձայնության սխալ կա:**

Կարճ ժամանակում կառուցվեց Երևանի մարզահամերգային համալիրը, որը այսօր էլ իր վեհությամբ հիացնում է շատերին, և մետրոպոլիտենը, որը զգալիորեն թեթևացրեց մայրաքաղաքի վերգետնյա երթևեկությունը:  
 Մեզ մոտ պահվում են ուշ միջնադարի ու նոր ժամանակների գրականությունը:  
 Բոլորը, չգիտես ինչու, իրարանցման մեջ էին, բացի հանդարտ հետ ու առաջ անող ժամապահից և պատի տակ կուշ եկած մի խումբ սևաքեմ վանականներից:  
 Ծանոթ շները չեն հաչում վրադ, ծանոթ մարդիկ են հաչում քեզ վրա:

- 1) երկուսում
- 2) երեքում
- 3) չորսում
- 4) մեկում

**20. Ո՞ր նախադասության մեջ շարադասության սխալ կա:**

- 1) Նա իր մեծագույն սխալն էր համարում մասնագիտության ընտրության հարցում ծնողներին լսելը:
- 2) Աշխարհի գեղասահքի առաջնություններում ռուս մարզիկները միշտ պատշաճ մակարդակով են հանդես եկել:
- 3) Ողջ աշխարհի հետ չէր փոխի իր կողմից փայփայած, այնքան երկար երազած ու վերջապես իրականություն դարձած սերը:
- 4) Նա միշտ ասում էր, որ եթե իրեն տրվեր գեթ մի փոքր հնարավորություն, ինքը ուրիշների պես չէր վախենա վճռական քայլ կատարելուց:

**21. Ո՞ր նախադասության մեջ շարադասության սխալ կա:**

- 1) Բայց միշտ պետք է զգուշանալ, որ հոգու սեփական կորստյան վտանգ չլինի:
- 2) Չեխիայի գիտությունների ակադեմիայի ֆիզիոլոգիայի ինստիտուտի գիտնականներն ստեղծել են էլեկտրական բազմաթիվ սարքեր:
- 3) Ուրախ-ուրախ պարում ու ցատկոտում են հավերժահարսերն անտառի բացատում:
- 4) Ամայի ու վայրի մի տեղ կա աշխարհի հեռավոր ծայրում՝ սկյութների երկրում:

**22. Ո՞ր նախադասության մեջ շարադասության սխալ կա:**

- 1) Վտանգավոր է փորձված ընկերոջը ոչ այնքան չվստահելը, որքան անփորձ բարեկամին գաղտնիքներ հայտնելը:
- 2) Ով գաղտնապահ է, բերանը սրտում է պահում, իսկ ով գաղտնապահ չէ, սիրտն է բերանում պահում:
- 3) Բնականն այն է, որ խիղճը պիտի հետևի ճշմարիտ բանականությանը:
- 4) Նա, ում խոսքերում ճշմարտություն կա, և գործերում՝ արդարություն, երկինք սլանալու համար կրկնակի թևեր ունի:

**23. Ո՞ր նախադասության մեջ շարադասության սխալ չկա:**

- 1) Այս տարի շատ մահմեդական երկրներում մեծ ցույցեր եղան:
- 2) Հայաստանում նախկին Ուկրաինայի դեսպանը մեկնել է Լոնդոն:
- 3) Խորհրդավոր հայացքով ակնդետ դիտում էր ծովի՝ ցամաքից հազիվ երևացող հեռուները:
- 4) Բոլոր երկրաշարժից տուժած ընտանիքներին պետությունը մեծ նպաստներ է տրամադրել:

**24. Նախադասություններից քանիստ՞ում շարադասության սխալ կա:**

Մեզ հետաքրքրում են 2009 թվականին շարունակվող Երևան քաղաքի կառուցապատման աշխատանքները:

Նրա ասածներին հակադրվեցի ես և փորձեցի ինձ արդարացնել:

Թիերն ասում է, որ անաչառ պետության ղեկավար լինելու համար բավական է ունենալ արդար միտք և երկաթե կամք:

Երևանի բնակչության կտրուկ ավելացումը հիմնականում պայմանավորված է ոչ թե բնական, այլ մեխանիկական աճով:

- 1) երկուսում
- 2) երեքում
- 3) ոչ մեկում
- 4) մեկում

**25. Նախադասություններից քանիստ՞ում շարադասության սխալ կա:**

1. «Սիրելիդ իմ Ստեփանոս», - սկսեց նա նամակը և մի պահ կանգ առավ:
2. Հայաստանը պատկերված է նույնիսկ ամենասին աշխարհի քարտեզների վրա:
3. Մսավաճառների խանութների առաջ գլխահակ շրջում են շները, որոնք դեռ գիշերն են զգացել թարմ մսի հոտը:
4. Ասվածն առավել ցայտուն արտացոլված է ստորև շարադրված դրամատան հաշվետվության մեջ և աշխատանքային պլանում:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

**26. Ո՞ր նախադասության մեջ լեզվական սխալ չկա:**

- 1) Իսկ Մարոն ոչ մեկին չէր նայում, ոչինչ չէր տեսնում:
- 2) Հրաշք են մեր ժողովրդական պարերը, առանց որի համերգը ձանձրալի կլիներ:
- 3) Ինչ-ինչ պատճառով Սաքոն հեռացել էր հայրենիքից:
- 4) Այդ մարդու համար ոչ մի բարոյական օրենքներ չկան:

## ԲԱԺԻՆ 6 Փոխակերպումներ

### 1. Ո՞ր տարբերակում է տրված բարդ ստորադասական նախադասությունը ճիշտ փոխակերպված պարզի:

*Նա ցավով գիտակցեց, որ ինքը այդպես էլ չկարողացավ չարիքը արմատախիլ անել:*

- 1) Նա ցավով գիտակցեց իր՝ չարիքը այդպես արմատախիլ անել չկարողանալը:
- 2) Նա ցավով գիտակցեց իր՝ այդպես էլ չարիքը արմատախիլ չանելը:
- 3) Նա ցավեց՝ իր՝ չարիքը արմատախիլ անել չկարողանալը գիտակցելով:
- 4) Նա ցավով գիտակցեց իր՝ այդպես էլ չարիքը արմատախիլ անել չկարողանալը:

### 2. Ո՞ր տարբերակում է տրված բարդ ստորադասական նախադասությունը ճիշտ փոխակերպված պարզի:

*Երբ հավատարիմ ես մնում խոսքիդ, արդեն ազնվության նշան է:*

- 1) Խոսքիդ հավատարիմ մնալու դեպքում արդեն ազնվության նշան է:
- 2) Խոսքիդ հավատարիմ մնալն արդեն ազնվության նշան է:
- 3) Խոսքիդ հավատարիմ մնալու ժամանակ արդեն ազնվության նշան է:
- 4) Խոսքիդ հավատարիմ մնալու պայմանը արդեն ազնվության նշան է:

### 3. Ո՞ր տարբերակում է տրված բարդ ստորադասական նախադասությունը ճիշտ փոխակերպված պարզի:

*Նա մտադրվել էր անտառապահի հետ որսի գնալ, թեև մինչև այդ երբեք որս չէր արել:*

- 1) Մինչև այդ երբեք որս արած չլինելով հանդերձ՝ նա մտադրվել էր անտառապահի հետ որսի գնալ:
- 2) Նա, չնայած անտառապահի հետ որսի գնալ մտադրվելուն, մինչև այդ երբեք որս չէր արել:
- 3) Մինչ այդ երբեք որս չանողը մտադրվել էր անտառապահի հետ որսի գնալ:
- 4) Նա մտադրվել էր անտառապահի հետ որսի գնալ մինչև այդ երբեք որս արած չլինելու պատճառով:

### 4. Ո՞ր տարբերակում է տրված բարդ ստորադասական նախադասությունը ճիշտ փոխակերպված պարզի:

*Այդ մարդը, որ իրենց գյուղաքաղաքում հայտնի վաճառական էր եղել, խարդախ ճանապարհով էր կարողացել մեծ հարստություն կուտակել:*

- 1) Իրենց գյուղաքաղաքում խարդախ ճանապարհով հայտնի վաճառական դարձած մարդը կարողացել էր մեծ հարստություն կուտակել:
- 2) Մարդը, իրենց գյուղաքաղաքում հայտնի վաճառական լինելով, կարողացել էր մեծ հարստություն կուտակել խարդախ ճանապարհով:
- 3) Այդ մարդը իրենց գյուղաքաղաքում հայտնի վաճառական լինելու շնորհիվ խարդախ ճանապարհով էր կարողացել մեծ հարստություն կուտակել:
- 4) Իրենց գյուղաքաղաքում հայտնի վաճառական եղած այդ մարդը խարդախ ճանապարհով էր կարողացել մեծ հարստություն կուտակել:

**5. Ո՞ր տարբերակում է տրված բարդ ստորադասական նախադասությունը ճիշտ փոխակերպված պարզի:**

*Եղնիկը, թեև ընտելացել էր մեզ, մեկ-մեկ մեզնից թաքուն բարձրանալով պատշգամբ, լռիկ նայում էր անտառածածկ սարերին:*

- 1) Եղնիկը, մեզ ընտելանալով հանդերձ, մեկ-մեկ մեզնից թաքուն բարձրանալով պատշգամբ, լռիկ նայում էր անտառածածկ սարերին:
- 2) Չնայած եղնիկի՝ մեզ ընտելացած լինելուն՝ մեկ-մեկ մեզնից թաքուն բարձրանալով պատշգամբ, լռիկ նայում էր անտառածածկ սարերին:
- 3) Մեզ ընտելանալուց հետո եղնիկը, մեկ-մեկ մեզնից թաքուն բարձրանալով պատշգամբ, լռիկ նայում էր անտառածածկ սարերին:
- 4) Մեզ ընտելացած եղնիկը, մեկ-մեկ մեզնից թաքուն բարձրանալով պատշգամբ, լռիկ նայում էր անտառածածկ սարերին:

**6. Ո՞ր տարբերակում է տրված բարդ ստորադասական նախադասությունը ճիշտ փոխակերպված պարզի:**

*Երբ ձյան շերտով պատած կատարները ոսկևորվեցին արևի առաջին շողերով, արշավախմբի փորձառու ղեկավարը շարժվելու հրահանգ տվեց:*

- 1) Չյան շերտով պատած կատարներն արևի առաջին շողերով ոսկևորվելուց արշավախմբի փորձառու ղեկավարը շարժվելու հրահանգ տվեց:
- 2) Արշավախմբի փորձառու ղեկավարը շարժվելու հրահանգ տվեց արևի առաջին շողերով ձյան շերտով պատած կատարների ոսկևորվելու պատճառով:
- 3) Արևի առաջին շողերով ձյան շերտով պատած կատարների ոսկևորվելուն պես արշավախմբի փորձառու ղեկավարը շարժվելու հրահանգ տվեց:
- 4) Չյան շերտով պատած կատարներն արևի առաջին շողերով ոսկևորվելուց հետո արշավախմբի փորձառու ղեկավարը շարժվելու հրահանգ տվեց:

**7. Ո՞ր տարբերակում է տրված բարդ ստորադասական նախադասությունը ճիշտ փոխակերպված պարզի:**

*Իսկական մարդը նա է, ով հզոր կամք ունի:*

- 1) Իսկական մարդը հզոր կամք ունեցողն է:
- 2) Հզոր կամք ունենալն է իսկական մարդ լինելը:
- 3) Հզոր կամ ունեցողը իսկական մարդ է:
- 4) Իսկական մարդը հզոր կամք է ունենում:

**8. Ո՞ր տարբերակում է տրված բարդ ստորադասական նախադասությունը ճիշտ փոխակերպված պարզի:**

*Մրանից հետո թագավորի ձայնը այնքան է նվազում, որ պալատականները չեն կարողանում լսել:*

- 1) Մրանից հետո պալատականները չեն կարողանում լսել թագավորի նվազող ձայնը:
- 2) Մրանից հետո թագավորի ձայնը պալատականների լսել չկարողանալու չափ նվազում է:
- 3) Մրանից հետո թագավորի այնքան նվազող ձայնը պալատականները չեն կարողանում լսել:
- 4) Մրանից հետո թագավորի նվազող ձայնը պալատականները չեն կարողանում լսել:

**9. Ո՞ր տարբերակում է տրված բարդ ստորադասական նախադասությունը ճիշտ փոխակերպված պարզի:**

*Հենց այն օրը, երբ սուրհանդակը գուժեց Տիգրանից բերած բոթը, Սամվելի մտքում ծագեց մի մռայլ խորհուրդ:*

- 1) Հենց սուրհանդակի՝ Տիգրանից բերած բոթը գուժելու օրը Սամվելի մտքում ծագեց մի մռայլ խորհուրդ:
- 2) Սուրհանդակի՝ Տիգրանից բերած բոթը գուժելուն պես Սամվելի մտքում ծագեց մի մռայլ խորհուրդ:
- 3) Սուրհանդակի՝ Տիգրանից բերած բոթը գուժելու այդ օրը Սամվելի մտքում ծագեց մի մռայլ խորհուրդ:
- 4) Տիգրանից բերած բոթը սուրհանդակի գուժելու օրը Սամվելի մտքում ծագեց մի մռայլ խորհուրդ:

**10. Տրված բարդ ստորադասական նախադասություններից ո՞րն է սխալ փոխակերպված պարզի:**

- 1) Մի՛ խառնվիր մեծերի խոսակցությանը, եթե նրանք քեզ չեն դիմում:  
Մի՛ խառնվիր մեծերի խոսակցությանը նրանց՝ քեզ չդիմելու դեպքում:
- 2) Սա տասներորդ դարի այն կառույցն է, որ իր վեհությամբ գերում է շատ զբոսաշրջիկների:  
Սա իր վեհությամբ շատ զբոսաշրջիկների գերող տասներորդ դարի եզակի կառույցն է:
- 3) Աշխարհում կա այնքան հարց, որքան պատասխանների թիվն է:  
Աշխարհում կա պատասխանների թվի չափ հարց:
- 4) Հենց որ լսում է Գեղամ նահապետի քաջագործության մասին, ժողովուրդը որոշում է ծովակն անվանել նրա անունով:  
Գեղամ նահապետի քաջագործության մասին լսելուն պես ժողովուրդը որոշում է ծովակն անվանել նրա անունով:

**11. Ո՞ր տարբերակում է տրված բարդ ստորադասական նախադասությունը ճիշտ փոխակերպված պարզի:**

*Տեսնելով, որ կանչն անհետևանք անցավ, Մուրոն նստած տեղից քար շարտեց այծի կողմը:*

- 1) Կանչի անհետևանք անցնելը տեսնելով՝ Մուրոն նստած տեղից քար շարտեց այծի կողմը:
- 2) Կանչն անհետևանք անցնելու պատճառով Մուրոն նստած տեղից քար շարտեց այծի կողմը:
- 3) Կանչի անհետևանք անցնելու դեպքում Մուրոն նստած տեղից քար էր շարտում այծի կողմը:
- 4) Կանչն անհետևանք անցնելը տեսնելիս Մուրոն նստած տեղից քար շարտեց այծի կողմը:

**12. Տրված բարդ ստորադասական նախադասություններից ո՞րն է սխալ փոխակերպված պարզի:**

- 1) Ակամա սկսում են հաշվել այն տարիները, որ ապրել են հարազատներից հեռու:  
Ակամա սկսում են հաշվել հարազատներից հեռու ապրածո տարիները:
- 2) Երբ հին արկղերի մեջ ինչ-որ գիրք էի փնտրում, հանկարծ հայտնաբերեցի կորած թղթապանակը:  
Հին արկղերի մեջ ինչ-որ գիրք փնտրելիս հանկարծ հայտնաբերեցի կորած թղթապանակը:
- 3) Հրաժեշտի պահին, որպեսզի թաքցնեմ աչքերիս մեջ լճացող արցունքները, նետվեցի մորս գիրկը:  
Հրաժեշտի պահին, աչքերիս մեջ լճացող արցունքները թաքցնելով, նետվեցի մորս գիրկը:
- 4) Աղջիկը սեղմել էր նրբագիծ շրթունքները, որ թաքցներ դրանց հուզաթաթավ թրթիռը:  
Աղջիկը սեղմել էր նրբագիծ շրթունքները՝ թաքցնելու համար դրանց հուզաթաթավ թրթիռը:

**13. Տրված բարդ ստորադասական նախադասություններից ո՞րն է սխալ փոխակերպված պարզի:**

- 1) Երբ սկսած գործող հաջողությամբ ես ավարտում, արդեն հաղթանակ է: Արդեն հաղթանակ է սկսած գործող հաջողությամբ ավարտելը:
- 2) Եթե կորցնես խիղճդ, կկորցնես նաև ուրիշին նվիրվելու կարողությունդ: Խիղճդ կորցնելու դեպքում կկորցնես նաև ուրիշին նվիրվելու կարողությունդ:
- 3) Երբ վերջին աշխատանքներն էին կատարում, հանկարծ ինչ-որ դրոշմում լավեց: Վերջին աշխատանքները կատարվելու ժամանակ հանկարծ ինչ-որ դրոշմում լավեց:
- 4) Եթե դու ինձ չլսես, կկործանես ինքդ քեզ: Բո՛ւ ինձ չլսելու դեպքում կկործանես ինքդ քեզ:

**14. Ո՞ր տարբերակում է տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունը ճիշտ փոխակերպված բարդի:**

Սեղանին դրված թարմ մրգերը ճաշակելուց հետո մենք գրույցի բռնվեցինք տանտիրոջ հետ:

- 1) Երբ ճաշակում էինք սեղանին դրված թարմ մրգերը, գրույցի բռնվեցինք տանտիրոջ հետ:
- 2) Հենց որ ճաշակեցինք սեղանին դրված թարմ մրգերը, գրույցի բռնվեցինք տանտիրոջ հետ:
- 3) Սեղանին դրված թարմ մրգերը ճաշակեցինք թե չէ, գրույցի բռնվեցինք տանտիրոջ հետ:
- 4) Երբ ճաշակեցինք սեղանին դրված թարմ մրգերը, մենք գրույցի բռնվեցինք տանտիրոջ հետ:

**15. Ո՞ր տարբերակում է տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունը ճիշտ փոխակերպված բարդի:**

*Թարմ, սառը կանաչով ծածկված մարգագետինը առվակի ափից ձգվում էր մինչև գորշ ժայռերը:*

- 1) Մարգագետինը, որ առվակի ափից ձգվում էր մինչև գորշ ժայռերը, ծածկված էր թարմ, սառը կանաչով:
- 2) Մարգագետինը, որ ծածկված էր թարմ, սառը կանաչով, առվակի ափից ձգվում էր մինչև գորշ ժայռերը:
- 3) Այն մարգագետինը, որ ծածկվում էր թարմ, սառը կանաչով, առվակի ափից ձգվում էր մինչև գորշ ժայռերը:
- 4) Առվակի ափերից մինչև գորշ ժայռերը, որոնք ծածկված էին թարմ, սառը կանաչով, ձգվում էր մարգագետինը:

**16. Ո՞ր տարբերակում է տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունը ճիշտ փոխակերպված բարդի:**

*Օրիորդը փնտրում էր սփոփիչ մի խոսք՝ վրդովված երիտասարդին հանգստացնելու համար:*

- 1) Օրիորդը փնտրում էր սփոփիչ մի խոսք նրա համար, որ վրդովված երիտասարդը հանգստանար:
- 2) Օրիորդը փնտրում էր այն սփոփիչ խոսքը, որը կհանգստացներ վրդովված երիտասարդին:
- 3) Օրիորդը փնտրում էր սփոփիչ մի խոսք, որպեսզի հանգստացներ վրդովված երիտասարդին:
- 4) Օրիորդը փնտրում էր սփոփիչ մի խոսք՝ հանգստացնելու համար երիտասարդին, որ վրդովված էր:

**17. Ո՞ր տարբերակում է տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունը ճիշտ փոխակերպված բարդի:**

Զարուհին տարիներ առաջ թույլ տված սխալը հիշելիս չէր կարողանում ինքն իրեն ներել:

- 1) Երբ Զարուհին տարիներ առաջ թույլ տված սխալը հիշում էր, չէր կարողանում ինքն իրեն ներել:
- 2) Հենց որ հիշում էր տարիներ առաջ թույլ տված սխալը, Զարուհին չէր կարողանում ինքն իրեն ներել:
- 3) Զարուհին, երբ տարիներ առաջ թույլ տված սխալը հիշեց, չկարողացավ ինքն իրեն ներել:
- 4) Զարուհին, երբ հիշում էր տարիներ առաջ թույլ տված սխալը, չէր կարողանում ինքն իրեն ներել:



**18. Ո՞ր տարբերակում է տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունը ճիշտ փոխակերպված բարդի:**

*Գրսում աղմուկը լռելուն պես Արտաշեսը նստում էր գրասեղանի առջև:*

- 1) Երբ դրսում աղմուկը լռում էր, Արտաշեսը նստում էր գրասեղանի առջև:
- 2) Գրսում աղմուկը լռում էր թե չէ, Արտաշեսը նստում էր գրասեղանի առջև:
- 3) Որովհետև դրսում աղմուկը լռում էր, Արտաշեսը նստում էր գրասեղանի առջև:
- 4) Եթե դրսում աղմուկը լռում էր, Արտաշեսը նստում էր գրասեղանի առջև:

**19. Ո՞ր տարբերակում է տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունը ճիշտ փոխակերպված բարդի:**

*Հայրենիքից հեռացած, բայց նրա կարոտից մաշվող հայերը մշուշված հայացքով նայում էին Մասիսի նկարին ու հառաչում:*

- 1) Մշուշված հայացքով հայերը, որ հայրենիքից հեռացել, բայց նրա կարոտից մաշվում էին, նայում էին Մասիսի նկարին ու հառաչում:
- 2) Այն հայերը, որոնք հայրենիքից հեռացել էին, բայց նրա կարոտից մաշվում էին, մշուշված հայացքով նայում էին Մասիսի նկարին ու հառաչում:
- 3) Հառաչում էին այն հայերը, որոնք, հայրենիքից հեռացած, նրա կարոտից մաշվում էին ու մշուշված հայացքով Մասիսի նկարին նայելով՝ հառաչում:
- 4) Նրանք, որ հայրենիքից հեռացել, բայց նրա կարոտից մաշվում էին, մշուշված հայացքով Մասիսի նկարին նայող ու հառաչող հայերն էին:

**20. Ո՞ր տարբերակում է տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունը ճիշտ փոխակերպված բարդի:**

*Բեռլինյան այս տան լուսամուտների տակով անցնելիս օտարերկրացիները հաճախ էին կանգ առնում:*

- 1) Երբ օտարերկրացիները բեռլինյան այս տան լուսամուտների տակով էին անցնում, հաճախ էին կանգ առնում:
- 2) Հենց բեռլինյան այս տան լուսամուտների տակով էին անցնում, օտարերկրացիները հաճախ էին կանգ առնում:
- 3) Օտարերկրացիները, երբ անցնում էին բեռլինյան այս տան լուսամուտների տակով, հաճախ էին կանգ առնում:
- 4) Օտարերկրացիները հաճախ էին կանգ առնում, եթե բեռլինյան այս տան լուսամուտների տակով էին անցնում:

**21. Ո՞ր տարբերակում է տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունը ճիշտ փոխակերպված բարդի:**

*Հանկարծակիի եկած պահնորդները չէին նկատել դարանակալ գորախմբի մոտենալը:*

- 1) Պահնորդները, որ հանկարծակիի էին եկել, չէին նկատել դարանակալ գորախմբի մոտենալը:
- 2) Պահնորդները հանկարծակիի էին եկել, քանի որ չէին նկատել դարանակալ գորախմբի մոտենալը:
- 3) Հանկարծակիի եկած պահնորդները չէին նկատել, թե ինչպես է դարանակալ գորախումբը մոտենում:
- 4) Հանկարծակիի եկած պահնորդները չէին նկատել, որ դարանակալ գորախումբը մոտենում է:

**22. Ո՞ր տարբերակում է տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունը ճիշտ փոխակերպված բարդի:**

*Պառավը ծիրանի կորիզները հավաքել էր եկող տարի տան առաջ տնկելու համար:*

- 1) Պառավը ծիրանի կորիզները հավաքել էր, որ եկող տարի տան առաջ տնկի:
- 2) Պառավը ծիրանի կորիզները հավաքել էր, որովհետև եկող տարի տնկելու էր տան առաջ:
- 3) Պառավը ծիրանի կորիզներ էր հավաքել, որոնք եկող տարի տան առաջ էր տնկելու:
- 4) Պառավը, որ ծիրանի կորիզները հավաքել էր, եկող տարի տնկելու էր տան առաջ:

**23. Ո՞ր տարբերակում է տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունը ճիշտ փոխակերպված բարդի:**

*Սոնան սիրած տղային հիշելիս չէր կարողանում զսպել փղծուկը:*

- 1) Երբ Սոնան սիրած տղային հիշում էր, չէր կարողանում զսպել փղծուկը:
- 2) Սոնան, երբ հիշեց սիրած տղային, չկարողացավ զսպել փղծուկը:
- 3) Սոնան, երբ հիշում էր սիրած տղային, չէր կարողանում զսպել փղծուկը:
- 4) Սոնան, հենց որ սիրած տղային հիշում էր, չէր կարողանում զսպել փղծուկը:

**24. Տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից ո՞րն է ճիշտ փոխակերպված բարդի:**

- 1) Այդ կինը և ճոճվելով քայլող այդ տղամարդը ինձ դուր չեկան:  
Այդ կինը և այդ քայլող տղամարդը, որ ճոճվում էր, ինձ դուր չեկան:
- 2) Շուռ գալով նա տեսավ իր հետևում կանգնած թշնամուն:  
Երբ շուռ եկավ, նա տեսավ իր հետևում կանգնած թշնամուն:
- 3) Սպարապետի մտնելուն պես դահլիճում բոլորը ոտքի կանգնեցին:  
Հենց սպարապետը դահլիճ մտավ, բոլորը ոտքի կանգնեցին:
- 4) Սպառազեն խումբը մտրակեց նժույզները և գնաց դեպի հարավ՝ այլաժիններից մաքրելու իր երկիրը:  
Սպառազեն խումբը մտրակեց նժույզները և գնաց դեպի հարավ, որպեսզի այլաժիններից մաքրի իր երկիրը:

**25. Տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից ո՞րն է ճիշտ փոխակերպված բարդի:**

- 1) Աղջիկը քնից արթնանալուն պես շտապում էր դպրոց:  
Հենց որ աղջիկը քնից արթնանում էր, շտապում էր դպրոց:
- 2) Ես անհամբեր սպասում էի ընկերուհուս՝ քաղաք վերադառնալուն:  
Ես անհամբեր սպասում էի, որ ընկերուհին քաղաք վերադառնար:
- 3) Դու հավատո՞ւմ ես ընկերոջդ՝ քեզ չխաբելուն:  
Դու հավատո՞ւմ ես ընկերոջդ, որ քեզ չի խաբում:
- 4) Այդ սրտառույ շերտը ահեղ մարտում ընկածների մասին է:  
Այդ սրտառույ շերտը այն մասին է, թե ինչպես նրանք ընկան ահեղ մարտում:

**26. Տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից քանի՞սն են սխալ փոխակերպված բարդի:**

1. Մարդու՝ որևէ արհեստի կատարելապես տիրապետելու դեպքում աշխատանքը նրան երջանկություն է բերում:  
Եթե մարդը կատարելապես տիրապետում է որևէ արհեստի, աշխատանքը նրան երջանկություն է բերում:
2. Վրանները հավաքելու ժամանակ Մարգարն էլ շալակեց մնացած կապոցները ու ճամփա ընկավ:  
Հենց որ վրանները հավաքեցին, Մարգարն էլ շալակեց մնացած կապոցները ու ճամփա ընկավ:
3. Մեզ իսկապես հետաքրքրող ոչ մի բան դժվար չէ մեզ համար:  
Ոչ մի բան, որ մեզ իսկապես հետաքրքրում է, դժվար չէ մեզ համար:
4. Ամենադաժան բռնակալը օրինականության հովանու տակ և արդարացիության դրոշի ներքո հանդես եկողն է:  
Ամենադաժան բռնակալը նա է, ով հանդես է գալիս օրինականության հովանու տակ և արդարացիության դրոշի ներքո:
5. Ուշքի գալով մտավ սենյակ և վերցրեց սեղանի վրա դրված մագաղաթը:  
Երբ ուշքի եկավ, մտավ սենյակ և վերցրեց սեղանի վրա դրված մագաղաթը:

- 1) երկուսը
- 2) երեքը
- 3) ոչ մեկը
- 4) մեկը

**27. Տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից քանի՞սն են ճիշտ փոխակերպված բարդի:**

1. Չնայած անձրևի՝ ամբողջ գիշեր մաղելուն՝ առավոտը ջերմ էր ու հաճելի:  
Թեև անձրևն ամբողջ գիշեր մաղում էր, առավոտը ջերմ էր ու հաճելի:
2. Նրանց՝ կիրճը մտնելուն պես որոտացին հրացանները:  
Երբ նրանք մտնում էին կիրճը, որոտացին հրացանները:
3. Ես անակնկալի եկած բարձր ճչացի արջին տեսնելուն պես:  
Ես, որ անակնկալի էի եկել, բարձր ճչացի արջին տեսնելուն պես:
4. Նրանք պատրաստվել էին, որ հենց հաջորդ օրը ճամփա ընկնեն:  
Նրանք պատրաստվել էին հաջորդ օրը գալուն պես ճամփա ընկնել:
5. Երանի՛ գաղթ ու պատերազմ չտեսածներին:  
Երանի՛ նրանց, ովքեր չեն տեսել գաղթ ու պատերազմ:
6. Ես զգացի նրա ձեռքերի դողալը:  
Ես զգացի, թե ինչպես դողացին նրա ձեռքերը:

- 1) երկուսը
- 2) երեքը
- 3) չորսը
- 4) հինգը

**28. Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

Դ-ասախոսը ուսանողին հարցրեց.

- Ե՞րբ եք Դ-ուք ավարտելու, և ի՞նչ կարող եմ անել Ձեր գործն արագացնելու համար:

- 1) Դ-ասախոսը ուսանողին հարցրեց, թե նրանք երբ են ավարտելու, և ինչ կարող է ինքը անել նրանց գործն արագացնելու համար:
- 2) Դ-ասախոսը ուսանողին հարցրեց, թե նա երբ է ավարտելու, և ինչ կարող է ինքը անել նրա գործն արագացնելու համար:
- 3) Դ-ասախոսը ուսանողին հարցրեց, թե իրենք երբ են ավարտելու, և ինչ կարող է նա անել իրենց գործն արագացնելու համար:
- 4) Դ-ասախոսը ուսանողին հարցրեց, թե նա երբ է ավարտելու, և ինչ կարող են անել նրա գործն արագացնելու համար:

**29. Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

*-Հարգելի՛ս, ես Ձեզ ոչ միայն չեմ հասկանում, այլև չեմ հավատում Ձեր անկեղծությանը,-ասաց երիտասարդը տիկնոջը:*

- 1) Երիտասարդը ասաց հարգելի տիկնոջը, թե նա իրեն ոչ միայն չի հասկանում, այլև չի հավատում իր անկեղծությանը:
- 2) Երիտասարդը տիկնոջը՝ հարգելիին, ասաց, որ նա նրան ոչ միայն չէր հասկանում, այլև չէր հավատում նրա անկեղծությանը:
- 3) Երիտասարդը տիկնոջը ասաց, որ նա իրեն ոչ միայն չէր հասկանում, այլև չէր հավատում իր անկեղծությանը:
- 4) Երիտասարդը ասաց տիկնոջը, որ ինքը նրան ոչ միայն չի հասկանում, այլև չի հավատում նրա անկեղծությանը:

**30. Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

*-Ի՞նչ ուժով պիտի հաղթես արաբներին, Մարգալետունի՛ իշխան. մենք կղզում ընդամենը հարյուր զինվոր ունենք,-հարցրեց թագուհին երկյուղած:*

- 1) Թագուհին երկյուղած հարցրեց, թե Մարգալետունի իշխանը ինչ ուժով պիտի հաղթի արաբներին. նրանք կղզում ընդամենը հարյուր զինվոր ունեն:
- 2) Թագուհին երկյուղած հարցրեց Մարգալետունի իշխանին, թե նա ինչ ուժով պիտի հաղթի արաբներին. իրենք կղզում ընդամենը հարյուր զինվոր ունեն:
- 3) Թագուհին երկյուղած հարցրեց Մարգալետունի իշխանին, թե ինքը ինչ ուժով պիտի հաղթի արաբներին. իրենք կղզում ընդամենը հարյուր զինվոր ունեն:
- 4) Թագուհին երկյուղած հարցրեց Մարգալետունի իշխանին, թե իրենք ինչ ուժով պիտի հաղթեն արաբներին. նրանք կղզում ընդամենը հարյուր զինվոր ունեն:

**31. Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

*«Չեմ հասկանում՝ ինչու նա չվերադարձավ, և ինչ է նշանակում այս ամենը»,-սրդողած խորհում էր նա՝ առերես թաքցնելով վրդովմունքը:*

- 1) Սրդողած խորհում էր նա՝ առերես թաքցնելով վրդովմունքը, որ ինքը չի հասկանում՝ ինչու նա չվերադարձավ, և ինչ էր նշանակում այդ ամենը:
- 2) Առերես թաքցնելով վրդովմունքը՝ նա խորհում էր սրդողած, որ ինքը չի հասկանում՝ ինչու նա չի վերադառնում, և ինչ է նշանակում այս ամենը:
- 3) Առերես թաքցնելով վրդովմունքը՝ նա սրդողած խորհում էր, որ ինքը չի հասկանում՝ ինչու նա չվերադարձավ, և ինչ է նշանակում այս ամենը:
- 4) Առերես թաքցնելով վրդովմունքը՝ նա սրդողած խորհում էր, որ նա չի հասկանում, թե ինչու ինքը չվերադարձավ, և ինչ է այդ ամենը նշանակում:

**32. Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

*-Դու արածներիդ մասին մտածի՛ր, թո՛ղ՝ ես էլ իմ գործը անեմ,- չթաքցրած հեզմանքով ասաց մտախոհ իշխանը եղբորը:*

- 1) Իշխանը չթաքցրած հեզմանքով մտախոհ ասաց եղբորը, որ նա թող իր արածների մասին մտածի, նա էլ իր գործը կանի:
- 2) Մտախոհ իշխանը չթաքցրած հեզմանքով եղբորն ասաց, որ ինքը իր արածների մասին մտածի, նա էլ իր գործը կանի:
- 3) Մտախոհ իշխանը չթաքցրած հեզմանքով ասաց եղբորը, որ նա թող իր արածների մասին մտածի, ինքն էլ իր գործը անի:
- 4) Մտախոհ իշխանը չթաքցրած հեզմանքով ասաց եղբորը, որ նա իր արածների մասին մտածի, թողնի՝ ինքն էլ իր գործը անի:

**33. Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

*Մտքում հանդիմանում էր գործընկերոջը. «Չեմ հասկանում՝ ինչու ես դու ինձնից անընդհատ դժգոհում»:*

- 1) Մտքում հանդիմանում էր գործընկերոջը, որ ինքը չի հասկանում՝ ինչու է նա իրենից անընդհատ դժգոհում:
- 2) Մտքում հանդիմանում էր գործընկերոջը, որ չի հասկանում՝ ինչու է ինքը նրանից անընդհատ դժգոհում:
- 3) Մտքում հանդիմանում էր գործընկերոջը, թե չեմ հասկանում՝ ինչու ես դու ինձնից անընդհատ դժգոհում:
- 4) Մտքում հանդիմանում էր, որ ինքը չի հասկանում՝ գործընկերն ինչու է իրենից անընդհատ դժգոհում:

**34. Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

*- Ինչո՞ւ ես կանխագուշակում բախտդ, Վարդան, - հարցրեց սպարապետը. - մեր բախտը տնօրինում է Աստված:*

- 1) Սպարապետը հարցրեց Վարդանին, թե ինչու է նա կանխագուշակում իր բախտը. իրենց բախտը տնօրինում է Աստված:
- 2) Սպարապետը հարցրեց, թե ինչու է Վարդանը կանխագուշակում նրա բախտը. նրանց բախտը տնօրինում է Աստված:
- 3) Սպարապետը հարցրեց Վարդանին, թե նա ինչու է կանխագուշակում իր բախտը. նրանց բախտը տնօրինում է Աստված:
- 4) Սպարապետը հարցրեց Վարդանին, թե նա ինչու է կանխագուշակում իր բախտը, երբ նրա բախտը տնօրինում է Աստված:

**35. Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

*Մայրն իր մոտ կանչեց որդուն ու ասաց. -Օ՛, իմ սիրասուն գավակ, դու ինչո՞ւ չես որոնում հորդ. տասնհինգ ամիս է, որ մենք որոնում ենք նրան, և նա լուր չի տալիս իր մասին:*

- 1) Մայրն իր մոտ կանչեց որդուն և ասաց, թե սիրասուն գավակը ինչու չի որոնում իր հորը. տասնհինգ ամիս է, որ նրանք որոնում են իրեն, և ինքը լուր չի տալիս իր մասին:
- 2) Մայրն իր մոտ կանչեց որդուն և ասաց, թե նա ինչու չի որոնում իր հորը. տասնհինգ ամիս է, որ իրենք որոնում են նրան, և նա լուր չի տալիս իր մասին:
- 3) Մայրն իր մոտ կանչեց որդուն և ասաց, թե ինքը ինչու չի որոնում իր հորը. տասնհինգ ամիս է, որ նրանք որոնում են նրան, և նա լուր չի տալիս իր մասին:
- 4) Մայրն իր մոտ կանչեց որդուն և ասաց, թե սիրասուն գավակը ինչու չի որոնում իր հորը. տասնհինգ ամիս է, որ իրենք որոնում են նրան, և ինքը լուր չի տալիս իր մասին:

**36. Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

*- Մենք պատահմամբ ենք ողջ մնացել, պարո՛ն, - ասաց երիտասարդը և ապա ավելացրեց, - այս ամենի մասին հավանաբար մարդիկ Չեզ կպատմեն:*

- 1) Երիտասարդն ասաց պարոնին և ապա ավելացրեց, որ իրենք պատահմամբ են ողջ մնացել, որ այս ամենի մասին հավանաբար մարդիկ նրան կպատմեն:
- 2) Երիտասարդն ասաց պարոնին, որ իրենք պատահմամբ են ողջ մնացել, և ապա ավելացրեց, որ այս ամենի մասին հավանաբար մարդիկ նրան կպատմեն:
- 3) Երիտասարդն ասաց պարոնին, որ մենք պատահմամբ ենք ողջ մնացել, և ապա ավելացրեց, որ այս ամենի մասին հավանաբար մարդիկ նրան կպատմեն:
- 4) Երիտասարդն ասաց պարոնին, որ նրանք պատահմամբ են ողջ մնացել, և ապա ավելացրեց, որ այս ամենի մասին հավանաբար մարդիկ իրեն կպատմեն:

**37. Ուղղակի խոսքի փոխակերպումներից ո՞րն է սխալ:**

- 1) -Ինչո՞ւ ինձ ժամանակին չես տեղեկացրել, թե ինչ է կատարվում տերությանս մեջ,-վրդովված հարցրեց արքան՝ մի հայացք նետելով գոռոզ դուքսի վրա, ապա ավելացրեց.-ինչո՞ւ ես ուրիշից պետք է իմանամ կատարվածը:  
Մի հայացք նետելով գոռոզ դուքսի վրա՝ արքան վրդովված հարցրեց, թե ինչու նա իրեն ժամանակին չի տեղեկացրել, թե ինչ է կատարվում իր տերության մեջ, ապա ավելացրեց, թե ինչու ինքը ուրիշից պետք է իմանա կատարվածը:
- 2) -Պայծառափա՛յլ իշխան,-տեղում ուղղվելով՝ զեկուցեց դահճապետը,- անօրենները՝ հայր ու որդի, որոնք հանդգնել էին արհամարհել հրամանը, կանգնած են բակում:  
Տեղում ուղղվելով՝ դահճապետը զեկուցեց իշխանին, որ անօրենները՝ հայր ու որդի, որոնք հանդգնել էին արհամարհել նրա հրամանը, կանգնած են բակում:
- 3) «Երկիրս ավերված է, գորքս՝ ուժասպառ»,-մտածեց արքան և ծանր հոգոց արձակելով՝ բարձրացավ գահից:  
Արքան մտածեց, որ իր երկիրն ավերված է, իր գորքը՝ ուժասպառ, և ծանր հոգոց արձակելով՝ բարձրացավ գահից:
- 4) -Առավոտ վաղ եմ արթնանալու, գնում եմ քնելու,-ասաց նա ու քայլեց դեպի դուռը:  
Նա ասաց, որ ինքն առավոտ վաղ է արթնանալու, գնալու է քնելու, ու քայլեց դեպի դուռը:

**38. Ուղղակի խոսքի փոխակերպումներից ո՞րն է ճիշտ:**

- 1) Նա իր մոտ կանչեց Հիլլոս որդուն և ասաց.  
- Օ՛, իմ սիրասուն գավակ, ամոթալի է, որ դու չես որոնում հորդ, որը տասնհինգ ամիս է՝ լուր չի տալիս իր մասին:  
Նա իր մոտ կանչեց Հիլլոս որդուն և ասաց՝ ամոթալի է, որ ինքը չի որոնում նրա հորը, որը տասնհինգ ամիս է՝ լուր չի տալիս իր մասին:
- 2) - Դու տեսքով ես միայն քաջ, - ասաց Հեկտորն ինձ. - երանի թե ծնված չլինեիր, քան բոլորիս ծաղր ու ծանակի առարկա դարձնեիր:  
Հեկտորն ասաց ինձ, որ ես տեսքով եմ միայն քաջ. երանի թե ծնված չլինեի, քան իրենց բոլորին ծաղր ու ծանակի առարկա դարձնեի:
- 3) Հեկտորը դիմեց բոլոր աստվածներին.  
- Աստվածներ անմահ, աղերսում եմ ձեզ, տվե՛ք գորություն, որ որդիս էլ մեծ հռչակ վայելի քաղաքացիների մեջ, ինչպես ես:  
Հեկտորը դիմեց բոլոր աստվածներին, որ աղերսում է իրենց, որ տան գորություն, որ իր որդին էլ մեծ հռչակ վայելի քաղաքացիների մեջ, ինչպես նա:
- 4) Չայրագնած Աքիլեսն ասաց.  
- Վախեցի՛ր իմ գայրույթից, ծերունի՛. Դու գիտես, որ պետք է վերադարձնեմ Հեկտորի մարմինը:  
Չայրագնած Աքիլեսն ասաց, որ ծերունին վախենա իր գայրույթից. ինքը գիտի, որ պետք է վերադարձնի Հեկտորի մարմինը:

**39. Անուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

*Սոնան հարցրեց քրոջը, թե մտքինն ինչ է. թող հայտնի իրեն, այլապես ինքը կհեռանա:*

- 1) Սոնան հարցրեց քրոջը.  
-Մտքինդ ի՞նչ է, հայտնի՛ր ինձ, այլապես ես կհեռանամ:
- 2) Սոնան հարցրեց քրոջը.  
-Մտքինդ ի՞նչ է, պիտի հայտնես ինձ, այլապես ես կհեռանամ:
- 3) Սոնան հարցրեց քրոջը.  
-Մտքինդ ի՞նչ է, կհայտնես ինձ, այլապես ես կհեռանամ:
- 4) Սոնան հարցրեց քրոջը.  
-Մտքինդ ի՞նչ է, հայտնի՛ր ինձ, այլապես ես հեռանալու եմ:

**40. Անուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

*Նա կամաց, դողդոջուն ձայնով ասաց Նունեին, որ, այո՛, շատ դժվար կլինի մեկնելը, ապա հարցրեց, թե նա արդյոք կուզեր, որ այդտեղ մնալով՝ ինքը ավելի վատթար դրության մեջ ընկներ:*

- 1) -Շատ դժվար կլինի մեկնելը,- կամաց, դողդոջուն ձայնով ասաց նա Նունեին, ապա հարցրեց,- ես կուզեի՞ր, որ այստեղ մնալով՝ դու ավելի վատթար դրության մեջ ընկնեիր:
- 2) Նա կամաց, դողդոջուն ձայնով ասաց Նունեին.  
-Այո՛, շատ դժվար կլինի մեկնելը,- ապա հարցրեց.- դու կուզեի՞ր, որ այստեղ մնալով՝ ես ավելի վատթար դրության մեջ ընկնեմ:
- 3) Նա կամաց, դողդոջուն ձայնով ասաց Նունեին, ապա հարցրեց.  
-Այո՛, շատ դժվար կլինի մեկնելը. դու կուզեի՞ր, որ այստեղ մնալով՝ ես ավելի վատթար դրության մեջ ընկնեի:
- 4) -Այո՛, Նունե՛, շատ դժվար կլինի մեկնելը,- կամաց, դողդոջուն ձայնով ասաց նա, ապա հարցրեց,- դու կուզեի՞ր, որ այստեղ մնալով՝ ես ավելի վատթար դրության մեջ ընկնեի:

**41. Անուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

*Պապը ասաց իր պալատականներին, որ Շապուհը որոշել է իրենց հանգիստ չտալ, և իրենք կանեն այն, ինչ պարտավոր են:*

- 1) Պապը ասաց իր պալատականներին.  
- Շապուհը որոշել է մեզ հանգիստ չտալ, և մենք կանենք այն, ինչ պարտավոր ենք:
- 2) Պապը ասաց իր պալատականներին.  
- Շապուհը որոշել է ձեզ հանգիստ չտալ, և մենք կանենք այն, ինչ պարտավոր ենք:
- 3) Պապը ասաց իր պալատականներին.  
- Շապուհը որոշել է ձեզ հանգիստ չտալ, և դուք կանեք այն, ինչ պարտավոր եք:
- 4) Պապը ասաց իր պալատականներին.  
- Շապուհը որոշել է մեզ հանգիստ չտալ, և դուք կանեք այն, ինչ պարտավոր եք:

**42. Անուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

*Նա ինձ միշտ ասում էր, որ ինքն ինձ շատ բարձր է գնահատում, սակայն, ինչքան էլ ցանկանա, չի կարող իմ ազգականին դարձնել իր տեղակալը, դա թող հասկանամ վերջապես:*

- 1) - Ես քեզ շատ բարձր եմ գնահատում, սակայն, ինչքան էլ ցանկանա, չեմ կարող քո ազգականին դարձնել իմ տեղակալը, դա պիտի հասկանամ վերջապես,- միշտ ասում էր նա ինձ:
- 2) Նա ինձ միշտ ասում էր.  
- Քեզ շատ բարձր եմ գնահատում, սակայն, ինչքան էլ ցանկանամ, չեմ կարող իմ ազգականին դարձնել քո տեղակալը, դա հասկացի՞ր վերջապես:
- 3) Նա միշտ ինձ ասում էր.  
- Ես քեզ շատ բարձր եմ գնահատում, սակայն, ինչքան էլ ցանկանամ, չեմ կարող քո ազգականին դարձնել իմ տեղակալը, դա հասկացի՞ր վերջապես:
- 4) - Ես քեզ շատ բարձր եմ գնահատում, - միշտ ասում էր նա ինձ, - սակայն, ինչքան էլ ցանկանամ, քո ազգականը չի կարող դառնալ իմ տեղակալը, դա հասկացի՞ր վերջապես:

**43. Անուղղակի խոսքի փոխակերպումներից ո՞րն է սխալ:**

- 1) Կաթողիկոսն ասաց, որ ինքը հեռանում է միայն իր աթոռը պաշտպանելու համար:  
-Ես հեռանում եմ միայն իմ աթոռը պաշտպանելու համար,-ասաց կաթողիկոսը:
- 2) Նա ինձ ասում էր, որ խելքի գամ, ապա ավելացնում, որ սեղանի ընկերակցին իսկական ընկեր չհամարեմ:  
Նա ինձ ասում էր. «Խելքի՛ եկ», - ապա ավելացնում, որ սեղանի ընկերակցին իսկական ընկեր չհամարեմ»:
- 3) Գրողը հարցրեց, թե ով է անկյունում նստածը, և թեքվելով դեպի կողքինը՝ ասաց, որ լավ երիտասարդ է երևում, և ինքն ուզում է իր ժողովածուն նվիրել նրան:  
-Ո՞վ է անկյունում նստածը,-հարցրեց գրողը և թեքվելով դեպի կողքինը՝ ասաց.- լավ երիտասարդ է երևում, և ես ուզում եմ իմ ժողովածուն նվիրել նրան:
- 4) Նա, բացելով դուռը, սկսեց գոռգոռալ ձեզ վրա, ապա կիսաձայն ասաց մեզ, որ դուք հրաժարվել եք գործարք կնքելուց:  
Նա, բացելով դուռը, սկսեց գոռգոռալ ձեզ վրա, ապա կիսաձայն ասաց մեզ.  
- Նրանք հրաժարվել են գործարք կնքելուց:





**ԳԼՈՒԽ 5 ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

**1. Ո՞ր նախադասության մեջ ստորակետ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Սևանի լեռնանցքից փոքր-ինչ հեռու ճամփից դուրս է հնամենի մատուռը:
- 2) Ջարմանում եմ ինչպես կարողացավ նա գոյատևել գտնվելով թշնամական և օտար միջավայրում:
- 3) Այնտեղ մթին թավուտների խորքերում կա մի լքված խրճիթ:
- 4) Այդ ամենի հողածածկ կտուրներով տների ու գյուղական խորդուբորդ ճամփաների կարտոն էր զգում մշտապես:

**2. Ո՞ր նախադասության մեջ *ու-ից* առաջ ստորակետ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Ոտքից գլուխ ցնցոտիների մեջ նա լռելյայն քարշ էր տալիս ընդարմացած մարմինը ու գլուխը կրծքին հակած քայլում էր հևալով:
- 2) Երբ մեռնում են ճիչերը շփոթ Աղմկոտ քաղաքի մարտկոցում Լուսերես նա նստում է ինձ մոտ Ու հետս երագում ու լացում:
- 3) Անհունորեն հեռու լինելով բամբասանքից ընդվզում էր քաղքենիական բանասրկության դեմ ու մշտապես այպանում էր սպաշնորհությունը:
- 4) Թվում էր այդտեղ էլ ավարտվում է ճանապարհը ու ոչինչ այլևս չի երևա:

**3. Ո՞ր նախադասության մեջ *թե-ից* առաջ ստորակետ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Այս ուր էր թե գեթ մի աստղիկ ինձ տենչար...
- 2) Չմեռ թե ամառ նա հագած էր լինում իր միակ շորը:
- 3) Աշնանային այդ օրը սաստիկ շոգ էր կարծես թե արևը վայր չէր ուզում իջնել գեներից:
- 4) Այդ օրը աղջիկը ծիծաղեց ամուսնության իմ առաջարկի վրա բայց հուշերիս կծիկը քանդելիս հասկանում եմ թե որքան բախտավոր եմ եղել այդ օրը:

**4. Ո՞ր նախադասության մեջ է դերբայական դարձվածը սխալ կետադրված:**

- 1) Իր կյանքը փրկած Գրաստամատին Շապուհ արքան մեծ դժկամությամբ արտոնեց մտնել Անհուշ բերդը՝ շղթայակապ Արշակ արքային տեսնելու:
- 2) Չարենցը Կարսի այգու ուռենիների ստվերում մի նստարանի նստած՝ կարդում էր իր սիրած գրքերը:
- 3) Գրավելով այդ բարձունքը՝ Մոնթե Մելքոնյանը լռեցրեց ազերի հրոսակների կրակակետերը և շարժվեց առաջ:
- 4) Հայրենիքը թշնամու ոտնձգություններից պաշտպանելիս շատերն ընկան ռազմադաշտում ու հերոսացան:

**5. Ո՞ր նախադասության մեջ ստորակետ *չպիտի* դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Հանկարծ ծոցից հանելով տետրը սպիտակ թղթի վրա մատիտի արագ շարժումով նկարեց կնոջը օջախի մոտ նստած աչքերը օջախի քարին:
- 2) Նրան թվաց ֆեարե գլխարկով մարդու սպիտակ թղթերը արտացոլում են ամեն ինչ ինչպես աղբյուրի վճիտ ջուրը:
- 3) Եթե արևը չխոնարհվեր դեպի մայրամուտ նա առանց հոգնության երկար կմնար այդ դիրքով և չէր հագնեա մրգերը քաղած և արդեն դեղնող ծառերի ստափից:
- 4) Վրանները հավաքելուց և հեռանալուց հետո Մարգարը երկու միտք ուներ Թորոսիկին պահել և ծիրանի կորիզները պահ տալ մի ապահով հողում:

**6. Ո՞ր նախադասության մեջ պիտի բուժ դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Մթափվեցի մի մտքի վրա գնալ Հայաստան հող մշակել:
- 2) Հայաստանի տասներեք մայրաքաղաքներից են Տիգրանակերտը Արտաշատը Գվինը Անին և այլն:
- 3) Վերջին դեպքերին թվում է նա չի ուզում արձագանքել:
- 4) Ահա ում նկատի ունեիր երբ օրեր առաջ դիտողություններ էին անում ողջ խմբին:

**7. Ո՞ր նախադասության մեջ բուժ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Նրա առաջ ծառացել էին լուրջ խնդիրներ պետք է բնակարան գտներ նաև աշխատանքի մասին պիտի հոգար:
- 2) Նա երևում է վաղուց էր ճանաչում այդ մարդուն չգարմացավ նրա արարքից:
- 3) Չգիտեինք աշխարհն ինչ է մարդն ինչ է Մենք դարդի մեջ չգիտեինք դարդն ինչ է ...
- 4) Տղան կանչում էր հորը իսկ նա ձորն իջնելով այլևս չէր լսում որդու կանչը:

**8. Ո՞ր նախադասության մեջ բուժ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Տվյալ իրավիճակում լռելը նշանակում էր ուղղակի ընդունել սեփական պարտությունը:
- 2) Մարգարիտը հափշտակությամբ վերընթերցեց գրքի այդ առավոտ կարդացած էջերը և խորասուզվեց մտքերի մեջ:
- 3) Արագածի բարձունքից զբոսաշրջիկների առջև բացված տեսարանը հիասքանչ էր անկրկնելի ու եզակի:
- 4) Բայց անապատի մարդու հրային ու արևաշող նայվածքը ուղղված էր դեպի հեռուները:

**9. Ո՞ր նախադասության մեջ բուժ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Երբ եմ այսքան գործը հասցնելու չեմ էլ ուզում մտածել պարզապես հանգամանքները երբեմն այսպիսի անսպասելի ընթացք են ստանում:
- 2) Իմ ծրագրերը շատ էին ուզում էի լինել Վենետիկում հիանալ դոժերի հինավուրց քաղաքով:
- 3) Արքան թվում է հուսահատված է իր բանակի անհաջողություններից:
- 4) Ահա ինչ էր նա ակնարկում երբ անցած օրը խոսում էր մեզ հետ:

**10. Ո՞ր նախադասության մեջ բուժ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Գուք ասում են այնքան էլ շահագրգռված չեք որ աշխատանքներն արագ ավարտվեն:
- 2) Նրան մնում էր միայն մի ելք դա պայմանագրի վավերացումը հետաձգելն էր:
- 3) Ինչ էր նրան պատահել մենք երկար ժամանակ չգիտեինք:
- 4) Զբոսաշրջիկների աչքերի առջև բացվեց մի հիասքանչ տեսարան զարմանահրաշ ջրվեժը ցած էր գահավիժում ահռելի արագությամբ:

**11. Ո՞ր նախադասության մեջ բուժ չպիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Կիսավեր վանքի ամբողջովին մամռակալած պատերի տակ կույ չէր եկել մի պառավ և աղոթում էր:
- 2) Կնոջ գուսպ ու առաքինի վարքագծի մասին վկայում էին նրա առատ մազերը գուրկ որևէ զարդարանքից:
- 3) Իսրոն մեր հին ֆիդայիներից մեկը կոտորածից հետո քրդերից մեկ ոսկով հայ մանուկներ էր առնում և ուղարկում Մուշի Խնուսի Բասենի մանկատներ:
- 4) Նա նստել էր մի հինավուրց ծառի հողից դուրս եկած օձագալար արմատներին ու դիտում էր մայր մտնող արևից ոսկևորված շրջապատը:

**12. Ո՞ր նախադասության մեջ բութ չափառի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Տունը խոնավ էր բորբոսահոտով լեցուն փտած առաստաղով ճոճռան աստիճաններով:
- 2) Նա շրջվեց ու կառապանին բարձր հրամայեց քշիր:
- 3) Որպես իր ձայնի պատասխան անձավի խորքից մարդկային քրքիջ էր լսվել մի վայրենի քրքիջ:
- 4) Այգին բարձր պարիսպներով շրջապատված գտնվում էր գյուղի ծայրին:

**13. Ո՞ր նախադասության մեջ բութ չափառի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Նոր ժամանած տիկինն սկսեց պատմել իր Լեհաստան և Ֆրանսիա կատարած ճամփորդության և հետաքրքիր հանդիպումների մասին:
- 2) Իմ աչքերի առջև ճանապարհն էր և փիրուզե հավերժահարսը ծովակը:
- 3) Դեռ երեկվանից մտահոգ ու անհանգիստ նա իր թախժոտ աչքերը հառեց Մարգարետունուն:
- 4) Դարյա Ալեքսեևնան նա շատ անհանգիստ և դյուրագգաց կին էր նույնպես զայրացավ այդ տեսարանից:

**14. Ո՞ր նախադասության մեջ բութ չափառի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Չորս ժամ է նա հետ ու առաջ է անում փողոցով:
- 2) Աշնան պայծառ առավոտ էր Արարատյան դաշտի հրաշագեղ մի առավոտ:
- 3) Աշնանային մի օր վաղ առավոտյան տանտիկինն առաջարկեց հրավիրել իր զարմիկի կնոջը:
- 4) Զեռփսի բուրզը գտնվում է Կահիրե քաղաքից ոչ հեռու Գիզայում:

**15. Ո՞ր նախադասության մեջ միջակետ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Մարիամը այդպես էր օրիորդի անունը ամոթից շիկնել էր:
- 2) Մնացինք դեմուդեմ կանգնած ես ծառի տակ էի արջը քիչ հեռու:
- 3) Ես դուրս եմ գալիս մոտենում Մխիթարի քաջ սպարապետի գերեզմանին պառկում դեղնականաչ խոտերին:
- 4) Նրա բոլոր արարքները որքան էլ անհետաքրքիր ու ձանձրալի գրավել էին ողջ դահլիճի ուշադրությունը զարմացրել բոլորին:

**16. Ո՞ր նախադասության մեջ միջակետ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Մինչև ջուրը հասներ Լառ-Մարգարը պառկում էր ծառի տակ ննջում:
- 2) Ինչպես հինավուրց առածն է ասում երբ կորցնում ես նոր ես ափսոսում:
- 3) Սամվելն անմիջապես հասկացավ ով է եկողը:
- 4) Ազգային գիտակցություն նվիրվածություն աշխատանք ահա յուրաքանչյուր հայի սրբազան պարտականությունը:

**17. Ո՞ր նախադասության մեջ միջակետ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Ամեն ինչ տվեց հարկի դիմաց և տուն և հող և ապրանք բայց պարտքը մարելու համար ունեցածը չբավարարեց:
- 2) Մեկ առ մեկ հիշեց բոլորի անունները Հրայր Գժոխք Մախլուտո Նիկոլ Գուման Սևբարեցի Սաքո և ուրիշներ:
- 3) Մեսրոպ Մաշտոցը հայերեն տառերն ստեղծեց 5-րդ դարի սկզբին Եդեսիայում այդ ժամանակ Հայաստանի թագավորն էր Վռամշապուհը և բերեց Հայաստան:
- 4) Մեր տան ներքնահարկը մինչև այժմ ոչնչի չի ծառայել այնտեղ տարիներ շարունակ անպետք իրեր են կիտված եղել:

**18. Ո՞ր նախադասության մեջ միջակետ չափառի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Գպրոցում մեզ վայելչագրության յուրատեսակ ձև էին սովորեցնում և մենք աշակերտներս գրում էինք մանր-մանր տառերով դա ամենևին դուր չէր գալիս հայրիկին:
- 2) Հայաստանը մի շարք մայրաքաղաքներ է ունեցել Գվին Անի Արտաշատ Արմավիր և այլն:
- 3) Իրադարձությունները սկսվեցին հետևյալ կերպ Չարուհի անունով օրիորդի մոտ «խռովարարական թղթեր» հայտնաբերեցին ու նրան ձեռքակալեցին:
- 4) Նա որոշել էր թե ինչ ասի տնօրենին երեխաները մեծացել են ընդարձակ բնակարան է պետք թանկարժեք կահ-կարասի:

**19. Ո՞ր նախադասության մեջ միջակետ չպիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Ամբողջ գյուղն այդ գիշեր դուրս էր թափվել բայց արդեն ուշ էր խրճիթը վառվում էր նավթոտ փալասի պես:
- 2) Բայց այդ պահին մտածել սառը դատել անկարող էի բարկությունը նախանձն ու կատաղությունը տակնուվրա էին անում սիրտս:
- 3) Մի օր դա իրենց բաժանման յոթերորդ օրն էր հանկարծ դուռը թակեցին և ինչ-որ անձանոթ մարդ նրան նամակ հանձնեց:
- 4) Հարևան մի կին մի օր իր ծանոթներին հայտնեց թե Իվան բեյը ցնդածի պես է դարձել նա ինքնիրեն շարունակ ժպտում է ձեռքերը մոտեցնում սառը վառարանին ու իրար շփում:

**20. Ո՞ր նախադասության մեջ փակագծեր պիտի դրվեն (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Արտում կռացած կանանցից մեկը գորշ շորերով մի աղջիկ մյուսներից ավելի հաճախ էր բարձրանում ձեռքը դնում ճակատին:
- 2) Չեմ հիշում մեր գյուղի յոթ ազնվացեղ նժույզներին ինչ պատահեց ես այն ժամանակ տասը տարեկան էի դրանցից մնաց միայն մի նարնջագույն զամբիկ:
- 3) Քիչ այն կողմ սպիտակ աղբյուրն է բխում քարի միջից սառնությունից կապույտ երանգ ստացած ու գլորվում ձորը:
- 4) Տանտերը Օհան ապերը որ նահապետական բարքով մարդ էր ձմռանը նստում էր բուխարու մոտ և պատմություններ անում շահի ժամանակից:

**21. Ո՞ր նախադասության մեջ փակագծեր պիտի դրվեն (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Նայելով հրեշտակին աբեղան սրտի տրոփյունով հանկարծ հիշեց Թանգիկին երբեք և ոչ մի տեղ նա չէր տեսել այդպիսի կենդանի սրտահույզ պատկեր:
- 2) Երաժշտությունը հնչեց և գինվորական միավորումները թվով տասնինը միանգամից սկսեցին զորահանդեսը խորիստ քայլերով անցնելով բարձրաստիճան հյուրերի առջևով:
- 3) Բայց հետախույզները վերադարձան և հայտնեցին որ ճանապարհը բացվելուն մնացել է ընդամենը մեկ-երկու կիլոմետր տարածություն զօրուգիշեր հարյուրավոր բանվորներ են աշխատում:
- 4) Հյուրերից մեկը նա բարձրահասակ պարթև տղամարդ էր տանտիրոջ ուղեկցությամբ մտավ դարպասից ներս և սկսեց բարձրանալ թեք սանդուղքներով:

**22. Ո՞ր նախադասության մեջ փակագծեր պիտի դրվեն (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Նույն օրը Ռուստամյանը սեղանի մոտ նստած գուր ճգնում էր յուր մտատանջությունը մոռանալ ուստի վճռեց մեկընդմիջտ վերջ տալ այդ պատմությանը:
- 2) Ապարդյուն մնաց և այսօր այրի Նատալյայի մայրական հանդիմանությունը նա մատուցարանը վերցրեց և լուռ դուրս գնաց գլուխը խորհրդավոր կերպով շարժելով:
- 3) Այդ օրն աշխատեց որպես լարված մի մեքենա սովորաբար օրվա մեջ նա պարապում էր գրեթե տասնչորս ժամ և բոլորովին չհոգնեց:
- 4) Նատալյա Պետրովնայի հյուրասենյակը լուսավորված էր մի բարձր և գեղեցիկ կանթեղով այդ կանթեղն այրին վառում էր միմիայն այն օրերին երբ հյուրեր պիտի ընդուներ:

**23. Ո՞ր նախադասության մեջ շեշտ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Այդ օրը թանկագինս վճռվեց իմ ճակատագիրը և կյանքի տարուբերումներն այլևս անգոր եղան շրջելու բախտիս անիվը:
- 2) Նա մեկ մտքով գնում է իր երագած աշխարհը մեկ հեռանում դեպի երկնի անհուն հորիզոնները մեկ նորից հայտնվում երկրի վրա:
- 3) Թող երգեն և թող նվագեն ու հեքիաթներ հյուսեն թող ապրի ամեն մարդ այնպես ինչպես ուզում է:
- 4) Չդադարեք ձեր մարգարտահյուս երգերը նվագել երբ նվագը կանգնեցնեք այն ժամանակ կնվաճվի իմ պետությունը:

**24. Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ կա:**

- 1) Մարտի 1-ին, չնայած իր վատ տրամադրությանը, հավատարիմ է մնացել իր ամենօրյա սովորությանը՝ թեյ խմելիս լրագիր կարդալուն:
- 2) Փողոցում կանգ առավ մի կառք, մի քիչ հետո ներս մտավ մի օրիորդ՝ ձեռքին թղթի արկղեր, և սկսեց վերև վազել՝ շուրջը ոչինչ չնկատելով:
- 3) Թվում էր, թե դա մոռացված մի անկյուն է այն օրից, երբ դեռ մարդը չկար և բրածո դիմոզավրը ամսահման ազատ էր զգում իրեն:
- 4) Հետո խելառ ու չար քամին, թևերը թափահարելով, սուլելով ու շվշվացնելով փախավ, թռավ հեռուները:

**25. Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ կա:**

- 1) Մտածեցի՝ նամակը տիկին Արաքսյայից է (ես նրան նամակ էի գրել), ու հապշտապ բացեցի նկարագարող ծրարը, որ կարդամ գրությունը:
- 2) Գյուղի եզրին խմբված հետաքրքրասերները քար կտրած հետևում էին բոցագույն նժույգի զագազագ ընթացքին:
- 3) Չնայած իշխանի՝ քրտինքի մեջ կորած նժույգը հոգնած էր, իսկ ճանապարհը՝ գառիվեր, այնուամենայնիվ նա անընդհատ շտապեցնում էր խեղճ կենդանուն, որպեսզի ամբողջ հասնի մի քանի վայրկյան առաջ:
- 4) Այդտեղ էր և նշանավոր պալատական բանաստեղծը, որ երգելով Ֆաթիմի հաղթանակներն ու փառահեղ գործերը՝ արժանացել էր նրա ջերմ համակրանքին:

**26. Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ կա:**

- 1) Հուլիոս Կեսարի՝ դեպի Բրիտանական կղզիներ կատարած արշավանքներից հետո այդ սովորությունը տարածվեց մինչև Սկանդինավիա:
- 2) Կատերինան, որ վրդովված էր և խիստ հոգնած, և որին արդեն ձանձրացրել էր հոգեհացը, իսկույն ընդհատեց նրան:
- 3) Մեզ հայտնի հին օրենսդրություններից ամենակատարյալը հելլենականն է, որը, ինչ-ինչ փոփոխությունների ենթարկվելով, ծնունդ տվեց հռոմեական իրավունքին:
- 4) Բայց մինչ Ռասկոլնիկովը լուրջ տեսք կընդուներ և ինչ-որ բան կփնթփնթար՝ ակամայից նայեց նրան և այլևս չկարողացավ զսպել ծիծաղը:

**27. Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ կա:**

- 1) Նա հիպնոսացած էր, կախարդված և չգիտեր՝ ուր է տանում իրեն կյանքը:
- 2) Շրջում են Վերսալի արքայական պալատի բակերում՝ հոյակապ ծառուղիներ, մարմարյա սվազաններ, հախճապակյա ծաղկամաններ, հեթանոս աստվածների կիսանդրիներ:
- 3) Իշխանի վրա իրենց հրացայտ աչքերն էին հառել երկու ըմբոստ դեռատիներ, որոնք, շրջապատի լուռությամբ գրգռված, կարծես կամենում էին սլանալ դեպի իշխանը:
- 4) Տղան այդ հանդիպումից հետո անդադար մտածում էր. «Տեսնես ի՞նչ է նրա անունը»:

**28. Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ կա:**

- 1) Եղել է արդյոք այս թախծալի պատմությունը, թե մի մտացածին հեքիաթ է, դժվար է ասել, բայց կա գյուղը՝ հին ու տոկուն, կան քարանձավները, կա աղբյուրը, և կա գերեզմանը, իսկ գերեզմանի վրա՝ ոչ մի անուն:
- 2) Մինա բիրին մնաց սառած. Անժիկի պատասխանը սարսազդու մի զգացում ծնեց նրա մեջ, և նա շանթահար կանգնեց խաչքարի մոտ, ինչպես մի երկրորդ խաչքար:
- 3) Չնայած խեղդող շոգին՝ օրիորդն առանց հովանոցի էր, հերարձակ ու քայլելիս էլ մի տեսակ ծիծաղելիորեն թափահարում էր ձեռքերը:
- 4) Մի օր՝ կեսօրից հետո, հանկարծ շոգենավի բարձրահնչյուն սուլիչը տագնապի ազդանշան տվեց, և բոլոր ճամփորդներն իրենց խցիկներից վազեցին դուրս՝ տեղեկանալու՝ ինչ է պատահել:

**29. Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ կա:**

- 1) Նրանք անցան տրորված խոտհարքի մոտով հոգնած, նյարդայնացած:
- 2) Ուռած քթով, խափշիկի նման մի տղամարդ մոտեցավ մի կնոջ (ինչպես հետո իմացա, վերջինս նրա կինն էր) բռնեց մազերից՝ խելագարի գայլույթով քարշ տալով մի պատից մյուսը:
- 3) Պատահե՞լ է երբևէ գրավվել այնպիսի երգով, որ իր մերթ մեղմանուշ, մերթ արծաթահնչյուն կարկաչով առինքնում է քեզ ու անէացնելով վեր բարձրացնում այս աշխարհից:
- 4) Այդ հազվագյուտ մարդու միջոցով հնարավորություն ունեցա արվեստի գաղտնիքներին ծանոթանալու:

**30. Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ կա:**

- 1) Լիլիթը ծնկի եկած դիտում էր. կարապները ճերմակափետուր թևերով էին, սլացիկ պարանոցներով:
- 2) Շուտով մի ոսկեգօծ գավաթի վրա նկարել տվեց վեհանձն սպարապետի պատկերը՝ ճերմակ ձի հեծած, և խնջույքների ժամանակ այն դնում էր իր առջև:
- 3) Վերջերս երազների մեջ իրեն հաճախ էր այցի գալիս գեղեցիկ դրացուհին՝ Վարդուհին և խայտում թռչնակի պես:
- 4) Չդիմանալով ստորգետնյա գարհուրելի ցնցումներին՝ ծնկներից կոտրվեց ու տապալվեց Հելիոսի՝ աշխարհին հիացնող ու ապշեցնող արձանը:

**31. Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ կա:**

- 1) Չնայած մենք էինք կատարվածից վրդովված, մեղավորն էր ձայնը գլուխը գցել:
- 2) Ամբողջ հին էր, բոլորեքյան շրջապատված անդնդախոր կիրճերով, անանցանելի մացառուտներով:
- 3) -Էժան ես պրծել,-լրջորեն վրա բերեց նա՝ տեղեկանալով, որ ինձ տասը տարով են ազատագրել, հետո ավելացրեց.-քեզ ո՞վ ասաց՝ բանաստեղծ դառնաս:
- 4) Շապուհը՝ պարսից երկարակյաց շահը, հասցրել էր փորձել հայոց չորս թագավորներին և համոզվել, որ հայոց արքաների բյուզանդական կայսրերի հետ ունեցած մտերմության գլխավոր կռվաններից մեկը կրոնն է, մյուսը՝ մշակույթը:

**32. Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ կա:**

- 1) Տեսանելիությունը խիստ վատացել էր. ձյունն ավելի թափով էր տեղում, քան մեկ ժամ առաջ:
- 2) Մանուշի՝ ծաղկեպսակի տակից դուրս եկած խոպոպները ծածանվում էին քամուց:
- 3) Սահականույշի՝ Սևաղայի դստեր համար սկսվել էին սպասման տանջալի օրերը:
- 4) Երբ է շինվել նաիրյան այդ քաղաքը՝ դժվար է ասել, ասում են՝ հիմնողները խալդեր են եղել, կամ ուրարտացիներ:

**33. Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ կա:**

- 1) Նավը տաշեղի պես ելնում էր վերև, և, տեսնողին թվում էր, ուր որ է կխորտակվի:
- 2) Նա, թվում էր, շփոթված է և չի կարողանում մտքերը հստակ ձևակերպել:
- 3) Թվում էր՝ հասել էր հաղթանակի պահը. թշնամին խուճապահար փախչում էր:
- 4) Հաղթանակը բոլորին թվում էր անհասանելի ու անիրականանալի:

**34. Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ կա:**

- 1) Համարյա ամեն օր, դուրս գալով Նալբանդյան փողոցի նրբանցքից, ես պիտի անցնեի Բակունցի տան մոտով. ինձ թվում էր՝ նա դուրս պիտի գար՝ ծխամորձը բերանին, և պիտի գնայինք Չարենցի մոտ:
- 2) Այդ մարդու հետ խոսելիս ես մնան էի գույգ բևեռների մեջ տարուբերվող մի այցելուի. մեկից ջերմացա, մյուսից՝ սառեցի:
- 3) Ես՝ տասնհինգ տարեկան մի պատանի, հիացած էի ընկերոջս ասպետական արարմունքով. ժամերով կանգնած մոտը՝ տեսնում էի՝ ինչ քնքշությամբ էր վարդի կամ մեխակի գովքն անում:
- 4) Հռոմեական կրկեսի հավիտենական գլադիատոր է մեծահամբավ դերասանը. ինչքան շոնդալից է հանդիսատեսի ընդունելությունը, նույնքան մեծ են նրա պահանջը և անտարբերությունը անողորմ տապալվողի հանդեպ:

**35. Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ չկա:**

- 1) Լինելով չափից դուրս անմիջական բնավորության տեր, ունենալով զգայուն հոգի՝ աղջիկը չէր կարողանում կեղծել իրեն, և նստել էր՝ ատամներն իրար սեղմած, տխուր:
- 2) Բայց մի քանի րոպե չանցած՝ կանգ առավ սարսափած. նրան թվաց, թե երկու կին, թև թևի տված, շտապում են հասնել իրեն:
- 3) Աղջիկը հեռանում է՝ բարակ մեջքը թեքած կժի ծանրության կողմը, ու թվում է՝ նրա ուսերն անգոր են պահելու այդ ծանր կուժը՝ աղջկական երագներով ու հույզերով լցված:
- 4) Անկողնում պառկած՝ կարդում էմ, և գրքի էջերից ինչ-որ միտք հիշեցնում է ինձ իմ մորը՝ վաղուց աշխարհից հեռացած և օտար ավերում դեգերող եղբորս:

**36. Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ չկա:**

- 1) Դպրոցը գյուղի ցածրադիր մասում է՝ գետափին. մի քանի անգամ հեղեղը ներս էր լցվել, պատերը խոնավ էին ու տեղ-տեղ մզված՝ քայքայված:
- 2) Երկար վեճից հետո՝ ի վերջո հայրս զիջեց և համաձայնեց, որ որդին եկեղեցում պսակվի:
- 3) Պատահում էր՝ աչքերի փայլատակումին հաջորդում էր դանակի փայլատակում, և այդ երկու փայլակներին ընդառաջ էր գնում նա սրերից ավելի հզոր իր խոսքով, և տիրում էր խաղաղություն:
- 4) Չնայած նախընթաց ամբողջ օրը ճանապարհորդել էի՝ երեկ շատ վաղ արթնացա:

**37. Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ չկա:**

- 1) Դիվան դային տեսավ՝ ինչպես արնոտ միրհավը մամռոտ քարից վայր ընկավ թփուտների մեջ և ավստասներով նայեց միրհավի հետևից:
- 2) Միրհավն էր. քուջուջ անելով փոխում է արնագույն տոտիկները և կտուցով փորփրում է լորենու՝ վաղուց դեղնած տերևները:
- 3) Լուսնկա գիշերներին՝ ծովափին՝ խարույկի մոտ, երիտասարդը ձկնորսների հետ ունկնդրում էր նրանց քաղցրահունչ սագի հոգեհմա ելևէջները, ծովի անուշ ձայնը:
- 4) Երբեմն նրա աչքին ընկնում էր մի շքեղ բզեզ կամ թիթեռ՝ գունավոր թևերով և ակնապիշ դիտում էր, թե ինչպես են մրջյուններն անընդհատ աշխատում:

**38. Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ չկա:**

- 1) Փաշան պահանջեց փախստականներին և քաղաքի զենքերը. մեծամեծերը հասկացան, որ դա զինաթափում է նշանակում և պետք է կռվել:
- 2) Իմ բազում փորձություններ տեսած տարիների բարձունքում անցյալը հիմա ավելի հաճախ է մտովի այցելում ինձ, և թվում է՝ մանկությանս լաստը ինձ տանում է յուրայիններիս մոտ:
- 3) Իմ ճանապարհը հանգիստ չի եղել. ճաշակել եմ շատ դառնություններ. հեզմանք, արհամարհանք ու չարախոսություն :
- 4) Դահլիճում՝ իր բարձրադիր գահավորակին, նստած էր Վասակ Սյունին՝ հագած մարգալանի՝ ոսկեկար օձիքով հանդերձը:

**39. Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ չկա:**

- 1) Մարսափելի է. գրեթե ոչինչ չասած դառնում ես քննադատության թիրախ:
- 2) Մյուս աստվածների քրմապետերի խորհրդով՝ նա որդուն տարավ բոլոր աստվածների տաճարները:
- 3) Դրսում վառեցին խարույկները, սակայն ցուլերին դեռ չմորթած, մրրկաշունչ քամի բարձրացավ:
- 4) Մեր տիրուհին ջերմագին խնդրում է Չեզ՝ քաջ և ազատարար ասպետիդ՝ այցելեք իրեն:

**40. Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված այն թվերը, որոնց տեղում ստորակետ պիտի դրվի:**

Մեր պարտեզի բարձր բարդու վրա ուր ծառը երեք մեծ ճյուղերի էր բաժանվում (1) երկու արագիլ (2) այր ու կին (3) իրենց բույնն էին հյուսել (4) մի ամուր և մեծ բույն այնպես որ արագիլները իրենց ձագուկներով հանգիստ տեղավորվում էին այնտեղ: Ամեն գարնան (5) հենց որ ձնծաղիկներ էին երևում (6) գալիս էին արագիլները: Հսկա թևերը գյուղի վրա թափ տալով (7) և ուրախ լակ-լակ անելով գալիս էին հանգչում իրենց վաղեմի բնի վրա: Անցնում էր մի ժամանակ(8) ու մի օր էլ մենք տեսնում էինք երեք-չորս փոքրիկ ձագեր որոնք (9) բնի միջից գլուխները հանած (10) լակ-լակ են անում:

- 1) 1, 2, 3, 5, 9
- 2) 3, 6, 7, 9, 10
- 3) 2, 4, 5, 6, 8, 10
- 4) 1, 3, 4, 5, 6, 8, 9, 10

**41. Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված այն թվերը, որոնց տեղում ստորակետ պիտի դրվի:**

Վենետիկի ազնվական ընտանիքներից մեկում ապրում էր գեղեցիկ Ջուլիետան: Այնքան էր գեղեցիկ նա որ թվում էր (1) հողեղեն չէ (2) այլ մի հավերժահարս որ դուրս է եկել ծովի փրփուրներից: Աչքերը կապույտ էին (3) ինչպես Իտալիայի ջինջ երկինքը: Երբ ժպտում էր (4) կամ կկոցում աչքերը (5) նրա չքնաղ այտերի վրա փոսիկներ էին գոյանում (6) և փոքրիկ բերանի մեջ շողշողում էին սպիտակ ատամները: Երկու գույն էր սիրում (7) կարմիր ու սպիտակ (8) և նրա արդուգարդի վրա միշտ անպակաս էին այդ երկու գույնի ծաղիկները մեխակը և շուշանը: Նա ինքը թարմ ու հոտավետ ծաղիկ էր (9) կարմիր (10) կամ սպիտակ նայած թե ինչ գույնի հագուստ էր հագնում:

- 1) 2, 3, 4, 5, 6, 8
- 2) 2, 3, 5, 6, 8
- 3) 2, 4, 5, 8, 10
- 4) 1, 6, 7, 9, 10

**42. Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված այն թվերը, որոնց տեղում ստորակետ պիտի դրվի:**

Մինչ այդ տաճկական գնացքը որը Կարսից եկել էր այդտեղ Թիֆլիս մեկնելու (1) ընդհատեց մեր տաղտկալի պատմությունը և հյուրընկալեց մեզ: Տաճիկ մի զինվորական իր վագոնի լայնափեղկ լուսամուտից տեսնելով կայարանում սպասող այդ պատկառելի մարդուն և (2) ինչպես հետո պարզվեց իմանալով նրա ով լինելը (3) իսկույն ևեթ մարդ էր ուղարկել կառամատույց նրան Թումանյանին (4) և մեզ նրա ուղեկիցներին անմիջապես գնացք հրավիրելու: Ամբողջ վագոնը գրեթե դատարկ էր (5) հատուկե՛տ ուղևորներ էին (6) և մենք էինք Թումանյանը (7) նրա դուստրը թոռը և ես: Տեղափոխվելուց հետո մի նոր անակնկալ եղավ (8) վագոնի ուղեկցորդը մի բարեհամբույր ռուս խոհուն աչքերով (9) առանց պատվիրելու հանկարծ թեյ բերեց մեզ համար (10) ահա մի բան որ վաղուց ի վեր շատ հազվադեպ էր պատահում այդ խառնի-ճաղանջ ժամանակաշրջանում:

1. 1, 2, 4, 6, 7, 8, 9
2. 2, 3, 4, 6, 7, 9, 10
3. 1, 2, 3, 4, 6, 7, 9
4. 1, 3, 4, 6, 7, 9, 10



**43. Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված այն թվերը, որոնց տեղում բութ պիտի լինի:**

Սովորելով համալսարանում (1) նա զարմանալիորեն գրեթե ընկերներ չունեի(2) խորշում էր բոլորից ու ոչ ոքի մոտ չէր գնում (3) ուրիշներին էլ հյուր չընդունելով: Պարապում էր զօրուգիշեր (4) բոլորովին չխնայելով իրեն ու դրա համար (5) հարգում էին նրան բայց որևէ մեկը չէր սիրում: Նրա հետ անհնար էր (6) որևէ այլ հարաբերություն ունենալ որովհետև մի կենսուրախ բարեկիրք զրուցատեր տղա էր (7) պարզամտության հասնող բարեհոգությամբ: Այդ պարզամտության տակ սակայն (8) թաքնված էին թե մտքի խորություն թե արժանապատվություն և ընկերները (9) ըմբռնելով այդ (10) սիրում էին նրան:

- 1) 2, 4, 5, 8, 10
- 2) 1, 2, 6, 8, 9,10
- 3) 1, 3, 4, 7
- 4) 1, 3, 4, 7, 10

**44. Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված այն թվերը, որոնց տեղում բութ պիտի դրվի:**

Այստեղ (1) անմիջապես պետք է հիշեմ պապիս (2) մորս հորը: Հակառակ մորս հեզահամբույր բնավորության (3) պապս խստաբարո մի մարդ էր (4) կռվում էր ամենքի հետ (5) քառասուն տարով քեն էր պահում բոլորին ծույլ էր անվանում բայց ինքը ամբողջ կյանքում բացարձակապես ոչ մի աշխատանք չէր կատարել կերել էր հոր հարստությունը(6) մեծագույն մասը կերցնելով փաստաբաններին և երբ հոր հարստությունը մսխել վերջացրել էր (7) որդիներն էին մեծացել և նրանց (8) իր զավակների հաշվին էր ապրում:

Իր հարազատներից ու ծանոթներից ոչ ոքի (9) բացարձակապես ոչ ոքի իսկական անունով չէր կանչում (10) բոլորին մականուններ էր կայցրել:

- 1) 1, 2, 3, 5, 9
- 2) 2, 3, 4, 7, 9
- 3) 2, 3, 6, 8
- 4) 2, 3, 6, 8, 9

**45. Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված այն թվերը, որոնց տեղում բութ պիտի դրվի:**

Այս արգահատելին(1) Հոհան եպիսկոպոսը ոչ միայն ազահ էր այլ նաև ինքնասեր: Պատահում էր(2) գնում էր թագավորի պալատ և իրեն պահում էր(3) ինչպես խեղկատակ(4) չամաչելով իր տարիքից և կոչումից: Չորեքթաթ վագելով(5) ծամածռություններ անելով ու կենդանիների ձայներ հանելով(6) ծիծաղեցնում էր թագավորին(7) ուղտի պես սողալով նրա ոտքերի առջև:

Եվ ուղտի սապատի պես մեջքը ուռցրած(8) վագվում էր սրահում ապա մոտենում թագավորին(9) կրկնում նույն խոսքերը: Իսկ թագավորը կամ իշխանները նրա մեջքին դնում էին կնքված հրովարտակներ(10) իբր թե թոթափելով իրենց մեղքերը:

- 1) 1, 2, 3, 4, 6, 8, 10
- 2) 1, 2, 4, 6, 7, 8, 10
- 3) 2, 5, 7, 8, 9
- 4) 1, 2, 5, 4, 6, 7, 8, 10

**46. Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված այն թվերը, որոնց տեղում բութ պիստի դրվի:**

Նաիրյան այդ քաղաքի(1) մարդաշատ ու աղմկոտ փողոցներով բոլորն անցնում են դանդաղ անշտապ: Մարդիկ ելել են փողոց ուրեմն անկասկած գնալու տեղ ունեն (2) գործի զբոսնելու գնումներ անելու բաղնիք: Բաղնիք(3) առավոտվա վաղ ժամերին միայն կանայք են գնում: Քաղաքում կա միայն երկու բաղնիք երկուսն էլ ասիական: Դրանցից մեկը ճերմակ պատեր ունի իսկ մյուսը (4) եվրոպական համարում ունեցողը (5) կորնթարդ գմբեթ: Կանայք գնում են բաղնիք մի առանձին շուքով (6) կարծես գնում են ծխակատարության: Առջևից սվոդրաբար գնում է մի մշակ (7) շալակին լողանալու պարագաներ (8) պղնձե թասեր սանրեր օճառ: Եթե ամառ է աշուն այսինքն (9) մրգի ժամանակ ընտանիքի հայրը առանց այլևայության պետք է բաղնիք ուղարկի նվեր (10) ձմերուկ սեխ խաղող խնձոր:

- 1) 1, 2, 4, 7, 8, 10
- 2) 1, 4, 5, 6, 8, 9
- 3) 2, 3, 4, 6, 7, 8, 10
- 4) 2, 4, 5, 7, 8, 9, 10

**47. Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված այն թվերը, որոնց տեղում բութ պիստի դրվի:**

Երբ մենք մտանք արվեստանոց(1) Մինասը վառեց բոլոր լամպերը և մեզ նայեցին նրա(2) ասես լույսից ծնված աշխատանքները: Ես շարունակ փորձում էի բնորոշել ինձ հետ կատարվածը բայց այդպես էլ չկարողացա: Այդ բառը միտքս եկավ շատ տարիներ անց(3) հազար ինը հարյուր ութսունհինգ թվականին երբ արդեն վաղուց չէի փնտրում այն: Վեներտիկում էր: Մենք(4) համերգային խմբի անդամներս դուրս գալով հյուրանոցից(5) ուղղվեցինք դեպի Սուրբ Մարկոսի հրապարակ(6) մեր ուղերթը ճշտելով բազմաթիվ ուղենշաններով(7) գրված եվրոպական գրեթե բոլոր լեզուներով(8) անգլերենով ֆրանսերենով գերմաներենով... Եվ հենց այնտեղ(9) Սուրբ Մարկոսի հրապարակում ես ակամա հիշեցի Մինասի նկարները և հասկացա որ նրա արվեստանոցում պայթյուն էր եղել(10) գույնի պայթյուն:

- 1) 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9
- 2) 1, 2, 4, 6, 10
- 3) 2, 3, 4, 6, 7, 8, 9
- 4) 3, 4, 7, 9, 10

**48. Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված այն թվերը, որոնց տեղում բութ պիստի դրվի:**

Հաջորդ օրը (1) վաղ առավոտյան Չաքարիային հասան գոռում-գոչյուններ և ուրախության ձայներ: Դրանք առաջապահ զինվորների (2) ոգևորությամբ լի ձայներն էին: Նրանք տեսել էին ամրոցի պարիսպները և ուրախացել(3) վերջապես ավարտվեց իրենց տաղտկալի ու միօրինակ երթը: Հեծյալների զվարթությունը փոխանցվեց ձիերին ու նրանք էլ կարծես զգալով տաք ու հարմարավետ ախոռների մոտիկությունը (4) արագացրին իրենց քայլերը: Չաքարիան հրամայեց(5) բանակը շարել մարտական շարքերով: Չինվորները դեն նետեցին վահաններն ու սրերը թիկնոցների(6) անձրևից պաշտպանող լաթերը և ողջ այրուձին միանգամից կերպարանափոխվեց: Նույնիսկ աղջամուղջի մեջ զենքերը փայլփլում էին(7) հետզհետե թանձրացող կիսախավարում խորհրդավոր տեսք տալով բանակին: Գոհ մնալով սպառազեն բանակի տեսքից Չաքարիան սուրհանդակ ուղարկեց ամրոց(8) հայտնելու որ կայսեր հրամանով զորքը սպասում է ընդունելության: Աշտարակներին գտնվող ժամապահները գոռում էին իրենց զինվոր ազգականների ու ընկերների անունները (9) ցանկանալով իմանալ (10) արդյոք դրանցից մեկն այդտեղ չէ:

- 1) 1, 4, 6, 7, 8, 9, 10
- 2) 2, 3, 4, 7, 8, 10
- 3) 1, 2, 6, 7, 8, 9, 10
- 4) 2, 3, 4, 5, 8, 9

**49. Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված այն թվերը, որոնց տեղում բութ պիտի դրվի:**

Որպես գրողի(1) ինձ հետաքրքրում են մարդը և նրա հիշողությունները իսկ պատմվածքներիս նյութը մի երևելի բան չէ: Գնահատված լինելն այնքան էլ չեմ կարևորում (2) փառքի չեմ տենչում (3) չակնկալելով նաև որևէ գրական մրցանակ: Այստեղ (4) հեռավոր Ֆրեզնոյում Սան Ֆրանցիսկոյի տան(5) փոքրիկ սենյակում նստած (6) նամակ եմ գրում հասարակ մարդկանց (7) պարզ լեզվով պատմելով իրենց շատ ծանոթ բաների մասին ու մտքովս էլ չի անցնում պատմվածք սարքելու որևէ կանոնի հետևել: Վախենում եմ (8) փորձված մարդիկ վրաս ծիծաղեն ու նրանք կարծում են (9) ճիշտ կլինեն: Ինձ անօգնական եմ զգում թվում է երկար-բարակ խոսելով (10) դեռ ոչինչ չասացի:

- 1) 1, 3, 4, 7, 8, 10
- 2) 2, 3, 5, 7, 8, 9
- 3) 3, 4, 6, 7, 8, 9, 10
- 4) 2, 4, 5, 6, 8, 9, 10

**50. Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված այն թվերը, որոնց տեղում բութ պիտի դրվի:**

Մոկաց նախարարը առանձնանալով ամրոցի մի փոքրիկ սենյակում (1) ընկղմվեց ընթերցանության մեջ: Որքան ժամանակ անցավ (2) նա չզգաց (3) միայն նկատեց (4) ձեռագիր մատյանի ահագին էջեր կարդացել է (5) գարնանային մեղկացնող հովն ու բույրը ըմբռնելով: Աչքերն ուղղվեցին դեպի հանդիպակաց հովիտներն ու լեռնային արոտները, որոնք ձյունից ազատված (6) սպասում էին (7) ծաղիկ-ծաղկունքով զարդարվելուն: Նա չգիտես ինչու (8) նայեց քարակարկառի ուղղությամբ: Այնտեղ (9) բլուրի վրա նստել էին երկու կին (10) երեսները դեպի հովիտները:

- 1) 1, 2, 6, 9, 10
- 2) 1, 4, 6, 8, 10
- 3) 2, 4, 5, 9, 10
- 3) 2, 3, 5, 7, 8

**51. Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված այն թվերը, որոնց տեղում ստորակետ պիտի դրվի:**

Մայրուղուց դեպի աջ թեքվելով կարող ես վեցից յոթ կիլոմետր գնալ և քո առաջ անակնկալ կբացվի բնության այդ հրաշալիքը Պարզ լիճը(1) ու կցնցի իր գեղեցկությամբ: Կարծես(2) թե աշխարհի գողտրիկ ծաղիկների քնքուշ թերթիկներին իջած վաղորդյան ցողերը նրբին ու ականակիտ(3) ձուլվել են իրար(4) գոյացրել լիճը: Այն գուցե(5) կուսական անտառի օրորուն երգի տակ ազատ թռչկոտող եղնիկի վճիտ հայացքի արտապատկերն է(6) կամ երկնակամարն է իր կտորը մոռացել անտառի գրկում բոլորից հեռու և ապահով: Սովերախիտ անտառ(7) թռչունների դայլայլ(8) և անսպասելիորեն աչքիդ առաջ(9) բարձրասաղարթ ծառերի գրկում բացվում է չքնադաղեն լճակը որը իր խոնարհ գլուխն անտառների կրծքին դրած(10) զուլալ հայացքով կանչում է:

- 1) 1, 3, 4, 6, 8, 9
- 2) 2, 3, 5, 6, 7, 8, 9
- 3) 1, 2, 3, 5, 7, 9
- 4) 1, 3, 4, 6, 7, 8, 10

**52. Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված այն թվերը, որոնց տեղում միջակետ պիտի դրվի:**

Երկու տարի անց Բեռնից վերադարձա (1) կարոտել էի նրան: Բայց հակառակ սպասումներիս նա չկար: Մի օր էլ հնչեց դռան զանգը (2) շեմքին կանգնած էր նա (3) նման պահերին կանայք շփոթված են լինում (4) ճերմակ զգեստը հագին:

Խոսակցությունը չէր ստացվում (5) երկուսս էլ անվճռական էինք: Ոտքի կանգնեց(6) արդեն գնում էր (7)սովորաբար այդպես հեռանում են հանգուցյալի կողքից ու ես խառնվեցի իրար փորձելով ձգձգել մեկնումը (8) սակայն չստացվեց: Նրա դեմքին սառնություն տեսա (9) դա նշան էր, որ կրկին ձանձրանում է ինձ հետ: Գնաց ու աղմուկը դադարեց (10) շրջակայքում մարդ չկար:

- 1) 1, 2, 5, 6, 8, 10
- 2) 2, 3, 5, 6, 7, 9,
- 3) 2, 4, 5, 7, 8, 10
- 4) 1, 2, 5, 6, 9, 10

**53. Նախադասություններից քանիստ՞ում միջակետ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1. Ալեքսանդրիա քաղաքը հիմնադրել է Ալեքսանդր Մակեդոնացին դա եղավ նրա ամենամեծ գործը իր աշխարհակալության հաղթարշավի ընթացքում:
- 2. Պատղմետուր գիտնականներ ու փիլիսոփաներ հրավիրեց տարբեր տեղերից նա գիտական միտքը կենտրոնացնելու փորձ էր կատարում:
- 3. Երկար ժամանակ այդ գրադարան-ակադեմիայի տնօրենն էր Էրատոսթենեսը որն առաջինը չափեց անհավատալի կարող է թվալ Երկրի տրամագիծը:
- 4. Մշակութային այդ կենտրոնի համբավը տարածվեց աշխարհով մեկ գրադարանը կարճ ժամանակում աճել էր ու հարստացել:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

**54. Ո՞ր նախադասության մեջ շեշտ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Խորհուրդ տվեցին գորավարին  
Կայրես վանքի գրքերը և նրանց լեզուները կբացվեն:
- 2) Փչում էր հովը և խոտերի շրշյունը և թփերի շշուկը տարածելով խաղաղ հովտում:
- 3) Ի պատասխան իմ խնդրանքի նա ոչ մի բան չասաց ոչ մի վերաբերմունք ցույց չտվեց:
- 4) Երեկո Աստաֆյան փողոց բազում մարդիկ օրվա հոգսերի տակ կքած:

**55. Նախադասություններից քանիստ՞ում տրոհվող դերբայական դարձված կա (նախադասությունները կետադրված չեն):**

- 1. Ուղղաձիգ նուրբ քիթն ու երկար թերթերունքները մի ուրույն բարետեսություն են տալիս խաբուսիկ հմայքներով օժտված նրա զուռնատ դեմքին:
- 2. Միալար անձրևն ու լուսակնատներից փչող միջանցիկ քամին ավելի էին խորացրել այն թախիծը որ նրան տիրել էր աշխատանքն սկսելիս:
- 3. Ճակատին թափված երկար խոպոպները հետ տանելուց հետո նա ուղղեց մեջքը մի պահ լուռ նայեց լույսի երդիկից ներս ընկած սյանը ապա մոտեցավ վարպետին:
- 4. Քիչ հետո շունչը պահելով և զգուշորեն անցնելով կամարակապ ու կիսախավար միջանցքը Ոսկանը ականջը մոտեցրեց սևացած դռներից մեկին:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

**56. Նախադասություններից քանիստ՞ում տրոհվող հատկացուցիչ կա (նախադասությունները կետադրված չեն):**

1. Մորիկը թեև վտանգավոր չէր սակայն ծովաջուրը առատորեն հոսում էր հակերի վրայով և տախտակամածի տարերքից առաջացած ճեղքերից թափվում թիավարների թիկունքին:
2. Լուսամուտի թրջված ու խունացած գոգին այրվող մարխն իր կարմիր շողերը սփռել էր Ոսկանի առջև բացված հսկայական գրքի և ածիլված կլոր գլխի վրա:
3. Անցնելով ամառի բակով նա ուղղվեց դեպի հարավային դարպասը սիրտը թրթռում էր քիչ առաջ ձեռք բերած իր տարիներով երագած երջանկությունից:
4. Պատուհանների մետաքսյա ծուպավոր վարագույրները վեր էին բարձրացված և երևում էր ամբողջ պարտեզը:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

**57. Նախադասություններից քանիստ՞ում կետադրական սխալ կա:**

1. Դահլիճից հեռանալով՝ թագուհին մտավ իր առանձնարանը՝ հուզված ու լարված:
2. Վարդուհին՝ որպես նորահարս, գլուխը կրծքին խոնարհած՝ գնում էր :
3. Աստղերը՝ երկնքի այդ վառ-վառ ծաղիկները, շողում էին եթերային ոլորտում:
4. Իբրև փորձված լեռնեցի՝ հին գինվոր Արթենը կռվում էր ճարպիկ վագրի պես:
5. Դազար Փարպեցին իր գրքում ասել է.  
- Խոհեմ իմաստությամբ կարելի է հաղթել մեծ գործությանը:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

**58. Նախադասություններից քանիստ՞ում կետադրական սխալ կա:**

1. Լուսացավ. դուրս եկա պարտեզ. չորսբլուրը ծաղիկ ու կանաչ է. ի՞նչ գեղեցիկ է այս ամենը:
2. Մուրացիկը, հայիոյելով ու կաղին տալով, նետվեց շան հետևից:
3. Հյուրերից մեկը՝ օլայած օձիքով, շնորհալի շարժումով խոնարհվեց:
4. Զօրուգիշեր լողում էր մակույկը՝ մաքառելով մրրկածուփ տարերքի դեմ, և վայում էր հողմը:
5. Մթնեց. շառաչուն քամին հևալով փարվում էր ծառերին, ու ճյուղերը, ասես վախենալով մրսելուց՝ փաթաթվում էին միմյանց:

- 1) երկուսում
- 2) երեքում
- 3) ոչ մեկում
- 4) մեկում

**59. Նախադասություններից քանիստ՞ում կետադրական սխալ կա:**

1. Մարդ երբեմն ապրում է ծառի օրենքով. արմատով հողի խորքն է ձգվում, սաղարթով՝ տարածվում դեպի արևը:
2. Ես միշտ տեսնում էի մի երագ, որ այցելում էր քուն թե արթուն՝ տունը, մինչև առաստաղ, լցված էր գրքերով:
3. Ժանիքները բացելով՝ գայլը նայեց շներին, շները նայեցին գայլին. նրանք այդպես նայում էին միմյանց, և գայլը չգիտեր՝ ինչ է անելու:
4. Բայց մենք պիտի հասկանանք և հասկանալով՝ չմոռանանք երբեք, որ մեր ժառանգության մեծագույն գանձը մեր լեզուն է:
5. Եվ որովհետև այդ օրը Պանինը անտառ չալիտի գար (Ավին լսել էր, որ անտառապահը հիվանդ է) նա գերադասեց մի շալակ ցախ տանել տուն:

- 1) երկուսում
- 2) երեքում
- 3) չորսում
- 4) բոլորում

**60. Նախադասություններից քանիստ՞ում կետադրական սխալ կա:**

1. Առավոտյան իր բանվորներին պատվերներ տալիս՝ մարմնում անսովոր սարսուռ զգաց:
  2. Մտնելով ճոխ հյուրասրահը՝ յուրաքանչյուրը, թվում է, ջանում էր հապճեպ մի անկյուն քաշվել՝ ցանկանալով սքողել իր հետաքրքրությունն ու հուզմունքը. կարող էր անպատշաճ շարժում անել կամ ծայտուն հանել:
  3. Հասավ աճյունը վերցնելու վայրկյանը, ու մի պահ այնպես թվաց՝ բոլորը մարմարյա սանդուղքով ներքև հոսեցին, ինչպես ասված էր նախօրոք:
  4. Սգակառքը, սակայն դեռ անշարժ էր, ու շուրջը դեռ խմբված էին հարազատները:
- 1) մեկում
  - 2) ոչ մեկում
  - 3) երեքում
  - 4) երկուսում

**61. Նախադասություններից քանիստ՞ում կետադրական սխալ կա :**

1. Թևածում է տիեզերական ցնծությունը՝ սփռելով ոսկեվառ արևի՝ մորս մազերը հիշեցնող շողերը՝ բարկ, լուսածածան:
  2. Առաջին անգամ Պարույր Սևակին տեսա Երևանում հազար ինը հարյուր վաթսունմեկ թվականին:
  3. - Մի՞ թե ես իրավունք ունեմ սիրելու. իմ սերը եկեղեցին է, սուրբ հոգին,- շառագունելով պատասխանեց պատանին:
  4. Կյանքը, սակայն, սրընթաց թռչում էր, և երբեմնի կանաչ-կարմիր ասպետը՝ օրըստօրե թռանում:
- 1) մեկում
  - 2) ոչ մեկում
  - 3) երկուսում
  - 4) երեքում

**62. Նախադասություններից քանիստ՞ում կետադրական սխալ կա:**

1. Երևում էր Սիմ լեռան կանաչազարդ շղթան՝ ձյունապատ զագաթներով, որոնք արևի ոսկեգօծ ճառագայթներից փայլվում էին՝ վարդագույն երանգներով:
  2. Եղիշեն, հանգստարանի քարերի վրա նստած, անքթիթ հայացքով դիտում էր մարդկանց, ապա դիմելով նրանց՝ ասաց, որ չթուլանան ոգով, չտխրեն:
  3. Հոգնելով իր հրապույրները ցուցադրելուց՝ միջօրեին հանգիստ շունչ է առնում անհուն անտառը, իսկ միջօրեից հետո, երբ արեգակը գնում է մայր մտնելու, կրկին խշշում է անտառը իրիկնադեմի քամուց:
  4. Կամուրջը մի պահ լուսավորվեց, մառախուղի վերջին ծվեմները՝ հողմի բերանն ընկած՝ սուրացին, թռան մեր վրայով:
  5. Ռշտունյաց օրիորդը՝ Աշխենը, հայացքը դարձրած դեպի սգավոր աղբյուրը, որ, արծաթափայլ վտակի նման դուրս հոսելով մի ժայռի ճեղքվածքից՝ ցած էր թափվում, լուռ կանգնած էր նրա մոտ:
  6. Նա աշխատում էր չնայել ճանապարհների կողմը, որ չտեսնի նահանջող գորքերին, բոկոտն կանանց ու երեխաներին ցեխերի միջով քայլելիս:
- 1) հինգում
  - 2) երեքում
  - 3) չորսում
  - 4) երկուսում

**63. Նախադասություններից քանիստ՞ում կետադրական սխալ կա:**

1. Այդ պահին ես չէի էլ կարողանում ընկալել, ինչ էր սպասում մեզ առջևում:
  2. Նրան թվաց՝ քամին ավելի մեղեգնորեն սկսեց պտտվել իր շուրջը, ու օձիքը բարձրացրեց վեր, որ չմրսի:
  3. Երբ է փլուզվել այդ շինությունը՝ ոչ ոք չգիտե, բայց ասում են, որ պատճառը կա՛մ երկրաշարժն է եղել, կա՛մ սելջուկյան արշավանքները:
  4. Անցնում եմ քաղաքի հին թաղամասով, որտեղ տները հին են ու խարխուլ, փողոցները՝ ծուռումուռ, նեղիկ ու փոշոտ:
- 1) մեկում
  - 2) երեքում
  - 3) չորսում
  - 4) ոչ մեկում

**64. Նախադասություններից քանիստ՞ում կետադրական սխալ կա:**

1. Ու եթե երբևէ մեկը զգուշությամբ թափանցել է այնտեղ, ունկնդրել նրա ձայները բազմազան, ակնապիշ դիտել գույները խայտաբղետ, կիսամոզվի, որ դա, անշուշտ, մի ուրույն աշխարհ է:
  2. Հասմիկը սրտատրոփ սպասում էր այն օրվան, երբ օտարությունից կվերադառնար իր սիրելին և կամուսնանային. տուն ու տեղ կդնեին:
  3. Հաճախ էլ գերեզմանային լռություն է իջնում անտառին, և թվում է՝ երբ կյանք չի եղել այնտեղ, եղել է մի համատարած գերեզման:
  4. Գյուղից վերև՝ լեռան գագաթին՝ ավերակ մատուռի մոտ, կանգնած էին մի աղջիկ՝ երկար շրջագգեստով և լայնեզր գլխարկով մի տղա:
  5. Երբ անտառում հողմ է լինում, ծառերը, մեջք մեջքի տված, օրորվում են ու ճռնչում, թփերը՝ խշշում:
  6. Կարմիր պառավ ձին սիրտ չէր անում շնչել, աչքերը չէր թարթում. եթե թարթեր, իր աչքաթարթի հետ գայլը տեղից տեղ կցատկեր, և ինքը չէր հասցնի նկատել, ինչպես թշնամին մոտեցավ քուռակին:
- 1) երեքում
  - 2) չորսում
  - 3) հինգում
  - 4) երկուսում

**65. Նախադասություններից քանիստ՞ում կետադրական սխալ կա:**

1. Ինքը և իր կինը՝ Մոսեն, տասնվեց կտրիճ զինվորներով փայլել էին մի քանի մարտերում, և արդեն սրտահույզ երգեր էին հյուսվում նրանց մասին՝ փառաբանելով մարտիկների իրենց ուխտին հավատարիմ լինելը, հերոսաբար մաքառելն ու հաղթելը:
  2. Չաուշը գիտեր, թե արյունուշտ սուլթանի այդ ընչաքաղց պաշտոնյան, որ գյուղացիներից է կորզել ոսկին:
  3. Նրանք երկար ժամանակ շարունակեցին խոսել այդ դեպքից, մինչև որ ներսից հասչտապ եկան ու հայտնեցին, որ գնացքի մեկնումի ժամը մոտ է և անմիջապես պետք է երկաթուղային կայարան գնալ:
  4. Դժվար է ասել՝ իր օրվա ծնունդն ու գեղեցկությունն ավետելու շնորհի՞վ է, թե՞ մի այլ պատճառով, բայց քարակաքավը հնուց ի վեր սիրելի է եղել հայ ժողովրդին, թեև մեզ մոտ ապրող թռչուններից ամենագեղեցիկը չէ:
  2. Իհարկե, իմ առաջին տպավորությունները սրանից խորն էին, թեև ես այն ժամանակ պետք է խոստովանեմ ոչինչ չէի ընկալում Թումանյանի բարձրարժեք քնարերգությունից:
- 1) չորսում
  - 2) երեքում
  - 3) բոլորում
  - 4) ոչ մեկում

**66. Նախադասություններից քանիստ՞ում կետադրական սխալ կա:**

1. Կոստյունը սովորաբար նա գնում էր տասնինը դոլարով՝ ներառյալ զանազան ծախսերը, որոնց համար, ի դեպ, ժամերով սակարկում էր՝ վերջնականապես զզվեցնելով վաճառողներին:
2. Հասկացա՞վ Լենկթեմուրը, թե որն է իսկական հարստությունը, ոչ ոք չի կարող ասել:
3. Վաղուց չէին տեսել իրենց համագյուղացուն՝ Եսայուն, որն իր բազկի շնորհիվ դիրքի էր հասել՝ չմոռանալով՝ որտեղից էր ելել:
4. «Երկուսս էլ ճերմակ ենք, Արարա՛տ, երկուսս էլ կարոտաբաղձ ենք, ու մեզնից ոչ մեկը չի կարող գետն անցնել,-խորհում են հուսահատ.-երանի՛ր թիթեռներին, որոնք անարգել խախտելով սահմանը՝ գալիս են դեպի քեզ»:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

**67. Նախադասություններից քանիստ՞ում կետադրական սխալ կա:**

1. Ով կամենում է մեծամտությունից ձերբազատվել՝ թող աչքերը բարձրացնի ու նայի հոյակապ դամբարաններին:
2. Կատարյալ խոնարհը, որքան էլ մեծամեծ շնորհներ, պատիվ ու մեծություն ունենա, իր ունեցած առավելությունները չի տեսնում, այլ կամենում է շտկել իր թերությունները՝ տեսնելով դրանք:
3. Եթե մարդ խորհի՛ ինքն ինչ էր առաջ, ինչ է այժմ և ինչ է լինելու ապագայում, բնավ չի կարողանա հպարտանալ:
4. Անցյալն ու ապառնին մարդու իշխանության տակ չեն, որովհետև մեկն անցավ-գնաց, և մյուսը չի եկել, իսկ ներկան հարահոս ու անկայուն է:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) բոլորում

**68. Նախադասություններից քանիստ՞ում կետադրական սխալ կա:**

1. Ի պատիվ խնջույքին ներկա ազդեցիկ նախարարների, արաբ ոստիկանը հրամայեց սրահ բերել ճոխ նվերներ:
2. Երբ բավական մոտեցան, տեսան բանաստեղծ Վլադիմիր Մայակովսկուն, որ մարդկանց մեջտեղում կանգնած՝ արատասնում էր:
3. Դա գեղանկարչական մի գլուխգործոց էր՝ աստվածաշնչյան թեմայով՝ ամբողջովին պատված խոր ճաքերով:
4. Պարսից արքունիքը թաղված էր մեղկության, գեխության մեջ. շահը հոգս չուներ, ժողովուրդը՝ հաց:
5. Ինչպես ես արդարանալու, արդեն գիտեմ:

- 1) մեկում
- 2) երեքում
- 3) չորսում
- 4) երկուսում



**69. Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ չկա:**

- 1) Մեծ զվարճալիք էր մեզ համար, երբ Մարանը գնում էր ավազանի ափը, նայում ջինջ ջրի մեջ և տեսնելով իր արտացոլումը՝ ցատկում էր, նորից նայում:
- 2) Նա վեր-վեր էր ցատկոտում և վերջիվերջո՝ դունչը մոտեցնում էր ջրին, փռշտում, որից ջուրն ալիքավորվում էր, պատկերը՝ բեկբեկվում:
- 3) Եվ ուրախանալով, որ հաղթեց ջրի խորքում եղող ինչ-որ անասունի՝ Մարանը խրխնջում ու վազում էր դեպի պարտեզի՝ խճապատ ծառուղին, այդ ծառուղուց՝ մի ուրիշ ծառուղի:
- 4) Հակոբը, եթե պատահեր, որ հյուր գնար մի տեղ և ստիպված լիներ՝ երկար մնալու, կգտներ մի պահ, կգար տուն՝ Մարանին տեսնելու և նորից կգնար:

**70. Նախադասություններից քանիստ՞ում կետադրական սխալ չկա:**

1. Հինա ուրիշ էր. ամեն նոր պարկ վերցնելիս ու տանելիս՝ սիրտն սկսում էր ուժգին թրթռալ, քիչ էր մնում աչքերը դուրս թռչեին ակնակապիճներից:
2. Հայացքս ինչ-որ կետի հառած, և խորունկ երկյուղածությամբ հուշերի մեջ խճճված՝ մտմտում էի.
3. - Շատ կուզեի, որ հայրս, մորաքույրերս տեսնեին այս ամենը,- մտածում էր նա:
4. Ես կանգնած եմ տաճարի կենտրոնում և նայում եմ վեր. հպարտ եմ, որ այնտեղ՝ ամենավերևում՝ երկնքին մոտիկ, այն հրաշք գմբեթն է, որ վերակառուցել է Տրդատ ճարտարապետը:
5. Մամիկոնյան տիկինը՝ Շուշանիկը, խռովահույզ մտքերով տարված՝ չէր խոսում. նա մերթընդմերթ ուշիուշով նայում էր Ռշտունյաց օրիորդին՝ Անահիտին՝ կռահելու նրա հոգեմաշ ապրումները:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) բոլորում

**71. Ո՞ր նախադասության մեջ կետադրական նշան չպիտի դրվի:**

- 1) Հայաստանի երրորդ մայրաքաղաք Երվանդաշատը արտաքին վտանգներից զերծ պահելու նպատակով Երվանդը Արաքսի ձախ ափին կառուցում է նաև թիկնապահներով ու սպասավորներով բնակեցված դաստակերտ:
- 2) Կոմիտասը գրպանից հանում է սրինգը նվագում դահլիճի քարացած հայացքների ներքո:
- 3) Խորապես ազգային լինելով անվանի նկարիչ Մարտիրոս Սարյանը գեղանկարչության համաշխարհային քարտեզի վրա նշել է Հայաստանի հաստատուն տեղն ու ճշգրիտ սահմանները:
- 4) Վեպի հիմքում ընկած է մի բուռ մարդկանց մուսալեռցիների անձնուրաց պայքարը երիտթուրքական դահլիճների դեմ:

**72. Ո՞ր նախադասության մեջ բացահայտիչից հետո ստորակետ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Հակոբին ճանապարհ դնելիս հայրս այդ ահեղ մարդն անգամ չկարողացավ զսպել արցունքները:
- 2) Ինձ դաշտային երկրի բնակչիս վրա լեռը մի առանձնակի դյուրական տպավորություն գործեց:
- 3) Մի օր Լոռուց Թիֆլիս եկավ իմ հին ուսուցիչը Տիգրան Տեր-Դավթյանը դիտելու Շեքսպիրի «Համլետ» ողբերգությունը:
- 4) Ես իբրև հայ բանաստեղծ իմ բարոյական պարտքը համարեցի այցելել Ձեր խմբագրատուն:

**73. Ո՞ր նախադասության մեջ ոչ-ը պիտի տրոհվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Քանի դեռ այդ երամակում այդ նարնջագույն հովատակն էր ուրիշ ձի ոչ սիրտ չէր անի երևալ երամակի մոտերքը:
- 2) Հիմնական գործը թողած ոչ կարևոր գործերով էին զբաղվում:
- 3) Ես նրան որոշեցի խաբել պատմելով ոչ այն մասին ինչն այդ պահին կարևոր էր:
- 4) Նա ում համար ասես լավություն է արել բայց ոչ ինձ համար. ես նրանից ոչ մի օգուտ չեմ տեսել:

**ԳԼՈՒԽ 6 Կապակցված խոսք**

**1. Նախադասությունները նշող թվերի ո՞ր դասավորությունն է համապատասխանում դրանց տրամաբանական ճիշտ հաջորդականությանը:**

- 1. Ահա մեր ջրաղացի առուն. ցամաքած է նա վաղուց, որովհետև ավերակ է մեր ջրաղացը:
- 2. Իմ հայրենի Շիրակի դաշտում եմ և ձիով դանդաղ գնում եմ այն գյուղը, ուր ջրաղաց ունեինք և ընդարձակ հողեր:
- 3. Նվիրական վայրեր, ուր անցան իմ մանկությունը և պատանեկության առաջին տարիները:
- 4. Տեսնում եմ հեռվից մեր տան և ջրաղացի ավերակները:

- 1) 2, 3, 1, 4
- 2) 2, 3, 4, 1
- 3) 2, 4, 1, 3
- 4) 3, 2, 1, 4

**2. Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում այդ նախադասությունների տրամաբանական և քերականական ճիշտ հաջորդականությանը:**

- 1. Ըստ այդ գաղափարի՝ թագավորը պետք է պաշտպանի հարուստներին անարդարություններից, աղքատներին՝ կեղեքումից՝ ի տարբերություն պետության մյուս ձևի, որը լավագույն մարդկանցից կազմված կառավարությունն է. հաջորդը սահմանադրությունն է:
- 2. Արիստոտելը պետության երեք ճիշտ ձև էր առաջարկում՝ միապետություն, արիստոկրատիա, սահմանադրություն: Դրանցից առաջինը ամենախիղճալականն է. միապետն ինքը օրենքն է:
- 3. Այստեղ ղեկավարում է մեծամասնությունը, և ազատության ու հարստության սկզբունքների միջև փոխզիջում կա, փորձ՝ միավորելու աղքատների և հարուստների ազատությունը՝ ոչ մեկին առավելություն չտալով:
- 4. Պետությունն ինքը այնպիսի բնական զարգացման արդյունք է, ինչպիսին ընտանիքն է, սակայն, քանի որ շատ տարբեր մարդկանցից է կազմված, այն պետք է բազմակարծիք լինի՝ ի տարբերություն ընտանիքի:

- 1) 2, 1, 3, 4
- 2) 4, 1, 2, 3
- 3) 4, 2, 1, 3
- 4) 4, 3, 1, 2

**3. Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում այդ նախադասությունների տրամաբանական և քերականական ճիշտ հաջորդականությանը:**

- 1. Սկսում էին արյունահոսել մարդկանց լնդերը, շարժվել առամները, և նավաստիները թուլանում և ուժասպառ վայր էին ընկնում. լնդախտն ավելի շատ զոհ էր խլում, քան նավաբեկությունը:
- 2. Իսկ 300 տարի առաջ բժիշկներն անգամ չգիտեին, որ այդ հիվանդությունն առաջանում է սննդի մեջ C վիտամինի պակասից:
- 3. Ով կմտածեր, որ նավարկության մեկնելիս մի քանի տուփ C վիտամին վերցնելը կապաշտպանի այդ սարսափելի հիվանդությունից. 20-րդ դարում այդպես դատելը հեշտ է:
- 4. Դեռ հնուց ծովային նավերի վրա անսպասելիորեն հայտնվում էր լնդախտ կոչվող սարսափելի հիվանդությունը:

- 1) 4, 3, 2, 1
- 2) 3, 2, 4, 1
- 3) 4, 1, 2, 3
- 4) 4, 1, 3, 2

**4. Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում այդ նախադասությունների տրամաբանական և քերականական ճիշտ հաջորդականությանը:**

1. Նա սկզբում թվարկում է արգելվածները, որոնց մեջ էին բոլոր սողունները:
2. Բոլորը հնազանդվեցին, թեև դժվար էր հրաժարվել դարերով եկած սովորությունից:
3. Քանի որ մինչ այդ Հայաստանում օգտագործում էին ամեն տեսակ միս, արքան գրեց, թե դրանցից որը կարելի է ուտել, որը՝ ոչ:
4. Ասում են՝ հայ ժողովրդի քաղաքակրթության հարցում մեծ նշանակություն են ունեցել Վաղարշակ քազավորի քառասուն հրովարտականները, որոնցից մեկը նվիրված էր միս ուտելուն:

- 1) 4, 2, 3, 1
- 2) 4, 3, 1, 2
- 3) 3, 2, 1, 4
- 4) 4, 2, 1, 3

**5. Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում այդ նախադասությունների տրամաբանական և քերականական ճիշտ հաջորդականությանը:**

1. Հազար տարի հետո միայն՝ 17-րդ դարում, Գալիլեո Գալիլեյը, աստղադիտակն ուղղելով երկնքի այդ տիրույթը, հաստատեց Շիրակացու առաջ քաշած միտքը:
2. Ժամանակակից աստղագիտական տվյալները փաստում են, որ Ծիր Կաթինի երկնային ուղին անցնում է 32 համաստեղություններով. Գեներեից սկսած՝ Ծիր Կաթինը ճյուղավորվում է երկու վտակների ու այդպես էլ «հոսում» դեպի հորիզոն:
3. Նրա առավել պայծառ ու խիտ ամպերը դիտվում են Կարապի, Աղեղնավորի, հատկապես Վահանի համաստեղություններում:
4. Աստղային մարմիններով, համաստեղություններով գիտնականները վաղուց են հետաքրքրվել, և դեռևս 7-րդ դարում հայ մեծանուն գիտնական Անանիա Շիրակացին դրանցից մեկի՝ Ծիր Կաթինի մասին գրել է. «...դրանք կուտակված բազմաթիվ մեծ և փոքր աստղեր են, որոնք աղոտ երևալու հետևանքով միավորված լույսով են երևում»:

- 1) 3, 2, 1, 4
- 2) 4, 1, 2, 3
- 3) 1, 4, 2, 3
- 4) 3, 4, 1, 2

**6. Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում այդ նախադասությունների տրամաբանական և քերականական ճիշտ հաջորդականությանը:**

1. Հիշյալ արձանները, որոնց բարձրությունը մոտ 8 մետր է, կրաքարե խոշոր վեմերից են:
2. Ըստ գոյություն ունեցող փաստերի՝ Նեմրուքը Արևմտյան Հայաստանի միակ գործող կամ ժայթքման ենթակա հրաբուխն է, որ մի օր հիմնովին սրբելու է հետքերը իր շրջակայքում կուտակված օտար ցեղերի, որոնք բնօրրանից ջշել են տերերին :
3. Հնագույն հայկական Կոմագենե երկրում՝ Նեմրուք լեռան վրա, 19-րդ դարում հայտնաբերվել է Անտիոքոս Ա քազավորի կառուցած դամբարանաբլուր-սրբավայրը, որի արևելյան և արևմտյան կողմում դրված են արձաններ, բարձրաքանդակներով արձանագրություններ:
4. Վիմային արձանների կենտրոնում Արամազդ-Չևան է, որի կողքերին Սիիր-Ապոլոնը և Արտագնես-Հերակլեսն են, ապա՝ Անտիոքոս Ա-ի արձանը :

- 1) 3, 4, 1, 2
- 2) 1, 4, 3, 2
- 3) 2, 4, 3, 1
- 4) 3, 1, 4, 2

**7. Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում այդ նախադասությունների տրամաբանական և քերականական ճիշտ հաջորդականությանը:**

1. Նա կարծում է, որ բավական է ունենալ պոլիէթիլենային մի մեծ պարկ, որը պետք է հագցնել որևէ ծառի ճյուղի և ամուր կապել:
2. Որքան ավելի շոգ է, այնքան ավելի արագ է կատարվում գոլորշիացման գործընթացը:
3. Ավստրալացի մի օդաչու զարմանալի միջոց է առաջարկում ծարավը հագեցնելու համար, եթե ջուր չկա:
4. Տերևներից գոլորշիացող խոնավությունը մնում է պարկի ներսում, խտանում, և այս հնարամիտ միջոցի շնորհիվ ստացվում է օրական 1լ ջուր:

- 1) 2, 4, 1, 3
- 2) 4, 1, 3, 2
- 3) 3, 1, 2, 4
- 4) 3, 1, 4, 2

**8. Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում այդ նախադասությունների տրամաբանական և քերականական ճիշտ հաջորդականությանը:**

1. Նա հառաչանքով ուզեց ուղղել մեջքը, բայց մեջքը չուղղվեց, քարայրից ելավ. արարատյան լույսը ծեփվեց նրա ցավոտ աչքերին, և աշխարհը պատվեց սպիտակ կուրությամբ:
2. Կցեց դրան հիշատակարանը, թե ինքն այլևս այր է մի հիվանդ, ձեռն այլևս հաստատ չէ, չի գորում նաև աչքը:
3. Քերականը Պրոկոպիոս Ամասեցու հունաց լեզվի քննությունը վերջացրեց ՌՌՂԵ թվականին:
4. Քանզի շատ անգամ ինքը կերակրվել է հացի հուշով և ձեթի փոխարեն ծախսել է հաճախ աչքի լույսը քարայրի մթի մեջ:

- 1) 1, 3, 2, 4
- 2) 3, 2, 4, 1
- 3) 2, 1, 4, 3
- 4) 3, 2, 1, 4

**9. Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում այդ նախադասությունների տրամաբանական և քերականական ճիշտ հաջորդականությանը:**

1. Ձորի գլխին կանգնեցի, և երբ աղջիկը մի անգամ էլ բարձրացավ, նայեց իմ կողմը, ձեռքով արի:
2. Գյուղից հեռանալիս ես տեսա արտում քաղհան անող կանանց, որոնք կանաչին ընկած թռչունների էին մման, որ կռանում ու բարձրանում էին, ասես կտցահարում էին արտը:
3. Նա իսկույն կռացավ արտի վրա, իսկ ես արագացրի քայլերս՝ ձիապանին հասնելու:
4. Եվ այդ երամից մեկը՝ գորշ շորերով մի աղջիկ, ավելի հաճախ էր բարձրանում, ձեռքը դնում ճակատին, որ արևի շողերը չխանգարեն տեսնելու անտառի մեջ հալվող արահետը և միայնակ անցվորին:

- 1) 1, 2, 4, 3
- 2) 2, 1, 3, 4
- 3) 2, 4, 1, 3
- 4) 1, 3, 2, 4

**10. Նախադասությունները նշող թվերի տառերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում այդ նախադասությունների տրամաբանական և քերականական ճիշտ հաջորդականությանը:**

1. Հովտում շաղախվում էր տխուր աղջամուղջը, սարերի կատարներին մոմերի պես հանգան սառն արևները:
2. Հետո բոլոր թփուտներից դուրս թռան հովերը, միացան, խառնեցին անցնող ցերեկվա բոլոր բուրմունքները:
3. Գոմեշը բլուրների գլխից մոլնգաց դեպի անհայտություն և իջավ, մտավ հովտի մթան տակ:
4. Արևի տակ մի հոգնած գոմեշ էր գնում, կորեց խճուղին, կորավ ձորում ու մայրամուտի մեջ կապտեց բլրաշարի ուսագծին:

- 1) 3, 2, 4, 1
- 2) 1, 4, 3, 2
- 3) 4, 1, 3, 2
- 4) 4, 2, 1, 3

**11. Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում այդ նախադասությունների տրամաբանական և քերականական ճիշտ հաջորդականությանը:**

1. Եվ ամերիկյան ընթերցողները զարմացան ու հիացան, որովհետև Սարոյանը մինչև այդ իրենց անձանոթ մի երակ էր բերում գրականության մեջ՝ հայկական ոգու երակը:
2. Հիրավի, արժանավոր մի շառավիղ է Վիլյամ Սարոյանը, որ, սակայն, ընկել է մի այլ միջավայր ու այլ մի դար:
3. Ամեն անգամ, երբ ես Սարոյան եմ կարդում, ինձ այնպես է թվում, թե նա արժանավոր շառավիղն է մեր անանուն ու անհայտ գուսանների, որոնք դարերի խորքում մեր հանճարեղ էպոսն են հյուսել:
4. Մտնելով ամերիկյան գրականության ասպարեզ՝ նա ժողովրդական ասացողների պարզ ու խոր խոսքով սկսեց իր միջավայրի ու դարի սքանչելի էպոսները հյուսել:

- 1) 3, 1, 2, 4
- 2) 3, 2, 4, 1
- 3) 2, 3, 1, 4
- 4) 2, 4, 1, 3

**12. Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում այդ նախադասությունների տրամաբանական և քերականական ճիշտ հաջորդականությանը:**

1. Մյուսն էր միայնակ թռչունը. փշանման ցգվել էին նրա փետուրները:
2. Եվ ինքնասույգ խորհում էր նա, որ կյանքը տառապանք է, սակայն ապրելու կամքը՝ էլ ավելի:
3. Ձյունապատ բարձունքներից և դեղնած լեռնալանջերից թավալվում էր սառնաշունչ քամին:
4. Քաղցած էր նա, և քաղցն ավելի էր տանջում նրան, քան ցուրտը:

- 1) 3, 1, 4, 2
- 2) 3, 2, 4, 1
- 3) 2, 1, 4, 3
- 4) 2, 3, 1, 4

**13. Պարբերությունները նշող թվերի ո՞ր դասավորությունն է համապատասխանում դրանց տրամաբանական ճիշտ հաջորդականությանը:**

1. Առաջին էլեկտրոնային հաշվողական մեքենաները՝ ԷՀՄ-ները, երևան են եկել 1943 թ.: Անվակների ու լծակների փոխարեն դրանց մեջ աշխատում էին էլեկտրոնային լամպեր, իսկ ավելի ուշ՝ կիսահաղորդիչներ: Բայց «հաշվողական մեքենա» անվանումն այդպես էլ մնաց:
2. 1641 թ. ֆրանսիացի մաթեմատիկոս Բ. Պասկալը հորինեց մեխանիկական հաշվիչ սարք: Դրա օգնությամբ նա մի քանի վայրկյանում գումարում ու հանում էր տասանիչ թվեր: Սարքը կազմված էր ատամնանիվներից ու լծակներից և նման էր փոքր մեքենայի: Այդ ժամանակից էլ նման սարքերն անվանում են «հաշվողական մեքենա»: Այնուհետև ի հայտ եկան էլ ավելի կատարելագործված մեքենաներ:
3. Առաջին ԷՀՄ-ները դանդաղ էին հաշվում, մեծածավալ էին, հաճախ էին խափանվում: Անցավ ընդամենը մի երեսուն տարի, և ԷՀՄ-ները սովորեցին հաշվել աներևակայելի արագությամբ: Մեկ վայրկյանում մեքենան կարող է գումարել 10 միլիոնից ավելի թիվ: Փոքրացան նաև չափերը, վերացավ հաճախակի նորոգումների անհրաժեշտությունը. ժամանակակից ԷՀՄ-ներն անխափան աշխատում են հարյուրավոր ու հազարավոր ժամեր:
4. Հնագույն ժամանակներից ի վեր մարդիկ փորձել են հեշտացնել հաշվելու գործողությունը: Այդ նպատակով օգտագործել են զանազան հաշվիչ հարմարանքներ՝ փայտիկներ, պարանի հանգույցներ, մետաղալարին շարված կորիզներ: Սակայն հետագայում ստեղծվեցին սարքեր, որոնցով հաշվելը ավելի ու ավելի հեշտացավ:

- 1) 4, 1, 3, 2
- 2) 2, 3, 1, 4
- 3) 4, 2, 1, 3
- 4) 2, 1, 3, 4

**15. Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում շարադրանքի (տեքստի) տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

1. Թվում է՝ դա ճանապարհորդելու շատ էժան և հեշտ եղանակ է: Պետք է միայն բարձրանալ Երկրից վեր և օդում մնալ գոնե մի քանի րոպե, և մարդ կիջնի բոլորովին այլ վայրում՝ դեպի արևմուտք:
2. Սիրանո դե Բերթերակն իր մի երգիծական երկում պատմում է, թե իբր ֆիզիկայի փորձեր անելիս նա մի անգամ անհասկանալի ձևով օդ է բարձրացել: Իսկ երբ մի քանի ժամ հետո նրան վերջապես հաջողվել է նորից իջնել Երկրի վրա, ապա, ի զարմանս իրեն, հայտնվել է ոչ թե հարազատ Ֆրանսիայում և նույնիսկ ոչ թե Եվրոպայում, այլ Հյուսիսային Ամերիկա մայրցամաքում՝ Կանադայում:
3. Ֆրանսիացի գրողը իր անսպասելի թռիչքը Ատլանտյան օվկիանոսի վրայով միանգամայն բնական է համարում: Նա դա բացատրում է նրանով, որ երբ ակամա ճանապարհորդը կտրված է եղել Երկրի մակերևույթից, մեր մոլորակը շարունակել է առաջվա պես պտտվել դեպի արևելք:
4. Փոխանակ հոգնեցուցիչ ճանապարհորդություններ ձեռնարկելու մայրցամաքների և օվկիանոսների վրայով՝ կարելի է անշարժ մնալ երկրագնդից վերև և սպասել, մինչև երկրագունդն ինքը ճամփորդին հրամցնի նրա ժամանման վայրը: Բայց ավիոս, որ ճանապարհորդելու այս զարմանալի եղանակը միայն ֆանտազիա է: Օդ բարձրանալով՝ մենք, ըստ էության, դեռ չենք պոկվում Երկրից, կապված ենք մնում նրա զագային թաղանթի հետ, որը նույնպես մասնակցում է Երկրի պտույտին նրա առանցքի շուրջը:

- 1) 3, 1, 4, 2
- 2) 2, 3, 1, 4
- 3) 4, 1, 2, 3
- 4) 2, 1, 3, 4

**15. Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում շարադրանքի (տեքստի) տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

1. Հանրահայտ Մեռյալ ծովի ջուրն արտակարգ աղի է, այնքան, որ նրա մեջ չի կարող ապրել ոչ մի կենդանի էակ: Արևմտյան Ասիայի տոթակեզ, անանձրև կլիմայի պատճառով ջուրն ուժեղ գոլորշիանում է ծովի մակերևույթից: Բայց միայն մաքուր ջուրն է գոլորշիանում:
2. Մեռյալ ծովի մեծ աղապարունակությամբ է պայմանավորված նրա այն առանձնահատկությունը, որ այդ ծովի ջուրը նկատելիորեն ծանր է սովորական ծովերի ջրերից: Այդ ծանր հեղուկի մեջ հնարավոր չէ սուզվել:
3. Լուծված աղերը մնում են ծովում և մեծացնում ջրի աղիությունը: Ահա թե ինչու Մեռյալ ծովի ջուրը պարունակում է ոչ թե 23% աղ (ըստ զանգվածի), ինչպես ծովերի ու օվկիանոսների մեծամասնությունը, այլ 27% և ավելի:
4. Մեր մարմնի կշիռը նկատելիորեն փոքր է նույն ծավալով խիտ աղի ջրի կշռից, և, հետևաբար, մարդը Մեռյալ ծովում, ըստ լողալու օրենքի, ջրի երեսն է դուրս գալիս այնպես, ինչպես հավի ձուն է աղի ջրի երեսը դուրս գալիս (իսկ խմելու ջրի մեջ սուզվում է):

- 1) 1, 3, 2, 4
- 2) 4, 1, 3, 2
- 3) 2, 1, 4, 3
- 4) 1, 3, 4, 2

**16. Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում շարադրանքի (տեքստի) տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

1. Այն ժամանակ լրջորեն մտահոգող խնդիրներից էր հանքահորերից պոմպերով ջուր հանելը: Սկզբնական շրջանում Անգլիայում այդպիսի գործերի համար ձիեր էին օգտագործում, որոնք, ի դեպ, շատ թանկ արժեին:
2. Այդ պատճառով էր, որ շոգեմեքենայի գյուտարարը հետաքրքրվեց, թե քանի ձիու կարող է փոխարինել մեկ մեքենան, և ինչպես արտահայտել մեքենայի հզորությունը ձիու հզորությամբ, այսինքն՝ այն աշխատանքով, որ ձին կարող է կատարել մեկ ժամում, մեկ րոպեում, մեկ վայրկյանում:
3. Հզորության միավորի սահմանման անհրաժեշտությունը ծագեց այն բանից հետո, երբ Ջեյմս Ուոտտը կատարելագործեց շոգեմեքենան, և վերջինս դադարեց պարզապես թանկարժեք խաղալիք լինելուց:
4. Ուոտտը փորձնականորեն որոշեց, որ ձին 75 կգ զանգվածով բեռը 1 վայրկյանում կարող է բարձրացնել 1 մետր: Չիու զարգացրած միջին հզորությունն անվանեցին ձիաուժ:

- 1) 1, 3, 4, 2
- 2) 2, 3, 1, 4
- 3) 3, 1, 2, 4
- 4) 4, 1, 2, 3

**17. Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում շարադրանքի (տեքստի) տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

1. Քաղաքի հրապարակում մարդկանց հոծ բազմություն էր հավաքվել: Բոլորն ուզում էին տեսնել օդապարիկ կոչվող այդ հրաշքը, որը շուրջ 15 մ տրամագծով քաթանե գունդ էր՝ լցված տաք ծխով: Արտաքինից ստանձված էր թղթով:
2. Մոնգոլֆիե եղբայրները հավաքվածներին առաջարկեցին թռչել օդապարիկով: Բայց թռչել ցանկացողներ այդպես էլ չեղան:
3. Ստորին մասում անցք էր բացված, որի անմիջապես տակը կախված էր «կրակարան»: «Կրակարանի» մեջ եղբայրները դրել էին շիկացած ածխի կտորներ՝ տաքացնելու համար օդապարիկի ներսի օդը: Երբ կտրեցին պարանը, որով օդապարիկը կապված էր սյունին, այն վեր բարձրացավ և շուտով ծածկվեց ամպերի հետևում:
4. Ավելի քան 200 տարի առաջ ֆրանսիական փոքրիկ Անոնե քաղաքը հանկարծ հայտնի դարձավ ամբողջ աշխարհում: Ժոզեֆ և Էտյեն Մոնգոլֆիե եղբայրները օդ բարձրացրին իրենց կառուցած օդապարիկը:

- 1) 1, 2, 4, 3
- 2) 1, 4, 2, 3
- 3) 4, 1, 3, 2
- 4) 4, 2, 1, 3

**18. Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում շարադրանքի (տեքստի) տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

1. Մեր Երկիր մոլորակն ամբողջությամբ պատված է թափանցիկ մուշտակով՝ օդով: Սովորաբար մենք այն չենք նկատում: Բայց եթե հանկարծ այդ մուշտակն անհետանա, մենք մի քանի վայրկյան անգամ ապրել չենք կարողանա:
2. Օդի գոյությունը մենք հաճախ չենք զգում, թեև այն այդքան կարևոր է: Օդը չի խանգարում, որ մենք տեղաշարժվենք: Այն տեղի է տալիս մեր առջև և անմիջապես զբաղեցնում մեր ազատած տեղը:
3. Բայց եթե օդում արագ շարժվենք, այն չի հասցնի ճեղքվել, տեղի տալ: Այդ դեպքում մենք կզգանք նրա հպումը:
4. Մի ակնթարթում եռալ կսկսեն երկրագնդի վրա եղած ջուրն ու մյուս բոլոր հեղուկները: Իսկ Արեգակի ճառագայթները կխանձեն ողջ կենդանի բնությունը:

- 1) 2, 3, 1, 4
- 2) 1, 4, 2, 3
- 3) 2, 3, 4, 1
- 4) 1, 3, 4, 1



**19. Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում շարադրանքի (տեքստի) տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

1. 1825 թվականին ընկերներից մեկը Բեթովենին հաղորդել է, թե իբր Սալյերին, զգալով մոտալուտ մահը, խոստովանել է, որ ինքն է սպանել Մոցարտին և մտադիր է այդ մասին պատմել իր խոստովանահորը: Ասում են՝ Վիեննայի արխիվներում հայտնաբերվել է Սալյերիի խոստովանության գրառումը, որտեղ ասված է, թե նա որտեղ, ինչ պարագաներում է դանդաղ գործող թույն լցրել նրա գինու գավաթի մեջ:
2. Այն ենթադրությունը, թե Մոցարտը մահացել է անբնական մահով, ծագեց նրա մահից անմիջապես հետո: Թաղումից դեռ մեկ շաբաթ էլ չէր անցել, Վիեննայի թերթերից մեկը թղթակցություն գետեղեց, որով այն կարծիքն էր հայտնում, թե Մոցարտը թունավորված է եղել: Այդ լուրը շատ արագ տարածվեց ողջ Եվրոպայում:
3. Մրան հակառակ՝ մի խումբ մոցարտագետներ կտրականապես ժխտում են թե՛ թունավորումը, թե՛ Սալյերիի մեղսակցությունը: Նրանց կարծիքով կոմպոզիտորը մահացել է երիկամների ծանր հիվանդությունից:
4. Մարդասպանի դերը, այդ լուրերի համաձայն, վերագրվում էր Սալյերիին: Դրա համար, ըստ երևույթին, հիմք է ծառայել այն թշնամանքը, որ մի ժամանակ այդ անտաղանդ երաժիշտը տաժում էր Մոցարտի նկատմամբ:

- 1) 1, 4, 3, 2
- 2) 4, 2, 3, 1
- 3) 2, 3, 1, 4
- 4) 2, 4, 1, 3

**20. Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում շարադրանքի (տեքստի) տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

1. Լազարյան ճեմարանն իր գոյության ընթացքում պահպանել է իր հայկական դիմագիծը. հայերենով դասավանդվել են մի շարք հայագիտական առարկաներ, ուսուցիչներից և դասախոսներից շատերը եղել են հայեր: Տարբեր ժամանակներում ճեմարանում դասավանդել են չ. Ալամդարյանը, Մ. Նալբանդյանը, Մ.Շահազիզը, այստեղ են սովորել ապագա նշանավոր գրողներ Ռ. Պատկանյանը, Գ. Դողդիսյանը, Վ. Տերյանը, արվեստի և գիտության նշանավոր այլ գործիչներ:
2. Ճեմարանում ուսուցումը հիմնականում տարվել է ռուսերենով, սակայն հանրակրթական առարկաներին զուգահեռ դասավանդվել են հայերեն, լատիներեն, ֆրանսերեն, գերմաներեն, նաև մի շարք արևելյան լեզուներ՝ պարսկերեն, արաբերեն, թուրքերեն: Խորհրդային տարիներին այս ճեմարանի հիմքի վրա ստեղծվում է Մոսկվայի արևելագիտության ինստիտուտը:
3. 1921 թվականից Լազարյան ճեմարանի շենքը ծառայել է իբրև Խորհրդային Հայաստանի մշակույթի տուն: Ներկայումս այն Ռուսաստանում Հայաստանի Հանրապետության դեսպանատունն է:
4. Լազարյան ճեմարանը հիմնադրվել է Մոսկվայում 1815 թվականին մեծահարուստ Լազարյանների նախաձեռնությամբ և միջոցներով: Այստեղ ընդունվում էին տարբեր ազգերի 10-14 տարեկան երեխաներ, հիմնականում՝ հայեր և ռուսներ:

- 1) 4, 2, 3, 1
- 2) 4, 2, 1, 3
- 3) 3, 1, 4, 2
- 4) 3, 2, 1, 4

**21. Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում շարադրանքի (տեքստի) տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

1. Պետրոս Գուրյան... Սա աշխարհ չպատկերեց: Եվ աշխարհ չստեղծեց սա: Սա բացեց իր աշխարհը, որ իրենից հետո կոչվեց ու կոչվելու է իր իսկ անունով՝ դուրյանական:
2. Կան բանաստեղծներ էլ, որոնք ո՛չ աշխարհ են պատկերում, ո՛չ էլ աշխարհ ստեղծում: Նրանք բացում են իրենց աշխարհը: Եվ սրանք չեն մոռացվում, որովհետև չեն հնանում:
3. Կան բանաստեղծներ, որոնք մի ամբողջ աշխարհ են վերապատկերում: Մեծ են կոչվում նրանք: Եվ իսկապես էլ մեծ են: Բայց, դժբախտաբար, շուտ են հնանում, որովհետև, բարեբախտաբար, նորանում է աշխարհը:
4. Իսկ եթե հնանում են, ապա սուկ այնքանով, որքանով հնանում է նաև առավոտը: Սրանք չեն հնանում, որովհետև նորացող կյանքը նորացնում է նաև սրանց, ինչպես որ նորանում են առավոտները:

- 1) 3, 4, 2, 1
- 2) 4, 3, 1, 2
- 3) 3, 2, 4, 1
- 4) 1, 2, 3, 4

**22. Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում շարադրանքի (տեքստի) տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

1. Տերության մայրաքաղաքը՝ Արտաշատը, մնացել էր ընդարձակված Մեծ Հայքի հյուսիսային մասում, և այդ պատճառով արքան մ.թ.ա. 80 թվականին կառուցեց մի ուրիշ մայրաքաղաք՝ Տիգրանակերտը, որն Աղձնիք աշխարհում էր՝ Վանա լճից հարավ:
2. Անցավ երկու տարի, և Տիգրան Երկրորդը, գաղնկեց անելով Սելևկյաններին, մ.թ.ա. 83 թվականին նվաճեց Սիրիան ու Կիլիկիան՝ այդ հատվածում փոխարքայի կարգավիճակ տալով հայ գորավար Բագրատին:
3. Նա միավորեց իր տարածքներին Ծովքը ( մ.թ.ա. 94թ.) և Կապադովկիան, որոնք գտնվում էին Հռոմի հովանավորության տակ, մ.թ.ա. 86 թվականին պարթևներից հետ վերցրեց Հայկական Միջագետքը, որտեղ հնուց իշխում էր Աբգարյանների-Երվանդունիների հայկական դինաստիան, նաև իրեն միացրեց Ատրպատականը:
4. Մեծ Հայքի արքա Տիգրան Մեծը վարում էր երկրի տնտեսական զարգացման և պաշտպանունակության հզորացման, ինչպես նաև մյուս հայկական թագավորությունները Հռոմի և պարսիկների տիրապետությունից ազատելու քաղաքականություն:

- 1) 3, 4, 1, 2
- 2) 4, 2, 1, 3
- 3) 3, 1, 2, 4
- 4) 4, 3, 2, 1

**23. Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում շարադրանքի (տեքստի) տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

1. Հետագայում անսովոր երևույթները գրավել են Կալիֆոռնիա այցելող զբոսաշրջիկների կամ նույն վայրում ամառանոց կառուցող ինժեներների ուշադրությունը: Այստեղ մարդիկ իրենց իրական հասակից ավելի բարձր կամ ցածր են թվացել, իսկ մի քանի անգամ վերակառուցված տունը այդպես էլ ուղիղ չի կանգնել, թեև հարթաչափը բազմիցս ցույց է տվել ուղիղ հարթություն:
2. Վերջին տարիներին կատարված դիտարկումները ցույց տվեցին, որ նման վայրեր կան երկրագնդի տարբեր տեղերում: Սակայն հարկ է նշել, որ դրանք հայտնաբերելը այնքան էլ հեշտ չէ, քանի որ նման անոմալիաները գործում են խիստ սահմանափակ տարածքներում:
3. Երկիր մոլորակը, որքան էլ ուսումնասիրված, այնուամենայնիվ դեռ բազում գաղտնիքներ ունի մեզ համար, գաղտնիքներ, որոնք ուղղակի հնարավոր չէ բացատրել մերօրյա գիտության զարգացման մակարդակով:
4. Մոլորակի ամենաառեղծվածային վայրերից մեկը, որն առաջին անգամ բացահայտել են դեռ հնդկացիները, գտնվում է Կալիֆոռնիայում. այստեղ ֆիզիկայի մի քանի օրենքներ պարզապես չեն գործում, քանի որ գնդերը թեք հարթությամբ գլորվում են ոչ թե ներքև, այլ վերև, առարկաները, որոնք պետք է կանգնեն ուղիղ, անկյամբ թեքված են գետնի վրա, իսկ մարդիկ կարող են քայլել պատերով:

- 1) 4, 2, 3, 1
- 2) 3, 2, 4, 1
- 3) 4, 2, 1, 3
- 4) 3, 4, 1, 2

**24. Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում շարադրանքի (տեքստի) տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

1. Մեկ ուրիշ աղետ էր այն, որ ճառելիս նա ուսը անճոռնի ձևով ցնցելու սովորույթ ուներ, ու դրանից ազատվելու համար նա առաստաղից սուր էր կախում ուղիղ ուսի ուղղությամբ, որ այն իր ծակոցներով զսպի անհարկի շարժումները:
2. Մանկության տարիներին Դեմոսթենեսը թուլակազմ էր ու հիվանդոտ, հասուն տարիքում էլ նա ծաղրվում էր թույլ առողջության, թվատության, երկչոտության ու ամբոխի առաջ խոսելու անկարողության պատճառով:
3. Նրա համառ պարապմունքները տևում էին մինչ կեսգիշեր կամ ավելի, ու իր փորձերի ընթացքում նա միայն ջուր էր խմում՝ կայտառությունը երկար պահպանելու նպատակով:
4. Բայց նրա մեջ մանկուց մնացել էր հռետոր դառնալու ձգտումը, և թերությունները վերացնելու համար նա գնում էր ծովափ, փոթորկի ժամանակ խոսում ծովի ու քամու հետ՝ ընտելացնելով իրեն աղմուկին զուգընթաց խոսելուն:

- 1) 2, 4, 1, 3
- 2) 3, 2, 1, 4
- 3) 2, 1, 4, 3
- 4) 3, 4, 2, 1

**25. Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում շարադրանքի (տեքստի) տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

1. Տիգրան Երկրորդի տերությունը առավելապես ընդարձակվել էր հարավից: Արտաշատը, ինչպես և հինգ հարյուր հազար բնակիչ ունեցող Անտիոքը գտնվում էին նոր տերության հյուսիսային և հարավային մասերում և որպես մայրաքաղաք հարմար չէին:
2. Այն շրջապատված է եղել քսանհինգ մետր բարձրություն ունեցող պաշտպանական հզոր պարիսպներով, պալատը՝ լճերով ու զբոսայգիներով, ունեցել է միջնաբերդ և բազմաթիվ այլ կառույցներ: Կարճ ժամանակում Տիգրանակերտը դառնում է Հայաստանի և Առաջավոր Ասիայի շքեղ, բազմամարդ ու հարուստ քաղաքներից մեկը:
3. Տիգրանակերտը պատմական Հայաստանի արքայանիստ քաղաքն էր Ադճնիք նահանգում: Հայկական բանակի գլուխն անցած՝ Տիգրան Մեծը իրար հետևից հնազանդեցնում է հարևան մեծ ու փոքր թագավորությունները՝ Հայաստանի սահմանները հասցնելով Սիջերկրական ծովից մինչև Կասպից ծով, Քուռ գետից մինչև Սիջազետը:
4. Մ.թ.ա. 70-ական թվականներին Ադճնիքում՝ Արևմտյան Տիգրիսի ձախակողմյան վտակ Քաղիթթ գետի հովտում, հիմնադրվում է նոր մայրաքաղաք Տիգրանակերտը: Ըստ հույն պատմագիր Ապիանոսի՝ քաղաքը կառուցվում է Տիգրանի թագադրության վայրում:

- 1) 3, 2, 4, 1
- 2) 3, 1, 4, 2
- 3) 2, 1, 3, 4
- 4) 1, 3, 2, 4

**26. Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում շարադրանքի (տեքստի) տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

1. Այն ժամանակներում նրանք չգիտեին նաև, թե ինչ բան է սև երկաթը: Մեփական ձեռքերով էին միմյանց ոչնչացնում պղնձի դարի մարդիկ: Նրանք շատ շուտով անցան սոսկումնալի Հադեսի մթին թագավորությունը, և սև մահը հափշտակեց նրանց:
2. Այդ ցեղի՝ սովերների աշխարհն անցնելուց հետո է միայն, որ մեծն Ջևան իսկույն ստեղծեց չորրորդ դարը և մարդկային նոր ցեղը, առավել ազնիվ ու արդարամիտ, աստվածների հավասար կիսաստված հերոսների ցեղը:
3. Պղնձի դարի մարդիկ սիրեցին գոռոզությունը, սիրեցին հեծեծանքներով լեցուն պատերազմները: Հողագործություն չգիտեին ու չէին էլ ուտում երկրի պտուղները, որոնք այդպես ու հողն էր տալիս:
4. Հայր Ջևան ստեղծեց երրորդ ցեղը և երրորդ՝ պղնձի դարը: Սա նման չէր արծաթի դարին: Նիզակի կոթունից Ջևան ստեղծեց ահռելի ու զորեղ մարդիկ:

- 1) 1, 3, 4, 2
- 2) 4, 3, 1, 2
- 3) 4, 1, 2, 3
- 4) 3, 2, 4, 1

**27. Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում շարադրանքի (տեքստի) տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

1. Նա ստեղծել է շարքեր, որոնք կազմված են ոչ միայն թեմատիկ և գաղափարական միասնության սկզբունքով, այլև ոճով, տրամադրությունների, քնարական հույզերի, մոտիվների հարազատությամբ ու ընդհանրությամբ:
2. Տերյանը, որ քաջ ծանոթ էր ֆրանսիական և ռուս խորհրդապաշտների ձեռքբերումներին, լավագույնս օգտագործեց դրանք և հայ գրականության մեջ զարգացման բարձր աստիճանի հասցրեց շարային մտածողության սկզբունքը:
3. Այսպիսով, տերյանական շարքերն ըստ էության բաժիններ են, որոնցից և կազմվում է բանաստեղծությունների գիրքը: Տերյանը քնարերգակ է: Շատ ճիշտ է նրա քնարերգությանը տրված իսահայկյանական բնութագրությունը՝ «մաքուր լիրիկա»:
4. Այն պահանջում էր շարքի բանաստեղծությունները քննել միմյանց հետ ունեցած սերտ կապակցության ու հարազատության մեջ: Ճիշտ է, շարքի մեջ մտնող յուրաքանչյուր բանաստեղծություն ունի ինքնուրույն գեղարվեստական արժեք, սակայն այն միայն շարքի մեջ է լրիվ բացահայտված:

- 1) 1, 3, 2, 4
- 2) 2, 1, 4, 3
- 3) 2, 3, 1, 4
- 4) 3, 2, 4, 1

**28. Ո՞ր միտքն է հակասում շարադրանքի բովանդակությանը:**

Եղջերուները կենդանիների մի մեծ խումբ են: Այդ խմբի մեջ մտնում են և՛ հյուսիսային եղջերուն, և՛ Եվրոպայի անտառների բնակիչը՝ այծյամը, և՛ հեռավորարևելյան ու սիբիրական մարալները, և՛ հյուսիսարևելյան վիրջինյան եղջերուները, և՛ որմզդեղներն ու եղնիկները: Ամենահետաքրքիրը, թերևս, հյուսիսային եղջերուներն են: Նրանք հիանալի հարմարվել են դաժան պայմաններում ապրելուն: Օրինակ՝ ձմռանը ձյունների միջով քայլելը դժվար է. թաղվում են ձյան մեջ, իսկ հյուսիսային եղջերուները չեն թաղվում, որովհետև նրանց լայն կճղակներն օգնում են ազատ տեղաշարժվելու թե՛ ձյան վրա, թե՛ ճահճուտներում: Հյուսիսային եղջերուների բուրդը ևս առանձնահատուկ է: Մազաթելի հաստ միջուկը լցված է օդով, իսկ օդը լավ է պահպանում մարմնի ջերմությունը: Այդ պատճառով էլ նույնիսկ ուժեղ քամու ժամանակ մորթին եղջերուին հուսալիորեն պաշտպանում է ցրտից: Բոլոր տեսակի եղջերուների միայն արուններն են, որ եղջյուրներ ունեն, մինչդեռ հյուսիսային եղջերուների թե՛ արունները, թե՛ էգերը եղջյուրներ ունեն: Հյուսիսային ժողովուրդները վաղուց ի վեր ընտանի եղջերուներ են բուծում, և դրանք հյուսիսի բնակիչների համար փոխարինում են թե՛ ոչխարին, թե՛ կովին ու ձիուն:

- 1) Չյան վրա քայլելուն հարմարված են միայն հյուսիսային եղջերուները, որովհետև նրանց կճղակները ավելի լայն են մյուս կենդանիների կճղակներից:
- 2) Բացի հյուսիսային եղջերուներից, այս խմբի կենդանիների միայն արունները եղջյուրներ ունեն:
- 3) Հյուսիսային եղջերուների մարմնի ջերմությունը պահպանվում է նրանց բրդի մազաթելի՝ օդով լցված հաստ միջուկ ունենալու առանձնահատկության շնորհիվ:
- 4) Գոյություն ունեն աշխարհագրական տարբեր վայրերում բնակվող, միմյանցից արտաքին տեսքով տարբերվող, ինչպես նաև ընտանի և վայրի տեսակների եղջերուներ:

**29. Ո՞ր միտքը չի հակասում տրված բովանդակությանը:**

Որտե՞ղ են գտնվում խորտակված նավերը

Տարածված է այն կարծիքը (նույնիսկ նավաստիների մեջ), իբրև թե օվկիանոսում խորտակված նավերը չեն հասնում հատակին, այլ անշարժ կախված են մնում որոշ խտության մեջ, որտեղ ջուրը համապատասխան չափով խտացած է վերևի շերտերի պատճառով:

Ճի՞շտ է արդյոք այսպիսի պնդումը:

Կարծես թե դրա համար որոշ հիմք կա, քանի որ օվկիանոսի խորքերում ջրի ճնշումն իրոք հսկայական աստիճանների է հասնում. 10 մ խորության մեջ ջուրն ընկղմված մարմնի 1 սմ քառակասու վրա ճնշում է 1 կգ ուժով, 1000 մ-ում՝ 100 կգ ուժով: Իսկ օվկիանոսը շատ դեպքերում մի քանի կմ խորություն ունի: Խաղաղ օվկիանոսի ամենախոր մասերում խորությունը հասնում է ավելի քան 11 կմ-ի (Մարիանյան իջվածքը): Թվում է, թե բնական կլիմի, եթե այդքան հրեշավոր ճնշումը մեծ խորություններում այնպես խտացնի ջուրը, որ նույնիսկ ծանր առարկաները չսուզվեն նրա մեջ, ինչպես երկաթե կշռաքարը չի սուզվում սնդիկի մեջ:

Սակայն այդպիսի կարծիքը միանգամայն անհիմն է: Փորձը ցույց է տալիս, որ ջուրը, ինչպես և ընդհանրապես բոլոր հեղուկները, քիչ է ենթարկվում սեղմման, ուստի օվկիանոսների խորության մեջ ջրի ինչ-որ չափով նկատելի խտացման մասին խոսել բոլորովին պետք չէ: Օվկիանոսի ամենախոր տեղում ջուրը խտացած է իր նորմալ խտության ընդամենը 5%-ով: Դա գրեթե չի կարող ազդել նրա մեջ զանազան մարմինների լողալու պայմանների վրա, մանավանդ որ այդպիսի ջրի մեջ խորասուզված պինդ մարմիններն էլ են ենթարկվում այդ ճնշմանը և, հետևաբար, նույնպես խտանում են: Ուստի նվազագույն կասկած իսկ չի կարող լինել, որ բոլոր խորտակված նավերը գտնվում են օվկիանոսի հատակին:

- 1) Օվկիանոսներում 1000 մ խորության վրա ջուրը հասնում է սնդիկի խտության:
- 2) Խաղաղ օվկիանոսում խորտակված բոլոր նավերը գտնվում են նրա ամենախոր մասում՝ Մարիանյան իջվածքում:
- 3) Կասկած չկա, որ օվկիանոսի ստորին շերտերում ահռելի չափերի հասնող ճնշումը այնպես է խտացնում ջուրը, որ նույնիսկ ծանր առարկաները չեն սազվում նրա մեջ:
- 4) Նույնիսկ նավաստիների մեջ կան այնպիսիք, ըստ որոնց՝ օվկիանոսում խորտակված նավերը անշարժ կախված են մնում որոշ խորության մեջ:

**30. Ո՞ր միտքն է հակասում տրված բովանդակությանը:**

Երկիրն Արեգակնային համակարգի չորս փոքր և կարծր մոլորակներից մեկն է և ունի մեկ բնական արբանյակ՝ Լուսինը: Կան ևս չորս՝ առավել խոշոր, գազակազմ մոլորակներ, որոնք ավելի հեռու են Արեգակից: Վերջին՝ իններորդ մոլորակը՝ Պլուտոնը, սառցե գունդ է, որը Լուսնից էլ փոքր է: Յուպիտերը՝ ամենախոշոր մոլորակը, 1330 անգամ մեծ է Երկրից:

Ամենահեռավոր գազային հսկա մոլորակ Նեպտունի մեկ պտույտն Արեգակի շուրջը տևում է 165 տարի, իսկ հեռավորությունը մոտ 4500 մլն կիլոմետր է:

Պլուտոնն Արեգակից 40 անգամ ավելի հեռու է, քան Երկիրը:

- 1) Ամենախոշոր մոլորակը՝ Յուպիտերը, ավելի մոտ է Արևին, քան Պլուտոնը:
- 2) Արեգակնային համակարգում կա Երկրի բնական արբանյակից ավելի փոքր մոլորակ:
- 3) Արեգակնային համակարգի ամենահեռավոր մոլորակը Նեպտունն է:
- 4) Արեգակնային համակարգի հսկա մոլորակներից չորսը գազակազմ են:

**31. Ո՞ր միտքը չի հակասում տրված բովանդակությանը:**

«Սիրող քարը»

Չինացիներն այսպիսի բանաստեղծական անուն են տվել բնական մագնիսին: Նրանք ասում են, որ «սիրող քարը»՝ չինարեն տշու-շի, երկաթը ձգում է այնպես, ինչպես քնքուշ մայրը գրկում է իր զավակներին:

Հետաքրքիր է, որ ֆրանսիացիներն էլ, որ ապրում են մայրցամաքի հակադիր ծայրում, նման անուն են տվել մագնիսին. ֆրանսիական «aimant» բառը նշանակում է և՛ մագնիս, և՛ սիրող:

Բնական մագնիսների այդ «սիրող» ուժը չնչին է. այս առումով շատ միամիտ է հնչում մագնիսի հունական անունը՝ «հերկուլեսյան քար»: Եթե Հին Հունաստանի բնակիչներն այդքան զարմացել են բնական մագնիսի ձգողության մեղմ ուժից, ապա ի՞նչ կասեին նրանք, եթե տեսնեին ժամանակակից մետաղագործական գործարանի՝ հոսանքով մագնիսացող էլեկտրամագնիսները, որոնք տոննայանոց մեծաբեկորներ են բարձրացնում:

- 1) Ֆրանսիացիները, կրկնօրինակելով չինացիներին, մագնիսին «սիրող քար» են անվանել:
- 2) Ֆրանսերենում «aimant» բառը երկու նշանակություն ունի՝ մագնիս և սիրող:
- 3) Հին հույները բնական մագնիսին «հերկուլեսյան քար» են անվանել, քանի որ դրա ձգողության ուժը չնչին է:
- 4) Մագնիս բառը չինարեն է և նշանակում է սիրող քար:

**32. Ո՞ր միտքը չի հակասում տրված բովանդակությանը:**

Հնդկեղեգը շատ թեթև, ճկուն և ամուր խոտաբույս է: Աճում է տաք երկրներում, և թեև նրա հիմքի հաստությունը սովորաբար 30 սմ-ից չի անցնում, սակայն որոշ հնդկեղեգներ աճում հասնում են մինչև 40 մ բարձրության: Հնդկեղեգն աճում է տաք երկրներում, ուր շատ են արևն ու խոնավությունը: Հաճախ այն անանցանելի մացառուտներ է առաջացնում. բներն այնքան մուտ են լինում միմյանց, որ նման անտառով չես անցնի: Ընդ որում, այդ մացառուտները կարող են առաջանալ այնտեղ, ուր մի քանի օր առաջ ոչինչ չկար: Կովկասում աճող հնդկեղեգի հասակը մեկ օրվա ընթացքում ավելանում է 75 սմ-ով, իսկ իր հայրենիքում՝ Վիետնամում աճող հնդկեղեգինը՝ անգամ մինչև 2 մ-ով:

Հնդկեղեգը լայնորեն կիրառում են տնտեսության մեջ. նրանից տներ, կամուրջներ, ջրմուղներ են կառուցում, կահույք ու թուղթ պատրաստում, իսկ մատղաշ ընձյուղները օգտագործում են նաև սննդի մեջ:

- 1) Հնդկեղեգի աճման համար բարենպաստ պայմաններ են տաքությունն ու խոնավությունը:
- 2) Հնդկեղեգի ծառերը սովորաբար միայնակ են աճում:
- 3) Հնդկեղեգի մատղաշ ընձյուղները շատ հարմար են կահույք կամ թուղթ պատրաստելու, ինչպես նաև սննդի մեջ օգտագործելու համար:
- 4) Հնդկեղեգի հայրենիքում՝ Վիետնամում միայն կարող են հանդիպել 40 մ բարձրության հասնողներ:

**33. Ո՞ր միտքը չի հակասում տրված բովանդակությանը:**

Ըստ պատմական մի աղբյուրի՝ մ.թ.ա. IV դարից գալլերը, որոնք իրենց տեսքով իսկ սարսափ էին ազդում, հարձակումներ ձեռնարկելով Հռոմի վրա, ի վերջո ցիրուցան են անում հռոմեացիների զորքը ու գրավում Հռոմը: Թալանից ու հրկիզումներից փախած բնակիչների մի մասը թաքնվում է անառիկ Կապիտոլիումում՝ հետ մղելով գրոհները: Սակայն գիշերը, երբ գալլերը կրկին մագլցում են Կապիտոլիումի բլուրը, ոչ՝ պահապանները, ոչ՝ շները ոչինչ չեն լսում: Միայն սագերն են լսում թշնամու գալը և կոնչոցներով արթնացնում զինվորներին: Այստեղից էլ առաջացել է «սագերը փրկեցին Հռոմը» արտահայտությունը:

- 1) Մ.թ.ա. IV դարից գալլերը, հռոմեական զորքերի հարձակումներին դիմակայելով, ի վերջո հաջող հակահարվածով մտնում են Հռոմ և գրավում Կապիտոլիումի բլուրը:
- 2) Մ.թ.ա. IV դարում Հռոմ ներխուժած գալլերի գիշերային հարձակումը Կապիտոլիումի վրա խափանում են սագերը, որոնք կռիվներով արթնացնում են քնած զինվորներին:
- 3) Մ.թ.ա. VI դարում գալլերը, հարձակվելով և գրավելով Հռոմը, գիշերային գրոհով ներխուժում են Կապիտոլիումի բլուրը՝ այնտեղ գտնելով քնած գիշերապահներին և Հռոմը փրկած սագերին:
- 4) «Սագերը փրկեցին Հռոմը» արտահայտությունը առաջացել է գալլերի՝ մ.թ.ա. VI դարում Հռոմի դեմ կատարած արշավանքի ժամանակ, երբ Կապիտոլիումի բլրի վրա սագերը միայնակ էին:

**34. Ո՞ր միտքն է հակասում շարադրանքի բովանդակությանը:**

1-ին դարի հռոմեացի բնագետ Պլինիոս Ավագը հավաստում է, որ Հայաստանից համաշխարհային շուկա արտահանվող հիմնական ապրանքների ցուցակն սկսվում էր որդան կարմիրով: Նրա մասին բազմաթիվ վկայություններ կան նաև հայ պատմիչների երկերում: Այն համարվել է աշխարհի ամենագեղեցիկ ներկը, կոչվել է «արքայական ծիրանի», որովհետև նրանով էին ներկում արքայական ու իշխանական հանդերձները: Հայկական որդան կարմիրով է հիմք դրվել «կարմիր թանաքով» ստորագրությանը, որը արքաների ու կաթողիկոսների մենաշնորհն էր:

- 1) Որդան կարմիրի մասին վկայություններ կան ոչ միայն հայ, այլև օտար պատմիչների երկերում:
- 2) Ըստ հռոմեացի բնագետ Պլինիոս Ավագի՝ հայկական որդան կարմիրը համաշխարհային շուկայում համարվում էր համար մեկ ապրանքանիշ:
- 3) Որդան կարմիրը կոչել են նաև «արքայական ծիրանի» արքայական հանդերձները նրանով ներկելու պատճառով:
- 4) «Կարմիր թանաքով» ստորագրում էին միայն տարբեր երկրների արքաներն ու կաթողիկոսները:

**35. Ո՞ր միտքն է հակասում շարադրանքի բովանդակությանը:**

Ուղտին անապատի նավ են անվանում: Եվ իսկապես, երկար ժամանակ ընտանի ուղտերը անապատների միակ փոխադրամիջոցն էին: Այս դիմացկուն կենդանին լավ հարմարվել է անապատային կյանքին: Ուղտը բոլորովին պահանջկոտ չէ կերի նկատմամբ. նա բավարարվում է փշոտ թփերով, որ ուրիշ կենդանիներ չեն ուտում: Բայց այդ համեստ կերն անգամ նպաստում է, որ ուղտի սապատներում ճարպի պաշար կուտակվի: Սնվելով այդ պաշարով՝ ուղտը կարող է մի քանի օր առհասարակ ոչինչ չուտել: Այս կենդանին բավարարվում է ջրի քիչ քանակով և կարող է խմել նաև աղի ջուր:

- 1) Ուղտն ուտում է մյուս կենդանիների համար ոչ ուտելի բույսեր:
- 2) Ուղտին անապատի նավ են անվանում անապատում երկար ժամանակ եզակի փոխադրամիջոց լինելու պատճառով:
- 3) Քանի որ ուղտը շատ քիչ է ուտում, այդ պատճառով էլ շատ քիչ ջուր է խմում, այն էլ աղի:
- 4) Ուղտը կարող է մի քանի օր առհասարակ ոչինչ չուտել՝ ի հաշիվ սապատներում կուտակված ճարպի պաշարի:



**36. Ո՞ր միտքն է հակասում շարադրանքի բովանդակությանը:**

Մխիթար Գոշի «Գատաստանագիրքը» հայ իրավունքի նշանավոր հուշարձաններից է, որը կազմվել է 1184 թ. (Ճիշտ անվանումն է՝ «Գիրք դատաստանի»): Այն նպատակ է ունեցել մեղմելու դասակարգային հակասությունները, բարձրացնելու ժողովրդի ազգային-ազատագրական ոգին: «Գիրք դատաստանին» ամրապնդել է տիրապետող կարգերն ու դասային արտոնությունները, պաշտպանել եկեղեցու դիրքը: Այն կիրառվել է նաև Հայաստանի սահմաններից դուրս, հատկապես այն գաղութներում, որտեղ հայ համայնքը ձեռք է բերել ներքին ինքնավարության իրավունք: Սուդանում այսօր էլ պետական դատարանը կիրառում է «Գիրք դատաստանին» հայ համայնքի անդամների քաղաքացիական գործեր լսելիս: Գոշի «Գատաստանագիրքը» այսօր էլ բացառիկ կարևոր նշանակություն ունի միջնադարյան Հայաստանի ներքին կյանքին վերաբերող տեղեկություններ հաղորդելու առումով:

- 1) Գոշի «Գատաստանագիրքը» ամրապնդում էր տիրապետող կարգերը, մեղմում դասակարգային հակասությունները:
- 2) Սուդանի դատարաններն այսօր էլ քաղաքացիական բոլոր գործերը լսելիս հիմնվում են Մխիթար Գոշի «Գատաստանագիրքի» վրա:
- 3) Գոշի «Գատաստանագիրքը» մեզ արժեքավոր տեղեկություններ է հաղորդում միջնադարում հայ ժողովրդի ներքին կյանքի վերաբերյալ:
- 4) Գոշի «Գատաստանագիրքը» հայ իրավունքի նշանավոր հուշարձաններից մեկն է, որը կազմվել է 12-րդ դարի վերջին:

**37. Ո՞ր միտքը չի հակասում տեքստի բովանդակությանը:**

Բոլորը գիտեն, որ խլացած Բեթհովենը երաժշտություն էր գրում, իսկ ռուս դերասան Օստուժկը լսողությունը կորցնելուց հետո էլ մնաց բեմի վրա՝ ապշեցնելով իր երկրպագուներին: Սակայն քչերն են ճանաչում 1948 թվականին մահացած Լինա Պոլին, որը, ամբողջովին կորցնելով տեսողությունը, շարունակում էր հիանալի քանդակել և ավելի քան հարյուր քանդակ էր ստեղծել այդ վիճակում: Նրան հաջողվում էր միանգամայն անխաթար, առանց որևէ մանրամասն բաց թողնելու մարմնավորել իր մտահղացումները նյութականորեն:

- 1) Տեսողական և լսողական ունակությունների կորուստը անդառնալի է:
- 2) Որքան էլ ապշեցուցիչ է, բայց ռմանք կուրանալուց հետո անգամ կարողանում են զբաղվել քանդակագործությամբ:
- 3) Երբեմն լսողությունը կորցնելուց հետո էլ շատերը կարողանում են երգել և երաժշտություն գրել, ինչպես Բեթհովենը:
- 4) Տեսողության կորուստը Օստուժկին բնավ չխանգարեց, որ շարունակի բեմական գործունեությունը:

**38. Ո՞ր միտքը չի հակասում տրված բովանդակությանը:**

Գալակտիկան մի հսկայական համակարգ է՝ կազմված տարբեր երկնային մարմիններից, հիմնականում աստղերից, որոնց թիվը շուրջ 200 միլիարդ է: Այս համակարգում է գտնվում մեր Արեգակը: Քանի որ կան մման այլ համակարգեր ևս, ապա «գալակտիկա» անունը մյուսներից տարբերելու համար գրվում է մեծատառով: Գալակտիկայում, բացի աստղերից և նրանց ֆիզիկական խմբերից (աստղակույտեր, բազմաստղեր), հանդիպում են գազափոշային նյութից կազմված դիֆուզ (ցրված), մոլորակաձև և գիսավոր միգամածություններ:

- 1) Արեգակնային համակարգում կան բազմաթիվ գալակտիկաներ, միգամածություններ:
- 2) Դիֆուզ, մոլորակաձև և օղակաձև միգամածությունները, ունենալով հսկայական չափեր, իրենց մեջ են ներառում գալակտիկաները:
- 3) Մոտ 200 միլիարդ աստղեր պարունակող Գալակտիկայի մարմիններից մեկն է Արեգակն է:
- 4) Մեր Գալակտիկան արևի շուրջ պտտվող մարմիններից մեկն է:

**39. Ո՞ր միտքն է հակասում շարադրանքի բովանդակությանը:**

Դանիել Վարուժանը շարունակ փոխում է քնարի լարերը, նորոգում իր արվեստը: Այլ խոսքով՝ նրա ստեղծագործությանը բնորոշ են ընդգրկման արտակարգ լայնություն և թեմատիկ բազմազանություն, որը պատմական անցյալից հասնում է մինչև ներկան, հսկա քաղաքից մինչև գյուղի հովվերգությունը: Դրա ցայտուն արտահայտությունն է «Հացին երգը»: Այս գրքում քերթողը նպատակ չի դրել տալու ժամանակի գյուղի համակողմանի պատկերը՝ իր խնդիրներով և հակասություններով: Նրան առավել զբաղեցրել է բնականության, հողի ու մարդու ներդաշնակության հարցը: Եթե «Հեթանոս երգեր»-ի «Գողգոթայի ծաղիկներ» շարքում քաղաքը մռայլ գույներով է պատկերվում, ապա «Հացին երգը» ազատ, ծաղկուն հայրենիքի, նրա կենսարար ոգու գովերգումն է:

- 1) Դանիել Վարուժանը տվել է գյուղի հովվերգական պատկերը՝ նպատակ ունենալով ներկայացնելու դրա միայն դրական կողմերը:
- 2) Դանիել Վարուժանի ստեղծագործությանը բնորոշ են թեմաների բազմազանություն, տարբեր դարաշրջաններ պատկերող նյութի ընդգրկում:
- 3) Վարուժանը «Գողգոթայի ծաղիկներ» շարքում մռայլ գույներով է պատկերել քաղաքը:
- 4) Բանաստեղծը ճշմարիտ կերպով պատկերել է թե՛ քաղաքի և թե՛ գյուղի կյանքը՝ բոլոր հակասություններով ու խնդիրներով:

**40. Ո՞ր միտքն է հակասում շարադրանքի բովանդակությանը:**

Հայերենում **վեպ** բառը կիրառվել է դեռևս Մ. Խորենացու գրքում պատմություն իմաստով, իսկ վիպել նշանակել է պատմել: Ավելի ուշ **վեպ** բառը կիրառվել է նաև էպոսի իմաստով, և ազգային վեպ ասելով՝ հասկացել են ժողովրդական էպոս: Ներկայումս **վեպ** է կոչվում պատմողական ժանրերից մեկը, որն ունի մեծ ծավալ, հասարակական ու անհատական կյանքի լայն ընդգրկում: Գրական մյուս ժանրերի համեմատ վեպի հնարավորություններն ավելի լայն են. այն կարող է ունենալ սյուժետային ոչ թե մեկ, այլ մի քանի գծեր, կարող է ընդգրկել հրապարակախոսական կամ փիլիսոփայական դատողություններ, քննարկական շեղումներ, պատմական տեղեկություններ և այլն:

- 1) Վիպասանը երբեմն կիրառում է քննարկական շեղումներ, հաղորդում է պատմական տեղեկություններ:
- 2) Վեպը պատմողական ժանրերից մեկն է. վեպի համար նյութ կարող է դառնալ ինչպես հասարակության, այնպես էլ որևէ անհատի կյանքը:
- 3) Վեպում պարտադիր են հրապարակախոսական և փիլիսոփայական դատողությունները:
- 4) Նախկինում վեպ նշանակել է պատմություն կամ էպոս:

**41. Ո՞ր միտքն է հակասում շարադրանքի բովանդակությանը:**

Պատանի Ալեքսանդրը միշտ տխրում էր՝ լսելով Փիլիպոս II-ի հաղթանակների մասին: Նա մտածում էր, որ հայրը կհասցնի գրավել ամեն ինչ, իսկ իրեն չի հաջողվի կատարել որևէ մեծ ու փառավոր գործ: Գորդիս քաղաքում մարտակառքի վրա խճճված հանգույց էր արված, որ կոչում էին Գորդյան հանգույց: Ասում էին, թե այդ հանգույցը քանդողը դառնալու էր Ասիայի տիրակալը: Շատերի թվում այն փորձեց քանդել և Ալեքսանդրը, ու երբ չստացվեց, նա սրով կտրեց այն: Այդտեղից էլ առաջացավ «Գորդյան հանգույցը կտրել» արտահայտությունը, որ նշանակում է վճռականորեն վերջ տալ որևէ խճճված հարցի: Ալեքսանդրը պատմության մեջ մնաց որպես ամենաերիտասարդ ու սիրված աշխարհակալը, որն իր զինվորի հետ կրում էր ռազմական բոլոր դժվարությունները, անգամ անապատում ջուր չէր խմում, քանի որ այն չէր բավարարում զինվորներին, իսկ մենակ խմելը փոքրագույնում էր համարում:

- 1) Ալեքսանդր Մակեդոնացին մեկ հարվածով կտրել էր մարտակառքի վրա արված խճճված հանգույցը:
- 2) Ալեքսանդրը վախենում էր, որ իրեն չի հաջողվի հռչակվել ավելի, քան հռչակվել է հայրը:
- 3) «Գորդյան հանգույց»-ը կապված է Մակեդոնացու անվան հետ:
- 4) Ալեքսանդրը իր զինվորների հետ կիսում էր պատերազմական դրության անհարմարությունները:

**42. Ո՞ր միտքն է հակասում շարադրանքի բովանդակությանը:**

Գայանեն, ըստ ավանդության, քրիստոնյա կույսերի մայրապետն էր, որի անունով էլ կոչվում է վանքը: Այն գտնվում է Արմավիրի մարզում՝ Էջմիածնի հարավային ծայրամասում: Ըստ Ագաթանգեղոսի՝ վկայարանը հիմնադրել է Գրիգոր Լուսավորիչը չորրորդ դարի սկզբին: Վանքը կառուցվել է յոթերորդ դարի առաջին կեսին Եզր կաթողիկոսի կողմից:

Ըստ ավանդության՝ հռոմեական կայսր Դիոկղետիանոսի հալածանքներից խուսափելով՝ Գայանեն Հռիփսիմեի և մյուս ընկերների հետ փախել է Հայաստան: 301 թվականին Վաղարշապատում Գայանեն, ինչպես նաև երեսունվեց կույսեր դառնում են հայոց հեթանոս Տրդատ թագավորի գոհը:

- 1) Գայանեի վանքը քրիստոնեական է:
- 2) Վկայարանի մասին տեղեկություններ է տալիս Ագաթանգեղոսը:
- 3) Գայանեն, Հռիփսիմեն և շատ կույսեր ենթարկվել են հռոմեական կայսեր հալածանքներին:
- 4) Տրդատ թագավորը 301 թ. ընդունում է քրիստոնեությունը Գայանեի և մյուս կույսերի հորդորով:

ԳԼՈՒԽ 7

ՈՃԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

**1. Տարբերակներից քանիստ՞ում համեմատություն կա:**

1. Ու ես հանգույն երփնալուցկի վառող մանկան՝  
Չայն գունաժպիտ տեսնեմ ուրիշ դեմքի մը վրան:
  2. Ջուրը ցայտքեն ծաղիկ-ծաղիկ կը կաթե.  
Վրճիտ, ինչպես լույսե արցունքը մանկան:
  3. Թագուհու հոգին խռովվեցավ, նման ծովափնյա ջրին, որի մեջ հանկարծ գլորվում է լեռան կողերից պոկված քարաժայռ:
  4. Գետակի վրա թեքվել է ուռին  
Ու նայում է լուռ վազող ջրերին:
- 1) մեկում
  - 2) երկուսում
  - 3) երեքում
  - 4) բոլորում

**2. Ո՞ր տարբերակում փոխանունություն կա:**

- 1) Խրատներդ միշտ սիրով եմ լսել ու փորձել եմ հետևել դրանց:
- 2) Վերջերս լսում էի նախագահի՝ ՄԱԿ-ում ներկայացրած բանավոր ելույթը:
- 3) Երբ Կոմիտաս եմ լսում, միտքս ու հոգիս ծաղկում են:
- 4) Ես շնչում եմ միշտ կենդանի Աստծու շունչը ամենուր,  
Ես լսում եմ Նրա անլուռ կանչն ու հունչը ամենուր...

**3. Ո՞ր տարբերակում համեմատություն չկա:**

- 1) Ախր ես ինչպե՞ս վեր կենամ գնամ:  
Ախր ես ինչպե՞ս ուրիշ տեղ մնամ:
- 2) Մի թեթև շառագույն փայլեց յուր այտերի վրա, ինչպես ձմեռվա դժգույն արշալույսը, որ զարկում է ձյունապատ ժայռերին:
- 3) Եվ այնպես հեշտ, այնպես խնդուն  
Մատնում ես ինձ, աշխարհին,  
Մինչ դողում է որպես երդում  
Քո անունն իմ շուրթերին...
- 4) Անոնք այնչա՛փ բռնկեր են, որ կարծես  
Հրդեհն իրենց կ'այրե դաշտերը անհուն:

**4. Ո՞ր տարբերակում փոխաբերություն չկա:**

- 1) Չյունն էլ արևի ջահել համբույրից  
Ուրախ լալիս է դաշտերի վրա:
- 2) Սարի հետևում շողերը մեռան.  
Անուշ դաշտերը պատեց կապույտ մեգ:
- 3) Ջրերն են անվերջ միգում հեկեկում,  
Իմ սիրտն է լալիս կարոտով անհուն:
- 4) Եվ մահամերձն ալ կ'ուզե երկու բան,  
Նախ՝ կյա՛նքը, վերջը՝ լացող մ'իբ վրբան:

**5. Ո՞ր տարրերակում անձնավորում կա:**

- 1) Մանկության երկինքն էր բացվել վրաս,  
Եվ արշալույսներ կային իմ հոգում:
- 2) Այն գիշերն է, այն հուշերն են տրտմաշուք,  
Այն աստղերն են ցուրտ երկնքում երազում...
- 3) Հրա՛շք աղջիկ, գիշերների՛ թագուհի,  
Ճառագայթող քո աչքերով դու եկար...
- 4) Ժայռից մասուր է կաթում,  
Կարմիր սարսուռ է կաթում,  
Ձորում մշուշ է:

**6. Պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցն է գործածված:**

Ձկնիկն առվին խուտուտ տվեց,  
Եվ առուն՝ պարզ ու անբիծ,  
Քրքջալով ուշաթափվեց  
Ու ձորն ընկավ քարափից:

- 1) համեմատություն
- 2) անձնավորում
- 3) հակադրություն
- 4) չափազանցություն

**7. Պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցը գործածված չէ:**

Ճերմակ վարդերի թալուկ թերթերին  
Այսօր վաղորդյան ցողեր են իջել.  
- Այն ո՛վ է արդյոք գիշերում լռին  
Չարկված ու բեկված իր սերը լացել:

- 1) հանգավորում
- 2) համեմատություն
- 3) մակդիր
- 4) ճարտասանական հարց

**8. Պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցն է գործածված:**

Պերճուհին սևեր հագնող աղջիկ մըն է, որ չամուսնանար. իր նշանը ետ եղավ  
առանց պատճառը հասկցվելու:

- 1) համեմատություն
- 2) փոխանունություն
- 3) հակադրություն
- 4) չափազանցություն

**9. Պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցն է գործածված:**

Ինչպես երկիրս անսփռփ, ինչպես երկիրս բախտագուրկ,  
Ինչպես երկիրս՝ ավերակ ու արնաներկ,  
Մխում է սիրտս հիմա որք, մխում է սիրտս բախտագուրկ,  
Մխում է սիրտս՝ ավերակ ու արնաներկ...

- 1) ճարտասանական հարցում
- 2) չափազանցություն
- 3) փոխանունություն
- 4) համեմատություն

**10. Պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցն է գործածված:**

Էնպես զարկեց ջաղացքարին՝  
Քարը եղավ հազար կտոր,  
Կտորները երկինք թռան  
Ու գնում են մինչև էսօր ...

- 1) փոխանունություն
- 2) չափազանցություն
- 3) մակդիր
- 4) համեմատություն

**11. Պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցը գործածված չէ:**

Երկնքի մի շերտ է թրթռում  
Քարափի աչքի մեջ կանաչ,  
Կարոտած ականջ է փնտրում  
Ջրվեժի ճերմակ մի շառաչ:

- 1) մակդիր
- 2) անձնավորում
- 3) համեմատություն
- 4) փոխանունություն

**12. Պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցը գործածված չէ:**

Ճայերը թրջում են ջրի թևերը,  
Ճախրում ու ճշում են օդում,  
Քամին քանդակում է չքնաղ քո թևերը,  
Շոյում է վարսերը քո թուխ:

- 1) շրջադասություն
- 2) համեմատություն
- 3) հանգավորում
- 4) անձնավորում

**13. Պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցը գործածված չէ:**

Թեև շա՛տ էր ծերացել Սաադին, սակայն նրա հոգին երազի աչքերով և ականջով երազի տեսնում էր ու լսում աշխարհի չքնաղ իրերն ու ձևերը, երգերն ու լուրջությունը անհայտ ոլորտների, որովհետև տակավին գրույց էր անում նրա հետ բանաստեղծության կախարդ ոգին:

- 1) անձնավորում
- 2) մակդիր
- 3) համեմատություն
- 4) շրջադասություն

**14. Պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցը գործածված չէ:**

Կխորտակվի ապարանքս գեղանի  
Եվ կծածկվի անապատի շնչի տակ.  
Կբարձրանա անհուն ծովը Սիդոնի,  
Եվ կերգե անապատը ծագեծագ...

- 1) մակդիր
- 2) շրջադասություն
- 3) փոխաբերություն
- 4) համեմատություն

**15. Պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցը գործածված չէ:**

Երեկ՝ տխուր, այսօր՝ ուրախ,  
Ալիքի պես ծափ եմ տալիս,  
Երեկ՝ դեպի անհայտություն,  
Այսօր դեպի ափ եմ գալիս:

- 1) համեմատություն
- 2) հանգավորում
- 3) հակադրություն
- 4) փոխանունություն

**16. Պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցը գործածված չէ:**

Աշնան տխրահեծ անձրևի նման,  
Անձրևի նման լալիս եմ անվերջ՝  
Այն հնչյունները մեղմ ու միաձայն՝  
Պատի հետևում և իմ հոգու մեջ...

- 1) հանգավորում
- 2) անձնավորում
- 3) փոխանունություն
- 4) մակդիր

**17. Պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցը գործածված չէ:**

Երկիր՝ Նաիրի, երազ հեռավոր,  
Քնած ես քնքուշ թագուհու նման.  
Մի՞թե ես պիտի երգեմ քեզ օրոր  
Եվ արքայական դնեմ գերեզման:

- 1) անձնավորում
- 2) ճարտասանական հարց
- 3) շրջադասություն
- 4) փոխանունություն

**18. Գործառական ո՞ր ոճով է շարադրված հետևյալ հատվածը:**

«Սիամանթոյի «Հայորդիներ»-ում սկզբից մինչև վերջ զարգանում է ազատագրության թեման, որի առանցքը դյուցազնական ըմբոստ կերպարի ստեղծումն է: Հեղինակը փառաբանում է պայքարը, սուրը, հայրենիքի համար կախաղան հանված կամ բանտերում տառապող հայորդիներին»,- գրում է Հեկտոր Ռշտունին գրողին նվիրված մենագրության մեջ:

- 1) վարչական
- 2) հրապարակախոսական
- 3) գիտական
- 4) գեղարվեստական

**19. Գործառական ո՞ր ոճով է շարադրված հետևյալ հատվածը:**

Ձկների արծաթագույն գունավորումը դրանցից վերև տարածվող ջրի մակերևույթի գույնին ձկների հարմարվելու արդյունքն է. ներքևից դիտելիս ջրի մակերևույթը հայելային է թվում լրիվ ներքին անդրադարձման հետևանքով: Իսկ այդպիսի ֆոնի վրա արծաթագույն ձկներն աննկատելի են մնում իրենց հետապնդող ջրային գիշատիչների համար:

- 1) հրապարակախոսական
- 2) վարչական
- 3) գիտական
- 4) գեղարվեստական

**20. Գործառական ո՞ր ոճով է շարադրված հետևյալ հատվածը:**

Մեր հրետանին կանգնել էր Մեծամոր բլրի տակ, և նրան չէին օգնում ո՛չ հին մագաղաթները, ո՛չ հիքսոսները, ո՛չ էլ Երկիրը գնդած գիտնականները, և աղերսում էին գեթ Արարատյան հանրապետություն, հովտի գոնե կեսը: Ամբողջ օրը մեր հրետանին քանդուքարափ էր անում մեր Սարդարապատը, ապա տղերքը լծվեցին և եզան պես առանց ձայնի արտասվելով՝ թնդանոթները թիզ առ թիզ քաշեցին Արագածն ի վեր Ապարան: Հետո թշնամին գովել էր, թե այդ հայերը կարծես թե տղամարդ են. կռվում են:

- 1) գիտական
- 2) պաշտոնական
- 3) խոսակցական
- 4) գեղարվեստական

**21. Գործառական ո՞ր ոճով է շարադրված հետևյալ հատվածը:**

Հայկական քաղաքակրթությունը սկիզբ է առել մոտավորապես մ.թ.ա. 40-րդ հազարամյակից: Հազարամյակներով կուտակված գիտելիքները թույլ են տվել մ.թ.ա. 23-րդ հազարամյակում օգտագործել պարզ աստղագիտական գործիքներ, որոշել, որ Արևի ծագման կետը շարժվում է հորիզոնով, վերադառնում նույն կետին 365 օրվա ընթացքում:

- 1) գեղարվեստական
- 2) գիտական
- 3) վարչական
- 4) առօրյա-խոսակցական

**22. Գործառական ո՞ր ոճով է շարադրված հետևյալ հատվածը:**

Ճապոնիայում պատրաստել են էլեկտրոնային մի մեքենա, որը ոչ միայն անգլերենից ճապոներեն է թարգմանում, այլև բարձրաձայն արտասանում է թարգմանած նախադասությունները: Թարգմանիչ մեքենայի բառապաշարը կազմում է 8000 բառ:

- 1) վարչական
- 2) գիտական
- 3) գեղարվեստական
- 4) առօրյա-խոսակցական

**23. Նախադասություններից քանիստ՞ն անձնավորում կա:**

- 1. Սև քրտինք է քամում քարանձավը կրկին,  
Սև երախը բացել և սև ամպ է լափում:
- 2. Երկարեր գիշերն այս աշնանային,  
Երկինքն արտասվեր ու հանգստանար:
- 3. Ամպի լեռներ է փուլ տվել քամին,  
Ծիածաններ է կուլ տվել քամին:
- 4. Ի՞նչ է ասում ճամփորդներին  
Հավված-մաշված այս կաճանը,  
Ժամանակին հազար ու մի  
Քայլեր հաշված այս կաճանը:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) բոլորում



**24. Պատկերավորման-արտահայտչական միջոցներից քանի՞սն են գործածված:**

Սթափվելով ոսկի անուրջներից՝ Սաադին հառաչեց.

- Ավա՛դ, անէացավ հարյուր տարիս մի վայրկյանի պես:

Մահը բախեց դուռը: Ջգալով այդ՝ նա գրեց իր վերջին խոսքերը. «Ծնվում եմք ականա, ապրում եմք զարմացած, մեռնում եմք կարոտով»:

...Սաադի կարդացողները արդեն քանի՞ դար հիանում են այս ասույթով խորինաստ:

1. անձնավորում
2. համեմատություն
3. շրջադասություն
4. փոխանունություն
5. մակդիր

- 1) երկուսը
- 2) երեքը
- 3) չորսը
- 4) բոլորը

**25. Պնդումներից որի՞ մեջ կա սխալ:**

- 1) Վարչական ոճին հատուկ է գրաբարյան նախորդավոր կապակցությունների, ինչպես նաև դերբայական դարձվածների լայն գործածությունը:
- 2) Վարչական ոճին հատուկ են կաղապարված ձևեր (առ այն, ներքոհիշյալ, ի գիտություն և այլն):
- 3) Աչքի է ընկնում ճարտասանական հարցերի հաճախակի գործածությամբ:
- 4) Վարչական ոճով հաղորդակցվում են միայն գրավոր:

**26. Պնդումներից որի՞ մեջ կա սխալ:**

- 1) Համեմատությունը երկու առարկաների կամ երևույթների համադրումն է նրանցից մեկի կամ մյուսի նմանության կամ տարբերության հիման վրա:
- 2) Այն հատկանիշը, որի հիման վրա կատարվում է համեմատությունը, կոչվում է համեմատության հիմք:
- 3) Համեմատությունը հիմնված է բառերի փոխաբերական գործածության վրա՝ ըստ նրանց արտահայտած առարկաների արտաքին նմանության:
- 4) Համեմատության հիմքը երբեմն կարող է բացակայել, խոսքում արտահայտված չլինել:

**27. Պնդումներից որի՞ մեջ կա սխալ:**

- 1) Վարչական ոճին բնորոշ հատկանիշներն են հատուկ բառապաշարի՝ վարչաբանությունների օգտագործումը, փոխաբերությունների, կաղապարային բառակապակցությունների և քերականական ձևերի գործածումը:
- 2) Գեղարվեստական ոճին բնորոշ են խոսքի հուզականությունը, պատկերավորությունը: Իր ամբողջության մեջ գեղարվեստական խոսքը չունի ոճական միասնականություն. նրանում կարող են առկա լինել մյուս բոլոր ոճերի դրսևորումներ:
- 3) Հրապարակային խոսքը պետք է լինի հուզական և կրքոտ, այն պետք է ճիշտ կառուցվի և ունենա սկիզբ կամ մուտք, հիմնամաս, խոսքի ավարտ կամ ամփոփում:
- 4) Գիտական ոճին բնորոշ են խոսքի ճշգրտությունը, տրամաբանական դատողությունները, բառերի գործածությունը ուղղակի իմաստով, տերմինների, մասնագիտական բառերի գործածումը:

**28. Նշված հատկանիշներից ո՞րն է առավել բնորոշ վարչական ոճին.**

- 1) գրական լեզվի կանոնների ոչ պարտադիր պահպանում,
- 2) շարադրանքի կադապարայնություն, կայուն բառակապակցություններով, դերբայական դարձվածներով նախադասությունների լայն կիրառություն,
- 3) տերմինների հաճախակի գործածություն,
- 4) խոսքի արտահայտչական և պատկերավորման միջոցների կիրառություն:

**29. Պնդումներից որի՞ մեջ սխալ կա:**

- 1) Առօրյա-խոսակցական ոճին բնորոշ է անշաղկապությունը:
- 2) Գիտական ոճում երբեմն հանդիպում են փոխաբերական արտահայտություններ:
- 3) Հրապարակախոսական ոճում բացառվում են դարձվածքները, առածները, ասացվածքները:
- 4) Գեղարվեստական ոճը չունի հատկապես իրեն բնորոշ բառապաշար:

**30. Պնդումներից որի՞ մեջ սխալ կա:**

- 1) Հրապարակախոսական ոճի առանձնահատկություններից է խոսողի ընդգծված անձնական վերաբերմունքի արտահայտումից խուսափելը:
- 2) Գիտական ոճին բնորոշ են բազմաբաղադրիչ բարդ նախադասությունները:
- 3) Վարչական ոճի տարբերիչ հիմնական հատկանիշներից է գրաբարյան և աշխարհաբարյան նախդրավոր կապակցությունների գործածությունը:
- 4) Գեղարվեստական ոճում կարող են հանդես գալ բոլոր ոճերի տարրերը:

**31. Պնդումներից քանի՞սն են սխալ:**

1. Գործառական ոճերը վեցն են՝ առօրյա-խոսակցական, վարչական, գեղարվեստական, գիտական, պաշտոնական և հրապարակախոսական:
2. Բաղաձայնությամբ ձայնավոր հնչյունի կրկնությունն է խոսքի որոշակի հատվածում:
3. Բոլոր որոշիչները մակդիրներ են, և բոլոր մակդիրները՝ որոշիչներ:
4. Գիտական ոճը աչքի է ընկնում պատկերավորման-արտահայտչական միջոցների առատությամբ:

- 1) մեկը
- 2) երկուսը
- 3) երեքը
- 4) բոլորը

## ԳԼՈՒԽ 8 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՄԱՍԻՆ

### 1. Ո՞ր հատվածն է միջին հայերենով:

- 1) -Արա՛քս, ինչո՞ւ ձրկանց հետ  
Պար չես բռնում մանկական,  
Դու դեռ ծովը չի հասած՝  
Մըգավոր ես ինձ նըման:
- 2) Մեծցայ, սիրու տէր եղայ,  
երեսիս գոյնըն կու գընայ.  
Մանկտի՛ք, ձեր արևն ասեմ,  
որ սիրուն քարըն չի դիմնայ...
- 3) Բերանն երկթերթի, վարդն ի շրթանց կաթեր,  
Լեզուին շարժողին  
Քաղցրերգանայր տալիդն...
- 4) Ո՛հ, իմ սիրտը կտրատվում է՝  
Տեսանելով այսպես սեր  
Դեպի թշվառ մի հայրենիք,  
Որ ոտնակոխ եղած էր:

### 2. Ո՞ր նախադասությունն է արևմտահայերենով:

- 1) Մեծ պատահարները զիս անտարբեր կը թողուն, բայց մանր դեպքերը՝ չնչին ուրիշների աչքին, լուրջ խորհրդածություններու նյութ են ինձի:
- 2) Եթե հույս ունինք ապագայի վերա, նորա երևեցուցիչը դուք եք, ձեզանից կախվում է ազգի ապագան և ձեր վերա է միակ հույսը:
- 3) Եվ շա՛տ ցավեցոյց զմէջք փափուկ օրիորդին՝ Արագ հասուցանելով ի բանակն իր:
- 4) Էն լեզվներումը նրանք կարդում էին երևելի մարդկանց գործերքը, նրանց արածներն ու ասածները:

### 3. Ո՞ր հատվածը արևմտահայերենով չէ:

- 1) Ձեռք վերցուցինք աստղերուն,  
Մեր ուխտեցինք իրարու,  
Դողդըղացին աստղերն ալ  
Մեր երդումեն ահարկու:
- 2) Ու գեթ ցոլք մը տայի ոսկի իմ հուրես  
Մութ հոգիի ճըրագներուն ցրտահար:
- 3) Եվ ահա բարեբեր ամառն իր պտուղները զամբյուղ առ զամբյուղ  
Մեր պարտեզին ծառերեն դեպի հողը և դեպի զիս կընծայեր....
- 4) Եթէ դու յորս հեծցիս  
Յագատն ի վեր ի Մասիս,  
Չքեզ կալցին քաջք, տարցին  
Յագատն ի վեր ի Մասիս...

**4. Ո՞ր նախադասությունն է գրաբարով:**

- 1) Դըռանս առջև կը նըստիմ միշտ տըխրալիր, Լուր կ'ուզեմ վրադ ամեն կռունկե՝ որ կ'անցնի:
- 2) Ջիմ եարն ամանաթ կուտամ. ի վարդին մեջն պահեցեք. Թէ երթամ ու շուտով դառնամ, զամանաթս ի տէ՛ր հասուցեք...
- 3) Ընդ եղեգան փող ծո՛խս ելաներ, Ընդ եղեգան փող բո՛ց ելաներ, Եւ ի բոցոյն վազեր խարտեաշ պատանեկիկ...
- 4) Դու տեր համորեն երկնի և երկրի, Իսկ ես չեմ իշխում շնչիս ու հոգուս...

**5. Ո՞ր նախադասությունն է գրաբարով:**

- 1) Գագան, անասուն ու հաւ գեմ ունին իրեանց տուն ու բուն. ո՛չ տուն ու ո՛չ տեղ ունին, կու խոցիմ զօրն ի յայն հարկուն:
- 2) Վուրտիղ ժամ, վուրտիղ պատարագ, վուրտիղ սիրով տաղ է ըլում, թեվուր հոգուտ կամքն իս անում, մարմինս բեղամաղ է ըլում:
- 3) Գողտըր գեղգեղն վարդակարոտ բուլբուլին, բնության դաշնակք, ո՛հ, չեն կրնար նվաճեր Ձեր հառաչներն, որով մռընչեն նոճիներ:
- 4) Ի համատարած ծովէն պղպըջէր գոյնն այն ծաղկին. երփն երփնունակ ծաղկին, շողշողէր պտուղն ի ճղին:

**6. Ո՞ր հայերենով է հետևյալ հատվածը :**

Գեղեցիկ պատմուճանան գարդարեալ էր, ի կապուտոյ, ի ծիրանոյ, ի բեհեզոյ, ի յորդանէ ոսկեշողեր գոյնն:

- 1) գրաբար
- 2) արևմտահայերեն
- 3) միջին հայերեն
- 4) աշխարհաբար

**7. Պնդումներից ո՞րն է սխալ:**

- 1) Հայերենը հնդեվրոպական լեզվաընտանիքի լեզվաճյուղերից մեկն է:
- 2) Սիջին գրական հայերենը կոչվում է նաև կիլիկյան հայերեն, քանի որ այդ շրջանի հիմնական գրավոր հուշարձանները ստեղծվել են Կիլիկիայի հայկական թագավորությունում:
- 3) Գրաբարը միակ գրական լեզու դարձնելուն նպատակաուղղված պայքարը հայտնի է գրապայքար անունով:
- 4) Հայ ժողովրդի ինքնուրույն պետականության բացակայության պայմաններում նոր գրական լեզուն հանդես եկավ 2 տարբերակով՝ արևմտահայերեն և արևելահայերեն:

**8. Պնդումներից ո՞րն է սխալ:**

- 1) Գրերի գյուտից հետո հայոց լեզուն անցել է զարգացման երեք փուլ՝ գրաբար, միջին հայերեն, աշխարհաբար:
- 2) 18-րդ դարի կեսերից սկսած՝ գրաբարն այլևս ոչ մի ոլորտում չի գործածվել:
- 3) Նոր գրական հայերենը ունի երկու ճյուղ՝ արևմտահայերեն և արևելահայերեն:
- 4) Արևելահայերենը ունի պետական լեզվի գործառույթ:

**9. Ո՞ր լեզուն ցեղակից չէ հայերենին:**

- 1) պարսկերեն
- 2) ֆրանսերեն
- 3) հունգարերեն
- 4) չեխերեն

## ԳԼՈՒԽ 9 ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

### 1. Մտարոյ Մաշտոցը որտե՞ղ ստեղծեց հայոց այբուբենը:

- 1) Վաղարշապատում
- 2) Եդեսիայում
- 3) Ալեքսանդրիայում
- 4) Ամիդում

### 2. Պնդումներից քանիստ՞ւմ սխալ կա:

- ա. Մաշտոցյան գրերի գյուտը կատարվել է Վռամշապուհ արքայի օրոք:
- բ. Հռոփանոս անունով մի հույն գեղագրից բերված նշանագրերը դարձան մեսրոպյան այբուբենի ստեղծման հիմքը:
- գ. Դանիել եպիսկոպոսի օգնությամբ Մաշտոցը որոշակի ոճ ու տեսք տվեց իր ստեղծած գրերին:
- դ. Մեսրոպյան գրերով գրված առաջին նախադասությունն է. «Պետ վարժից կոչեցայ, ...սուրբ վկայեցայ ի մարդկանէ»:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) բոլորում

### 3. Նշվածներից ո՞վ Մեսրոպ Մաշտոցի աշակերտներից չէ:

- 1) Կորյուն
- 2) Եղիշե
- 3) Ղազար Փարպեցի
- 4) Մովսես Խորենացի

### 4. Տրված բնութագրումներից ո՞րը 5-րդ դարի հեղինակներից որի ստեղծագործությանն է վերաբերում:

1. Հայաստանում ծավալած մտավոր և քաղաքական կյանքի առաջին հավաստի պատմությունն է՝ գրված ականատեսի գրչով: Նրանում կերտվել է հայ կրթական, լուսավորչական գործչի առաջին պատմագեղարվեստական կերպարը:

2. Սկսվում է Տրդատ Մեծի մահից և հասնում մինչև 387 թվականը, երբ Հայաստանը բաժանվեց Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև:

3. Ընդգրկում է շուրջ հարյուր տարվա պատմություն՝ սկսած Հայաստանի մասնատումից, երբ «Հայոց աշխարհը, հնացած ձորձի նման պատռվելով, երկու ծվենի բաժանվեց»:

4. Նրանում մանրամասնորեն ներկայացվում է հայ նախարարական տոհմերի ծագումնաբանությունը:

ա. Փավստոս Բուզանդ, «Հայոց պատմություն»

բ. Ղազար Փարպեցի, «Հայոց պատմություն»

գ. Կորյուն, «Վարք Մաշտոցի»

դ. Մովսես Խորենացի, «Հայոց պատմություն»

- 1) 1-գ, 2-ա, 3-բ, 4-դ
- 2) 1-բ, 2-գ, 3-ա, 4-դ
- 3) 1-դ, 2-ա, 3-բ, 4-գ
- 4) 1-գ, 2-դ, 3-ա, 4-բ

**5. Ո՞ր պնդումն է սխալ Մովսես Խորենացու «Հայոց պատմության» վերաբերյալ:**

- 1) «Հայոց պատմությունը» Խորենացին գրել է իշխան Սահակ Բագրատունու պատվերով:
- 2) Հայ մատենագրության մեջ այն առաջին գրավոր հուշարձանն է, որն ընդգրկում է հայ ժողովրդի ամբողջական պատմությունը՝ նրա կազմավորումից մինչև հեղինակի ապրած ժամանակները:
- 3) Խորենացին իր պատմությունն ավարտել է նշանավոր «Ողբ հայրենասերի» գլխով:
- 4) Հեղինակը քննական պատմություն ստեղծելու առաջին փորձն է կատարել՝ ստուգելով, ճշտելով իրեն հայտնի բոլոր փաստերը:

**6. Ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը.**

«... Աշակերտները ամբարտավան, ստահակ, մեծախոս, աշխատանքից խուսափող, արբեցող, վնասարար, ժառանգությունից փախչող: Զինվորականներն անարի, պարծենկոտ, զենք ստող, ծույլ, թուլամորթ, հելուզակ... »

- 1) «Գանգատ», Ֆրիկ
- 2) «Մատյան ողբերգության», Գրիգոր Նարեկացի
- 3) «Հայոց պատմություն» («Ողբ»), Մովսես Խորենացի
- 4) «Աշխարս մե փանջարս է», Սայաթ-Նովա

**7. Հեթանոսական աստվածներից ո՞րը ինչ պաշտամունքային դեր է կատարել:**

- |             |  |
|-------------|--|
| 1. Վահագն   | ա. լույսի, մաքրության,   |
| 2. Տիր      | ճշմարտության աստված  |
| 3. Անահիտ   | բ. հյուրընկալության, անապատաններին հովանավորող, հյուրասիրության աստված |
| 4. Վանատուր | գ. պատերազմի, հաղթանակի, ամպրոպածին աստված                             |
| 5. Սիհր     | դ. դպրության, արվեստի, գիտությունների հովանավոր                        |
|             | ե. մայրության, պտղաբերության, ընտանիքի հովանավոր                       |

- 1) 1-դ, 2-գ, 3-ա, 4-ե, 5-բ
- 2) 1-բ, 2-ե, 3-դ, 4-ա, 5-գ
- 3) 1-ե, 2-ա, 3-բ, 4-գ, 5-դ
- 4) 1-գ, 2-դ, 3-ե, 4-բ, 5-ա

**8. Ո՞ր վիպերգում են ներկայացված հայերի հեթանոսական ծեսերից:**

- 1) «Հայկ և Բել»
- 2) «Արտաշես և Արտավազդ»
- 3) «Արա Գեղեցիկ և Շամիրամ»
- 4) «Տիգրան և Աժդահակ»

**9. Ո՞ր բառը կամ բառակապակցությունն է բաց թողած:**

Հեծաւ արի արքայն Արտաշէս ..... գեղեցիկ:

- 1) ի սեան
- 2) սեուկն
- 3) իւր սեան
- 4) իր սեան

**10. Պնդումներից ո՞րն է սխալ հայ ժողովրդական հին վիպական երգերի (վիպասանքի) վերաբերյալ:**

- 1) Մեզ են հասել ամբողջական տեսքով:
- 2) Հատկապես լայնորեն տարածված են եղել Գողթն գավառում:
- 3) Ասացողները դրանք երգախառն պատմել են փանդիռների նվագակցությամբ:
- 4) Նրանցում առկա են տեղեկություններ հարևան ցեղերի հետ ունեցած հարաբերությունների մասին:

**11. Պնդումներից ո՞րը ճիշտ չէ «Հայկ և Բել» առասպելի վերաբերյալ:**

- 1) Երբ Տիտանյան Բելին հաջողվում է ամբողջ երկիրը գրավել, Հայկը, չկամենալով հնազանդվել բռնակալին, իր ողջ գերդաստանով հեռանում է Բաբելոնից և գալիս բնակություն է հաստատում Արարատի երկրում:
- 2) Բելը կեղծ խոսքերով շողոքորթում է Հայկին և նրա հետ իբր բարեկամական կապեր հաստատելու համար խնդրում է նրա քրոջ ձեռքը:
- 3) Հայկը Բելի պատգամավորներին հետ է դարձնում՝ խստությամբ մերժելով Բաբելոնի տիրոջ առաջարկները:
- 4) Կռվում, երբ ահաբեկված Բելը հետ է քաշվում և ցանկանում ամուր դիրք գրավել, Հայկը, կռահելով նրա միտքը, նետվում է առաջ, ուժգին արձակում երեքթևյան նետը և սպանում Բելին:

**12. Պնդումներից ո՞րն է սխալ «Արտաշես և Արտավազդ» վիպերգի «Արտաշես և Սաթենիկ» մասի վերաբերյալ:**

- 1) Պատերազմում հայ մարտիկները գերի են վերցնում ալանների պատանի թագաժառանգին:
- 2) Գերված որդու դիմաց ալանների թագավորը խոստանում է տալ իր դստերը, միայն թե վերադարձնի պատանուն:
- 3) Տեսնելով գեղեցիկ Սաթենիկին և լսելով նրա իմաստուն խոսքերը՝ Արտաշեսը սիրահարվում է նրան:
- 4) Արտաշեսը նախ փախցնում է Սաթենիկին, այնուհետև ալանների թագավորի պահանջով Սաթենիկի համար գլխազին (օժիտ) է տալիս և ամուսնանում գեղեցկուհու հետ:

**13. Ո՞ւմ մասին են Գողթան երգիչներն ասել, թե վիշապազույնները գողացել են նրան և տեղը դե դրել:**

- 1) Բելի
- 2) Աժդահակի
- 3) Արտավազդի
- 4) Տորք Անգեղի

**14. Կնոջ գեղեցկությունը պատկերող հետևյալ բանաստեղծական հատվածը ո՞ր ստեղծագործությունից է:**

Անձինն ի շարժել մարգարտափայլ գեղով,  
Ոտիցն ի գնալ՝ շողն ի կաթիլ առնոյր:

- 1) Նահապետ Քուչակի սիրո հայրեններից
- 2) Սայաթ-Նովայի «Աշխարհումս ախ չիմ քաշի» բանաստեղծությունից
- 3) Գրիգոր Նարեկացու «Մեղեդի ծննդյան» տաղից
- 4) «Սասնա ծռեր» վիպերգից

**15. Նշված հատկանիշներից ո՞րը չենք կարող վերագրել Նարեկացու տաղերին:**

- 1) Հայ քնարերգության մեջ առաջին անգամ այլաբանորեն գովերգել է կենդանի բնությունը:
- 2) Թեկուզ այլաբանորեն, բայց վառ գույներով պատկերել է կնոջ գեղեցկությունը:
- 3) Իր տաղերով հայ քնարերգությունը մոտեցրել է իրական կյանքին:
- 4) Արդարացրել է զանազան կրոնական աղանդների գոյությունը:

**16. Տողերի դասավորության ո՞ր տարբերակն է ճիշտ:**

1. Ի վեր ի վերայ վարսից ծառայէր ծաղիկ ծովային
2. Գոհար վարդն վառ առեալ ի վեհից վարսիցն արփենից
3. Երփին երփնունակ ծաղկին, շողշողէր պտուղն ի ճղին
4. Ի համատարած ծովէն պղպղջէր գոյնըն այն ծաղկին

- 1) 2, 4, 1, 3
- 2) 2, 1, 4, 3
- 3) 2, 4, 3, 1
- 4) 3, 1, 4, 2

**17. Միջնադարի նշված հայ բանաստեղծներից ո՞վ է առաջինը կիրառել բաղաձայնությունը:**

- 1) Սայաթ-Նովան
- 2) Նահապետ Քուչակը
- 3) Գրիգոր Նարեկացին
- 4) Ֆրիկը

**18. Ինչո՞ւ է մեր ժողովուրդն իր էպոսի հերոսներին կոչել *Մասնա ծռեր*:**

- 1) երկար տարիներ օտարի լուծը անհասկանալի պատճառներով հանդուրժելու համար
- 2) անսովոր ուժի, ազնիվ խենթության և միամտության համար
- 3) խելապակասության և անիմաստ արարքների համար
- 4) իրենց թշնամիներին դաժանաբար պատժելու համար

**19. Պնդումներից քանիսո՞ւմ սխալ կա «Մասնա ծռեր» էպոսի («Մասունցի Դավիթ» համահավաք բնագիր) «Մանասար և Բաղդասար» ճյուղի վերաբերյալ:**

- ա. Բաղդադի Խալիֆան, երկյուղ կրելով հայոց խաչապաշտ արքա Գագիկից, կեղծ շողոքորթում է նրան և իբր բարեկամական կապեր հաստատելու համար խնդրում նրա աղջկա ձեռքը:
- բ. Ծովինարը գերադասում է Խալիֆայի կինը դառնալ ու մեռնել, քան թույլ տալ, որ իր պատճառով ավերվի հայրենի երկիրը, զոհվեն բազում անմեղ մարդիկ:
- գ. Երբ Խալիֆան իմանում է Ծովինարի հղիության մասին, բոլորին հրամայում է հնազանդվել նրան:
- դ. Պատերազմում պարտվելով՝ Խալիֆան նեղն է ընկնում և Գագիկին խնդրում ազատել իրեն՝ խոստանալով վերադարձնել Ծովինարին ու նրա զավակներին:

- 1) մեկում
- 2) երեքում
- 3) չորսում
- 4) երկուսում

**20. «Մասնա ծռեր» էպոսի («Մասունցի Դավիթ» համահավաք բնագիր) ո՞ր հերոսի խնդրանքով է Կապույտ ծովի մոտ Աստված բխեցնում Կաթնաղբյուրը:**

- 1) Փոքր Մհերի
- 2) Ծովինարի
- 3) Արմաղանի
- 4) Գեղձուն-Ծամի



**21. Տարբերակներից որո՞ւմ է ճիշտ ներկայացված Բաղդադի Խալիֆայի մահը «Մասնա ծոեր» էպոսում («Մասունցի Դավիթ» համահավաք բնագիր):**

- 1) Հայոց աշխարհի վրա կատարած արշավանքներից մեկի ժամանակ Խալիֆային հետապնդողները նրան նետահարում են:
- 2) Սանասարի հետ մենամարտելիս Խալիֆան սայթաքում է և գլուխը քարին խփելով՝ մահանում:
- 3) Խալիֆան փորձում է Բաղդասարին սպանել, իսկ վերջինիս օգնության հասած Սանասարն այլևս չի խնայում ու գուրգուլ այնպես է հարվածում Խալիֆային, որ նա յոթ գագ խորությամբ գետնի տակ է անցնում ու մեռնում:
- 4) Խալիֆան ուզում է Սանասարին զոհ տալ կուռքերին, Սանասարը խորամանկում է, և ինքն է կտրում Խալիֆայի գլուխը:

**22. Պնդումներից քանիստ՞ում սխալ կա «Մասնա ծոեր» էպոսի («Մասունցի Դավիթ» համահավաք բնագիր) «Մեծ Մեեր» ճյուղի բովանդակության վերաբերյալ:**

- ա. Մեծ Մեերը, լինելով դեռ պատանի, իր համար երիվար է ընտրում մի փրչոտ քուռակ՝ հրաժարվելով Գորգիկ իշխանի առաջարկած սաղափե թամբով, պողպատե սանձով ձիերից:
- բ. Մեերի՝ Իսմիլ Խաթունի մոտ զնալուն դեմ էին և՛ կինը, և՛ Ձենով Օհանը, իսկ Մասնա իշխաններն ու վարդապետները պնդում էին հակառակը:
- գ. Իսմիլ Խաթունը Մեերից ունենում է մի արու զավակ և, ի հիշատակ մեռած ամուսնու, կոչում Մըսրա Մելիք:
- դ. Մասնա ճրագը վառ պահելու համար Մեերը ընդունում է հրեշտակի պայմանը, համաձայն որի՝ որդու ծնվելուն պես ինքը և իր կինը պիտի մեռնեին:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

**23. Ըստ «Մասնա ծոեր» էպոսի համահավաք բնագրի՝ ի՞նչ պայման են կապում Մեծ Մեերը և Մըսրա Մելիքը:**

- 1) Ով հաղթի մենամարտում, նա դառնա և՛ Մասունի, և՛ Մըսրա թագավոր:
- 2) Ով շուտ մեռնի, նրա ընտանիքին տիրություն անի մյուսը:
- 3) Ով կարողանա հաղթել Սալիտակ Դևին, մյուսը նրան հարկ վճարի:
- 4) Ում տերությանը վտանգ սպառնա, մյուսը նրան զորքով օգնության հասնի:

**24. Պնդումներից քանիստ՞ում սխալ կա «Մասնա ծոեր» վիպերգի («Մասունցի Դավիթ» համահավաք բնագիր) «Մասունցի Դավիթ» ճյուղի վերաբերյալ:**

- ա. Որբացած Դավթին ուղարկում են Իսմիլ Խաթունի մոտ, քայց նա կարճ ժամանակ անց չի ընդունում վերջինիս կաթը և սնվում է Մասունից ուղարկված մեղր ու կարագով:
- բ. Պատանի Դավիթը զբաղվում է գառնարածությամբ, նախրապանությամբ ու որսորդությամբ:
- գ. Դավիթը կռվում է Մելիքի անհամար զորքի դեմ, և երբ ահաբեկված Մելիքը հետ է քաշվում և ցանկանում ամուր դիրք գրավել, Դավիթը, կռահելով նրա միտքը, նետվում է առաջ, ուժգին արձակում երեքթևյան նետը և սպանում նրան:
- դ. Դավիթը սպանվում է իր աղջկա թունավոր նետից:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

25. «Մասնա ծոեր» էպոսում («Մասունցի Դավիթ» համահավաք բնագիր) ինչպե՞ս է ավարտվում Դավթի և Մըսրա Մելիքի մենամարտը:

- 1) Դավիթը Թուր Կեծակիով մեջտեղից երկու կես է անում Մելիքին:
- 2) Դավիթը կոտորում է Մըսրա Մելիքի բանակը, և Մելիքը սարսափահար փախչում է:
- 3) Դավիթն իր զարկերը բաշխում է Մելիքի մորն ու քրոջը, և մենամարտ տեղի չի ունենում:
- 4) Դավիթը գուրզով հարվածում է Մըսրա Մելիքին, և վերջինս հաշտություն է խնդրում:

26. Ինչպե՞ս են սկսվում «Մասնա ծոեր» էպոսի («Մասունցի Դավիթ» համահավաք բնագիր) ճյուղերի նախերգակյան հատվածները:

- 1) «Էն ժամանակ ո՞ր թագավոր գորեղ ըլներ, Էն մեկելից հարկ կ'առներ»:
- 2) «Դ-առնանք, զօղորմին տի տանք...»:
- 3) «Մասունա ճամփին մեկ վանք կար. Էդ վանքի անուն էլ Մատղավանք էր»:
- 4) «Էնոնք մեռան, աստված օղորմի իրենց հոգուն...»:

27. «Մասնա ծոեր» էպոսի («Մասունցի Դավիթ» համահավաք բնագիր) ո՞ր հերոսն է ծնվում՝ ձեռքի ավում մի կաթիլ արյուն սեղմած:

- 1) Բաղդասարը
- 2) Մեծ Սիերը
- 3) Դավիթը
- 4) Փոքր Սիերը

28. Նշվածներից ո՞վ ում է անիծում՝ ասելով. «Ամմա հ ըլներ, անժառանգ»:

- 1) Քեռի Թորոսը՝ Փոքր Սիերին
- 2) արտատեր պառավը՝ Դավթին
- 3) Դավիթը՝ Փոքր Սիերին
- 4) ալևոր ծերունին՝ Մըսրա Մելիքին

29. Պնդումներից ո՞րն է սխալ Դավթի վերաբերյալ «Մասնա ծոեր» էպոսում («Մասունցի Դավիթ» համահավաք բնագիր):

- 1) Սպանում է Սպիտակ Դևին և ճահճուտների Սև Եզանը:
- 2) Վերաշինում է Մարութա վանքը և պատժում Մելիքի հարկահաններին:
- 3) Կռվում է Խանդութի հոր թշնամիների դեմ և ոչնչացնում նրանց:
- 4) Սպանում է Մըսրա Մելիքին և նրա պարտված զորքը ազատ արձակում:

30. Ըստ «Մասնա ծոեր» էպոսի («Մասունցի Դավիթ» համահավաք բնագիր)՝ ի՞նչ վախճան է ունենում Դավիթը:

- 1) Սպանվում է իր դստեր թունավոր նետից:
- 2) Չոհվում է Մըսրա Մելիքի դեմ մղած ճակատամարտում:
- 3) Հոր անեծքի պատճառով փակվում է Վանա քար կոչվող ժայռում:
- 4) Մեռնում է բնական մահով:

31. Ինչո՞ւ է «Մասնա ծոեր» էպոսի («Մասունցի Դավիթ» համահավաք բնագիր) հերոսը՝ Դավիթը, ասում. «Թմ ցեցն իմ անձից է»:

- 1) Վերգոն Խանդութին ամուսնության առաջարկ էր արել:
- 2) Փոքր Սիերը, հորը չճանաչելով, կռվի էր բռնվել նրա հետ:
- 3) Իր և Չմշկիկ Սուրբանի աղջիկն էր նետով խոցել Դավթին:
- 4) Ձենով Օհանը չէր ուզում Դավթին տալ հոր զենքն ու զրահը:

32. «Մասնա ծոեր» վիպերգի («Մասունցի Դավիթ» համահավաք բնագիր) հերոսներ Վերզոն, Չենով Հովանը և Սիերը ո՞ւմ որդիներն են:

- 1) Դեղձուն-Ծամի
- 2) Գոհարի
- 3) Արմաղանի
- 4) Խանդուրի

33. «Մասնա ծոեր» էպոսի («Մասունցի Դավիթ» համահավաք բնագիր) գլխավոր հերոսների կանանց և նրանց հայրերի անունները ո՞ր շարքում են ճիշտ համապատասխանեցված.

- |                |                         |
|----------------|-------------------------|
| 1. Դեղձուն-Ծամ | ա. Թևաթորոս             |
| 2. Արմաղան     | բ. Քաջանց թագավոր       |
| 3. Խանդուր     | գ. Վաչոյ-Մարջոյ թագավոր |
| 4. Գոհար       | դ. Պաճիկ թագավոր        |

- 1) 1-դ, 2-գ, 3-ա, 4-բ
- 2) 1-դ, 2-ա, 3-գ, 4-բ
- 3) 1-բ, 2-ա, 3-գ, 4-դ
- 4) 1-գ, 2-բ, 3-դ, 4-ա

34. «Մասնա ծոեր» էպոսում («Մասունցի Դավիթ» համահավաք բնագիր) Դավթի նկատմամբ ցուցաբերած անտարբերության համար ո՞ր հերոսուհուն է կշտամբում Չենով Հովանը՝ ասելով.«Օտար զարմից ես դու, քո սիրտ հե՛ջ չի ցավի»:

- 1) Իսմիլ Խաթունին
- 2) Չմշկիկ Սուլթանին
- 3) Դեղձուն-Ծամին
- 4) Սառյեին

35. Բաղդադում ո՞ւմ գերեզմանին է այցելում Փոքր Սիերը «Մասնա ծոեր» էպոսում («Մասունցի Դավիթ» համահավաք բնագիր):

- 1) Գագիկ թագավորի
- 2) Բաղդասարի
- 3) Քեռի Թորոսի
- 4) Չենով Հովանի

36. Մխիթար Գռչի «Դատաստանագիրքը»

- 1) առակների ժողովածու է:
- 2) օրենքների ժողովածու է:
- 3) պատմագրական երկ է:
- 4) աղոթքների գիրք է:

**37. Տրվածներից ո՞րը որ առակի բարոյախոսությունն է:**

- ա. Հպատակներն իրենց էությունը ցածր են տերերից և չեն կարող հավասարվել նրանց, ուստի պետք է չըմբոստանան:
- բ. Թույլերը կարող են միավորվելով ապստամբել և հաղթել ուժեղին:
- գ. Իսկական զանձը աշխատանքն է, որն էլ բարեկեցության հիմնական աղբյուրն է:
- դ. Մարդու մասին պետք է կարծիք կազմել ոչ թե նրա խոսքի կամ արտաքին տեսքի, այլ գործի հիման վրա:

- 1. «Բամբակենին և սոսին»
- 2. «Աստղերն և լուսինը»
- 3. «Արջ և մրջյուն»
- 4. «Կտակ զանձի մասին»

- 1) ա-1, բ-3, գ-4, դ-2
- 2) ա-2, բ-3, գ-4, դ-1
- 3) ա-3, բ-2, գ-1, դ-4
- 4) ա-1, բ-2, գ-3, դ-4

**38. Ո՞ր պնդումը ճիշտ չէ միջնադարյան առակագրության վերաբերյալ.**

- 1) Հայ իրականության մեջ Ֆրիկը առաջինն է բանաստեղծորեն մշակել ժողովրդական առակը:
- 2) Առակի շնորհիվ հայ միջնադարյան գրականություն է ներթափանցել ժողովրդական բանահյուսությունը:
- 3) Մխիթար Գոշի և Վարդան Այգեկցու շնորհիվ առակը և գրույցը դարձել են գրական ժանրեր:
- 4) Առակի լեզուն աչքի է ընկնում խրթին լեզվական կառույցներով:

**39. Ո՞ր պնդումն է սխալ:**

- 1) Իր բանաստեղծություններում Ֆրիկը ազգային բողոքը միահյուսել է սոցիալական անարդարությունների դեմ ուղղված զանգատին:
- 2) Հայ հին բանահյուսության մտւշների՝ առասպելների, վիպերգերի հիմնական մասը գրի է առնվել Մովսես Խորենացու կողմից:
- 3) «Մասնա ծռեր» էպոսի պատումներից մեկն առաջին անգամ գրի է առել Գարեգին Սրվանձտյանը:
- 4) Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմը ունի հայրենասիրական բովանդակություն:

**40. Ո՞ր պնդումն է ճիշտ Նահապետ Քուչակի հայրենների վերաբերյալ:**

- 1) Ըստ Քուչակի՝ բնության հետ միաձուլումը Աստծու էությանը հասնելու միջոց է:
- 2) Հայրեններում բնության գեղեցկությունները հակադրվում են մարդկային կյանքի անարդարություններին:
- 3) Բնությունը միջոց է կնոջ գեղեցկությունը պատկերելու համար:
- 4) Բնությունը հայրեններում պատկերված է այլաբանորեն:

**41. Պնդումներից քանիստ՞ւմ սխալ չկա.**

- ա) Միջնադարյան առակը արձակ շարադրանքով, բարոյախրատական բովանդակությամբ փոքրածավալ ստեղծագործություն է: Նրա մեջ իրականությունը ներկայացվում է այլաբանորեն:
- բ) Ե՛վ Մխիթար Գոշի, և՛ Վարդան Այգեկցու առակները ներկայացվում են թեմատիկ դասակարգմամբ և ունեն բարոյախրատական ավարտ:
- գ) Ֆրիկը գրել է Ժամանակի խոսակցական լեզվով՝ միջին հայերենով, օգտագործել է ժողովրդական բառն ու բանը:
- դ) Մեզ հայտնի հայրենների մի մասի հեղինակը 16-րդ դարի բանաստեղծ Նահապետ Քուչակն է: Նրա հայրենները հիմնականում սիրո, պանդխտության, սոցիալական և հայրենասիրական երգեր են:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

**42. Ո՞վ է հեռույալ խոսքերի հեղինակը:**

*«Ես եմ բոլորը, և բոլոր մարդկանց մեղքերն են իմ մեջ»:*

- 1) Գրիգոր Նարեկացին
- 2) Ֆրիկը
- 3) Եղիշեն
- 4) Մովսես Խորենացին

**43. Փակագծում տրված բառերի տեղադրման ո՞ր հերթականությունն է ճիշտ:**

Ես աչք ու դու լոյս, հոգի՛, առանց լոյս՝ աչքըն .....  
 Ես ձուկ ու դու ջուր, հոգի՛, առանց ջուր՝ ձուկըն .....  
 Երբ ձուկն ի ..... հանեն ի այլ ..... ձրգեն, նայ ապրի,  
 Երբ զիս ի քենն գատեն, քան գմեռնելն այլ ճար չի լինի:

(1. ջրէն, 2. խաւարի, 3. ջուր, 4. մեռանի)

- 1) 2, 4, 1, 3
- 2) 2, 4, 3, 1
- 3) 4, 2, 1, 3
- 4) 4, 3, 2, 1

**44. Փակագծում տրված բառերի տեղադրման ո՞ր հերթականությունն է ճիշտ:**

Երբ սերն ի յաշխարհ եկաւ, եկաւ իմ սիրտը .....  
 Ապա յիմ սրտէս ի դուրս՝ յերկրոյ յերկիր .....  
 Եկաւ ի գլուխս ելաւ, ի ըղեղս ելաւ .....  
 Աչիցս արտասուք ուզեց, նա արիւն ի վար .....

(1. թառեցաւ, 2. վաթեցաւ, 3. բնակեցաւ, 4. թափեցաւ)

- 1) 2, 4, 1, 3
- 2) 4, 3, 1, 2
- 3) 3, 4, 2, 1
- 4) 3, 4, 1, 2

**45. Նշված ստեղծագործություններից քանիսի՞ հեղինակն է Հակոբ Պարոնյանը:**

«Ծիծաղ», «Պաղտասար աղբար», «Քաղաքավարության վնասները», «Պարապ վախտի խաղալիք», «Լուռ ցավեր», «Ազգային ջոջեր», «Երկու տերով ծառա մը», «Պտույտ մը Պոլտ թաղերուն մեջ», «Մեր թաղը», «Ոսկի աքաղաղ»:

- 1) չորսի
- 2) հինգի
- 3) վեցի
- 4) յոթի

**46. Հակոբ Պարոնյանի նշված ստեղծագործություններից որի՞ ժանրային պատկանելությունն է սխալ նշված:**

- 1) «Պաղտասար աղբար» (կատակերգություն)
- 2) «Ազգային ջոջեր» (դիմանկարների շարք)
- 3) «Քաղաքավարության վնասները» (երգիծական վեպ)
- 4) «Պտույտ մը Պոլտ թաղերուն մեջ» (ակնարկների շարք)

**47. «Մեծապատիվ մուրացկանները» վեպն սկսելով սովորական պատմությամբ՝ ո՞ւմ է հակադրվում Հակոբ Պարոնյանը:**

- 1) կլասիցիստ գրողներին
- 2) ռոմանտիկ գրողներին
- 3) լրագրողներին
- 4) բանաստեղծներին

**48. Ո՞րն է Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները» վեպի գլխավոր նպատակադրումը:**

- 1) ազգի մտավորականներին մուրացկանության համար մեղադրելը
- 2) ազգի մեծահարուստ մարդկանց բթամտությունը ցույց տալը
- 3) մտավորականների թշվառ վիճակի նկատմամբ ազգային մեծատուների անտարբերությունը ցույց տալը
- 4) գլխավոր հերոսի ամուսնության ձախողման վերաբերյալ զվարճալի պատմություն ստեղծելը

**49. Նշվածներից ո՞վ Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները» վեպի հերոսներից չէ:**

- 1) Մանուկ աղան
- 2) Կիպարը
- 3) Դերենիկը
- 4) Շուշանը

**50. Ո՞ր խոսքը Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները» վեպի որ հերոսինն է:**

- |   |   |
|---|---|
| <p>1. «Արդարև, մայրաքաղաքս ինքզինքը բախտավոր համարելու է ձեզ պես պատվական ազգայինի մը... Հայրենասեր անձ մը... Ազգասեր, ուսյալ, կրթյալ... Ազնվասիրտ, ազնվախոհ, ազնվադեմ մեկ մը իր մեջ ունենալու համար»:</p> <p>2. «Ես ինքզինքս չէի կարծեր այնչափ մեծ մարդ, որչափ որ կկարծե այս խմբագիրն, բայց հարկավ ան ինձմե աղեկ գիտե իմ որչափ մեծ ըլլալս, վասնզի խմբագիր մ'է և ուսումնական է...»:</p> <p>3. «Կար ժամանակ մը, ուր խավարը լուսո դեմ կը կռվեր, տգիտությունը գիտության դեմ, անցյալն ապառնիին դեմ, հրամայականը սահմանականին դեմ, սուրը գրիչի դեմ, ատելությունը սիրո դեմ, կրակը ջուրին դեմ, միսը բանջարեղենին դեմ...»:</p> <p>4. «Ատ չըլլար. միայն իրենց մորը արգանդին մեջ գտնվողները չունին իրենց պատկերը. եթե անոր ալ դյուրին մեկ ճամփան գտնեն, անոնց ալ պիտի հանեն»:</p> | <p>ա. խմբագիր</p> <p>բ. բանաստեղծ</p> <p>գ. լուսանկարիչ</p> <p>դ. Աբխտղոմ աղա</p> |
|---|---|

- 1) 1-դ, 2-բ, 3-գ, 4-ա
- 2) 1-գ, 2-ա, 3-դ, 4-բ
- 3) 1-ա, 2-դ, 3-բ, 4-գ
- 4) 1-ա, 2-գ, 3-բ, 4-դ

**51. Ո՞ր շարքի բոլոր ստեղծագործություններում է Բաֆֆին պատկերել պարսկահայերի կյանքը:**

- 1) «Սալբի», Հարեն», «Գեղեցիկ Վարթիկը»
- 2) «Մի օրավար հող», «Մամվել», «Կուսագրություն»
- 3) «Դավիթ-Բեկ», «Անբախտ Հռիփսիմեն», «Սալբի»
- 4) «Հարեն», «Մի օրավար հող», «Խամսայի մեղիքությունները»

**52. Ո՞ր դարի դեպքեր են նկարագրված Բաֆֆու «Մամվել» պատմավեպում.**

- 1) 5-րդ դ.
- 2) 4-րդ դ.
- 3) 7-8-րդ դդ.
- 4) 3-4-րդ դդ.

**53. Ո՞րը Բաֆֆու «Մամվել» պատմավեպի գլուխներից չէ:**

- 1) «Դ-վնո առումը»
- 2) «Երեք երիտասարդ ուժեր»
- 3) «Մայրը»
- 4) «Մեկը-արևմուտքում, մյուսը-արևելքում»

**54. Ո՞րը «Մամվել» պատմավեպի գլուխներից չէ.**

- 1) «Լեռնային իշխանուհին»
- 2) «Ուրացողը յուր տան շեմքի վրա»
- 3) «Մի ծաղկով գարուն»
- 4) «Ողական ամբոցը»

**55. Ո՞ր շարքում են միայն Բաֆֆու «Մամվել» պատմավեպի գլուխների վերնագրերը:**

- 1) «Մուշեղ՝ խոտորնակին խոտորնակ», «Մայրը», «Ողական ամրոցը»
- 2) «Սարսափելի գիշերվա առավոտը», «Արաքսի որոգայթները», «Բյուրականի առումը»
- 3) «Մի տարօրինակ ողջակեզ», «Տարոնի առավոտը», «Հերոսի վախճանը»
- 4) «Արարատյան դաշտի առավոտը», «Գվնո առումը», «Շապուհը Զարեհավանի ավերակների մոտ»

**56. Ո՞ր շարքի բոլոր հերոսներն են Բաֆֆու «Մամվել» պատմավեպից:**

- 1) Սահակ Պարթև, Աշխեն, Մուշեղ Մամիկոնյան, Համագասպուհի
- 2) Մերուժան Արծրունի, Հովհաննես կաթողիկոս, Արշակ Երկրորդ, Դրաստամատ
- 3) Որմիզդուխտ, Վասակ Սյունի, Տաճատուհի, Հուսիկ
- 4) Շապուհ արքա, Փառանձեն թագուհի, Գոռ իշխան, Մամվել

**57. Ո՞ր պնդումն է սխալ Բաֆֆու «Մամվել» վեպի վերաբերյալ.**

- 1) Վեպում գրողը փորձել է վերստեղծել 4-րդ դարի քաղաքական անցքերի կենդանի պատկերը:
- 2) Մերուժան Արծրունին գլխավոր կերպարներից մեկն է՝ ազգուրաց դավաճան, որի ճակատագիրը վեպում մնում է անորոշ:
- 3) Վեպի գլուխներից մեկում Բաֆֆին պատկերում է Անհուշ բերդում կալանված հայոց արքայի ողբերգական ինքնասպանությունը:
- 4) Վեպի պատերազմական դրվագում Մամվելը շտապում է հասնել հոր վրանը, որպեսզի վրեժով լցված լեռնականները չպղծեն հոր դիակը, պատառ-պատառ չանեն ու ռազմի դաշտով ցրիվ չտան:

**58. Բաֆֆու «Մամվել» վեպի ո՞ր գլխից է ներկայացված հատվածը.**

«Ուրախ, աղմկալի Հադամակերտը ներկայացնում էր մի մեռյալ քաղաք: Փողոցներում ոչ ոք չէր երևում: Այն փողոցը, որով գնում էր նա և որը ուղիղ տանում էր դեպի իշխանական սպարանքը, նրա վրա խիստ ծանր և սպանիչ տպավորություն էր գործում»:

- 1) «Ճանապարհները բաժանվում են»
- 2) «Ուրացողը յուր տան շեմքի վրա»
- 3) «Գուժկան»
- 4) «Ինքնակոչները»

**59. Ո՞ր պնդումը ճիշտ չէ Մերուժան Արծրունու կերպարի վերաբերյալ (ըստ Բաֆֆու «Մամվել» վեպի):**

- 1) Մերուժանը դրամատիկ կերպար է, որը տառապագին մտորումներով փորձում է արդարացնել իր արարքը:
- 2) Նա կշտամբում է իրեն՝ կամքի թուլություն ցուցաբերելու և Որմիզդուխտի նկատմամբ սերը հաղթահարել չկարողանալու համար:
- 3) Մերուժան Արծրունին այդպես էլ հետ չի կանգնում իր խոտոր ուղուց:
- 4) Թեև դավաճանը կուրացած է հայրենասեր ուժերի դեմ տաժած իր ատելությունից, բայց կռվի դաշտում հրաժարվում է մոր և նրա զորախմբի դեմ կռվելուց:



**60. Բաֆֆու «Սամվել» վեպի հերոսներից ո՞ւմ մասին է ասված.**

«Նա ոչ միայն բոլորին ազատություն շնորհեց, այլև չկողոպտեց կանանոցի անբավ հարստությունը, որ ժամանակի սովորությամբ յուր սեփականությունն էր համարվում: Նա թողեց կանանոցը յուր ամբողջ պարագաներով անձեռնմխելի»:

- 1) Մուշեղ Մամիկոնյանի
- 2) Սամվելի
- 3) Շապուհ արքայի
- 4) Մերուժան Արծրունու

**61. Բաֆֆու «Սամվել» վեպի ո՞ր հերոսուհու մասին է հետևյալ հատվածը:**

«Վանը պաշարված էր: Կրակը թափվում էր դժբախտ քաղաքի վրա: Նրան պաշարել էին վայրենի ուշտունիները իրենց դրացի սասունցիների հետ: Ուշտունիները կռվում էին իրենց աշխարհի սիրելի տիկնոջ համար, որին անգուժ ձևով հափշտակեց եղբայրը»:

- 1) Փառանձեմ
- 2) Տաճատուհի
- 3) Որմիզդուխտ
- 4) Համազասպուհի

**62. Գրական ո՞ր ուղղության ներկայացուցիչներից է Մուրացանը.**

- 1) կլասիցիզմի
- 2) ռոմանտիզմի
- 3) սիմվոլիզմի
- 4) ռեալիզմի

**63. Ո՞րն է Մուրացանի «Գևորգ Մարգալետունի» վեպի պատմական հիմքը:**

- 1) հայ ժողովրդի հաղթական կռիվները արաբական զավթիչների դեմ 10-րդ դարում
- 2) 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի իրադարձությունները
- 3) հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը 19-րդ դարի վերջին
- 4) 4-5-րդ դարերի իրադարձությունները

**64. Հայրենիքին անձնվեր ծառայելու համար գրական ո՞ր հերոսն է վաստակել *հայրենյաց բարերար* անունը:**

- 1) Վարդան Մամիկոնյանը (Գ. Դեմիրճյան, «Վարդանանք»)
- 2) Աղասին (Խ. Աբովյան, «Վերք Հայաստանի»)
- 3) Գևորգ Մարգալետունին (Մուրացան, «Գևորգ Մարգալետունի»)
- 4) Սամվելը (Բաֆֆի, «Սամվել»)

**65. Ո՞ր ստեղծագործության գաղափարներից է հետևյալը. *այն, ինչ թույլատրելի է հասարակ մահկանացուներին, արգելված է թագավորին:***

- 1) «Սամվել» (Բաֆֆի)
- 2) «Վարդանանք» (Գ. Դեմիրճյան)
- 3) «Վերք Հայաստանի» (Խ. Աբովյան)
- 4) «Գևորգ Մարգալետունի» (Մուրացան)

**66. Ո՞ր միտքն է հակասում Մուրացանի «Գևորգ Մարգալետունի» վեպի սյուժեին.**

- 1) Յլիկ Ամրամը ապստամբել է թագավորական իշխանության դեմ և դաշնակցել է արխագների Բեր թագավորի հետ:
- 2) Սահականույշ թագուհին, խոցված իր թագավոր ամուսնու դավաճանությունից և իր հարազատների նկատմամբ գործած դաժան արարքներից, փորձում է դաշնակցել Աբասի հետ:
- 3) Աշոտը արաբների դեմ կռվելու գործում Սահակ Սևադայի աջակցությունն ունենալու համար ամուսնանում է նրա դստեր՝ Սահականույշի հետ:
- 4) Գևորգ Մարգալետունու հավաքած փոքրաթիվ քաջերի հետ արաբ Բեշիրի բանակի դեմ կռվում էր նաև նրա միակ որդին՝ Գոռը:

**67. Ո՞ր շարքում նշված բոլոր հերոսներն են Մուրացանի «Գևորգ Մարգալետունի» վեպից:**

- 1) Մովսես, Աշոտ Բռնավոր, Արտակ Մոկաց, Յլիկ Ամրամ
- 2) Շահանդուխտ, Սահականույշ, Աբաս, Գրիգոր
- 3) Գուրգենդուխտ, Որմիզդուխտ, Գևորգ Մարգալետունի, Ասպրամ
- 4) Սահակ Սևադա, Բեշիր, Հուսիկ, Յուսուփ ոստիկան

**68. Գրական ո՞ր հերոսի խոսքերն են.**

«Երկնքի բոլոր աստղերը կկողոպտեի՝ վարձատրելու համար այն մարդուն, որը կկարողանար մոռացնել տալ ինձ իմ անցյալը»:

- 1) Աշոտ Երկաթի (Մուրացան, «Գևորգ Մարգալետունի»)
- 2) Մերուժան Արծրունու (Բաֆֆի, «Սամվել»)
- 3) Վանահոր (Լ. Շանթ, «Հին աստվածներ»)
- 4) Վասակ Սյունու (Գ. Դեմիրճյան, «Վարդանանք»)

**69. Մուրացանի «Գևորգ Մարգալետունի» պատմավեպի ո՞ր գլխում է ներկայացվում Աշոտ Երկաթի հաղթանակը Բեշիրի դեմ:**

- 1) «Մի ծաղկով գարուն»
- 2) «Գվնո առումը»
- 3) «Մի դալար բողբոջ չորացած ծառի մոտ»
- 4) «Ծովամարտ»

**70. Մուրացանի «Գևորգ Մարգալետունի» պատմավեպի ո՞ր հերոսի ուխտն է.**

«Ես չեմ վերադառնա իմ ընտանյաց գիրկը այնքան ժամանակ, քանի դեռ վերջին հազարացին հալածված չէ հայրենիքի սահմաններից»:

- 1) Աշոտ Երկաթի
- 2) Գևորգ Մարգալետունու
- 3) Վահրամ սեպուհի
- 4) Յլիկ Ամրամի

**71. Ո՞ր ստեղծագործությունից է հետևյալ միտքը.**

«Ազգերի գորությունն ընտանիքների մեջ է. գորավոր է այն ազգը, որն ունի գորավոր ընտանիքներ»:

- 1) «Սամվել» (Բաֆֆի)
- 2) «Գևորգ Մարգալետունի» (Մուրացան)
- 3) «Վերք Հայաստանի» (Խ. Աբովյան)
- 4) «Մինին խոսք, մյուսին հարսն» (Մ. Նալբանդյան)

**72. Գրական ո՞ր ուղղության ներկայացուցիչն է Ալեքսանդր Շիրվանզադեն:**

- 1) կլասիցիզմի
- 2) ռոմանտիզմի
- 3) ռեալիզմի
- 4) սիմվոլիզմի

**73. Ո՞րն է Ալեքսանդր Շիրվանզադեի «Քաոս» վեպի հանգույցը:**

- 1) միլիոնատեր Մարկոս Ալիմյանի մահվան և հոգեհանգստի պատմությունը
- 2) Միքայելի կապը «ոսկի երիտասարդության» հետ
- 3) Միքայելի և Մարութխանյանի կազմած կեղծ կտակը
- 4) միլիոնատեր Մարկոս Ալիմյանի թողած կտակը

**74. Ալեքսանդր Շիրվանզադեի «Քաոս» վեպի վերաբերյալ պնդումներից որո՞ւմ սխալ կա:**

- 1) «Քաոս» վեպի գրությանը նախորդել է նյութի ուսումնասիրության երկարատև շրջան:
- 2) Վեպի հիմքում Բաքվի հարուստ ընտանիքներից մեկում ունեցվածքի շուրջ ծագած վեճի իրական պատմությունն է:
- 3) Գրողի պատկերած քաոսը վերաբերում է միայն Ալիմյանների ընտանիքի անդամներին, իսկ նրանց հետ առնչվող տարբեր խավերի մարդկանց կյանքն ու փոխհարաբերությունները ներդաշնակ են:
- 4) «Քաոս» վեպով գրողը մի նոր աստիճանի բարձրացրեց ռեալիստական վեպի արվեստը մեզանում, ձևավորեց գեղարվեստական լեզվի նոր որակ:

**75. Ալեքսանդր Շիրվանզադեի «Քաոս» վեպի կերպարների մասին ո՞ր պնդումն է սխալ:**

- 1) Հրդեհի տեսարանում Սմբատը փրկում է ոչ միայն իր երեխաների, այլև բանվորներից մի քանիսի կյանքը:
- 2) Միքայելը ինչ-ինչ դրական գծերով առանձնանում է «ոսկի երիտասարդության» իր միջավայրից:
- 3) Անտոնինա Իվանովնան, շփվելով բանվորական միջավայրի հետ, փոխում է իր կարծիքը հայերի մասին:
- 4) Ինժեներ Սուլյանը սիրահետում էր թեթևամիտ Մարթային:

**76. Ալեքսանդր Շիրվանզադեի «Քաոս» վեպի վերաբերյալ ո՞ր պնդումը ճիշտ չէ:**

- 1) Ներկայացված է սիրո վերափոխիչ ուժը:
- 2) Հեղինակը ստեղծել է ներքին դրամա ունեցող կերպարներ՝ Սմբատ, Անտոնինա Իվանովնա, Շուշանիկ:
- 3) Ներկայացված են բանվորական կյանքի պատկերներ:
- 4) Վեպում պատկերված են Բաքվում տեղի ունեցող ազգամիջյան սուր բախումներ:

**77. Ալեքսանդր Շիրվանզադեի «Քաոս» վեպի ավարտին ի՞նչ է դառնում Սմբատը:**

- 1) իսկական բուրժուա
- 2) ազատամիտ գաղափարների ջատագով
- 3) անուղղելի խաղամոլ
- 4) աղքատ բանվորների հովանավոր

**78. Ալեքսանդր Շիրվանզադեի «Քառս» վեպի ո՞ր հերոսի խոսքերն են.**

«Գուրք առաջ ինձ նայում էիք զգվանքով, այժմ՝ ցավակցությամբ: Այդ ինձ վիրավորում է և ստորացնում իմ աչքում: Ատե՛ք ինձ, թշնամացե՛ք, բայց մի՛ արհամարհե՛ք: Արհամարհանքն ինքնաստերի մեծագույն պատիժն է»:

- 1) Գրիշայի
- 2) Անտոնինայի
- 3) Միքայելի
- 4) Շուշանիկի

**79. Ո՞ր շարքի բոլոր հերոսներն են Ալեքսանդր Շիրվանզադեի «Քառս» վեպից:**

- 1) Մարկոս Ալիմյան, Միքայել, Արշակ, Բագրատ
- 2) Սմբատ Ալիմյան, Մարութխանյան, Շուշանիկ, Երանուհի
- 3) Չուպրով, Ռասուլ, Կարապետ, Սաղաթել
- 4) Անտոնինա Իվանովնա, Ռսկեհատ, Անուշ, Մարթա

**80. Ո՞ր շարքի բոլոր հերոսներն են Ալեքսանդր Շիրվանզադեի «Քառս» վեպի «ուկի երիտասարդության» ներկայացուցիչները:**

- 1) Մելքոն, Մոսիկո, Սրաֆիոն Գասպարիչ
- 2) Քյազիմ բեկ, Սուլյան, Սմբատ
- 3) Գրիշա, Չուպրով, Պետրոս Ղուլամյան
- 4) Նիասամիձե, Պասպաշա, Միքայել

**81. Ո՞րն է Շիրվանզադեի «Պատվի համար» դրամայի հանգույցը:**

- 1) Բագրատը համոզում է Մարգարիտին գողանալ Օթարյանի մոտ գտնվող փաստաթղթերը:
- 2) Անդրեաս Էլիզբարյանը այրում է ճշմարտությունը բացահայտող փաստաթղթերը:
- 3) Օթարյանը պարզում է, որ Էլիզբարյանը կողոպտել է իր հորը, և ցանկանում է վերականգնել իր իրավունքները:
- 4) Մարգարիտն ինքնասպանություն է գործում:

**82. Նշվածներից ո՞վ Ալեքսանդր Շիրվանզադեի «Պատվի համար» դրամայի հերոսներից չէ:**

- 1) Սաղաթելը
- 2) Մուրենը
- 3) Ռսկեհատը
- 4) Օթարյանը

**83. Գրական ո՞ր ուղղության ներկայացուցիչն է Գրիգոր Չոհրապը.**

- 1) կլասիցիզմի
- 2) ռոմանտիզմի
- 3) ռեալիզմի
- 4) սիմվոլիզմի

**84. Ինչո՞ւ էր Գրիգոր Չոհրապի «Չարություն» նորավեպի համանուն հերոսը գողությամբ զբաղվում:**

- 1) սիրած աղջկա՝ Վասիլիկի քնահաճույքներին զոհացում տալու համար
- 2) դժվար փորձությունները հաղթահարելու իր բուռն ցանկությունը բավարարելու համար
- 3) համաքաղաքացիներից վրեժ լուծելու համար
- 4) ապրուստի միջոց հայթայթելու նպատակով

**85. Գրիգոր Զոհրաայի «Զաբուղոն» նորավեպում Զաբուղոնը, տեսնելով իր սիրած աղջկան ուրիշ երիտասարդի հետ, չի սպանում վերջինիս, որովհետև՝**

- 1) խղճում է Վասիլիկին:
- 2) նրան արժանի չի համարում իր վրեժին:
- 3) զգում է, որ այդպիսով չի կարող վերադարձնել իր սիրած աղջկան:
- 4) ասխտում է իր՝ դժվարությամբ ձեռք բերված ազատությունը:

**86. Գրիգոր Զոհրաայի ո՞ր նորավեպից է տրված հատվածը:**

«Ո՞վ էր տերը այս երկուքին մեջ. երեսուն տարի վերջը, երբ ձախորդությունը իր երկաթե շրջապատույտ օղակներով զինքը կը պաշարեր, այս մարդը կը հասկնար, որ այս անզգա տոպրակը իր տերը եղած էր միշտ»:

- 1) «Զաբուղոն»
- 2) «Այրին»
- 3) «Այինկա»
- 4) «Ճիտին պարտքը»

**87. Գրիգոր Զոհրաայի «Ճիտին պարտքը» նորավեպում հեղինակը ինչի՞ հետ է համեմատում Հուսեփ աղայի պայտասակը:**

- 1) դանայան տակառի
- 2) սիզիփոսյան աշխատանքի
- 3) արծաթե կլոր դրամի
- 4) երկնքում փայլող լուսնի

**88. Հայ կյանքի ո՞ր երևույթի մասին է Գրիգոր Զոհրաայի «Այրին» նորավեպը:**

- 1) գոհված երիտասարդների այրիացած կանանց դժբախտության
- 2) հարկադրաբար պանդխտության մեկնելու և դրանից բխող տխուր հետևանքների
- 3) օտարների մեջ հայերի ձուլման և հայոց լեզուն մոռանալու
- 4) տարբեր խավերի միջև ծագած սոցիալական հակասությունների

**89. Ո՞վ է Գրիգոր Զոհրաայի «Այրին» նորավեպի հերոսուհին:**

- 1) Տիգրանուհին
- 2) Պերճուհին
- 3) Զարդարը
- 4) Վասիլիկը

**90. Գրիգոր Զոհրաայի ո՞ր նորավեպի հերոսներն են զբաղվում մաքսանենգությամբ:**

- 1) «Զաբուղոն»
- 2) «Այրին»
- 3) «Ճիտին պարտքը»
- 4) «Այինկա»

**91. Նշվածներից ո՞վ Գրիգոր Զոհրաայի որ նորավեպի հերոսներից է:**

- |               |                   |
|---------------|-------------------|
| ա. Հուսեփ աղա | 1. «Այինկա»       |
| բ. Հակոբոս    | 2. «Զաբուղոնը»    |
| գ. Զարդար     | 3. «Ճիտին պարտքը» |
| դ. Վասիլիկ    | 4. «Այրին»        |

- 1) ա-1, բ-3, գ-4, դ-2
- 2) ա-1, բ-4, գ-3, դ-2
- 3) ա-3, բ-1, գ-4, դ-2
- 4) ա-3, բ-4, գ-1, դ-2

**92. Ո՞ր տարբերակի բոլոր պատասխաններն են ճիշտ նշում, թե բնագրային հատվածներից որը Գրիգոր Չոփրասյի ո՞ր նորավեպից է:**

1. «Կը սիրե՞ր արդյոք այն երիտասարդը, որ իր ամուսինը եղած էր. այն կույր ու անտրտունջ հնազանդության մեջ, որ հայուհիներու բոլոր կյանքը կը կազմե այդ կողմերը, ո՛չ խորհելու և ո՛չ զգալու տեղի մնացած է...»:
2. «Այս զավակները՝ իր բոլոր երջանկությունը, հիմա կը ճնշեին զինքը իրենց 14-15 տարու աղջկան ամենեղության ժպիտովը, որ հանդիմանությունով լեցուն կ'երևար իր հայրական աչքին: Հանցավորի պես կը մտներ ներս, գրկանքներու դատապարտված այս երկու հոգիներու առջև...»:
3. «Հոս՝ քարահատակ ճամփուն վրա, ձիերու շարք մը կը քալե հագիվ լսելի ոտնաձայնով մը, որ պայտերուն վրա փաթթված չուխայի կտորներով կը մեղմանա, ամբողջ կարավան մը ծխախոտ փոխադրող շրջակա գեղերեն, ու տասնի չափ տղաք կու գան քովեն հետիտուն, հրացանը ուսերնուն կախած, ատրճանակը մեջքերնին»:
4. «Նշանտուքը Պատրիարքարանի մեծ դահլիճը կատարված չէր հարկավ: Փոխանորդ հայրը օրհնած չէր զայն, ոչ ալ լրագիրները ծանուցեր էին: Պարզապես, հավիտյան իրար սիրելու խոսք տված էին, զիշեր մը, ծառի մը տակ՝ աստղերը ունենալով իրենց վկա. և աշխարհիս ամենեն մեծահանդես նշանտուքը եղած էր իրենցը»:

- ա. «Այինկա»
- բ. «Չաբուղուն»
- գ. «Այրիին»
- դ. «Ճիտին պարտքը»

- 1) 1- գ, 2- դ , 3- բ, 4- ա
- 2) 1- գ, 2- դ , 3- ա, 4- բ
- 3) 1- ա, 2- գ, 3- բ, 4- դ
- 4) 1-բ, 2- դ, 3- բ, 4- գ

**93. Տրվածներից ո՞րը չի համապատասխանում Հովհաննես Թումանյանի «Անուշ» պոեմի սյուժեին:**

- 1) Անուշը Սարոյի հետ փախչում է սարերը, հետո վերադառնում է հոր տուն:
- 2) Մոսին հետապնդում ու սպանում է Սարոյին:
- 3) Անուշը խելագարվում է և ինքնասպան է լինում՝ նետվելով Դեբեդի ալիքների մեջ:
- 4) Աղբյուրից ուշ վերադառնալու համար մայրը պատժում է Անուշին և արգելում Սարոյի հետ հանդիպել:

**94. Հովհաննես Թումանյանի «Անուշ» պոեմում ո՞րը խելագարված Անուշի տեսիլքներից չէ:**

- 1) Տեսնում է կանաչ սարի լանջին սև յափնջին վրան քաշած, ծաղկի հոտով հարբած, քնած Սարոյին:
- 2) Տեսնում է, թե ինչպես երկնքում երկու աստղ գալիս են դեպի իրար ու համբուրվում:
- 3) Տեսնում է դափ ու զուռնայով հարսանիք, որը, սակայն, ո՛չ հարս ունի, ո՛չ փեսա:
- 4) Տեսնում է Սարոյի թաղման թափորը, որ շարժվում է դեպի իրենց տուն:

**95. Հովհաննես Թումանյանի «Անուշ» պոեմի ո՞ր հերոսի խոսքերն են.**

Եկա՞ծ էր էս բանն իսկի քու գլխին...  
Ծաղրատեղ դառար բովանդակ գեղին...

- 1) Մոսի
- 2) Անուշի հոր
- 3) Սարոյի
- 4) Անուշի

**96. Ո՞ր տողը պետք է տեղադրել բաց թողնված տեղում.**

.....  
 Խընդիրք արել աստղերին,  
 Փափագ սըրտով խընդիրք արել՝  
 Բարի ժրպտան իր սերին...

- 1) Օխտն աղբյուրից ջուր է առել,
- 2) Ջուրն ու ծաղիկ աստղունք դըրել,
- 3) Օխտն աղբյուրից ջուր է խըմել,
- 4) Օխտը ծաղկից ծաղիկ քաղել,

**97. Ո՞րն է Հովհաննես Թումանյանի «Փարվանա» բալլադի տրված հատվածում բաց թողած բառը:**

Խոր Փարվանա լիճն է ծըփում,  
 Հըստա՛կ, ինչպես .....  
 Ու էն վըճիտ ջըրերի տակ  
 Ցույց են տալի մինչ էսօր  
 Ծեր արքայի ճերմակ ամբոցն  
 Ու շենքերը փառավոր:

- 1) աղամանդ
- 2) արտասուք
- 3) հայելի
- 4) մի բյուրեղ

**98. Հովհաննես Թումանյանի ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:**

Բայց հին ու նոր քո վերքերով կանգնած ես դու կենդանի,  
 Կանգնած խոհո՛ւն, խորհրդավոր ճամփին նորի ու հընի...

- 1) «Հայոց լեռներում»
- 2) «Հայոց վիշտը»
- 3) «Հայրենիքիս հետ»
- 4) «Հոգեհանգիստ»

**99. Ո՞րը Հովհաննես Թումանյանի «Հայոց լեռներում» բանաստեղծության մեջ լեռները բնութագրող մակդիրներից չէ:**

- 1) բարձր
- 2) դժար
- 3) արնոտ
- 4) վսեմ

**100. Ո՞ր հատվածը Հովհաննես Թումանյանի որ ստեղծագործությունից է.**

- ա. Ու պոետներ, որ չեն պղծել իրենց շուրթերն անեծքով  
Պիտի գովեն քո նոր կյանքը նոր երգերով, նոր խոսքով...
- բ. Անց է կենում դարձյալ տարին:  
Նայում է կույսն ամեն օր,  
Ոչ մի սարից, ոչ մի ճամփին  
Չի երևում ձիավոր:
- գ. Ու մարդասպանը դուրս եկավ ձորից,  
Դեմքը այլայլված, քայլվածքը մոլոր.  
